


# դրամատուրգիա

գրական-գեղարվեստական հանդես

32<sup>2013</sup>33

## ՊԻԵՍՆԵՐ

Ալեքսանդր ԹՈՓՉՅԱՆ	2	ՏԻԿԻՆ ԴՈՆ ԽՈՒՎՆ ԴԵ ՏԵՆՈՐԻՈ կամ 1004-րդը
Անահիտ ԱՂԱՍԱՐՅԱՆ	18	ՔՈՉԱՐԻ
Սամվել ԳԱՍՊԱՐՅԱՆ	44	ՎԵՐԱԳԱՐՁ
Անուշ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ	72	ՄԵՐՄԵՂԵՍ
Սաթենիկ ՂԱԶԱՐՅԱՆ	96	ԻՄ ՄԻՐԵԼԻ
ԱՆՆԱ ՅԱԲԼՈՆՄԿԱՅԱ	104	ՀԱՐԹՈՒԿՆԵՐ
Ալեքսանդր ՍՈԼՉԱՆՈՎ	140	ՍԱՐԳԱՍՊԱՆԸ



## Ալեքսանդր ԹՈՓՉՅԱՆ

*Օբյուկորոնը կամ  
օքսիկորոնը հունարեն է,  
բառացիորեն նշանակում է  
սրամիտ-տիմար, սակայն  
մենք կգերադասեինք գրել  
սրամիտ-անհեթեթ, քանի որ  
գրականագիտական այս եզ-  
րույթն արտահայտում է մի մի-  
ճակ, երբ իրար կողք են  
հայտնվում երկու հակադիր,  
միմյանց բացառող իմաստներ,  
որպեսզի ստեղծեն  
իմաստային մի նոր որակ:  
Օբյուկորոն է նաև ստորև  
ներկայացվող մենադրամայի*

*վերնագիրը: Ինչ միճակում կամ դերում ասես նրան կարող էինք  
պատկերացնել կանանց կողքին, սակայն ոչ՝ ամուսնու: Վերջին  
չորս դարերի ընթացքում աշխարհի տարբեր լեզուներով գրված  
բազմաժանր գրականությունն ստեղծել է ամբարիշտի,  
գայթակղիչի, սեռական սհաբեկչի մի կերպար, որը «մշտապես  
սիրված է, բայց հավերժորեն անկարող է սիրել»  
(Գրեգորիո Մարանյոն):*

*Բայց միթե այս աշխարհում ամեն ինչ հաստատված է  
մեկանգամ ընդմիշտ, մինչև երբ պիտի խորհրդանիշ դարձած  
այս հերոսը մնա առասպելի կաշականդիչ կաղապարների մեջ:*

*Մոլլերը, թերևս, առաջինն էր, որ փորձեց ցույց տալ ոչ թե  
կանանց ետևից վազող, այլ նախկինում նվաճած կանանցից  
խուսափող Դոն Ճուանին:*

*Իսկ չի կարող, արդյոք, Դոն Ճուանն իսկապես սիրահարվել  
կամ, վերջապես, գտնել կանացի «իր տեսակին»: Եվ եթե դա  
տեղի ունենա, ապա քիչ զարգացում կարող է ունենալ  
առասպելը և, ընդհանրապես, կարո՞ղ է արդյոք զարգանալ...  
Մենք փորձել ենք ընդամենը շեղվել առասպելի տրոբված արա-  
հետից, իսկ թե ուր ենք հասել և, արդյո՞ք իմաստ ունե՞ր շեղվել,  
թող դատի ընթերցողը:*

# ՏԻԿԻՆ ԴՈՆ ԽՈՒԱՆ ԴԵ ՏԵՆՈՐԻՈ ԿԱՄ 1004-րդը

## Մոնոպիես

ՏԻԿԻՆ ԴՈՆ ԽՈՒԱՆ ԴԵ ՏԵՆՈՐԻՈ -  
Ոչ, ոչ, ես նրա քույրը չեմ, ոչ էլ աղ-  
ջիկը, բնականաբար, նաև մայրը  
չեմ, չնայած... ոչ էլ մերձավոր կամ  
հեռավոր ազգականը...

Ես նրա կինն եմ:

Այո, օրինական, եկեղեցով, խա-  
չով ու պատարագով օրհնված... Ա-  
հա նրանց տոհմական մատանին,  
որը նրա հայրը հագցրեց, հետն էլ  
ձեռքս այնպես շոյեց, որ քիչ էր  
մնում... Մի խոսքով, հայր ու որդի ի-  
րար արժեն...

Ի դեպ, դրանց տոհմական նշանը  
կշեռքն է, որն, իբրև թե, խորհրդա-  
նշում է արդարությունը, սակայն, իմ  
կարծիքով, ուրիշ բան պետք է լի-  
ներ... Անպայման ուզում եք իմանա՞լ,  
թե ինչ... Դե, որ շատ եք ուզում՝ կա-  
սեմ. ֆալլոսը:

Ինձ շատերն էին հետապնդում,  
երիտասարդ ազնվականներ՝ մեկը  
մյուսից լավ, և, մանավանդ, առաքի-

նի ու խիզախ... Երանք համբերա-  
տար սպասում էին բարեհաճության  
իմ ժպիտին, բայց, ավանդ, այդ ա-  
նարժանն արժանացավ...

Այսինքն՝ ես նրան չեմ ժպտացել,  
ընդհակառակը, առավել քան հստակ  
և փոքր-ինչ բարձր (որպեսզի մյուս-  
ներն էլ լսեն) ասացի. «Սինյոր,  
խնդրում եմ, ազատեք ինձ ձեր ներ-  
կայությունից»: Այդտեղ ազնվական  
ուրիշ օրիորդներ կային, ովքեր բնավ  
դեմ չէին լինի, որ այդ ամբարիշտը  
մոտենա իրենց և բացահայտ ու ան-  
պարկեշտ առաջարկներ անի: Բայց  
նա ինձ էր ընտրել, և իմ մերժումը  
լսելուն պես գլխիկոր հեռացավ:

Բոլորը զարմացած էին այդ հնա-  
զանդությունից, իսկ ես մտովի պա-  
խարակում էի ինքս ինձ, թե դաժան  
եղա: Բայց պիտի համոզվեի, որ  
նրան արտաքսելն այնքան էլ դյու-  
րին չէ...

Ուշ երեկոյան, երկարաձգված

պարահանդեսից հետո ահավոր հոգնած, աղախնիս՝ Մարիայի օգնությամբ հանվեցի, միանգամից մտա անկողին և... այնտեղ ինչ տեսա... ավելի ճիշտ՝ ո՛ւմ տեսա... Այո, դժվար չէր կռահել. Դոն Խուանը, մորե մերկ, իմ անկողնում պառկած...

Ես չհասցրի սոսկումից ծչալ, որովհետև նա ափով փակեց բերանս և հազիվ լսելի շշնջաց. «Հանուն ձեր անբասիր հեղինակության, սինյորիտա»: Այնուհետև ձեռքը հեռացրեց և ասաց. «Պատկերացրեք, թե ինչ կլինեք, եթե ձեր սքանչելի բերանը չփակեի. դուք սոսկումի աղաղակ կարձակեիք, ձեր զինյալ պահակներն անմիջապես կներխուժեին այստեղ և ինչ կտեսնեին... սինյորիտա Ռոզալիան՝ Դոն Խուանի գրկում»:

«Ես ձեր գրկում չեմ», - վրդովված պատասխանեցի ես:

«Այո, իսկապես, դուք առայժմ իմ գրկում չեք, բայց ավելի վատ, մի անկողնում եք ինձ հետ, ըստ որում՝ ձեր անկողնում... Եվ երկուսս էլ մերկ ենք... Ձեր փոխարեն մեկ ուրիշին տեսնեիք այս վիճակում, ինչ կմտածեիք...», - ասաց նա:

«Դուք ստորաբար սողոսկել եք իմ ննջարանը»:

«Ճիշտ եք, - համաձայնեց նա: - Բայց ձեր պահապաններին և, մա-

նավանդ, ձեր պատվարժան կոմս հայրիկին կկարողանա՞ք ապացուցել, որ ես սողոսկել եմ, ինչպես բարեհաճեցիք արտահայտվել, և ոչ թե ձեր հոժար կամքով, ձեր սիրալիր հրավերով հայտնվել այստեղ»:

«Այն, ինչ անում եք դուք, վայել չէ ազնվականին, անգամ ռամիկն այդպես չէր վարվի»:

«Հանուն ձեր սիրո ես ոչ միայն ռամիկ, այլև պատրաստ եմ ձեր ոտքի տակի հողը դառնալ... Պահանջեք՝ ինչ ուզում եք, ես սիրով կկատարեմ», - ասաց նա:

«Պահանջում եմ՝ հեռացեք այստեղից, հենց հիմա, անհապաղ»:

«Կատարել այդ պահանջը, կնշանակեր մեծագույն ստորությունը գործել ձեր հանդեպ, քանի որ ձեր փառահեղ դոյակի դարպասները հիմա ամուր գոցված են, իսկ պահապաններն էլ արթուն հսկում են, մնում է, ուրեմն, ձեր նկարչագեղ պատուհանը...»:

«Ես հենց պատուհանը նկատի ունեմ», - ասացի ես:

«Ես սիրով կկատարեմ ձեր պահանջը, սինյորիտա, կցատկեմ երրորդ հարկից ներքև, կփշրեմ իմ ոտքերը և սոսկալի ցավը զսպելով կսպասեմ՝ մինչև որ լուսաբացին ձեր սպասավորները ձեր պատուհանի տակ, կրկնում եմ՝ ձեր պատուհանի

տակ հայտնագործեն թշվառ սիրահարիս, և այդ ժամանակ նրանք ինչ կմտածեն... Մի՞թե դուք ձեր թշնամին եք, սինյորիտա...»:

«Դուք կատարյալ հրեշ եք...- զայրացած ասացի ես:- Անկարելի է նույնիսկ պատկերացնել. իմ սեփական տան մեջ ինձ զցել եք թակարդը, որից չեմ կարող դուրս գալ՝ առանց հեղինակությունս վնասելու»:

«Դուք շատ ձիշտ բնորոշեցիք,- համաձայնեց նա:- Այո, թակարդը, բայց՝ սիրո թակարդը... Եթե խորը մտածեք՝ սերը մի թակարդ է, որի մեջ ընկնում ենք կամովին, երազում ենք այդ մասին, անքուն գիշերներ անցկացնում... Տվյալ դեպքում, ես հոժարակամ մտա այս թակարդը...»:

«Որպեսզի ինչ անեք», - հարցրի ես:

«Ինչ միամիտ հարց եք տալիս, սինյորիտա... Որպեսզի վայելեմ ձեր ներկայությունը»:

«Ընդամենը...»:

«Մի՞թե դա քիչ է...»:

Այդ պատասխանն ինձ զարմացրեց: Ես սպասում էի, որ նա կատաղի զազանի պես կհարձակվի վրաս, կբռնաբարի, կանպատվի... Սակայն, ասես, մի հնազանդ գառնուկ, պառկել էր հետս մի անկողնում, և չնայած մեր միջև ողջախոհության սուրը չկար դրված, նա պատկառելի հե-

ռավորություն էր պահապանում, գրեթե մահձակալի եզրին էր տեղավորվել:

Թիկունքս դարձրի նրան և, չնայած սոսկալի հոգնած էի, որոշեցի ամեն գնով հաղթահարել քնի անդիմադրելի պահանջը... Սակայն չզգացի, թե ինչպես փակվեցին աչքերս...

Արթնացա և ինձ տեսա նրա գրկում... Խորը քնից և, ինչո՞ւ ոչ, ցանկասիրությունից ընդարմացած՝ չկարողացա նույնիսկ ամենաանշան դիմադրությունը ցուցաբերել... Եվ ինչո՞ւ ցուցաբերեի, երբ վաղուց, անհամբեր սպասում էի այդ ակնթարթին:

Իմ ընկերուհիներից մի քանիսն իրենց առաջին գիշերվանից տխուր հուշեր էին պատմում... Իսկ ես հիմա համոզված էի, որ ամբողջ կյանքում այս գիշերը երանությամբ եմ հիշելու: Նա ինձնից հագեցում չունեի, իսկ երբ մի քանի անգամ իմ մարմինը վայելելուց հետո հևասպառ պառկել էր կողքիս, մի կերպ արտաբերելով ասաց. «Ես վերջապես կին ճանաչեցի»:

«Սինյոր, դուք կատակ եք անում. ձեր հավատարիմ սպասյակ Լեպորելոն աշխարհով մեկ տարածել է, թե դուք 1003 կին եք նվաճել», - զարմացած հարցրի ես:

«Դրանք կանայք չէին,- պատասխանեց նա:- Դրանք պարզապես էգեր էին, նրանք էգ էլ կմնան, իսկ Աստված ձեզ, սինյորիտա, միանգամից կին է ստեղծել»:

Բուռն սիրուց պարտասած և նման հաճոյախոսություններով շոյված ես խորը քուն մտա, որը, սակայն, երկար չտևեց, քանի որ լուսաբացին նա ինձ նորից արթնացրեց իր կատաղի համբույրներով... Լա համբուրում էր վարից վեր, ոտքից գլուխ, մարմնիս վրա տեղ չմնաց, որ նրա համբույրը չզգար... Լա նորից արթնացրեց իմ ցանկասիրությունը և մենք, մի գիշերվա ընթացքում չգիտեմ որերորդ անգամ, տրվեցինք խելահեղ սիրուն...

Կեսօրն անց էր, երբ աղախինս՝ Մարիան, ուսս ցնցելով հանեց ինձ խորը քնից: Լա ցուցամատն ուղղեց իմ հյուրի կողմը և, խորամանկ ժպիտը դեմքին, ասաց. «Այս սինյորի խոմփոցը տարածվել է տնով մեկ... Բոլորը զարմացած են, իսկ ձեր հարգարժան մայրիկն ասաց՝ իմ դուստրը երեկ շատ հոգնեց, ահա ինչու այսօր սովորականից շատ է քնում»:

Հետո պիտի իմանայի, որ «այդ սինյորը» հավատարիմ աղախնիս դավադրության հետևանքով է հայտնվել իմ ննջարանում... Երա

սպասյակը՝ Լեպորելոն, այդ սատանի ծուտը, կաշառել էր Մարիային, վերջինս էլ Դոն Խուանին բուրից աննկատ բերել էր իմ սենյակ: Լավ նվեր արեց ինձ...

Եվ հիմա, նոր օրվա լույսի ներքո հասկացա, թե ինչպիսի պատմության մեջ եմ ընկել: Ես արթնացրի Դոն Խուանին և պահանջեցի, որ անմիջապես հեռանա: Քնաթաթախ՝ նա սկզբում չհասկացավ, թե ինչ եմ ուզում իրենից, հետո, հասկանալով, վճռականորեն ասաց. «Ոչ մի դեպքում, սիրելիս, դա ստոր փախուստ կլինի»: «Բայց ձեզ կտեսնեն այստեղ, և մենք երկուսս խայտառակ պատմության մեջ կընկնենք»: «Թող տեսնեն...»: «Դուք խելագարվել եք, սինյոր... Դուք ուզում եք արատավորել ինձ իմ հարազատների առջև», - զայրույթով ասացի ես: «Ընդհակառակը, ուզում եմ ձեր պատիվը բարձրացնել. ես հիմա դուրս կգամ այստեղից և ամենայն հանդիսավորությամբ ձեր պատվարժան կոմս հայրիկից ձեր ձեռքը կխնդրեմ»: «Եթե ձիշտ հասկացա, դուք ուզում եք ամուսնանալ ինձ հետ»: «Ճիշտ այդպես, սինյորիտա»:

Ես հազիվ կարողացա զսպել իմ քրքիջը, մինչդեռ նրա դեմքին մի զարմանալի լրջություն կար, իսպառ անհետացել էր այն լկտի կիսաժպիտը, որն անբաժան էր նրանից:

Եվ իսկապես, կես ժամ հետո ծնողներիս առջև կանգնած, Դոն Խուան դե Տենորիոն մինչև գոտկատեղը խոնարհվելով, հանդիսավորապես հայտնեց, որ եկել է իմ ձեռքը խնդրելու:

Հայրս, անշուշտ, հասկացավ, որ նա գիշեր է անցկացրել այստեղ, իմ ննջարանում, սակայն խնայելով սեփական դստեր, ինչպես և իր պատիվը, լռեց այդ մասին և պարզապես ասաց. «Մենք դեմ չենք, սինյոր, սակայն կցանկանայինք այդ խնդրանքը լսել նախևառաջ ձեր ազնվագարմ հոր բերանից»:

...Ամեն ինչ արվեց ըստ օրինաց կարգի: Լուրը տարածվել էր երկրով մեկ, այսինքն, ինչ եմ ասում՝ աշխարհով մեկ: Եկել էին ամեն տեղից՝ ներկա լինելու դարի ամուսնությանը. վեհապետներ, պետական այրեր, մեծահարուստներ, աշխարհահռչակ արվեստագետներ, լրագրողներ, հետաքրքրասերներ և, վերջապես, այն 1003-ի մեծ մասը, որ հատուկ ժամանել էին տեսնելու իրենց առասպելական մրցակցուհուն, ով կարողացավ ամուսնական կապերով շղթայել ամբարիշտին:

Քաղաքի հյուրանոցներում ազատ անկյուն չկար, ռեստորաններն ու ճաշարանները չէին հասցնում սպասարկել անթիվ ու անհամար այ-

ցելուներին, քաղաքը մի քանի օրում այնքան առևտուր արեց, որ անգամ մեկ տարում չէր անում:

Եկեղեցին շտապեց Դոն Խուանի դարձը վերագրել իրեն: Քաղաքով մեկ լուր տարածվեց, որ պարահանդեսի օրը մեր տնից գլխիկոր և տրտում դուրս է եկել, գնացել եկեղեցի, մոմ վառել Տիրամոր պատկերի առջև և մեկ ժամ աղոթել է: Կանոնիկոսը, որն այդ պահին, իբրև թե պատահմամբ, այդտեղ է եղել, սեփական ականջով լսել է, թե ինչպես սինյոր Դոն Խուանը մի քանի անգամ խնդրել է Սուրբ Կոյսին, որ օգնի իրեն սրբազան դաշինքով կապվելու սինյորիտա Ռոզալիայի հետ:

Հետո հայտնվեցին ականատեսներ, որոնք պատրաստ էին Ս. Գրքի վրա երդվել, թե նրան տեսել են քաղաքի տարբեր եկեղեցիներում, Տիրամոր պատկերի առջև նույն աղոթքը մրմնջալիս: Հարսանիքին նախորդած օրերի ընթացքում Դոն Խուանը դարձավ հրաշապատում գրույցների պերսոնաժ, միանգամից մոռացան նրա խայտառակ անցյալը և եկեղեցու կողմից բանադրված անձնավորությանը օժտեցին ամենաբարձր առաքինություններով: Բիչ էր մնում՝ արդեն ողջության օրոք

սրբոց դասում կարգեին: Նա, իհարկե, սուրբ չդարձավ, սակայն նրա վրայից հանվեց բանադրանքը, որ դրվել էր տարիներ առաջ՝ պիղծ վարքի համար: Եվ հետաքրքիրն այն էր, որ բանադրողն ու հանողը նույն անձն էր՝ սրբակենցաղ մի եպիսկոպոս:

Ճիշտ էին այդ պատմությունները, թե ոչ, սակայն ստույգ էր, որ նա արմատապես փոխվել էր, նրա ծնողները, նրան ճանաչող մարդիկ միաբերան ասում էին, թե ուրիշ մարդ է դարձել: Ամենևին չվիճարկելով եկեղեցու դերն այս կերպարանափոխության մեջ, մարդիկ, այնուամենայնիվ, ընդունում էին, որ դա նախևառաջ իմ շնորհիվ է:

Իսկապես, նա դարձել էր աստվածավախ, բարեպաշտ մի ազնվական: Եթե նախկինում ձեռքը սուտերի վրա էր կամ, կախված հանգամանքերից, քիչ ավելի վար... Մի խոսքով, հասկանում եք՝ ինչ եմ ուզում ասել... ապա հիմա անբաժան էր Ս. Գրքից: Լեպորելոն՝ նրա հաշվեկալը, մտերմաբար խոստովանեց ինձ, որ այն բուռն գիշերվանից հետո նոր թիվ և նոր անուն չի գրանցել, որ նրա ցուցակը կանգ է առել 1004-րդի վրա: «Մինչդեռ տասն օր է անցել... Պարզապես անհավատալի է, այսպես որ

գնաց, ես գործազուրկ կդառնամ», - տրտնջաց նա:

Մեր հարսանեկան արարողությունը եկեղեցում, ուղիղ եթերով ցուցադրվում էր աշխարհով մեկ, և միայն դրա իրավունքի վաճառքից եկեղեցին ու մեր ընտանիքները միլիոններ վաստակեցին:

Այդ գումարներով մենք դրյակ գնեցինք և որոշեցինք ծնողներից առանձին ապրել: Ես ուզում էի, որ այնտեղ՝ բոլորի աչքից հեռու, տրվենք մեր սիրո խրախճանքներին: Առաջին գիշերվա քաղցր հուշն ինձ ստիպում էր շտապել, և մինչև հարսանիք ընկած շաբաթների ընթացքում ես պարզապես ցանկությունից այրվում էի: Հարսանիքին հաջորդած օրերի ընթացքում, կարելի է ասել, որ ննջարանից դուրս չէինք գալիս, իսկ եթե դուրս էինք գալիս, ապա շտապում էինք վերադառնալ այնտեղ, մի քանի անգամ էլ, ուղղակի պարտեզում, խոհանոցում կամ այլուր, անհամբերությունից դողալով, արեցինք այն, ինչն ավելի խոհեմ կլիներ անել ննջարանում, չորս պատերի մեջ:

Մեր խելահեղ կենցաղն արդեն դարձել էր բոլորի քննարկման առարկա, և եթե նախկինում միայն Դոն Խուանին էին դատապարտում, ապա հիմա՝ երկուսիս: Լուրն, ան-



շուշտ, զարդարված զանազան պիկանտ մանրամասներով, հասել էր նաև մայրիկիս: Լա ասաց, թե, իհարկե, գովելի է, որ ամուսինդ այդպես հավատարիմ է քեզ և այլևս չի հետաքրքրվում ուրիշ կանանցով, բայց չէր խանգարի, որ չափավոր լինեիք և, մանավանդ, ձեր մտերմիկ կյանքը հեռու պահեիք կողմնակի հայացքներից:

Ամուսնու ծնողներն էլ, կարծեմ, խոհեմության և ժուժկալության կոչեր էին արել, բայց նրանց լսողն ո՞վ էր: Մենք անհագ ցանկությամբ տրվում էինք իրար, և ամեն անգամ թվում էր, թե դա մեր առաջին հանդիպումն է:

Մարմնական բուռն սերը մարդուն երբեմն զրկում է սթափ դատելու կարողությունից, սակայն գալիս է հագեցումը, և սկսում ես արդեն երևույթներին նայել ուրիշ հայացքով, և հանկարծ հարցականներ են ծնվում: Ասել չեմ ուզում, թե մենք սառեցինք իրարից, բայց ես սկսեցի լրջորեն մտածել որոշ բաների մասին:

Օրինակ՝ իմ մշտաբորբոք ցանկությունը բացատրվում էր նրանով, որ ես նոր-նոր էի ճանաչում մարմնական սերը և օգտվելով հմուտ խաղընկերոջ ներկայությունից՝ լիովի վայելում էի այն: Բայց ինչո՞վ բացատրել, որ ինձնից առաջ 1003

կին ճանաչած փորձառու գայթակղիչը ամեն անգամ նույնպիսի և գուցե ավելի մեծ անհագությամբ էր մոտենում ինձ:

Ըստ որում, եթե առաջին շրջանում բավական էր իրար կողքի հայտնվելինք, որպեսզի բառացիորեն հրկիզվեինք, ապա հետագա ամիսներին ես արդեն սկսում էի հագնալ, իսկ նա, կարծես՝ ոչ: Ավելին՝ նրա գրոհներն արդեն սկսում էին ինձ հոգնեցնել. ամբողջ օրվա ընթացքում նրա ուղեղը միայն մի բանով էր զբաղված՝ պառկել ինձ հետ: Եվ եթե պառկած չէր, ասենք՝ սնվում էր, ապա յուրաքանչյուր պատահը բերանն էր տանում միայն մեկ նպատակով՝ վերականգնել անկողնում կորցրած ուժերը, որպեսզի կշտանալուն պես ինձ նորից անկողին քարշ տա...

Առաջին ամիսների հաճույքն ինձ համար դարձել էր պարտականություն, իսկ ավելի ճիշտ՝ ծանր պարհակ: Գոնե գիշերներն ինձ հանգիստ թողներ... Որոշ ժամանակ անց ես սկսեցի առանձին ննջարանում քնել, ըստ որում՝ դուռը բանալու երկու պտույտով փակելուց հետո: Սակայն դա նրան չզսպեց. մի երկու անգամ նույնիսկ փորձեց պատուհանից մտնել:

Ես արդեն խուսափում էի նրա-

նից: Ամուսնական կյանքն ինձ համար դարձել էր տանջանք: Անգամ օտար տղամարդկանց ներկայությունն էր ինձ ձնշում, նրանց բոլորի մեջ տեսնում էի սեռագար որձեր, նրա ծերունագարդ հայրն էլ հանդիպելուն պես համառորեն բռնում էր ձեռքերս և երկիմաստ տրորում... Այդ ընտանիքում միակ կարգին մարդը մայրն էր, որն ինձ գրկում էր գորովով և ասում, թե ես իր երիտասարդությունն եմ հիշեցնում:

Մայրս տեղյակ էր այդ ամենին: Ինձ մի հասցե տվեց՝ հռչակավոր մի հոգեվերլուծող, ասաց, որ անպայման այցելեմ և պատմեմ իմ խնդիրների մասին: Ես այցելեցի, և այդ պարոնը միանգամից լավ տպավորություն թողեց. լուրջ մտավորականի արտաքին ուներ՝ խնամված բեղմորուք, թափանցող, սակայն ոչ լկտի հայացք, թավշյա հաճելի ձայն և գերմանական թեթևակի շեշտադրություն: Նա սիրով համաձայնեց ինձ լսել, սակայն խնդրեց, որ իր գրասեղանի մոտ դրված աթոռից վեր կենամ և հարմար տեղավորվեմ, իսկ ավելի ճիշտ՝ կիսապառկեմ բազմոցին, այլ խոսքով՝ դիվանին:

«Պառկել» բառը, թեկուզ «կիսա»՝ լսելուն պես, ասես խայթված, վեր թռա և ուզում էի դուրս գալ նրա մոտից: Սակայն նա ժպտաց, հանգըս-

տացրեց ինձ և ասաց. «Ես արդեն հասկացա, թե ինչն է ձեզ տանջում»: Այնուհետև խնդրեց, որ պատմեմ մեր սեռական կյանքի բոլոր մանրամասները՝ օրեկան քանի անգամ, որտեղ, ինչ դիրքով, ինչպիսի տևողությամբ, գինով, թե սթափ, կերած, թե անոթի, բաղնիքից առաջ, թե հետո, թե պարզապես բաղնիքում...

Ես սկզբում քաշվում էի, բայց հետո, աստիճանաբար, խաղի մեջ մտա և նույնիսկ իր պահանջածից ավելին էի պատմում: Հատկապես ուշադրություն հրավիրեցի ամուսնուս սեռական անհագ ախորժակի վրա: Աշխարհահռչակ գիտնականը, բուրումնավետ սիգարը ծխելով, ուշադիր լսում էր ինձ և նշումներ անում:

Պատմեցի նաև նախորդ օրը կատարած իմ հայտնագործության մասին: Վարպետորդի ստահակ Լեպորելոն կերուխումի բացառիկ սիրահար է: Երեկ, երբ հերթական հարբեցողությունից հետո շնթել էր իր խցում, իմ աչքաբաց աղախինը կարողացավ մի երկու ժամով թոցնել ամուսնուս սխրանքների նշանավոր հաշվեմատյանը: Մարիայի հետ որոշեցինք արտագրել բոլոր անունները: Հետո, երեկոյան, երբ ուշադիր զննում էի այդ ցուցակը, զարմանալի մի բան նկատեցի: Դոն Խուանն իր

նվաճած կանանցից ոչ մեկի հետ երկրորդ անգամ չի պառկել: Ասես ընդամենը համտեսել է և շտապել հաջորդի մոտ: Ավելին, պատմում են նույնիսկ, որ որոշ կանանցից պարզապես փախել է:

Գիտնականը, որ կլանված լսում էր ինձ, ասաց. «Աներևակայելի է»: Հետո հարցրեց. «Ինչո՞վ կբացատրեք այդ տարօրինակ երևույթը»: Ես, անօգնական, ուսերս թոթվեցի:

Ես սիգարը փստացնելով ետ ու առաջ էր անում աշխատասենյակում, ասես իսպառ մոռացել էր իմ գոյությունը: Հետո, վերադառնալով իր տեղը, դիմեց ինձ. «Ի՞նչ աշակերտներից մեկը ժամանակին առաջ քաշեց Դոն Խուանի անգործության վարկածը, որն, անշուշտ, ծաղրի առարկա դարձավ՝ ձեր ամուսնու սեռական ասպատակությունների ֆոնին... Սակայն հիմա ես սկսում եմ լուրջ նայել այդ մեկնությանը... Ոչ, ոչ, այն, ինչ դուք պատմեցիք, ճիշտ հակառակն է ասում: Բայց, իսկապես, միթե այդ 1003-ի մեջ չի եղել թեկուզ մեկը, որին նա կարոտեր, համոզված եմ, որ դրանց մի զգալի մասը գեղեցիկ և հրապուրիչ էակներ են եղել... Որո՞նք, կներեք, սինյորա, գեղեցկությամբ գուցե բնավ չէին զիջում ձեզ»: «Ես կասեի՝ նույնիսկ գերազանցում էին,- համաձայնեցի ես:- Երանցից մի քանիսին բախտ

ունեցա տեսնելու իմ հարսանիքի օրը»: «Բայց արի ու տես, որ այդ գեղեցկուհիներից ոչ մեկին չի կապվել...- շարունակեց պրոֆեսորը:- Ես խելագար վազքի մեջ փնտրում էր կանացի իր տեսակը, իր իգական կեսը... Ես ուրիշ բացատրություն չեմ գտնում... Առայժմ չեմ գտնում...»:

Ես նորից մտածմունքների մեջ ընկավ, հետո դիմեց ինձ. «Ինչպիսի՞ն են ձեր հարաբերությունները ձեր սկեսուրի հետ, նա սիրո՞ւմ է ձեզ»: «Զիչ է ասել՝ սիրում է,- ոգևորված պատասխանեցի ես:- Ամեն անգամ հանդիպելիս գրկում է, համբուրում... Վերջերս էլ ասաց, որ ես իր երիտասարդությունն եմ հիշեցնում»: «Իսկ կարո՞ղ է՝ նրա լուսանկարը հիմա ձեզ մոտ լինի», - հետաքրքրվեց նա: «Այո, հենց նրա ջահելության լուսանկարը, ահա, խնդրեմ»:

Պրոֆեսորը մեկ նայում էր ինձ, մեկ՝ լուսանկարին, և այդպես ինձ ու լուսանկարը մի քանի անգամ համեմատելուց հետո հաղթական ժպտաց. «Ես այդպես էլ գիտեի. հանձինս ձեզ նա ոչ միայն գտել է կանացի իր կեսը, այլև իր թաքուն, ինչպես ասեմ՝ չգիտակցված հրապուրանքը մոր հանդեպ... Այդ երևույթը ես անվանել եմ Էդիպոսի բարդույթ»:

Անկեղծ ասած, նրա բացատրությամբ

յունից ոչինչ չհասկացա՝ իզական կես, Էդիպոս, չգիտեմ՝ էլ ուրիշ ինչ, ուստի նրան շատ հստակ հարց տվեցի. «Պրոֆեսոր, ես ձեզ մոտ եկա այն հույսով, որ խորհուրդներ կստանամ, թե ինչպես պիտի փրկվեմ ամուսնու սեռական հալածանքներից, հասկանում եք, այլևս չեմ կարող, ես արդեն զզվում եմ բոլոր տղամարդկանցից...»:

«Գիտեք ինչ,- ասաց նա, - դա հասկանալի է, սեռական այն եռանդը, որ նա ծախսում էր տարբեր կանանց վրա, այժմ կենտրոնացել է ձեր վրա... Այլ խոսքով՝ դուք փոխարինում եք այն 1003-ին, և հիմա, ձեր շնորհիվ կամ ձեր օգնությամբ, նա վրեժ է լուծում հազարից ավելի այն, մեղմ ասած, անհաջող հանդիպումների համար: Դա ժամանակավոր երևույթ է, նրա խոցված ինքնասիրությունն աստիճանաբար կբավարարվի, սեռական եռանդն էլ կչափավորվի»:

«Ինչ ժամանակավոր,- պոռթկացի ես:- Գնալով ավելի է կատաղում... Սկզբում գոնե ինձնից թույլտվություն էր խնդրում, իսկ հիմա, առանց մի բան ասելու, աչքերն արյուն կոխած ցլի պես հարձակվում է... Մեղք եմ ես, պրոֆեսոր, մի դեղ գրեք, մի խորհուրդ տվեք...»:

«Դեղն այս դեպքում չի օգնի, ես

ուրիշ բան խորհուրդ կտայի... Դուք, հավանաբար, գեղեցիկ ընկերուհիներ ունեք: Գուցե նրանցից մեկին խնդրեիք, ինչպես ասեմ, այդ ծանր բեռը թեթևացնեմ, եթե, իհարկե, դեմ չեք, որ ձեր ամուսինը ուրիշ կնոջ հետ անկողին կիսի»:

«Պրոֆեսոր, ոչ թե դեմ չեմ, այլ երազում եմ այդ մասին, արդեն քանի օր է աղախինս՝ Մարիան, մերկանում է նրա ներկայությամբ, իբր՝ շոգ է, իբր՝ զգեստը նեղում է... Իսկ այդ սրբապիղծը, այդ Նեռը չի էլ նկատում, որ իր առջև քսանամյա սիրունիկ աղջիկ է կանգնած՝ պատրաստ տեղնուտեղը տրվելու: Իսկ այսօր առավոտյան, երբ Մարիան իսպառ մերկ սպասարկում էր մեզ, կհավատա՞ք, Դոն Խուանը վերջապես նկատեց և երեսն ամոթխած շրջեց»:

«Դա բնական է, ձեր աղախինը ռամկական դասից է, մինչդեռ Դոն Խուանը սովոր է միայն ազնվական, նրբագեղ կանանց զայթակղել... Այնպես որ, աշխատեք ձեր խավի միջից որևէ մեկին գտնել»:

Պրոֆեսորի խորհուրդը գլուխս մտավ, մանավանդ, որ այդպիսի մտերիմ մի ընկերուհի ունեմ, Իլոնան՝ մի հրաշք գեղեցկուհի, հազվագյուտ էակ, ում մի անգամ խոստովանեցի. «Ես գոհ եմ Աստծուց, որ կին եմ ծնվել, բայց միայն

մի դեպքում կուզեի տղամարդ ծնված լինել, որպեսզի կարողանայի քեզ սիրել... Եվ այնպես կսիրեի քեզ, որ աշխարհում ոչ մի տղամարդ չէր կարողանա»:

Իլոնան հարսանիքի ժամանակ կողքիցս չէր հեռանում, իսկ հաջորդող օրերից մեկին, երբ հանդիպեցինք և ես մանրամասներ էին պատմում իմ ամուսնական կյանքից, նա ասաց, որ ն նախանձում է ինձ, և ուրախ է ինձ համար:

Պատմեցի նրան, թե հոգեվերլուծողն ինչ խորհուրդ տվեց ինձ և հարցրի՝ ինչ է կարծում, մեր ընկերուհիներից ո՞վ ավելի հարմար կլինի այդ դժվարին առաքելության համար: Հետո անկեղծ ու առատ արցունքներով լաց եղա և ասացի, որ եթե այս դժվարին պահին ինձ չօգնեն, ստիպված կլինեմ ապահարզան պահանջել, էլ չեմ ասում ավելի անխոհեմ, գուցե նույնիսկ վտանգավոր քայլերի մասին:

Իլոնան արցունքներս սրբեց, հետո ջերմորեն գրկելով ինձ՝ ասաց. «Հապա ինչի՞ համար ես մենք՝ ընկերուհիներս, իհարկե, կօգնենք, անհոգ կաց, քեզ մենակ չենք թողնի... Ես առաջինը կլինեմ, իսկ հետո կխոսեմ մյուս աղջիկների հետ, վստահ եմ, որ սիրով կհամաձայնեն թեթևացնել քո ծանր բեռը»:

Այսպիսով, ամուսնուս ասացի, թե գնում եմ ծնողներիս մոտ, բայց թաքնվեցի մեր ընդհանուր ննջարանի ծանր ու ընդարձակ վարագույրի ետևում: Ճիշտ այդ պահին հայտնվեց Իլոնան: Նա ափսոսանք հայտնեց, որ առանց ժամադրվելու է եկել և ինձ չի գտել տանը:

- Կուզե՞ք՝ սպասեք նրան, սինյորիտա,- ասաց ամուսինս:- Չեմ կարծում, թե երկար կմնա այնտեղ: Իսկ մինչ այդ Մարիան կզվարձացնի ձեզ:

- Ես կգերադասեի, որ դուք ինձ զվարձացնեք, սինյոր,- ասաց Իլոնան:

Նա մի շարժումով վրայից օգեց սև մուշտակը և իսպառ մերկ, բարձրակրունկ կոշիկների վրա, կանգնեց Դոն Խուանի առջև:

- Սինյորիտա, ի՞նչ եք անում, դուք կմրսեք, հիմա դեկտեմբեր ամիսն է, այդ հարբեցող Լեպորելոն էլ, ինչպես միշտ, մոռացել է բուխարիկը վառել:

- Կարիք չկա Լեպորելոյին անհանգստացնել, իմ բուխարիկը դուք եք, դուք եք իմ կրակը, այրե՞ք ինձ:

Այդպես ասելով՝ իրեն օգեց ամուսնուս գիրկը:

- Ի՞նչ եք անում, սինյորիտա, ես կին ունեմ, ես երդում եմ տվել հավատարիմ լինել մինչ ի մահ...»

- Դուք հավատարիմ էլ կմնաք, պարզապես ինձ ջերմացրեք մի քիչ...

- Անկարելի է, սինյորիտա:

- Ինչո՞ւ, մի՞թե ես գեղեցիկ չեմ, մի՞թե իմ մարմինը ցանկալի չէ:

- Դուք շատ գեղեցիկ եք, սինյորիտա, և հրաշք մարմին ունեք, բայց ես չեմ կարող խղճիս դեմ գնալ:

- Սինյոր, դուք հասկանո՞ւմ եք՝ ի՞նչ եք անում, դուք վիրավորում եք իմ արժանապատվությունը, ես՝ մարքիզուհիս, դեկտեմբերյան այս ցուրտ օրով գալիս եմ ձեր տուն, մերկանում այստեղ և մի քիչ ջերմություն եմ աղերսում ձեզանից, իսկ դուք մերժում եք ինձ:

- Սինյորիտա, համաձայն եմ, պատրաստ եմ մեղքս քավել՝ ես սիրով կհագցնեմ ձեզ այդ հոյակապ մուշտակը, վստահ եմ, որ այդ մորթին ինձնից ավելի լավ կջերմացնի ձեր մարմինը:

- Հը՛մ, ձակատագրի ինչպիսի՞ գավեշտ, Դոն Խուանը, որ մինչև հիմա մերկացնում էր կանանց, այժմ սկսել է մերկացած կանանց հագցնել... Ոչ, սինյոր, այս անարգանքը միայն արյունով կարբվի, հիմա, հենց այստեղ:

- Ինչե՛ր եք խոսում, սինյորիտա, ես՝ ազնվականս, ինչպե՞ս կարող եմ

կնոջ դեմ մենամարտել... Ավելի լավ է՝ սուսերը միանգամից իմ սիրտը խրեք...

- Եթե այդպես է, ապա բնավ պարտադիր չէ, որ սուսերով մենամարտեք իմ դեմ, սինյոր, դուք ուրիշ՝ ավելի գորավոր զենք ունեք կանանց համար:

- Սինյորիտա, իմ անսահման հավատարմությունն իմ ընտանեկան առագաստին թույլ չի տալիս այդ զենքը գործածել ձեր դեմ:

Ահա այսպես պատասխանեց այդ անզգամը, այդ ստոր արարածը, և այդ ժամանակ Իլոնան վերցրեց պատից կախված սուսերը, մոտեցրեց ամուսնուս կոկորդին և ասաց.

- Դուք ուրիշ ընտրություն չունեք, սինյոր, կամ ես հիմա կդառնամ ձեր ցուցակի 1005-րդ կինը, կամ այս սուսերը կխոցի ձեր կոկորդը, և ես ի լուր աշխարհի կհայտարարեմ, որ սպանել եմ ձեզ իմ պատիվը պաշտպանելիս, որ օգտվելով ձեր կնոջ բացակայությունից՝ փորձում էիք բռնաբարել ինձ... Եվ ձեզ՝ պատվազուրկ ազնվականին, կթաղեն որպես մի սատկած շուն... Դե, ապացուցեք, որ դուք իսկապես աշխարհի կանանց ահ ու սարսափն եք:

Իլոնան սուսերը գցեց մի կողմ և

սկսեց ամոթխած Դոն Խուանին մերկացնել, հետո նրան տարավ անկողին: Ցավոք սրտի, ես չէի կարող տեսնել, թե այնտեղ ինչ գործողություններ են ծավալվում, չէի լսում նաև Դոն Խուանի հնոցներն ու տնքոցները... Այնտեղ կարծես լռություն էր և անշարժություն: Համենայնդեպս, բուռն սիրո որևէ վկայություն ինձ չէր հասնում: Եվ, իսկապես, մի քանի րոպե հետո հնչեց Իլոնայի հեզնական ձայնը.

- Սինյոր, պարզվում է՝ դուք ոչ մի զենք չունեք, չգիտեմ՝ ինչպես եք հաղթել այն 1004 կանանց, բայց իմ դեմ դուք կատարելապես անգոր եղաք: Վերջ առասպելին:

Ես բարձրակրունկ կոշիկների կտկոտոց լսեցի, հետո տեսա, թե ինչպես Իլոնան սև մուշտակը հագավ ու դուռը շրխկացնելով հեռացավ:

Հաջորդ օրը նրանից մի երկտող ստացա.

«Սիրելի Ռոզալիա, դու տեսար ու լսեցիր ամեն ինչ: Հիմա ես չգիտեմ, թե ձեր երկուսից ճիշտն ով է: Եթե դու ես ճիշտը, ցավում եմ, որ չկարողացա թեթևացնել քո բեռը, իսկ եթե նա է ճիշտը, ապա ինչ էր անում քեզ նախորդած 1003-ի հետ... Այս առեղծվածը թող պատմությունը լուծի,

իսկ մենք, սիրելիս, գործ ունենանք կենդանի մարդկանց հետ և ոչ թե առասպելների: Զեզ միշտ սիրող՝ Իլոնա»:

Ընկերուհիս, այնուամենայնիվ, թեթևացրեց իմ բեռը, ավելի շուտ... Բայց ամեն ինչ հերթով:

Նրա այցից հետո Դոն Խուանն իսպառ մոռացավ իմ գոյության մասին: Այլևս ոչ մի փորձ չեղավ ներխուժելու իմ ննջարան, բացահայտ կամ թաքնված ոչ մի ակնարկ, ցանկասեր ոչ մի հայացք... Տան մեջ այնպես էինք անցնում իրար կողքով, ասես ուրվականներ լինեինք, իսկ երբ հանդիպում էինք ձաշին կամ ընթրիքին, ապա բնավ ինձ չէր նայում, ասես ինքը մեն-մենակ էր սեղանի մոտ: Ամբողջ օրը սենյակում փակված Ս. Գիրքն էր սերտում կամ աղոթք անում: Ծքեղ զգեստներն ու զարդերը փակեց պահարանում և սկսեց չափազանց համեստ հագնվել: Սնվում էր ձգնավորի պես, այլևս գինի չէր խմում, ընդամենը՝ աղբյուրի ջուր:

Մի օր էլ տնից դուրս եկավ և չվերադարձավ: Փնտրեցինք նրան ամբողջ քաղաքում՝ չգտանք: Հետո լուր հասավ, որ նրան տեսել են վանականի կոշտ զգեստը հագին, մա-

ղախն ուսից կախ, գավազանը ձեռքին՝ հեռավոր ճամփաներով քայլելիս: Ասում էին, իբր, ուխտի է գնում Տիրոջ գերեզմանին: Ճիշտ էր, թե սուտ, բայց նրան այլևս չտեսա:

Երուսաղեմից վերադարձող մատենասիրները հաստատեցին, որ նրան հանդիպել են քաղաքի մատույցներում, որ նա տկար էր, ուժասպառ և հազիվ էր քայլում: Չիմացանք՝ արդյոք հասավ Տիրոջ գերեզմանին, բայց ստույգ էր, որ Տիրոջ ճամփան էր բռնել, ուստի հույսեր ուներ գոնե իր հոգու փրկության համար:

Պարապուրդի մատնված Լեպորելոն անմխիթար վշտից իսպառ տրվեց հարբեցողության: Նա ման էր գալիս քաղաքով մեկ և շարունակ նույն բառն ասում. «Ռոժիկս, ռոժիկս...»: Կապելաներում նրան ծրի գինի էին մատուցում՝ պայմանով, որ իր տիրոջ անկողնային սխրանքները պատմի: Նա էլ անհետացավ քաղաքից, ասում էին՝ թափառում է երկրով մեկ և մի պատառ հացի ու մի թաս գինու դիմաց Դոն Խուանի արկածներն է պատմում ժողովրդին: Անհետացավ նաև հռչակավոր հաշվեմատյանը: Շատերն էին փնտրում, բայց ապարդյուն: Մի մեծահարուստ նույնիսկ մեկ միլիոն խոստացավ

գտնողին, բայց այդ գումարն, ավանդ, այդպես էլ մնաց բանկում:

Այդ օրերին էր, որ ինձ զանգեց աշխարհահռչակ հոգեվերլուծողը: Մենք հանդիպեցինք և բավական երկար զրուցեցինք: Ասաց, որ մտադիր է մի ծավալուն ուսումնասիրություն գրել Դոն Խուանի մասին և խնդրում էր, որ նոր մանրամասներ պատմեմ մեր ամուսնական կյանքից: Եվ այդ օրը մենք մի ապշեցնող գյուտ արեցինք. նրան հատկապես հետաքրքրում էր, թե հարաբերվելիս մենք պահպանակ գործածում էինք: Ասացի՝ ոչ, նա սիրում էր կենդանի շփումը կնոջ հետ: «Ոչ մի անգամ չհղիացա՞ք», - հարցրեց պրոֆեսորը: «Ոչ մի անգամ», - պատասխանեցի ես՝ զարմացած փաստելով, որ հիմա եմ նկատում այդ տարօրինակ երևույթը: «Գիտե՞ք՝ ինչու եմ հարցնում, որովհետև մանրամասն պրպտումների շնորհիվ կարողացա պարզել, որ այն 1003-ից ոչ մեկը չի հղիացել Դոն Խուանից, դուք բացատրություն ունե՞ք այս տարօրինակ երևույթի համար»:

«Հավանաբար, Աստված մեկ անգամ սխալվել էր նրան արարելիս, ուստի այլևս չէր ուզում նրան ժառանգ պարզելով երկրորդ ան-



գամ սխալվել», - յուրովի բացատրեցի ես: Պրոֆեսորը, որ հայտնի էր իր աթեիստական հայացքներով, հարցրեց. «Մի՞թե Աստված այդքան մանրամասն միջնորդում է մեր կյանքին, այն էլ այդպիսի մտերմիկ հանգամանքներում»: «Ինչ իմանամ, պարոն,- պատասխանեցի ես:- Նրա գործերն անքննելի են»:

Այսպիսով, Ամենաբարձրյալը նրան զրկեց նաև ժառանգից: Հետաքրքիր է, եթե ծնվեր, ինչպիսին կլիներ... Երևի իրավացի էր, քանի որ նման արարածն աշխարհում պետք է մեկ հատ լինի:

Ամենաանսպասելին, սակայն, Միջագային Գրողների ընկերակցության նախագահի զանգն էր: Նա ինձ մեղադրում էր, որ ես սպանել եմ առասպելը, որ բացառիկ հերոսին դարձրել եմ ձեռնասուն շնիկ, կեղծ բարեպաշտ, կատարյալ փալաս: «Մեծարգո պարոն,- վրդովված պատասխանեցի ես:- Փոխանակ շնորհակալ լինեք, որ դևին կարողացա հրեշտակ դարձնել, շանթ ու որոտ եք տեղում իմ գլխին»: «Տիկին,- ասաց

նախագահը,- գրական բոլոր գլուխգործոցները դևերի մասին են, իսկ հրեշտակների մասին միայն անալի գործեր կարելի է գրել»: Վերջում նա սպառնաց, որ ինձ դատի կտա հոյակապ հերոսի նախատիպը նենգափոխելու համար:

Իսկ Իլոնան... Դա եղավ նրա վերջին հանդիպումը տղամարդու հետ, եթե այն կարելի էր հանդիպում համարել և եթե այդ վիճակում գտնվող Դոն Խուանին կարելի էր տղամարդ համարել... Նա էլ հիմա ինձ նման խորշում է որձերից, և չնայած երկրի բոլոր ազապ տղամարդիկ երագում էին նրան կնության առնել, այդպես էլ չամուսնացավ: Մենք առաջ էլ մտերիմ էինք, բայց այդ դեպքից հետո մեր միջև առանձնահատուկ մի հարազատություն ծնվեց, որ գնալով ավելի խորացավ և...

Վերջերս հաճախ ենք հանդիպում, Իլոնան երբեմն գիշերում է իմ տանը, իմ կողքին, այն ընդարձակ անկողնում, որտեղից մի օր ես փախա, որպեսզի փրկվեմ ամուսնու սեռական ահաբեկչությունից:



## Անահիտ ԱՂԱՍԱՐՅԱՆ

Պիեռը գրված է հոկտեմբերի 27-ի քաղաքական սպանությունների տպավորության տակ: Գրել եմ ու մոռացել նրա գոյության մասին: Երբ Կարինե Խողիկյանն առաջարկեց որևէ պիես տալ «Դրամատուրգիայում» տպագրելու,

թղթերիս մեջ քրքրեցի ու հանկարծ՝... «Քոչարի»:

Կարդացի:

Փետրվարյան նախագահական ընտրություններից առաջ էր: Մեծագույն զարմանքով հայտնաբերեցի, որ 13 տարի առաջ մի շնչով գրված այս պիեռը մեր օրերի մասին է: Հանուն ճշմարտության, պիտի խոստովանեմ, որ երբեք օպոզիցիայում չեմ եղել: Տեսակով հեղափոխական չեմ ու չեմ հավատում, թե հեղափոխությունները երջանկացնում են ժողովրդին: Որպես քաղաքացի՝ խաղաղասեր եմ, բայց միջիս ստեղծագործողը ժամանակ առ ժամանակ ընդվզում է իմ դեմ ու բողոքի ճիչ արձակում: Այդ պահերին ականջներիս մեջ միշտ թնդում է ավանդական քոչարին:

Զգիտե՛ս ինչու...

# ՔՈՉԱՐԻ

## Պիես մեկ գործողությամբ

### Գործող անձինք

**ՎՈԼԴԵՄԱՐ**

**ՇԵՖ**

**ԺՈՃՈ**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՊՐՈՖԵՍՈՐ**

**ԼԻԼԻԹ**

**ՇԱՔԱՐՅԱՆ**

**ԵՐԵՆԱ**

Բենի ետնամասը ներկայացնում է ամերիկյան դրամը՝ դուարը, որի վրա կլոր շրջանակի մեջ ամերիկյան պրեզիդենտի նկարի փոխարեն խաչված աստծո պատկերն է կամ, պարզապես, գրված է «Աստված»: Բենի երկարությամբ ձգվում է ուղղանկյուն սեղանը՝ տասներկու աթոռներով, որոնց վրա, մեկընդմեջ, նստած են «երկրի տիրակալները»: Նրանց արանքներում մանեկեններ են: Դրանք ձեռնպահներ են: Հերթով լուսավորվում են նրանց դեմքերը:

**ՇԵՖ** - Սով է:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ասում են՝ «սով է», ու մեղավորն էլ մենք ենք:

**ԺՈՃՈ** - Ո՞վ ա ասում:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Ժողովուրդը:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Հոգու սով է:

**ԼԻԼԻԹ** - Ո՞վ է մեղավոր:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Ասում են՝ մենք:

**ԺՈՃՈ** - Ո՞վ ա ասում:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Ժողովուրդը:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ժողովուրդը ոչխարի հոտ ա, որին շարունակ պետք են ինչ-որ գաղափարներ:

**ՇԵՖ** - Գաղափար ա պետք, որ զցենք բերանները՝ արածեն:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ժողովուրդը ոչխարի հոտ ա, որին գաղափար ա պետք, որ արածի: Ինչքան անհեթեթ լինի գաղափարը, էնքան ախորժակով կուտի:

**ԼԻԼԻԹ** - Գաղափար ա պետք:

**Մտածում են:**

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Գրի: Օրակարգում երկու հարց կա: Առաջին՝ ծնել, կամ հորինել, կամ ստեղծել, կամ

հղանալ, կամ մոգոնել, կամ բատրել մի անհեթեթ գաղափար: Երկրորդ՝ իրականացնել գաղափարի ծնունդը օպոզիցիոն կուսակցությունների միջոցով:

**ԵԵՖ** - Նոր հայերի արտահերթ նիստը հայտարարում եմ բացված: Ամիս, ամսաթիվ: Արձանագրի:

**ԼԻԼԻԹ** - Իսկ ֆոտոգրաֆ չի լինելու:

**ԺՈԺՈ** - Սրան էլ թողնես՝ մի գլուխ նկարվի: Չէ, օրիորդ ջան, չի լինելու: Գաղտնի նիստ ա, դռնփակ:

**«Օրիորդ» բառի վրա կողքինը փռվում է:**

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Պերերիվ չտամք, հոգնեցինք:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Ուշքդ ու միտքդ պերերիվն ա: Գաղափար է պետք: Վաղը էս սոված ժողովուրդը քիչ-քիչ խելքի կգա, ու փոթորիկ կսկսվի: Էդ ժամանակ «հաջող» ասա վիլլաներիդ ու դրածո գործին: Մի վայրկյանում բարեկեցությանդ նավը սրընթաց կխորտակվի:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Դու ինձ երևակայական աղետներով մի վախեցնի: Մինչև նա չարթնանա, ոչինչ էլ չի լինի: Ժողովրդին, գաղափարից բացի, նաև լիդեր է պետք, առաջնորդ: Իսկ առաջնորդին մենք ապահով ձևով քնացրել ենք: Մի հարյուր տարի դեռ անվրդով կքնի:

**ԺՈԺՈ** - Իսկ էս հարյուր տարվա ընթացքում՝ «ով սաղ, ով մեռած»:

**ԵԵՖ** - Ինձնից հետո՝ թեկուզ ջրհեղեղ: Ասել է Սողոմոն իմաստունը:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Սողոմոնը չի ասել, Լյուդովիկոս...

**ԵԵՖ** - Կարևոր չի: Հիմի ես եմ ասում: Թե ինձնից առաջ ով ա ասել, կարևոր չի: Ինձնից առաջ՝ թեկուզ ջրհեղեղ:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Պարոնայք, պարոնայք, եկեք ժամավաճառությամբ չզբաղվենք: (Նայում է ժամացույցին:) Ժամանակ չկա: Մի ժամից վեցը կխփի: Արագացրեք:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Վեցին ինչ կա:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Վեցին իմ ընթրիքի ժամն է:

**ԺՈԺՈ** - Հա, նա որ ուղիղ վեցին հաց չուտի, ստամոքսն իրան կուտի: Էնքան էլ երկար ա ուտում: Երկար խոսում, երկար ուտում, երկար... (Հռհռում է:)

**ԵԵՖ** - Կողմնակի խոսակցությունները թողնել: Անցնենք բուն հարցին: Գաղափար է պետք:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Հա, գաղափար է պետք ծնել: Վիճակը լուրջ է:

**ԺՈԺՈ** - Եկեք ծնենք:

**Բողոքը միասին տեղում մտած «ծնում են»:** «Հը, հը, հը, հը...»: **Նրանց ձայներից ծնվում է ռեփը:** Հնչում է երաժշտություն, բոլորը հերթով տեղից բարձրանում, սկսում են պարել: **Շնչակտուրներս է ընկնում Շաքարյանը:**

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Սպասեք, սպասեք...  
Բան ունեմ ասելու... Կանգնեք...  
Ինձ լսեք, սպասեք... Ծեֆ...

**ԾԵՖ** - Հը՞, ի՞նչ ա եղել, ինչի՞ ես  
նիստը խանգարում:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Նա... նա... թա...  
թարթիչը...

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Էյ, Ծաքարյան ես,  
Ծաքար ես թե Ծակալ ես, ինչո՞ւ  
ես նիստը խանգարում: Զեզ  
դպրոցում չե՞ն սովորեցրել, որ  
ժողովը խանգարել չի կարելի:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Ես դպրոց ընդհան-  
րապես չեմ գնացել:

**ԺՈԺՈ** - Իրան պետք էլ չի: Բենզինի  
գործից հասկանում ա՛՝ հերիք ա:  
Գիտի՞ ինչքան պիտի «վերև»  
տա, ինչքան՝ ինքն ուտի: Չէ՞, Ծա-  
կալ:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Ծեֆ... Դավիթը...  
Լեզուս չի պտտվում, որ ասեմ:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Դավիթն՝ ի՞նչ...  
Դավիթը լեթուրգիական քնով  
քնած է: Աստված պիտի իջնի, որ  
զարթնի:

**ԺՈԺՈ** - Իսկ Աստված մեր կողմից  
ա: Բա՞... Սիմպատիայի հարց ա:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Մենք պիտի վիզա  
տանք, որ իջնի: Կահազանգենք՝  
վար կիջնի, ձեն չենք հանի՝ տե-  
ղից չի շարժվի: Իրա ծանր տեղն  
ինչի՞ պիտի թեթևացնի: Հո քեզ  
նման «շեստյորկա» չի: «Ծեստ-  
յորկան» էն իրեք հատ վեցն ա:  
Վեց, վեց, վեց: Բայց մենք դրա-  
նից վախ չունենք: Մենք էլ ենք  
վեց: (Հաշվում է ներկաներին:)

Մեկ, երկու, երեք, չորս, հինգ,  
վեց: (Ծաքարյանին.) Դու հաշիվ  
չես: (Բոլորը հռհռում են:)

**ԼԻԼԻԹ** - Բա ինքն ի՞նչ ա, եկեք  
պարզենք:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Ինքը մարդ չի,  
մարդահաշիվ ա: Իսկ մենք՝ ամեն  
մեկս, մի աստված:

**ԼԻԼԻԹ** - Պարոնայք, պարոնայք,  
մենք չափն անցնում ենք: Աստծո  
հասցեին էդպես խոսելը... մեզ չի  
ներվի: Ինչո՞ւ բարկացնենք նրան:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Հա, իսկապես... հա-  
զիվ սիրտը շահել ենք: Հազիվ  
համոզել ենք, որ մեր գրպանը  
սիրի: Գրպանը կամ քսակը, կամ  
դրամապանակը, կամ բանկի  
հաշվեհամարը, կամ ստամոքսը:

**ԺՈԺՈ** - Իսկականից, արա... Ինչի՞  
եք իզուր տեղը ալիքները խառ-  
նում: Տրամադրության մարդ ա,  
մեկ էլ տեսար... Եկեք աղոթենք,  
խաթրը առնենք:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Ծեֆ, ես կարևոր բան  
ունեմ ասելու, մի րոպե լսեք:  
Ջանս դողում ա...

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Դու գնա, ջանդ գոլ  
ջրում տաքացրու:

**Բոլորը ծնկի են իջնում դուարի  
առաջ: Հնչում է երաժշտությունը:**

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Տղերք, ախր...

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Ձենդ: Դուրս գնա:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Տղերք, թարթիչը  
շարժվեց...

**ԺՈԺՈ** - Ծըշ... գոլորշիացի: Դավայ-

դավայ... (Հրում է դուրս:) Սրա մերը հաստատ սրտից թույլ կնիկ ա եղել:

**ԼԻԼԻԹ** - Ինչի՞...

**ԺՈԺՈ** - Թե չէ օրորոցում սրան կխեղդեր:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Մի խանգարեք: Կամ աղոթում ենք, կամ չենք աղոթում:

**ԽՈՒՄԲԸ** - Աստված ջան, ջան,  
ջան, ջան,

*Տեր մեր, որ երկրի վրա ես.*

*Օրհնյալ լինի քո անունը,*

*Հավերժ լինի քո արքայությունը*

*Ինչպես մեր երկրում,*

*էնպես էլ երկրից դուրս:*

*Թող, որ հանգիստ գիշերը քնենք,*

*Թող, որ Քնածը երբեք*

*չարթնանա,*

*Թող, որ էս կյանքը կայֆով*

*վայելենք,*

*Ու ժողովուրդը ոչինչ չիմանա:*

*Դու ես մեր տերը, մեր մեծ*

*իշխանը,*

*Հոսիր անդադար,*

*լցվիր մեր գրպանը,*

*Եվ մի տանիր մեզ ի փորձություն*

*Ձի քո է արքայություն և փառք*

*Հավիտյանս հավիտենից:*

*Ամեն...*

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Այ, աստված սենց կլինի: Ամեն տեղ ա ու ոչ մի տեղ: Ոչ կարաս խաչես, ոչ կարաս բռնես: Ամեն երկրում մի ձև ունի, երկրի վրա՝ հազար երես: Ամեն մեկի ձեռքով ա անցնում, մտնում գրպանը, մտնում սրտի մեջ,

մտնում հոգու մեջ: Ու ոչ մի եկեղեցի պետք չի: Բոլորն էլ պաշտում են, ձգտում, երազում, քնի մեջ տեսնում, իրարից փախցնում: Ու ոչ ոք չգիտի՝ ինչ է ինքը, ո՞վ է: Նշանները ցրված են աշխարհով մեկ: Թղթադրամները... նշանները կան՝ ինքը չի երևում: Ի՞նչ է փողը: Դրամներն ես տեսնում, նշանների հետ գործ ունես, բայց ինքը՝ չկա, աներևույթ է:

**ԺՈԺՈ** - Ախ, ցավդ տանեմ:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Հզոր, ուժեղ: Ծրջում է աշխարհով մեկ, շրջանառության մեջ: Առել է աշխարհն իր հորձանուտի մեջ, հողմի պես պտտացնում է, մարդկանց էլ հետը՝ տաշեղների պես: Խառնել է իրար կյանք, երջանկություն ու ճակատագրեր:

**ԺՈԺՈ** - Փող: Այ, աստված եմ ասել:

**ԵԵՖ** - Եկեք հիշենք մեր աստծո պատվիրանները: Վաղուց չենք կրկնել: Մեր աստծո 12 պատվիրանները:

**ԼԻԼԻԹ** - Առաջին: Փող սարքելն ավելի հեշտ է, քան փող պահելը: Հարուստը նա է, ով տիրապետում է փողը պահելու արվեստին ու փող աշխատելու արհեստին: Միշտ հիշիր. ինչ էլ որ առաջարկեն մարդիկ, հարց տուր ինքդ քեզ. «Իսկ ի՞նչ եմ շահում դրանից ես»: Մի հատ սենց խոսելուց նկարեիք ինձ, էլի... (Կեցվածք է ընդունում:)

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Երկրորդ: Այն, ինչ ունես, ավելի թանկ է, քան այն, ինչ չունես: Եթե քեզ առաջարկում են քո մի գլուխ պանրի դիմաց մի ամբողջ գործարան, պահիր քո մի գլուխ ընտիր պանիրը և հիշիր. «Ի՞նչ արժի այն գործարանը, որ վաճառում են մի գլուխ պանրով»:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Երրորդ: Երբեք մի շտապիր գործի մեջ: Երբ քեզ գործարքի ժամանակ շտապեցնում են ու ասում. «Կամ հիմա, կամ երբեք», ասա՝ «Երբեք»: Կամ ասա՝ «Կմտածեմ»: «Վաղը...»: Եվ միշտ հիշիր՝ չշտապել:

**ՇԵՖ** - Չորրորդ: Գնիր միայն այն, ինչ կկարողանաս վաճառել: Մի առ ապրանք միայն նրա համար, որ քեզ դուր է գալիս: Դա չափանիշ է: Գնելուց առաջ հարց տուր քեզ. «Սա կարելի է վերավաճառել»: Եվ միշտ հիշիր. որքան յուրօրինակ, գեղեցիկ ու անսովոր է իրը, այնքան ավելի քիչ շանս կա, որ կկարողանաս վերավաճառել: Տաս մարդուց իննուկեսը սովորական մարդիկ են: Գնիր միայն սովորական ու պետքական ապրանք: Անձրևանոց՝ առ, բայց փող մի ծախսիր 19-րդ դարի օրիգինալ գավազանի վրա:

**ՎՈՒՂԵՄԱՐ** - Հինգերորդ: Փողը բարձր դասիր ծրագրերից: Ծրագիրը այն է, ինչին հավատում են բոլորն ու գայթակղվում: Պլանը, ծրագիրը ամեն անգամ թվում են

իդեալական: Պլանը, ծրագիրը հույսն է: Հույսի վրա փող մի ծախսիր, դու դա ունես: Ծրագիրը ինքնին ոչինչ չարժի, նրա արժեքը իրականացման չափն է: Ծրագրեր կազմիր, բայց գործիր սթափ և մի ընկիր ծրագրիդ ծուղակը: Միշտ հիշիր. փողը վեր է ծրագրերից:

**ԺՈԺՈ** - Վեցերորդ: Վաճառիր միայն էն դեպքում, երբ ավելի են տալիս: Լավ վաճառել՝ նշանակում է ստանալ ավելին, քան ապրանքն արժի: Իսկ դա, ուզես-չուզես, խաբեություն է: Բայց լավ վաճառել, նշանակում է՝ ստանալ ավելին, քան ապրանքն արժե: Ուզես-չուզես: Ուրեմն՝ միշտ հիշիր. մինչև չխաբես՝ չես ծախի:

**ՎՈՒՂԵՄԱՐ** - Յոթերորդ: Խորհրդողակցիր կնոջդ կամ մորդ հետ: Կինը կասկածամիտ է և ավելի հաշվենկատ, ավելի սեփականատեր: Տղամարդը գործի մշակն է, կինը՝ բերքահավաքը: Տղամարդը խաղի մասնակիցն է, խաղամուրը: Իսկ կինը՝ մրցանակակիրը: Դու հանուն խաղի կարող ես վրիպել ազարտի մեջ, իսկ կինդ վտանգի տակ չի դնի երբեք եկամտի իր աղբյուրը:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ութերորդ: Միշտ հիշիր. շահույթն ավելի կարևոր է, քան ինքը՝ գործը: Երբեք մի տարվիր գործով՝ ի վնաս եկամ-

տի: Գործ հանուն գործի՝ մեծ շռայլություն է: Շահույթը քո միակ նպատակը պիտի լինի: Եթե մի կով առնեմ 100 դոլարով ու տուն դառնալիս մեկն ինձ ասի՝ «120 եմ տալիս»՝ ես տեղնուտեղը կծախեմ: Կծախեմ, ինչքան էլ որ կովն ինձ պետք լինի: Չկա ավելի լավ բան, քան շահույթը: Սա բարձրացնում է տրամադրությունը:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Իններորդ: Ոչ մի առիթ ձեռքիցդ բաց մի թող: Կյանքը կարճ է: Ապագան՝ անորոշ, անցյալը՝ ետևում: Ավելի լավ է այսօրվա փոքր եկամուտը, քան հաջորդ տարվա մեծը: Բայերի երեք ժամանակների մեջ շահույթի հարցում անցյալից ու ապագայից ավելի սիրիր ապահով ներկան:

**ԾԵՖ** - Տասներորդ: Փողի գործում միշտ եղիր փոքրամասնության հետ: Եվ կշահես: Զաղաքականության մեջ միշտ հարիր մեծամասնությանը: Եվ կշահես: Երբեք մի վաճառիր, երբ վաճառողները շատ են: Եղիր փոքրամասնության մեջ: Երբեք մի գնիր, երբ գնորդներն են շատ: Վերարկուն գնիր ամռանը: Մի եղիր մեծամասնության, ամբոխի հետ: Ամբոխը միշտ խաբված է: Երբ կյանքը մի թեթև լավանում է, նա անմիջապես դառնում է լավատես: Դու հոռետես դարձիր, որ չխաբվես: Երբ ձգնաժամ է, ամբոխը դառնում է հոռետես:

Օգտվիր դրանից: Վաճառիր լավատեսներին ու գնիր հոռետեսից:

**ԺՈՃՈ** - Տասնմեկերորդ: Խուսափիր թակարդից: Ամենամեծ թակարդներից մեկը մեր շենքն ա: Մի տեղափոխվիր, մի ճոխացրու օֆիսդ, գունավոր լույսեր, մեծ ցուցանակներ մի կախի դրսում: Դա չի մեծացնում եկամուտը: Բիզնեսում մի աստված կա մենակ՝ նորին մեծություն եկամուտը:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Տասներկուերորդ: Թքիր զգացմունքներիդ վրա: Երբեք պարտք մի տուր: Հարազատին՝ որպեսզի չփչացնես հարաբերություններդ, ընկերոջդ՝ որովհետև անձանոթի մեկն է: Ամեն պարտք ուզող պորտաբույծ է: Բնավորությամբ՝ չքավոր, բնույթով՝ պարագիտ: Պարագիտները լինում են երեք տեսակի՝ ընտանեկան, ծանոթ ու անծանոթ: Երբեք էլ չքավոր են: Հեռու մնա չքավորներից: Եվ միշտ հիշիր. նրանք կարողացան կործանել անգամ Հռոմեական հզոր կայսրությունը:

**ԼԻԼԻԹ** - Լավ, եկեք անցնենք օրակարգին: Էս բարձրակրունկների վրա երկար չեմ կարողանում կանգնեմ: Ուրքերս հոգնում են:

**ԾԵՖ** - (գուսպ): Հա, քաղցր ջան: Անցնենք: Նստեք:

**ԼԻԼԻԹ** - (կոշիկները ցուցադրելով):



Երեկ են Ֆրանսիայից բերել: Կոկորդիլոսի կաշվից ա: Բայց հասարակ չի: Չադ լճի կոկորդիլոսներից ա: Երկու տարի հաստով ինձ համար պիտոմնիկում պահել են: Բարձր ա, չէ: Տասնմեկ սանտիմետր ա:

**ԵԵՖ** - Մի հատ կոֆե սարքի, սիրուն ջան:

**ԼԻԼԻԹ** - Դանդ, թե՛ քաղցր:

**ԵԵՖ** - Դառը, քաղցր ջան:

**Կհնը կշկշում է, կրծկալից հանում է սեյֆի բանալին, բացում, սեյֆից հանում է սուրճի պարագաները:**

**ԵԵՖ** - Էդ բանալին էլի տեղը կդնես:

**ԼԻԼԻԹ** - (կշկշալով): Կժերիս մեջ:

**ԵԵՖ** - (գուսպ): Կժերիդ մեջ:

**Շնչակտուր ներս է ընկնում Շաքարյանը:**

**ԵԱՔԱՐՅԱՆ** - Եեֆ, տղերք... թարթիչը... թարթիչը...

**ԵԵՖ** - Ինչ թարթիչ, տղա:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Թարթիչը, էլի, թարթիչը: (Հռհռում է:)

**ԺՈԺՈ** - Թարթիչը... Վայ, հորս արև... Խփնվել ա... (Հռհռում է:)

**Բոլորը քրքրջում են:**

**ԵԱՔԱՐՅԱՆ** - Սպասեք... քնածը արթնացել է:

**Քար լռությում: Դադար:**

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ինչ է ասում...

**ԺՈԺՈ** - (տեղից բարձրանալով): Հըր կրկնի:

**ԵԱՔԱՐՅԱՆ** - Քնածը արթնացել է:

**Դադար:**

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ձեռ են առնում, շան ծնունդ: Դու գիտես, քեզ ինչ կանեն: (Բռնելով նրա օձիքից:) Հասկանո՞ւմ ես՝ ինչ ես ասում: Ուզում ես՝ պերերիվին քեզ ուտե՞մ: Հում-հում:

**ԵԱՔԱՐՅԱՆ** - Երդվում եմ: Նորից գնացի, ստուգեցի: Թարթիչը շարժվում է: Երկրորդ անգամ գնացի: Ասի՝ երևի աչքիս է երևացել: Գնացի, ստուգեցի: Երդվում եմ, տղերք: Ախր, ես ինչ մեղք ունեմ: Թարթիչը շարժեց:

**Բոլորը իրար են նայում: Լարվում են:**

**ԺՈԺՈ** - Ինչ ես ուզում ասել, արա՛... Մի բոպե, մի բոպե... Հանգիստ: Էս գործը հանգիստ ա սիրում: Без паники! (Շաքարյանին.) Ուզում ես ասել՝ նա... նա, էլի, նա... զարթնե՛լ ա: Էս ես ուզում ասել, հա՛մ:

**ԵԱՔԱՐՅԱՆ** - Չէ... չի զարթնել: Բայց կարող ա զարթնել:

**ԺՈԺՈ** - Կարող ա... (Հռհռում է:) Վայ, հորս արև:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Կարող ա: (Թեթևացած շունչ է քաշում:)

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Կարող ա... (Ծիծաղում է:)

**Բոլորը հռչակում են: Լիլիթը սուրճ է մատուցում:**

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Բայց, ախր, թարթիչը...

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Հլը «հո» արա... «հո» արա, ասում եմ:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Հո:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Բանի՞ բաժակ ես խըմել: Խստովանիր, քանի՞ բաժակ ես խմել: Կամ խոստովանիր, կամ հիմա գնա, դիմում գրի: Ազատ ես:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Ախր, ո՞նց ասեմ, շեֆ, ինչ իմանամ՝ քանի բաժակ կլինեն: Երեկվանից ձեր բաժակների մեջ ինչքան մնացել էր՝ էդ եմ խմել: Ես ո՞նց հաշվեմ, թե քանի բաժակ ա անում:

**ԺՈԺՈ** - *(թեթևակի հասցնում է նրա ծոծրակին):* Դե գնա, գնա: Գնա գործիդ: Զեզ ինչի՞ համար ենք փող օգում: Որ Զնածի կողքին մնաս, չէ: Բա ինչի՞ ես պոստդ թողել... դե դավայ, գոլորշիացի... *(Հրում է դուրս:)*

**Շաքարյանը դուրս է գնում:**

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Տուգիկ, հլը հետ արի: *(Ինքնագոհ:)* Մենք տուզերն ենք, սա էլ՝ տուզի ծուտը:

**Շաքարյանը վերադառնում է:**

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Դեղը տվե՞լ ես:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Հա, շեֆ:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Սրսկումներն արե՞լ ես:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Հա, շեֆ:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Տեղը տեղի՞ն, ոնց որ պետք ա:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Հա, շեֆ: Ոնց որ պետքն ա, ոնց որ միշտ:

**ԵԵՖ** - *(հանգիստ):* Գնա, գնա գործիդ:

**Շաքարյանը դուրս է գնում:**

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Տուգիկ, հլը ետ արի:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - *(վերադառնելով):* Հա, շեֆ:

**Բոլորը ծիծաղում են:**

**ԺՈԺՈ** - Դիմումը գրի, նավայակի:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Հեռացնում եք:

**ԺՈԺՈ** - Էսօր՝ չէ, բայց դու նավայակի գրի, բեր: Մի օր պետք կգա:

**ԵԵՖ** - *(Շաքարյանին):* Գնա, գնա: *(Մյուսներին.)* Վերջ տվեք:

**Շաքարյանը կուչ եկած գնում է:**

**ԵԵՖ** - Ճիշտ ես, սրան պետք ա հեռացնել:

**ԺՈԺՈ** - Ինձ մնար՝ վաղուց էի հանել: Բայց՝ նա գիտի: Գիտի, է, գիտի:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Հա, իսկապես: Իմացողների թիվը վեցից չափտի անցներ: Վրիպեցինք: Յոթերորդ մարդը չափտի իմանա, որ... հինգ անգամ հինգ՝ քսանհինգ է: Վրիպում էր: Կամ բացթողում, կամ սխալ, կամ...

**ԼԻԼԻԹ** - Վոլդեմար, հերիք է էդ հոմանիշներով գլուխներս տանես: Անցնենք բուն հարցին: Ինչի՞

համար ենք հավաքվել: Սուրճը մաշկը մզացնում է, ես չեմ խմում:

**ԵԵՖ** - Գաղափար է պետք:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Չի լինի, էդ հարցով Ազգային ժողովը զբաղվի: Գաղափարի հարցը քեզ են տվել: Իշխանությունը ո՞ւմ ձեռքին ա, թող նրանց գլուխն էլ ցավի: Էդ մեր պրոբլեմը չի: Ես հոգնել եմ:

**ԺՈԺՈ** - Խոսաց... Փողը ո՞ւմ ձեռքին ա: Մեր: Ուրեմն՝ երկրի տերը մենք ենք: *(Քթի տակ:)* Քանի դեռ Քնածը քնած է: *(Բարձր:)* Տերը մենք ենք, ուրեմն՝ պրոբլեմն էլ մերն ա: Իշխանությունը, էն իսկականը, մեր ձեռքն ա: Պետք ա պահպանենք: Հը... Ո՞ւմ մոտ ինչ միտք կա, դավայ: Մենք ու մենք ենք:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Բա դրանց ինչի՞ համար ենք պահում, որ մի հատ գաղափար էլ չեն կարող հորինեն: Դա էլ պիտի մենք անենք:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ես մեկին գիտեմ, որ շատ կարևոր միտք է տալիս այդ կապակցությամբ:

**ԺՈԺՈ** - Ո՞վ ա, խելքը գլխին մարդ ա՞:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Այո, Մաքիավելին:

**ԺՈԺՈ** - Վրացի ա՞:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Չէ, իտալացի: Նրա անունը տալիս են որպես խաբեության, երկերեսանության, դաժանության և անբարոյականության հոմանիշ:

**ԺՈԺՈ** - *(հռհռալով)*: Էդ հո մերոն-

ցից ա: Կանչենք, թող գա, տանենք Սևան, ծով ուտացնենք... էն մեծերից:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Դա հնարավոր չէ, նա մեզանից 400 տարի առաջ է ապրել: *(Կարդում է:)* «Իշխանությունը կարող է պահել նա, ով ընդունակ է ուժ գործադրել: Դաժանությունը վատ բան է, երբ ի հայտ է գալիս ժամանակի ընթացքում: Դաժանությունը բարենպաստ է, երբ կիրառվում է միանգամից, անմիջապես: Իշխանությունը պահելու համար մարդկանց պետք է կամ փայփայել, կամ ոչնչացնել: Ուժ գործադրելիս չարությունն ու չարիքը պետք է լինեն մեծ, և միանգամից, այդ դեպքում հաղթանակն ապահովված է, քանի որ փոքր չարության դիմաց մարդիկ կարող են վրեժ լուծել, իսկ մեծ չարության դիմաց անկարող են»:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Վատ չի, վատ չի...

**ԺՈԺՈ** - Զնացնելու մասին խոսք չկա՞: Բան չի գրում էդ հարիֆը:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ոչ, այն ժամանակ տեխնիկական միջոցներ չկային համապատասխան: *(Շարունակում է կարդալ:)* «Ուժ պետք է գործադրել մեծ չափով, միանգամից և մեկ անգամ: Բարեգործությունն է, որ պետք է գործադրել քիչ-քիչ, ժամանակի ընթացքում: Բարի գործը ոչ մի դեպքում չի կարելի ժողովրդին մատուցել

միանգամից և շատ: Եւ այդ բարեգործությունը կմոռանա նույնքան արագ, որքան մեկ անգամ գործված մեծ դաժանությունը: Իսկ քիչ-քիչ, բայց ժամանակի ընթացքում մի քանի անգամ գործված բարի գործերով իշխանությունը կարող է սիրաշահել ժողովրդին, որը գոհ կլինի, քանի որ ժողովրդի մոտ տպավորվում է հաճախականությունը: Եւ հաշվում է «անգամները» և ոչ թե բարեգործության կամ դաժանության չափը»:

**Ընչակտուր ներս է ընկնում Ծաքարյանը:**

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Ծեֆ...

**ԺՈԺՈ** - Ինչ ա, այ տղա: Սա էլ ոնց որ մեր ռեկլամն ըլնի: Ամենահետաքրքիր տեղում կտրում, ներս ա ընկնում:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Ծեֆ, ձկույթն էլ շարժեց: Երդվում եմ: Ուզում եք՝ սպանեք, ինչ ուզում եք՝ արեք: Զարթնում ա:

**ԺՈԺՈ** - Դիմումդ գրեցիր:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Հա, հեսա: *(Տալիս է թուղթը:)*

**ԺՈԺՈ** - Դե, գոլորշիացի:

**ԾԵՖ** - Ժոժո, սպասի: Էս տեսակ բաների հետ կատակ չեն անում: Բիչ առաջ թարթիչն էր, հիմա՝ ձկույթը:

**ԼԻԼԻԹ** - Իսկապես, ձկույթը թարթիչ չէ: Դա լուրջ բան է: Եւ այնք, օրի-

նակ, իմ ձկույթը... *(Ֆուցադրում է:)* Թարթիչներս ես եմ ներկում, թեթև բան է: Բայց մատներս՝ միայն վարսավիրի մոտ: Առաջ սուր չանչերն էին մոդա, իսկ հիմա՝ եղունգները քառակուսի են կտրում և եզրը ներկում են ուրիշ գույնով: Եւ այնք, իմը սպիտակ է... Ֆոտոգրաֆ չկամ, մի հատ նկարի:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ես, որպես էպոսագետ, հայտարարում եմ՝ նա չի կարող արթնանալ քնից: Բացառվում է:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Չեք հավատում, գնացեք, նայեք: Ես իմ պարտքն եմ համարում... Ախր, որ զարթնեց, ամեն ինչ շուռ կգա: Կորած ենք: Ճիշտ չեմ ասում, շեֆ ջան:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Գուցե ես գնամ, ստուգեմ: Հը՞...

**ԺՈԺՈ** - Այ մարդ, շաշ-շաշ դուրս ա տալի, ինչ եք խառնվել իրար:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Չէ, ես անհանգիստ եմ: *(Ծաքարյանին.)* Արի... *(Կանգ է առնում:)* Տեր Աստված, հազար տարի չեմ տեսել նրան: *(Ծաքարյանին.)* Ծանո է փոխվել:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Չէ, մենակ վերջերս սկսել ա հառաչել:

**ԼԻԼԻԹ** - Ինչ...

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Հառաչում ա, հոգոց ա հանում:

**Բոլորն անհանգստացած իրար են մայում:**

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Երբվանի՞ց, երբ ասկսել:

**ԵԱԶԱՐՅԱՆ** - Մի քամի ամիս կըլնի:

**ԵԵՖ** - Այ տղա, բա ինչի՞ զեկուցագիր չես գրել: Ինչի՞ հաշվետվության մեջ չես նշել:

**ԵԵՖ** - Ախր, դուք կարգադրել եք, որ դոկումենտ չլինի, գրավոր ոչ մի բան:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Բանավոր զեկուցիր:

**ԵԱԶԱՐՅԱՆ** - Համ էլ, կվարտալը չեմ փակել: Ամսվա վերջում կներկայացնեմ: Ճակատին մեկ-մեկ քրտինքի կաթիլներ են հայտնվում, էդ էլ գրեմ:

**ԼԻԼԻԹ** - Ինչ... կաթիլներ... Ես կգժվեմ: Սիրտս...

**ԵԱԶԱՐՅԱՆ** - Զրտինքի կաթիլներ: Անընդհատ սրբում եմ: Էդ էր, էլի, որ թարթիչի շարժվելը տեսա:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Գնացի՞նք:

**Շաքարյանն ու Հարությունը դուրս են գալիս: Բոլորն անհանգիստ սպասում են պատասխանի:**

**ԼԻԼԻԹ** - Մամա... Սրտիս զարկերն արագացել են: Հիմա սիրտս դուրս կթռչի կրծքիցս: *(Բռնում է կողքինի ձեռքը, տանում կրծքին:)* Տե՛ս, ինչ արագ է խփում...

**ԺՈՃՈ** - *(շոշափելով):* Երրորդ... Չէ, ոնց որ երկրորդ աս:

**ԼԻԼԻԹ** - *(ուղղելով կրծկալը, վիրավորված):* Չորրորդ... Մի հաս ֆոտոգրաֆ էլ չկա...

**ԵԵՖ** - Տղերք... *(Դադար:)* Բոլոր թղթերը պետք է կարգի բերել: Ով ինչ ունի կիսատ թողած: Պետք է մանրակրկիտ ստուգել, ինչ թուղթ պակասում է՝ հետին ամսաթվով-բանով լրացնել: Հարկերն էլ, ֆոնդերն էլ, ամեն ինչ պետք է կարգի բերել: Որ հանկարծ...

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Որ հանկարծ... Ինչ:

**ԵԵՖ** - Ինչը՞ ինչ: Ճիշտ է ասում, իսկ եթե հանկարծ զարթնեց: Ինչ պատասխան եք տալու նրան: Ես դատից, խայտառակությունից չեմ վախենում, ոչ էլ հաշվեհարդարից: Ես...

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Դու նրանից ես վախենում:

**ԵԵՖ** - Դու չես վախենում: Դուք չե՞ք վախենում: Վախից չենք քնացրել:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ես, որպես էպոսագետ, հայտարարում եմ՝ նա կարող է արթնանալ միայն քոչարու ձայնից: Իսկ քոչարին օրենքով արգելված է: Ո՞նց կարող է արթնանա:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Չի արթնանա: Էնքան քնաբեր ենք սրսկել՝ լրիվ բթացած աս:

**ԼԻԼԻԹ** - Հա, ինչի՞ պիտի արթնանա:

**ԵԵՖ** - Որովհետև ամեն քնած ի վերջո արթնանում է: Վաղ թե ուշ: Արթնանում է:

**ԼԻԼԻԹ** - *(սեղանին երեք անգամ խփելով):* Թու, թու, թու... *(Կծում է օձիքը:)* Աստված հեռու տանի: *(Երեք անգամ պտտվում է տե-*

դում:) Փորձանքից հեռու: Ծորս լավն է, չէ՛, հատուկ կլյոշ եմ ձևել սվել, որ պտսվելիս, այ սենց, բացվի... (Եվս մեկ անգամ պտսվում է տեղում:)

**Ներս է մտնում Շաքարյանը՝ քարշ տալով Հարությունին:**

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Նաշադիր ա պետք...

Ծտապ օգնություն կանչեք: (Բոլորը թափվում են Հարությունի գլխին, Լիլիթը շտապ օգնություն է գանգում:)

**ԼԻԼԻԹ** - Ուշքը գնաց:

**ԺՈԺՈ** - Ինչ ես անում, ո՛ր ես գանգում: Ստեղ օտար մարդ չպիտի մտնի:

**ԾԵՖ** - Պուսը բռնի... (Հարությունին թեթև հավաճներ է հասցնում:)

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Որ ասում էի՝ չէիք հավատում:

**ԾԵՖ** - Նաշադիր չունեն... ինչի՞ մոտդ չես պահում:

**Շաքարյանը մեղավոր ուտերն է քոթվում:**

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ո՛ւմ համար պահի, քնածին արթնացնելո՛ւ: (Շարունակում է ապտակել:)  
Զուր, մի բաժակ ջուր սվեք:

**Բեմի աջ մասում Պրոֆեսորը բացել է սեյֆը, միջից քրթապանակներ է հանում, քրքրում է սեղանի վրայի քրթերը:**

**ԼԻԼԻԹ** - Վերցրեք իմ օձանելիքը... (Իր վրա է ցանում:)

**ԾԵՖ** - Պետք չէ... ուշքի եկավ: Հարություն... ի՞նչ ես, հարություն առա՛ր: Բերեք էստեղ, բերեք նստացրեք:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Դե, հիմի թող ինքը պատմի:

**Հարությունը հերթով նայում է մերկաներին:**

**ԺՈԺՈ** - Խոսա, հը՛...

**ԼԻԼԻԹ** - Սպասի, ուշքի գա՛՛ նոր: Չե՛ս համբերում: (Վիզը երկարելով Ժոժոյի կողմը:)  
Լավ հոտ ա, չէ՛:

**ԺՈԺՈ** - (ձգվելով նրան): Չէ, չեմ համբերում: Հորս արև, սիրտս կանգնում ա: Հարություն, խոսա...

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - (հազիվ արտաբերելով): Նա... աչքերը բացեց:

**Լռություն: Հանկարծ բոլորի ուշադրությունն է գրավում քրթերը քրքրող Պրոֆեսորը:**

**ԾԵՖ** - Դո՛ւ ինչ ես անում, ի՞նչ ես քրքրում, ժանամակ ես գտել:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Մեր առաջին նիստի արձանագրությունն եմ փնտրում: Էս էլ չի... Գտա: Փառք Աստծո... Ըհը: (Դնում է գրպանը:)

**ԺՈԺՈ** - Հիմա ի՞նչ ենք անելու, տղերք:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Տեր Աստված... ի՞նչ է լինելու մեզ հետ:

**ԾԵՖ** - Հաստամտ տեսար... բացե՛ց աչքերը:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Հա:

**ԺՈԺՈ** - Հիմա բանց ա:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Չէ, դա մի քանի վայրկյան տևեց: Նա բացեց աս-քերը՝ հայացքը շաղված էր: Հետո նորից փակեց:

**ԾԵՖ** - Լավ: Նստեք բոլորդ: Վիճակը լրջանում ա: Մենակ՝ առանց խուճապի: Զգացմունքները մի կողմ թողեք: Հիմա պետք է որոշենք մեր անելիքը: Եկեք նստենք, մի հատ կենտրոնանանք, գցենք-բռնենք:

**Պրոֆեսորը քրթապանակները դնում է սեյֆի նեջ: Բոլորը նստում են:**

**ԾԵՖ** - Ո՞վ ինչ առաջարկություն ունի: Ծակալ, դու գնա նրա մոտ: Աչքդ վրան պահիր:

**Շաքարյանը գնում է:**

**ԼԻԼԻԹ** - Ժամը վեցն ա արդեն:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Էլ ախորժակ մնաց:

Հը, ի՞նչ եք առաջարկում: Խոսեք:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ինձ թվում է՝ նախ պիտի պարզենք նրա արթնանալու պատճառը:

**ԾԵՖ** - Բոլորս էլ գիտենք, որ նրան կարող է արթնացնել միայն քոչարին: Իսկ քոչարին արգելված է մեր երկրում արդեն տաս տարի ու խախտողը պատժվում է օրենքի ամենայն խստությամբ: Տաս տարի է՝ մեր երկրում քոչարու ձայն չի լսվել: Երբ առաջին անգամ, ինը տարի ութ ամիս ու չորս

օր առաջ գյուղերից մեկում Զնածը արթնանալու նշաններ ցույց տվեց: Այդ դեպքից հետո մեր երկրում քոչարու ոչ մի դեպք չի արձանագրվել:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ո՞վ կհանդգներ: Բոլորին զնդան գցեցինք: Բայց նորապսակների հետ կարելի էր մեղմ վարվել: Հարսանիք էր՝ պարել էին: Չթողեցինք գոնե ամուսնության առաջին գիշերն անցկացնեն:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Նրանց դարդն է՛լ են քեզ տվել... Գլուխս դժժում է:

**ԺՈԺՈ** - Բա չիմանանք՝ կարմիր խնձորի հարցը ոնց եղավ: *(Հռհռում է, բայց Ծեֆի հայացքից սաստված՝ սսկվում է:)*

**ԾԵՖ** - Լրջացի: Վաղը որ արթնացավ՝ տնով-տեղով կորած ես: Արտասահման էլ չես հասցնի ծլկել:

**Լռում են:**

**ԾԵՖ** - Խոսացեք, ի՞նչ եք ջուր կուլ տվել-նստել: Արտահայտվեք: *(Հարությունին.)* Դու սկսիր:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Երեկ... Ես չէի ուզում ասել, կարծում էի՝ կանցնի-կգնա: Բայց...

**ԾԵՖ** - Ի՞նչը, խոսիր:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Չէ: Ես ոչինչ չգիտեմ, ոչ մի բան չեմ ասի: Երեսխան մեղք է:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ի՞նչ երեխա:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Խոստացեք, որ

երեխային չեք վնասի: Ես պարզեցի, հետքերով գնացի ու պարզեցի: Երեխան որք է, հայր, մայր չունի: Խոստացեք, որ... Ես էլ եմ առանց հայր մեծացել, ես... Խոստացեք, որ երեխային ազատ կարծակեք:

**ԺՈԺՈ** - Տնդել ա, հորս արև: Ինչ երեխա:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ոչ էլ ցնդել ա: Ես կարծես կռահում եմ: Լսիր... Դու հասկանո՞ւմ ես քո լռության ամբողջ ծանրությունը: Դու գիտակցո՞ւմ ես արարքիդ հետևանքները: Խոսի: Մենք պահանջում ենք: Դու մեզնից մեկն ես, ուրեմն՝ մեզ հետ ես: Իսկ եթե մեզ հետ չես... Դու լավ գիտես, թե աշխարհի ստեղծման օրից ինչ են անում դավաճանների հետ: Լույնիսկ Աստված, որ ամենագթասիրտն է, կույ չտվեց Ադամի դավաճանությունը: Կերած խնձորը քթներից բերեց: Մենք ինչո՞վ ենք պակաս: Ամեն մեկս՝ մի աստված:

**ԾԵՖ** - Հը, սպասում ենք:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Երեկ գիշեր մոտս անքնություն էր: Գլուխս պայթում էր ցավից: Ոչ մի դեղ չէր օգնում:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Էդ քո պորբլեմն ա, անցի առաջ:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Մի խոսքով... Դուրս եկա մաքուր օդի: Ազատության փողոցով իջնում, բարձրանում էի... Մի մուրացիկ երեխա մոտեցավ, փող ուզեց: Մոտս

դրամ չկար, այսինքն՝ մանր չկար: Ասացի՝ չունեմ: Ասաց. «Ունես, ինչի՞ չես տալիս»: Ասացի՝ իսկ ինչի՞ պիտի տամ, դու ինձ կտայի՞ր: Երեխան հանեց օրվա մուրած ամբողջ գումարը... գրոշներ... ու փոքրիկ ձեռքի մեջ պահած՝ մեկնեց ինձ: «Վերցրու»,- ասաց: (*Հուզվում է:*) Ես գրկեցի նրան ու մի հազարանոց տվեցի: Ծրջվեցի, որ հեռանամ՝ ասաց. «Սպասիր, քեռի... ուզո՞ւմ ես, քեզ համար նվագեմ: Էնպիսի մի բան, որ լսած չես լինի»: Ու ծոցից հանեց գործիքը: «Ես սրանով եմ փող աշխատում, փողոցներում նստած՝ նվագում եմ, մարդիկ փող են գցում»:

**ԾԵՖ** - Ինչի՞ լռեցիր: Հետո՞...

**ԼԻԼԻԹ** - Հիմա ուշքս կգնա: Վաղը մազերս ներկելու եմ: Պեպելի:

**ԾԵՖ** - Ծարունակիր:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Լա նվագեց... (*Դադար:*) Զոչարի:

**Լռություն:**

**ԺՈԺՈ** - (*բռունցքը խփելով սեղանին*): Ու դու կանգնեցիր-լսեցի՞ր:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Չէ, սկզբում չհասկացա... գլխացավս սպանում էր: Բայց հետո, երբ գլխի ընկա...

**ԾԵՖ** - Ինչ:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Ոչինչ: Ասացի, որ այլևս չնվագի այդ գործը:

**ԾԵՖ** - Հետո՞:



**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Հետո նա ինձ պատմեց իր պատմությունը, իսկ ես նրան՝ իմ մանկության մասին: Կյանքում չեմ մոռանա երեկվա գիշերը: Առաջին անգամ վերջին տաս տարվա մեջ հանգիստ քնեցի:

**ԵՆՖ** - Ու բաց թողեցիր:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - (*զլխահակ*): Հա:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Քանի տարեկան կլինեք:

**ԺՈԺՈ** - Յոթ-ութ:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Յոթ-ութ... Տաս տարի է՝ քոչարին արգելված է: Երեխան, ընդունենք, ութ տարեկան է: Որտեղից է նա սովորել: Ուրեմն՝ ինչ-որ մեկը սովորեցրել է: Ուրեմն՝ ինչ-որ մեկը կամ երգել է, կամ նվագել է, կամ նոտաներն է գրել, տվել երեխային:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Չէ, պարոնայք, գործը ծայրահեղ լուրջ բնույթ է ստանում:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ես խռովության կամ դավադրության, կամ էլ, Աստված մի արասցե, հեղաշրջման հոտ եմ առնում: Ինչ-որ գաղտնի ուժեր կան... Ինչ-որ գաղտնի ուժեր որոշել են Քնածին արթնացնել:

**ԵՆՖ** - Բայց ո՞վ գիտի Քնածի մասին՝ մեզնից բացի:

**ԼԻԼԻԹ** - Ոչ ոք:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ուրեմն... գիտեն:

**Բողոքը մտահոգված են: Դադար:**

**ԺՈԺՈ** - Էդ երեխուն պետք ա գտնել:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Հա, պետք է պարզել՝ ով է նրան սովորեցրել: Այդտեղից էլ դավադրության կծիկը կբացվի:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Ինչ... բայց դուք խոստացաք: Չէ՞ որ դուք խոստացաք:

**Շեֆը սեղմում է զանգի կոճակը:**

**Ներս է ընկնում Շաքարյանը:**

**ԵՆՖ** - Ազատության փողոցի վրա մի երեխա նվագելով փող ա հավաքում: Տղերքին ասա, թող շտապ գտնեն, ականջից բռնեն՝ բերեն: Արագ: Գետնին թքում եմ, մինչև չորանալը էրեխեն էստեղ լինի: Թռի:

**ԵԱՔԱՐՅԱՆ** - Լսում եմ, շեֆ: (*Դուրս է գալիս:*)

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Բայց, լսեք, դուք խոստացաք, չէ՞... Ես գնում եմ, ես այստեղ չեմ մնա:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ո՛ր:

**ԺՈԺՈ** - Չհասկացանք...

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Ես չեմ կարող նայել նրա աչքերին: Հասկանում եք... նա չպիտի ինձ այստեղ տեսնի:

**ԺՈԺՈ** - Ինչի՞ չես կարող: Էս «կաշը» իրար հետ ենք սարքել, իրար հետ էլ պիտի քաշենք:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Ես չեմ կարող...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Առնետները փախչում են, նավը սուզվում է:

**ԵՆՖ** - Իսկ մեր էն առաջին ժողովին, էն, որ քննարկում էինք նրան

քնացնելու հարցը, էն ժամանակ  
ինչի «կողմ» քվեարկեցիր:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - *(ագրեսիվ):* Հը... էն  
ժամանակ կարող էիր, բոլորի աչ-  
քերին հանգիստ նայում էիր: Հի-  
մի ինչ է պատահել: Մի հատ  
հազարանոց ես տվել մուրացկա-  
նին՝ խիղճդ զարթնել է:

**ԺՈԺՈ** - Խի, մենք խիղճ չունենք: Թե՛  
մենակ դու ես մարդ: Մենք էլ վայ-  
րի գազանների ցեղից չենք: Բայց  
պետք էր քնացնել՝ քնացրինք:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Հա, դուք գազանից  
էլ վատն եք, դուք հենց այդ ցեղից  
եք: Գայլեր եք դուք, բորենիներ:  
Կուշտ ու զինված:

**ԺՈԺՈ** - Դու էլ, դու էլ, հարգելիս...  
Մի մոռացի, ստորագրությունդ  
պահպանված է առաջին նիստի  
արձանագրության մեջ: Եթե,  
Աստված չանի, ստիպված լինենք  
պատասխան տալ, ապա բոլորս՝  
իրար հետ: Ոչ մեկը չի պլստալու:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ես ձեռնպահ եմ  
քվեարկել: Ահա, արձանագրությո-  
ւունն էլ մոտս ա: Հենց որ զարթո-  
նեց՝ ցույց կտամ: *(Թուղթը նորից  
գրպանն է դնում:)*

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Տուր այստեղ, ձիվաղ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - *(փախչում է):* Թողեք...  
չեմ տա, սա իմ փրկությունն է:

**Բոլորը հարձակվում են նրա  
վրա:**

**ԵԵՖ** - Վերցրեք ձեռքից...

**ԺՈԺՈ** - Տուր, ասում եմ...

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ճիվաղ... *(Քաղի է  
տալիս:)*

**Պրոֆեսորը փռվում է հատակին:**

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Բոլորս էլ կողմ ենք  
քվեարկել: Վերջ:

**Դադար:**

**ԵԵՖ** - Ըստեղից ոչ ոք դուրս չի գա,  
մինչև որոշում չկայացնենք:  
Նստեք: *(Պրոֆեսորին.)* Դու էլ, է-  
պոսագետ: Փսլինքդ մաքրի,  
նստի:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Գրողը տանի, նա  
չպետք է արթնանա, չպետք է,  
չպետք է...

**Լուրջում:**

**ԵԵՖ** - Ես առաջարկում եմ Զնածին  
սպանել:

**Բոլորը լարվում են:**

**ԼԻԼԻԹ** - Ինչ...

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Սպանել...

**ԵԵՖ** - Եթե ուրիշ ելք ես տեսնում՝  
ասա: Ես չեմ տեսնում: Ես առա-  
ջարկում եմ սպանել: Ով ա կողմ,  
ով ա դեմ: Զվեարկեք:

**ԼԻԼԻԹ** - Բայց ո՞նց... ո՞նց սպանենք:  
Ինչ անտանելի օր է: Հեղձուկ է...  
Պատուհանները բացեք:

**ԵԵՖ** - Միջոցները հետո կքննար-  
կենք: Հիմա քվեարկում ենք: *(Ար-  
ձանագրողին.)* Էդ թուղթ ու գրիչդ  
պահիր, առանց արձանագրու-  
յունների... Ո՞վ է կողմ: *(Բոլորը*

վարանում են:) Ուրեմն՝ դուրս ա գալիս, որ միայն էս եմ վախկոտը, դուք բոլորդ հերոսներ եք: Բաջեր... Կեցցեք: (Լիլիթին.) Ինչի՞ ես նվաղել: Որ արթնացավ, առաջինը քեզնից է հաշիվ պահանջելու: Գժի պես սիրում էր, ձեռքերի վրա էր պահում, ինչ չէր արել քեզ համար, որ ծախեցիր: Ինձնից վա՛ստն էր, ինձնից թո՛ւյլ էր, թե՛ գեշ: Թե՛ ինձնից պակաս էր քեզ սիրում:

**ԼԻԼԻԹ** - Ես ինքնասպան կլինեմ... (Փղձկում է:)

**ՇԵՖ** - Չես լինի: Ավելի լավ է՝ մտածիր, թե ինչ անենք, որ չզարթնի: Փսլինքդ մաքրի:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Որպեսզի Բնածը քնած մնա, հարկ է, որ հավերժ քնի: Ես կողմ եմ:

**Լիլիթը նույնպես բարձրացնում է ձեռքը:**

**ՇԵՖ** - Դա, ըստ երևույթին, միակ ելքն է: (Բարձրացնում է ձեռքը:)

**Բոլորը բարձրացնում են ձեռքերը՝ Հարությունից բացի:**

**ՇԵՖ** - (Հարությունին): Դու կարող ես չքվեարկել: Մեծամասնության ձայնն է որոշում: Մենակ չեմ հասկանում, ինչի՞ ես լռում, ոչ մի տեղ չի արձանագրվում:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Լա իմ ամենամտերիմ ընկերն էր: Միասին ենք սովորել համալսարանում: Միա-

սին ենք կռվել, սարի վրա չոր հաց կիսել...

**ԺՈԺՈ** - Լավ, լավ, հերիք է, հորս արև... Սիրտս բարակեց: Մի քիչ էլ խոսես՝ արցունք կթափեմ: Պետք չէ: Էդքան մտածո՞ւմ ես նրա մասին՝ գնա, ականջի տակ քոչարի երգի: Մի ըոպեից կզարթնի: Դե, գնա... բա ինչի՞ չես անում: Տաս տարի ա անցել: Տաս տարին, գիտես, քանի օր ա: 3650, դաժե՛ 60: Էդքան օրերի մեջ ինչի՞ մի օր չգնացիր, չզարթնացրիր:

**Հարությունը բարձրացնում է ձեռքը:**

**ԺՈԺՈ** - Այ, տենց... Հենց վտանգի հոտ եք առնում, սկսում եք մարդ խաղալ: Կարո՞ղ ա՝ մենք մարդ չենք: Բարից ենք կամ՝ պեմզաբլոկ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Հետաքրքիր տեսակ է Երկիր մոլորակի բանական էակը: Նրա մարդկային հատկությունները ի հայտ են գալիս միայն, երբ նա խեղճացած է ու նեղն ընկած: Հետաքրքիր է, ինչի՞...

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Հետաքրիքը չէ: Լիրիկական զեղումների ժամանակ չկա: Լա բացել է աչքերը: Լա-բացել-է-աչքերը: Լա արթնանում է:

**Լուրջում:**

**ՇԵՖ** - Ատրձանակո՞վ:

**ԺՈԺՈ** - Չէ, դա նրա վրա չի ազդում:  
**ԾԵՖ** - Որտեղի՞ց գիտես, նա մարդ չի:

**ԺՈԺՈ** - Չգիտեմ: Բայց որ ատրձանակով կամ հրացանով նրան սպանել չի լինում՝ հաստատ գիտեմ: Նրան քնացնելուց երկու տարի հետո, հիշում եմ, անձրևոտ օր էր... Թաքուն մտա մոտն ու կրակեցի: Ծաքարյանը գիտի: Երկու տարի նա ինձ հանգիստ չէր տալիս: Հայտնվում էր երազներիս մեջ ու... Չղիմացա, որոշեցի սպանել: Մի քանի անգամ կրակեցի, բայց գնդակները ետ էին թռչում: Դրանից հետո էր, հիշում եք, թռա արտասահման: Ութ ամիս հետո կինս նամակ ուղարկես, թե՛ երեխա է ծնվել: Էն էլ՝ երկվորյակ: Ոտքս կոտրվեր՝ հետ չգայի:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Դա ինձ ծանոթ է:

**Բոլորը նայում են Վոլդեմարին:**

**ԾԵՖ** - Ինչ...

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Հա, ես էլ... Բոլորիցդ ծածուկ մի օր մտա նրա մոտ: Էլ ուժ չկար տանելու էդ տառապանքը: Ամեն անգամ, երբ մի կեղծ թուղթ էի սարքում կամ խաբեություն, հայտնվում էր աչքիս: Լուռ, անխոս, կարծես խոշորացույցի միջից նայում էր ինձ: Նայում էր ու ոչ մի բառ չէր ասում: Ես չէի կարողանում ազատվել նրա պատկերից: Սկսեցի խմել: Միայն օղու

շիշն էր, որ բթացնում էր ուղեղս, ջնջում նրա պատկերը: Տեսա, որ կործանվում եմ: Դանակն առա ու գնացի: Հարվածն ուղիղ սրտին էր, դանակը մխրձվել էր սրտի մեջ, բայց նա... անիծյալ լինի... շարունակում էր շնչել: Հանեցի դանակը, նորից խրեցի: Ապարդյուն: Արյան հետք էլ չկար: Չգիտեմ, թե ինչպես եմ դուրս թռել այնտեղից, չեմ հիշում: Երբ ուշքի եկա, տեսա, որ գլխապատառ վազում եմ փողոցով, մարդկանց հրելով, ու մարդիկ ապշած ինձ են նայում: Այդ օրից միայն գինին է իմ դեղը, օղին՝ իմ դարմանը, շիշն՝ իմ ընկերը: Ես ճահճի մեջ եմ... ու փրկություն չկա: Ու չի լինելու:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Փրկություն չկա, ես էլ եմ փորձել: Հիշում եք, երբ էր... ես վթարի ենթարկվեցի: Հինգ տարի առաջ: Հանգիստ վարում էի մեքենաս, տրամադրությունս բարձր էր հերթական խոշոր գործարքից հետո: Հանկարծ մայթի վրա մի մարդ տեսա, թիկունքից: Ապշեցուցիչ նմանություն ուներ Դավթին: Հետո նա շրջվեց... Ջրի երկու կաթիլի պես նման էր նրան: Ղեկի մասին մոռացել էի, հիպնոսվածի պես նայում է անձանոթին... Դիմացի բեռնատարը չկարողացավ խույս տալ. խրվեցինք իրար մեջ: Իսկ հիվանդա-

նոցում... թշնամուս չեմ ցանկանա: Դժոխային օրեր էին, մղձավանջ: Դուրս գրվելուց հետո, մարտի 13-ին՝ իմ ծննդյան օրը, գնացի նրա մոտ: Կամ՝ ես, կամ՝ նա,- մտածեցի ու թույնը լցրի նրա ցամաքած բերանը: Ու հենացա: Հաջորդ օրը սպասեցի, որ ձեզանից մեկը կհայտնի, որ նա մեռել է: Սպասեցի հաջորդ օրը, չորրորդը, հիգերորդ օրը... Այդպես էլ լուր չեղավ: Փոխարենը ես օրեցօր նիհարեցի, կորցրի քունս: Երանի նրան, ով հանգիստ կարողանում է քնել: Երանի Քնածին:

**ԾԵՖ** - Իսկ ես մտածում էի, որ մենք մի թիմ ենք: Կարծում էի՝ մեկս մյուսից գաղտնիք չունենք: Պարզվում է...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Հիշո՞ւմ եք, վեց տարի առաջ էր: Ես հոգեբուժարան ընկա: Ոչ մեկիդ մտքով չանցավ, թե ինչու եմ խախտվել: Ոչ մի պատճառ չկար: Ինչի՞ց էր մթագնել բանականությունս: Ես էլ փորձարեցի նրան սպանել: Ես փորձեցի խեղդել նրան: Սկզբում՝ ձեռքերով, հետո մետաղալար վերցրի... Բայց նրա պարանոցը պողպատից ամուր էր: Զրտինքի մեջ կորել էի: Փակեցի բերանը, ռունգերը: Ոչինչ չէի օգնում: Ինձ թվաց, թե ցնորվում եմ: Ու ցնորվեցի:

**ԾԵՖ** - Ուրեմն՝ ի՞նչ... Մնում է միայն... Այրե՛լը:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Հանձարեղ է, հանձարեղ է... Մքովս չէր անցել:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Իհարկե, իհարկե, կրակը: Գրողը տանի, կրակը:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Այո, այո, Հիպոկրատն այդ կապակցությամբ գրել է: *(Հանում է նոթատետրն ու կարդում:)* «Այն, ինչ չի բուժում դեղը, բուժում է երկաթը: Որտեղ չի օգնում երկաթը, օգնում է կրակը...»: *(Հուսահատ:)* «Իսկ այն, ինչ կրակն էլ չի բուժում, պետք է համարել անբուժելի»:

**ԼԻԼԻԹ** - Կրակը չի օգնում:

**ԲՈԼՈՐԸ** - Ի՞նչ... ինչ ասացի՞ր:

**ԼԻԼԻԹ** - Չի օգնում:

**Դադար:**

**ԾԵՖ** - Դա մեր վերջին հույսն է:

**ԼԻԼԻԹ** - Ես ի՞նչ մեղք ունեմ, որ չի օգնում: Սկզբում հրահանով վառեցի շորը, հետո՝ լուցկիները... Իրար ետևից, հետո... ջուր տվեք ինձ մի բաժակ: Այստեղ տոթ է: *(Հով է անում իրեն թաշկինակով:)* Օհ... *(Ջուր են տալիս, խմում է:)* Հետո նավթ լցրի վրան: Չայրվեց: Այսինքն՝ նավթը այրվեց, բայց ինքը՝ ոչ: *(Դատարկում է բաժակը, թաշկինակով սրբում շորթերը: Կողքինին՝)* Պամադաս անցավ...

**ԾԵՖ** - *(մտախոհ, ասես ինքն իրեն):* Ի՞նչ կարելի է անել... *(Դեղահարթեր է կուլ տալիս:)*

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Մի ելք պիտի լինի՞, թե՞ ոչ: Ախր, չի կարող չլինել:

**ԾԵՖ** - Դավիթն ինչի՞ց մեռավ:

**Բոլորը զարմացած նայում են նրան:**

**ՎՈԼԴԵՄԱՐ** - *(նյարդային):* Թույլ սովեք ձեզ երկու նորություն հայտնել. նա չի մեռել, քնած է: Սա վատ նորություն է: Իսկ երկրորդը վատթարագույնն է՝ նա արթնանում է: *(Ջղային:)* Գրողը տանի:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ինձ թվում է՝ մենք կամաց-կամաց խելագարվում ենք: Ձեզ չի՞ թվում:

**ԾԵՖ** - *(անվրդով):* Դավիթը ծագումով Սասունից է: Ես նրա հորն էլ էի ծանաչում: Հսկա մարդ էր: Ծուտ հուզվել գիտեր: Հոնքերն էլ՝ էստեղ միացած... Էպոսում ո՞նց էր... ո՞վ է հիշում էպոսը: Դավիթն ինչի՞ց է մեռնում, պրոֆեսոր:

**Պրոֆեսորը գլուխն առել է ձեռքերի մեջ:**

**ԺՈԺՈ** - Լավ, էլի, ախպոր պես, շեֆ:  
**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Կարծեմ, եղեգնուտների մեջ ինչ-որ աղջիկ է սպանում:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Հա, չինացի աղջիկ:

**ԺՈԺՈ** - Չինացի՞...

**ԾԵՖ** - Պարզ է, բայց ինչո՞վ է սպանում: Միջոցը:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ինձ մոտ նշել եմ: *(Բացում է նոթատետրը:)* Չմշկիկ Սուլթանի աղջիկն էր... Դավիթը

նրա թունավոր նետից է ընկնում: Երբ Ձենով Օհանը հարցնում է. «Տղա, Դավիթ, քեզի ո՞վ զարկեց», Դավիթը պատասխանում է... *(Թերթում է նոթատետրը:)*

**ԺՈԺՈ** - Հիմի հավաքվել ենք ստեղ՝ իրար հեքիմթ պատմենք:

**ԾԵՖ** - Ծարունակիր:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Դավիթն ասում է. *(Կարդում է:)* «Իմ ցեցն իմ անձից է»:

**ԼԻԼԻԹ** - Այսինքն...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Այսինքն՝ Դավիթին կարող է սպանել միայն իր սերմը կամ հենց ինքը՝ Դավիթը: «Էդ իմ սերմն էր, որ ինձ սպանեց», - ասում է նա: Էպոսում այդպես է... Ինձ մոտ նշված է:

**Շեֆը հոգոց է համում:**

**ԺՈԺՈ** - Ախպոր պես, եկեք լուրջ գործով զբաղվենք:

**ԾԵՖ** - Մտածել է պետք:

**Բոլորը մտածում են: Դադար:**

**ՊՐՈՖԵՍՈՐ** - *(գոռում է):* Քոչարին, քոչարին... Չե՞ք հասկանում... Քոչարին:

**ԾԵՖ** - Քոչարին՝ ի՞նչ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - *(հուզախոհով):* Եթե քոչարին նրան արթնացնում է, ուրեմն... եթե այդպես ազդում է նրա վրա, ուրեմն...

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Հա, ի՞նչ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ուրեմն՝ գաղտնիքը քոչարու մեջ է:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Տնդաբանություն:

**ԵԵՖ** - Սպասեք, նրա ասածի մեջ  
ինչ-որ բան կա:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Քոչարին նրան ուժ է  
տալիս, կյանք, թթվածին: Ինչո՞ւ:  
Պետք է մտածել:

**ԼԻԼԻԹ** - Ճիշտ է, պետք է դրա  
հակառակը գտնել: Եթե մի բանի  
թույնը կա, դրա հակաթույնն էլ  
պիտի լինի: Էն երգը հիշո՞ւմ եք.  
«Սերը թույն է, թույն է, թույն է...»:

**ԵԵՖ** - Անհրաժեշտ է գտնել քոչարու  
գաղտնիքը: Ինչ է քոչարին:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ես գրի եմ առել... մի  
վայրկյան... *(Հանում է նոթա-  
տետրը, կարդում:)* Քոչարի: Հայ-  
կական ժողովրդական պար:  
Երաժշտական չափը՝ երկու քա-  
ռորդ: Տեմպը՝ հանդարտից մինչև  
արագ ու շատ արագ: Քոչարին  
պարում են շարք կանգնած,  
շրջանով, իրար ձեռք բռնած, ուս-  
ուսի տված: Եարքի առաջնորդը  
նշան է անում խմբին թաշկինակը  
թափահարելով կամ ձայնակցե-  
լով: Նրա նշանով ֆիգուրները  
փոխվում են: *(Փակում է նոթա-  
տետրը:)*

**ԼԻԼԻԹ** - Այսինքն...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ոչ էլ բան հասկացա:  
Դուք հիշո՞ւմ եք, ո՞նց էր քոչա-  
րին... Ո՞վ է հիշում:

**ԺՈԺՈ** - Ո՞նց, լուրջ մոռացել եք:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Ես էլ չեմ հիշում: Օղին  
հիշողությունս կերել է:

**ԺՈԺՈ** - Տա-նա-նա-նա...

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Ձենդ:

**ԵԵՖ** - Սսկվիր:

**ԼԻԼԻԹ** - Խելքդ թոցրի՞ր:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Լրիվ ապուշացել ա...  
Մեզ միայն մնում էր, որ հավաք-  
վենք ու միասին քոչարի երգենք:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Բայց որ չերգենք,  
չհիշենք, օղի մեջ ո՞նց կարող ենք  
գաղտնիքը գտնել:

**ԵԵՖ** - Ո՛չ մի դեպքում: Մտքներիդ  
մեջ էլ չերգեք: Լսեցի՞ք:

**ԺՈժՈՆ տակառով շարժվում է տե-  
ղում:**

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Ինչ ես անում, իդիոտ:  
**ԺՈԺՈ** - *(սարսափած նայում է  
նրանց):* Տղերք... ուղեղս ա մտել:  
Ինքն իրան երգում ա: Հորս արև,  
ես չեմ ուզում, բայց ինքը իրան  
գնում ա...

**ԼԻԼԻԹ** - Կտրի ձայնը, կտրի, շուտ...  
Պատուհանը բացեք... իմ գլխի  
մեջ էլ ա քոչարի:

**ԵԵՖ** - Ուրիշ բան երգի, որ միտքդ  
շեղվի:

**ԺՈԺՈ** - *(խուժապաշար):* Ալա-բա-  
լա-նիցա, դուս-կապա-նիցա...  
*(Հուսահատ:)* Չի ստացվում...  
Մեկ, երկու, երեք, ձմերուկը բե-  
րեք... Տղերք, օգնեք:

**ԵԵՖ** - Ուրիշ երգ, ուրիշ երգ...

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Ուրիշ երգ հիշիր,  
շուտ, իդիոտ:

**ԺՈժՈՆ երգում է մի տող ինչ-որ  
երգից, վերջին ֆրազը երգում է  
քոչարու մեղեդիով, խուժապա-**

հար փոխում է երգը՝ նույնը: Լի-  
լիքը ձեռքերով փակել է ականջ-  
ները, լաց է լինում:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ռեփը, ռեփը... սկսեք:

Քուրը երգում են ներկայացման  
սկզբի երգը, որը հետզհետե վե-  
րածվում է պարի: Լիլիքը միա-  
նում է նրանց:

**ԺՈԺՈ** - Էլի, էլի...

Ռեփը կրկնվում է:

**ԾԵՖ** - Էլի, շարունակեք, կանգ մի ա-  
նեք:

Ռեփը շարունակվում է:

**ԾԵՖ** - Հը, էլի...

Սկսում են նորից:

**ԺՈԺՈ** - Հերիք է, բավական է...  
(Գոռում է:) Հերիք է...

Քուրն ուժասպառ, օրորվելով  
գնում, փլվում են իրենց տեղերը:  
Ներս է ընկնում Շաքարյանը:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - Բերեցի... (Հնում է:)

Կանչեմ... (Հատակին ինչ-որ բան  
փնտրելով:) Մամա ջան, չորացել  
ա թուքը: (Աղերսանքով արդա-  
րանում է:) Ծեֆ, մինչև գտանք՝  
հոգիներս դուրս եկավ: Ուրիշ փո-  
ղոցում էր նվագում:

**ԾԵՖ** - (հոգնած): Բեր:

**ԾԱԶԱՐՅԱՆ** - (դեպի դուրս): Արամ,  
հլը ստեղ արի...

Ներս է մտնում Երեխան:

**ԾԵՖ** - Անունդ ինչ է:

**ԵՐԵՆԱ** - Սոս:

**ԾԵՖ** - Դա ինչ անուն է: Հորդ ա-  
նունն է, թե՛ պապիդ:

**ԵՐԵՆԱ** - Չգիտեմ: Երբ նավը խոր-  
տակվում է, կանչում են՝ Սոս:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Դա փրկության կանչ  
է, օգնության ազդանշան... (Բա-  
ցում է նոթատետրը, թերթում:)  
Մի վայրկյան...

**ԾԵՖ** - Փակիր դավթարդ: Տանը  
անգիր կանես:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ինչպես կամենաք:  
(Հիասթափված ծոցազրպանն է  
դնում նոթատետրը:)

**ԾԵՖ** - Երեկ գիշեր էս ձյաձյան որ  
քեզ դուլար տվեց, ինչ նվագեցիր:

Հարությունը ձեռքերով փակում է  
երեսը:

**ԵՐԵՆԱ** - Չգիտեմ:

**ԾԵՖ** - Չես հիշում:

**ԵՐԵՆԱ** - Հիշում եմ, բայց չգիտեմ՝  
ոնց ա անունը: Ուզո՞ւմ եք՝ նվա-  
գեմ:

**ԾԵՖ** - Չէ, պետք չէ: Ո՞վ է քեզ  
սովորեցրել էդ... նվագը:

**ԵՐԵՆԱ** - Ոչ մեկը:

**ԾԵՖ** - Բա որտեղ ես լսել:

**ԵՐԵՆԱ** - (թոթվում է ուտերը): Եսի՛մ...  
Ոչ մի տեղ:

**ԾԵՖ** - Ո՞նց թե՛ ոչ մի տեղ: Բա ո՞նց  
ես նվագում:

**ԵՐԵՆԱ** - Չգիտեմ:



**Դադար:** Բոլորը զարմացած նայում են նրան: Շեֆը հեռանում է, Երեխային է մոտենում Վոլդեմարը:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Բալիկ ջան, եթե ասես. թե քեզ ով է սովորացրել՝ քեզ փող կտամ: Ծատ փող: Ծաաատ: Ուզում ես: (Երեխան լռում է:) Ըհը... (Գրպանից խրձով փողը հանում, դնում է սեղանին: Նշան է անում մյուսներին: Նրանք նույնպես դատարկում են իրենց գրպանները:) Լավ մտածիր... էս սաղ քոնն ա: Ուզում ես:

**ԵՐԵՆԱ** - Եսիմ:

**Շեֆը ամբողջ գունարը բերում, դնում է Երեխայի գիրկը: Մի քանի քրթադրամ ընկնում է գետնին: Երեխան մոլորված նայում է նրանց:**

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ըհը, էս սաղ քոնն ա: (Նյարդային, բայց աշխատում է սիրալիր լինել, խոսում է ատամների արանքից:) Ուզում ես, չէ... Տես, ինչքան ենք տալիս: Գիտես, ինչքան փող ա էստեղ: Դե... (Աշխատում է ժպտալ:) Հը... ումից ես լսել էդ նվագը: Գիտես, ինչեր կարող առնել այդ փողով: Ասա, ու սա քոնը կլինի:

**ԵՐԵՆԱ** - Ինչեր:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ինչ սիրտդ ուզի: Ինչ ես ուզում: Աշխարհում ամենաշատը ինչ ես ուզում: Ասա, կառնեմ քեզ համար: Ես կառնեմ: Ինչ ես ուզում...

**Դադար:**

**ԵՐԵՆԱ** - Մամայիս:

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ո՞վ էր, ասա... Ո՞վ ա սովորեցրել քեզ... (Հարվածում է Երեխային, փողերը թափվում են գետնին:) Դե, խոսիր վերջապես:

**Լիլիթը ծածկում է երեսը, լաց է լինում:**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - (տեղից վեր թռչելով): Հանգիստ թող նրան... Թճող, ես ինքս... (Կռանում է Երեխայի առջև:) Հիշում ես, երեկ... միասին զբոսնում էինք, գիշերը: Ես ու դու: Ու քաղաքը մերն էր: Նայում էինք երկնքին, աստղերին, շենքերի մութ պատուհաններին ու զրուցում էինք: Ես ու դու: Հիշում ես...

**ԵՐԵՆԱ** - Հա:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Ես քո ընկերն եմ, քո բարեկամը: Ես խոստանում եմ, երդվում եմ, այստեղ ոչ ոք չի նեղացնի քեզ: Զեզնից միայն մի բան է պահանջվում՝ ասել, թե ով էր այն մարդը, որ քեզ սովորեցրեց: Այդ երաժշտությունը որտեղից ես լսել: Ասա, ու ես քեզ տուն կտանեմ: (Ուղղում է սխալը:) Փողոց կտանեմ: Հավատում ես ինձ, չէ...

**ԵՐԵՆԱ** - Հա:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Դե, ասա:

**ԵՐԵՆԱ** - Ես էլ եմ ուզում ասեմ, բայց չգիտեմ... ո՞նք անունը տամ: Դու ինձ ասա՝ ես կասեմ:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Նրա, ով քեզ սովորեցրել է: Նրա անունը տուր:

**ԵՐԵՆԱ** - Ոչ մեկն էլ չի սովորացրել:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Այդպես չի լինում:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Ուրեմն՝ մի տեղ լսել ես:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Սպասիր: *(Երեխային.)* Ումից ես լսել, որտեղ:

**ԵՐԵՆԱ** - Ոչ մի տեղ: Ես եմ հորինել: Երեկ, որ անձրև եկավ ցերեկը, վազեցի, մտա արձանի տակ: Քնեցի: Հետո զարթնեցի...

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Հետո:

**ԵՐԵՆԱ** - Հետո զարթնեցի... ու նվագեցի: Սաղ մարդիկ ականջները փակեցին ու փախան: Բայց անձրևը կտրվել էր: Բայց իրանք փախնում էին: Ոչ մեկը փող չէր գցում: Ես էլ ուրիշ բան նվագեցի, որ փող գցեն: Մի աղջիկ հարյուր դրամ տվեց, կողքի տղեն էլ՝ էդ նույնից, բայց երկու հատ...

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Հետո:

**ԵՐԵՆԱ** - Սոված էի, հաց առա, կերա: Կեսն էլ ծտերին տվեցի:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Դրանից հետո էլ քոչարի չեմ նվագել:

**ԵՐԵՆԱ** - Էդ ի՞նչ ա:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Զո հորինածը: Էլի նվագել ես:

**ԵՐԵՆԱ** - Հա:

**ԺՈԺՈ** - Հիմի հասկացա՞ք, թե Դավիթն ինչի է արթնանում: Հիմի հասկացա՞ք: Էս երեխեն ամ-

բողջ օրը քոչարի է նվագել, մենք էլ՝ էջի ականջում քնած: *(Երեխային.)* Քանի՞ անգամ ես նվագել:

**ԵՐԵՆԱ** - Մի անգամ: Այ, էս մարդու համար:

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Չէ, անհնար է, չի կարող պատահել... *(Նյարդային ետ ու առաջ է գնում: Երեխային.)*

Ախր, ո՞նց հորինեցիր... Ո՞նց ես նվագում՝ չիմանալով: Իմ ուղեղում չի տեղավորվում: Ինչպե՞ս...

**ԵՐԵՆԱ** - Եսի՛մ, իրան-իրան...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Արյան կանչն է, զարմանալու ոչինչ չկա: Գենետիկ հիշողություն: *(Ձեռքը տանում է ծոցազրպանը, բայց հիշելով՝ հրաժարվում է նոթատետրին դիմելու մտքից:)*

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - Լավ, գնա: Հիշիր, երեկ էլ ասեցի: Այլևս չնվագես: Գնա, մի վախեցիր: Գնա:

**Երեխան մի քանի քայլ է գնում ու հետաքրքրված կանգ է առնում: Նայում է ներկաներին, որոնք անմիջապես նետվել էին փողերը հավաքելու:**

**ԾԵՖ** - Իմը չորս հարյուր էր...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ես հինգ էի դրել...

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Զեզ թողնեն՝ հազար կասես: Ո՞վ կապացուցի...

**ԼԻԼԻԹ** - Տուր, էդ իմն է...

**ՎՈՒԴԵՄԱՐ** - Թող, ասում եմ, հո դու շառ չեմ...

**ԵԵՖ** - Ես տեսա, դու հարյուր ես դրել...

**ԺՈԺՈ** - Հարյուրը քոնն էր, իմը երեք հարյուր էր...

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Տուր ստեղ...

**ԺՈԺՈ** - Դե, վազն արի...

**ԼԻԼԻԹ** - Իսկ ի՞մը... ի՞մը պակասում ա... Հըը ցույց տուր քոնը...

**ԵԵՖ** - Վազն անցի...

**Իրար ձեռքից խլում են դրամները, հրում, գողում: Երեխան այդ ընթացքում հանում է գործիքը, սկսում է նվագել:**

**ԼԻԼԻԹ** - Խոզ, անասուն...

**ԺՈԺՈ** - Անասունը դու ես, լրբի վաստակ...

**ԵԵՖ** - Տուր ստեղ, շան ծնունդ...

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Ծան ծնունդը դու ես, կտամ բերնիդ հիմի...

**ԺՈԺՈ** - Տվար...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Տականք, համբակ, կավատ, ներքինի, սինլքոր...

**ՎՈԼԴԵՄԱՐ** - Վայ, ես քու մերը...

**Տուրուդմփոցի ընթացքում հնչում է քոչարին, բայց նրանք չեն լսում: Ծնչակտուր ներս է ընկնում Շաքարյանը:**

**ԵԱԶԱՐՅԱՆ** - Գալիս է... գալիս է...  
Զարթնել է, գալիս է:

**Բոլորը քարանում են:**

**ԵԵՖ** - Ո՞վ է գալիս:

**ԵԱԶԱՐՅԱՆ** - Դավիթը: Գալիս է:  
Զարթնել է:

**Ամերիկյան քոթադրամ պատկերող պաստառը աղմուկով պատռվում է: Հատակին կուչ եկած վեցյակը սարսափով լսում է հսկայի ոտնաձայները, որոնք մոտենում են: Երեխան դադարում է նվագել: Դրսից լսվում է քոչարու ձայնը, որն ավելի ու ավելի է ուժգնանում:**

**ԵՐԵՆԱ** - Էհեյ... էհեյ..

*Դավիթ ելավ:*

*Էլեք, էլեք,*

*Քոթոթ, մոթոթ,*

*Անուշ Քոթոթ,*

*Վժիկ Մխո,*

*Ճնճղափորիկ,*

*Ու նոր Մանուկ,*

*Ու խոր Գուսան,*

*Ու ծոռ Վիրապ,*

*Էլեք, էլեք.*

*Դավիթ ելավ,*


*Դուք էլ էլեք:*

*Էլեք, էլեք... էհեյ, էլեք...*

*Զարթնեք... Զարթնեք...*

**Քոչարին թնդում է դահլիճով մեկ:**

# ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



## Սամվել ԳԱՍՊԱՐՅԱՆ

Պիես գրող մարդը անհույս հիվանդ է, այդ հիվանդությունը ախտորոշվում է որպես մտազար-ընկճախտային շիզոֆրենիա: Աննկարագրելի լավատեսությամբ համակված՝ նա գրում է հերթական պիեսը,

մոլագարի համառությամբ ձգտում է այն տպագրել ամսագրում կամ արժանացնել ռեժիսորի ուշադրությանը, որից հետո կրկին ընկնում է ժամանակավոր ընկճախտի մեջ: Նրա կյանքը շրջապտույտ է դժոխքում: Նա չի կարող ընկալել այն արքիոման, որ ժամանակակից ռեժիսորների համար լավ դրամատուրգը մեռած դրամատուրգն է (ըստ Ք. Տարանտինոյի «Սպանել դրամատուրգին» չնկարահանված ֆիլմի): Բայց եթե հանկարծ բախտը բերի ու տպագրվի ամսագրում՝ թող խաչակնքի ու երեք անգամ խիտի փայտին՝ դա ինքը չէ ու լուսանկարն էլ իրենը չէ: Դա նրա կյունն է: Ինքը նորմալ մարդ է: Իսկ եթե, Աստված մի արասցե, նրա պիեսը որոշեն բեմադրել, ծայրահեղ զգուշությամբ պիտի ընդունի այդ վտանգը, իսկ ստեղծագործական հաջողությունը կրի արժանապատվորեն: Կարևորը, որ այն մահացու չլինի: Հա-հա-հա...

# ՎԵՐԱԴԱՐՁ

Պիես երկու գործողությամբ

## Գործող անձինք

ՀՐԱՆՏ ՄԻՄՈՆՅԱՆ - 65 տարեկան, այրի, դրոժեհամ

ՕՆԻԿ ԱՍՈՅԱՆ - 75 տարեկան, այրի, նախկին օդաչու

ԿԱՐԵՆ - 30-ն անց զվարճախոս, ինժեներ, ամուսնացած,  
ձախորդ բիզնեսմեն

ՆԵՊՐ ԼԵՎՈՆ - նախկին խուլիզան, այժմ ունի ռեսուրս,  
կազինո

ՆԱՆԵ - տասնամյակ, սարիքն անհայտ է, Վանի փախստական

ՄԵՎԱԿ - Նանեի ծոռը, դասերագրի մասնակից

## ՄԱՀԱԿՅԱՆՆԵՐ

ՎԱԶԳԵՆ - 50-ն անց, նախկինում շինարար

ՄԻՐՈՒԹ - նրա կինը, ունեն երեք դուստր

ԱՆՈՒԹ - Մահակյանների դուստրերից մեկը

## ՄԿՐՏՉՅԱՆՆԵՐ

ԱՐԱՄ - 45-ն անց, նախկինում խառուս

ԱՄԱԼՅԱ - նրա կինը, դերձակ, ֆմահաձ կին

## Առաջին գործողություն

Երևանյան բակ: Չախից՝ թթենի: Նրա տակ՝ տաղավար, կողքին՝ ցայտադր-  
յուր: Աջից՝ փոքրիկ, խարխուլ տնակ փոքրիկ այգով: Կենտրոնում՝ հինգ հարկա-  
նի հին տուն: Որ բնակարանի տանտերերը հեռացել են՝ պատուհանների  
ապակիները կեղտոտ են: Առանձնաբերում է չորրորդ հարկը, որտեղ ապրում է  
Նեգր Լևոնը, վերանորոգված պատուհաններին՝ կոնդիցիոներ,  
պատին՝ արքայազնային ալեհավաք:

Թթենու տակ մարդահասակ գունդ է՝ պատուհանիկներով ու ցուլարձակներով:  
Տնակի կողքի նստարանին նստած է Նանեն: Մուտքից դուրս է վազում Հրան-  
տը՝ մարզահագուստով, վազքով պտտվում է տան շուրջը: Երրորդ հարկից նրան  
հետևող Կարենը սուրճ է խմում, ծխում է: Նանեն տուն է մտնում: Վաղ առավոտ է:

ԿԱՐԵՆ - Բարի լույս, քեռի Հրանտ:  
(Հրանտը ձեռքով ողջունում է ու  
դուրս վազում բակից: Մի րոպե

անց հայտնվում է շենքի մյուս  
կողմից:) Հարգելի պրոֆեսոր, բա  
էս կյանքը արժի՞, որ երկար ապ-

րես: *(Հրանտը զարմանքից ծառի մոտ քարանում է:)* Բեռի Հրանտ, մի բան ասա: Վա՛տ ես...

**ՀՐԱՆՏ** - Սա ի՞նչ է...

**ԿԱՐԵՆ** - Գիտնականներիդ համար գաղտնիքներ չկան:

**ՀՐԱՆՏ** - Սա ի՞նչ մեքենա է... այստեղ կանգնած...

**ԿԱՐԵՆ** - «Մերսեդես-1000»:

**ՀՐԱՆՏ** - Բա անիվներն ո՞ր են:

**ԿԱՐԵՆ** - Փախցրել են: Ի՞նչ եք լարվել, մեքենան ձերը չէ:

**ՀՐԱՆՏ** - Կարեն, լուրջ չեք վերաբերվում կատարվածին:

**ԿԱՐԵՆ** - Ի՞նչ է որ... Ես սուրճ եմ խմում: Դուք մարզանք եք անում: Կառավարությունը վիթխարի պլաններ է կազմում, ժողովուրդն էլ լռում է:

**ՀՐԱՆՏ** - Խնդրում եմ, իջեք բակ ու բացատրեք այս բանի հայտնվելու պատճառն ու նպատակը:

**ԿԱՐԵՆ** - Հարգելի պրոֆեսոր, էդպես որ խոսում եք...

**ՀՐԱՆՏ** - *(գայրացած):* Ծատախոս, իջնելո՞ւ ես, թե՛ չէ:

**ԿԱՐԵՆ** - Գալիս եմ, գալիս... *(Անհետանում է պատշգամբից, քիչ անց հայտնվում է բակում:)* Ի՞նչ է եղել: *(Մոտենալով:)* Յա՛... էս ի՞նչ բան է:

**Պատվում են գնդի շուրջը, գնում են, բայց ձեռք չեն տալիս:**

**ՀՐԱՆՏ** - *(ջղային):* Ի՞նչ է, ի՞նչ է... Ի՞նչ իմանամ:

**ԿԱՐԵՆ** - Հանգիստ, արտիստ: Գիտությունն անզոր է, բայց մենք մեր հողի վրա ենք: Գուցե ինչ-որ մեկի մեքենան է:

**Առաջին հարկի պատշգամբում հայտնվում է Արամը:**

**ԱՐԱՄ** - Բարի լուս: Առավոտը բաժակով եք դիմավորում:

**ԿԱՐԵՆ** - Մտքիդ մենակ դա է... էս ո՞ւմ մեքենան ա:

**ԱՐԱՄ** - Էդ էլ հարց ա՞: *(Բութ մատով վերև է ցույց տալիս:)* Պարզ չի՞, որ Նեգր Լևոնինը... *(Ներս է գնում:)*

**ԿԱՐԵՆ** - Պրոֆեսոր, անիվները ներս են հավաքվում:

**ՀՐԱՆՏ** - Ինչի՞ համար...

**ԿԱՐԵՆ** - Որ չգողանան: Առանց անիվների ո՞նց փախցնեն:

**ՀՐԱՆՏ** - Նա օդում կախված է: Դա հակասում է ֆիզիկայի օրենքներին:

**ԿԱՐԵՆ** - Է, պրոֆեսոր, իսկ մեր ժողովրդի ապրելը համապատասխանում է հասարակության օրենքներին:

**Մուտքից դուրս են գալիս Արամն ու Օնիկը:**

**ՕՆԻԿ** - Բարի լույս: Ի՞նչ եք նայում:

**ՀՐԱՆՏ** - Բարի լույս, Օնիկ Վանիկովիչ: Ահա, ուզում ենք հասկանալ, թե սա ի՞նչ է:

**ԿԱՐԵՆ** - Բարև, պապ: Աշխարհ տեսած մարդ ես, ասա, էս ի՞նչ է: Էսպես բան չէինք տեսել:

**ԱՐԱՄ** - Ես էլ չեմ տեսել:

**ԿԱՐԵՆ** - Դու քո ապրանքից ու տոնավաճառից բացի ուրիշ ինչ ես տեսել: Արամն ասում է՝ Նեգր Լևոնինն է: *(Բոլորը գննում են գունդը: Հրանտը՝ շատ ուշադիր:)* Մի հինգհարյուր կիլոմետր հանգիստ կբացի:

**ՕՆԻԿ** - Իմ կործանիչը ավելի քիչ էր բացում:

**ԱՐԱՄ** - Մեր ծամփաներին սա ում ա պետք:

**ԿԱՐԵՆ** - Կայֆի համար: Քշում ես, ու ինքնաթիռը դեմդ խաղ չունի: Yes!

**ԱՐԱՄ** - Թանկ մետաղ ա: Եթե տեր չունի, կարանք կտրտենք-ծախենք:

**ԿԱՐԵՆ** - Վատ միտք չի: Դրա փողով լավ քեֆ կանենք:

**ՕՆԻԿ** - Ես ձեզ ցույց կտամ կտրել, ծախել... Ձեր մտքին միայն դա է:

**ՀՐԱՆՏ** - Բարեկամներս, իրականացավ մարդկության երազանքը: Սա այլմոլորակային տիեզերանավ է:

**ԱՐԱՄ** - Հնարեցիր, էլի, պրոֆեսոր: Կազմակերպված գործ ա:

**ԿԱՐԵՆ** - Հանգիստ, արտիստ: Այլմոլորակային տիեզերանավ... Ասա Շաթլ ու պրծի:

**ՀՐԱՆՏ** - Շաթլը ամերիկյան տիեզերանավ է:

**ԱՐԱՄ** - Իսկ Ամերիկանն ինչ է: Այլմոլորակային երկիր: Քանի տարի է՝ վիզա չենք կարում ստանանք:

**ՀՐԱՆՏ** - Խնդրում եմ, ինձ լսեք, սա թոչնող օբյեկտ է:

**ԿԱՐԵՆ** - Թոչնող օբյեկտը կարգին տեղում վայրէջք կկատարեր: Մոլորակի վրա էլ ուրիշ տեղ չկամր, որ մեր բակում փովեր:

**ԱՐԱՄ** - Լուրջ չի: Ինչ ա պետք էս քամբախ երկրից...

**ՕՆԻԿ** - Գուցե վթամր է, հարկադիր վայրէջք:

**ՀՐԱՆՏ** - Նրանք եկել են միջգալակտիկական առաքելությամբ:

**ԿԱՐԵՆ** - Ուզում են նվաճել մեր հանրապետությունը:

**ՕՆԻԿ** - Մենք սովորաբար գրոհը սկսում էինք արշալույսին:

**ԿԱՐԵՆ** - Տիեզերական պատերազմ: Ներխուժում: Ուզում են զավթել մեր անկախ երկիրը, մեզ էլ ռոբոտ դարձնել...

**ԱՐԱՄ** - Ինչը զավթեն, սաղ գողացել, ծախել են: Մեզ ռոբոտի տեղ էլ չեն բանեցնի:

**ԿԱՐԵՆ** - *(վրդովված)*: Ինչ ա ասում, հնագույն ժողովուրդը ռոբոտի տեղ էլ չի օգտագործվի:

**ԱՐԱՄ** - Կխաբենք, կփախցնենք, կծախենք:

**ԿԱՐԵՆ** - Պրոֆեսոր, ժեշտի կտոր ա, զիբիլի մեքենայից ա ընկել: *(Ոտքով խփում է գնդին: Միանում է ազդանշանը: Թարթում են ցուլարձակները:)* Վայ, մամա ջան: Տղերք, ցվրվանք...

**ՕՆԻԿ** - Без паники! Всем-назад! *(Բո-*

լորը հենու են փախչում:) Ложись!  
(Բոլորը պառկում են:)

Ազդանշանը անջատվում է,  
միայն ցոլարձակներն են թար-  
թում: Երկրորդ հարկի պատըշ-  
գամբում հայտնվում է Վազգենը:

**ՎԱԶԳԵՆ** - Բարի լույս: Մարզանք եք  
անում: Ապրեք:

**ՕՆԻԿ** - Վազգեն, կամաց... տեսնո՞ւմ  
ես: (Ցույց է տալիս գունդը:) Այլ-  
մոլորակային զավթիչ է: Կացինը  
վերցրու ու մտի թիկունքից:

**ՎԱԶԳԵՆ** - Հասկացա, պապ:

Քիչ անց դուրս է գալիս մուտքից  
ու գողեգող մտնենում է գնդին:

**ԿԱՐԵՆ** - Պապ, աշուն ա, որոշ տե-  
ղեր կարող ա մրսացնենք:

**ՕՆԻԿ** - Ձայնդ, գրոհո՞ւմ ենք:

**ՀՐԱՆՏ** - Օնիկ Վանիկովիչ, գուցե  
բանակցություններ...

**ՕՆԻԿ** - Լավ, ո՞վ գնա: Կգնա... Կա-  
րենը:

**ԿԱՐԵՆ** - Ինչո՞ ես...

**ՕՆԻԿ** - Ջահել ես: Արագ վազում ես,  
ձարպիկ՝ պառկում:

**ԱՐԱՄ** - Երեխա չունես, կնիկդ ար-  
տասահմաններն ա, դու էլ՝  
պարտքերի մեջ: Ո՞ւմ ա պետք էր  
կյանքը:

**ԿԱՐԵՆ** - Ուրեմն՝ մենք մարդ չե՞նք,  
մեր կյանքը գրոշ էլ չարժի: Բա որ  
կրակի՞... Կյանքս ո՞ւմ համար  
զոհաբերեմ:

**ԱՐԱՄ** - Պատմության մեջ կմնաս:  
Մի աստղ էլ անունովդ կկոչեն:

**ԿԱՐԵՆ** - Ավելի լավ ա՝ սաղ մնամ,  
ինչքան էլ կյանքը գարշելի է:

**ՀՐԱՆՏ** - Օնիկ Վանիկովիչ, ինձ  
թույլ կտամք...

**ՕՆԻԿ** - Պրոֆեսոր, դուք նրանց հետ  
լեզու կգտնեք:

Հրանտը թաշկինակը թափահա-  
րում է: Լապտերները մարում են:  
Մոտենում է, ձեռք է տալիս  
գնդին, քարաճում է:

**ՕՆԻԿ** - Հրանտ Վարդանովիչ, հը՞...  
ո՞նց ես:

**ԱՐԱՄ** - Կաթվածահար արեցին:  
Սա կազմակերպված գործ ա:

**ԿԱՐԵՆ** - Ռոբոտ դարձրին, տերմի-  
նատոր:

**ՀՐԱՆՏ** - (խոսում է ռոբոտի նման):

Երկիր մոլորակի բնակիչներ, ձեզ  
են դիմում Ալֆա Կենտավրա հա-  
մաստեղության 5 կոտորակ 12  
Կաթնաղբյուր մոլորակի ներկա-  
յացուցիչները: Ողջունում ենք  
ձեզ: Ոտքի կանգնեք, երկրի մար-  
դիկ:

Բոլորը մոտենում են Հրանտին:  
Նա քարացած է:

**ՎԱԶԳԵՆ** - Հրանտ, հերիք ա ձեռ  
առնես, ջահելությունդ ես հիշել:

**ՕՆԻԿ** - Էդ Կաթնաղբյուրը որտե՞ղ է:

**ԿԱՐԵՆ** - Ծաղկածորում, սպորտբա-  
զայից վերև: Միշտ էնտեղ ենք  
խորոված արել: Էխ, ինչ ժամա-  
նակներ էին...



**ԱՐԱՄ** - Արտիստ, կատակասեր: Էդ աղբյուրը հասցե էլ ունի:

**ԿԱՐԵՆ** - Բա ղնց: Հինգերորդ բացատ, տասներկուերորդ ծառ:

**ՎԱԶԳԵՆ** - Հերիք ա սեպերդ բացես: Ավելի լավ ա ասեք՝ էս վիճակից Հրանտին ղնց հանենք:

**ՀՐԱՆՏ** - (*նույն տոնով*): Լուրջ ընկալեք մեր ուղերձը: Սիմոնյան Հրանտը մեր ներկայացուցիչն ու թարգմանիչն է:

**ԱՐԱՄ** - Յա, էդ ղր օրվանից ներկայացուցիչ դառավ...

**ԿԱՐԵՆ** - Հանգիստ, արտիստ: Բեռի Հրանտ, ձեզ ինչ եղավ:

**ՎԱԶԳԵՆ** - Հրանտ, մի հատ վզակոթիդ կտամ՝ ետ կգաս:

**ԱՐԱՄ** - Հո սառացրած միս չի, ասին, չէ՞, ներկայացուցիչ ա:

**Միանում են ցուլարձակները:**

**ՕՆԻԿ** - Պառկել: (*Բոլորը պառկում են:*) Փրկենք մեր ընկերոջը:

**Տնակից դուրս է գալիս Նանեն:**

**ՆԱՆԵ** - Բալեքս, էդ ինչի՞ եք պառկել, ցուրտ է:

**ԱՐԱՄ** - Նանե ջան, կյանք չի, տանջանք ա: Պառկի-վեր կաց, պառկի-վեր կաց... Կազմակերպված գործ ա, ձեռ են առնում մեզ:

**ԿԱՐԵՆ** - Նանե ջան, տուն մտի, այլ մոլորակային տիեզերանավ ա էլել, կարող ա կրակի:

**ՆԱՆԵ** - Հա, բալեքս, առավոտը իջան: Իրանցից վախենալ պետք

չի: Հո մարդ չեն, վատ բան չեն անի, վեր կացեք:

**Ցուլարձակները հանգում են: Բոլորը վեր են կենում, մտանում են Հրանտին:**

**ԱՐԱՄ** - Տատի, ինչ գիտես:

**ՆԱՆԵ** - Է, բալա ջան, 15 թվին էսպիսի նավերը էնքան ժողովուրդ փրկեցին՝ հաշիվ չկա:

**ԿԱՐԵՆ** - Աչքդ լույս, Նանե, ասա՝ փրկարարներդ են եկել:

**ՆԱՆԵ** - Հա, բալա ջան, ազգը փրկեցին, չթողին՝ փոշի դառնա-գնա: Ամբողջ կյանքս նրանց համար աղոթել եմ, գիտեի, որ էլի կգան: Կտեսնեմ՝ կմեռնեմ:

**ԱՐԱՄ** - Ապրի էլի հարյուր տարի, Նանե ջան: Բա հիմա՞ ինչի են եկել:

**ԿԱՐԵՆ** - Չասեց: Մի քիչ էլ մնա՝ էլ փրկելու բան չի լինի: (*Նանեն նստում է, թզբեհ է քաշում:*) Նանե ջան, իրանք ինչ ձևի են: (*Լռությոն:*) Վերջ, հուշերի գիրկն ընկավ:

**ՎԱԶԳԵՆ** - Հրանտ, մի բան ասա:

**ԱՐԱՄ** - Պաշտոն տվին՝ հոգին առան:

**ՀՐԱՆՏ** - (*սթափվում է, ուրախ*): Բարեկամներ, ես նրանց մոլորակում էի: Հրաձք է, հրաձք... զարգաման բարձրագույն մակարդակ, առաջավոր տեխնոլոգիա և կուլտուրա: (*Լռում է՝ տեսնելով մոայլ, խոժոռ դեմքեր:*) Ինչ է պատահել:

**ԿԱՐԵՆ** - Հանգիստ, արտիստ: Ինչի՞ են եկել:

**ՀՐԱՆՏ** - Բարի մտադրությամբ են եկել: Կօզնեն վերածնել մեր հավատը և դառնալ իդեալական մարդ: Մեր միջոցով իդեալական կդառնան մոլորակի մարդիկ, աշխարհում կտիրի խաղաղություն ու սեր:

**Բողոքը զարմացած իրար են նայում: Արամն ու Կարենը քրքջում են:**

**ԿԱՐԵՆ** - Հանգիստ, արտիստ: Էդ մենք պիտի իդեալական դառնանք:

**ԱՐԱՄ** - Այ քեզ բան... ասում էի, չէ՛, կազմակերպված գործ ա:

**ԿԱՐԵՆ** - Ավելի լավ ա՛ փող տային:

**ԱՐԱՄ** - Ճիշտ ա: Դժվար ա սոված փորին իդեալական լինել:

**ՕՆԻԿ** - (*Կարենին, Արամին*): Ինչ եք բերաններդ բացել:

**ՎԱԶԳԵՆ** - Թողնես՝ ամբողջ օրը հանաք անեն:

**ԱՐԱՄ** - Էս մոլորակի վրա մի նորմալ ժողովուրդ չէ՛ր մնացել:

**ՎԱԶԳԵՆ** - Նրանք գիտեն՝ ում հանձնարարեն պատվավոր առաքելությունը: Ընտրյալներին:

**ԱՐԱՄ** - Դե, ըտենց ասա: Աշխարհը՝ մի կողմ, մենք՝ մի...

**ԿԱՐԵՆ** - Yes! Աշխարհի փրկությունը մեզ են վստահում:

**ԱՐԱՄ** - Էլ ո՞վ, եթե ոչ՝ մենք: Բա ո՞նց...

**ՕՆԻԿ** - Դժվար գործ է և շատ պատասխանատու:

**ՀՐԱՆՏ** - Դա մեր ժողովրդի առաքելությունն է: Մենք կզոհենք մեր կյանքը հանուն վեհ նպատակի, թող մեր զրկանքն ու տառապանքը փոխհատուցվեն երկրային դրախտով:

**ԱՐԱՄ** - Զրկանք ու տառապանք... ինչքան կարելի ա:

**ԿԱՐԵՆ** - (*ծոծրակը քորելով*): Ծանր դեպք ա՛ աշխարհը փրկենք: Այ քեզ բան, պատմության գիրկն էլ ընկանք:

**ԱՐԱՄ** - Եթե նյութապես ապահովեն, պատրաստ ենք իդեալական դառնալ:

**ՎԱԶԳԵՆ** - Էսքանը տեսնողը ինչի՞ց կվախենա: Մենք կփրկենք մեր ժողովրդին: Մենք կփրկենք մոլորակը:

**ՕՆԻԿ** - Ազնիվ գործ է: Հանուն դրա արժե կյանքը զոհել:

**ԱՐԱՄ** - Ինչ ա, մենք դե՛մ ենք: Հայ ենք, չէ՛, վերջ ի վերջո...

**ԿԱՐԵՆ** - Էդ ինչքան ժողովուրդ պիտի իդեալական դարձնենք, ինչքան ֆիզիկական ու հոգեկան ուժ ծախսենք...

**ԱՐԱՄ** - Հայի բախտ ա: Բայց ինչի՞ հենց մեր բակն ու մենք...

**ՀՐԱՆՏ** - Այստեղ նրանց կանգառն է, վառելիք են լցնում:

**ՕՆԻԿ** - Էդ ի՞նչ վառելիք կա մեր բակում: Կարո՞ղ ա՛ նավթ ա:

**ՀՐԱՆՏ** - Թթենու հյութը տիեզերանավի վառելիքն է:

**ԿԱՐԵՆ** - Ամառը կանցնի՝ մի թուփ էլ  
չենք ուտի, էղած հյուսիքը կքամեն-  
կտանեն: Ծուտ-շուտ են գալին:

**ՀՐԱՆՏ** - Հաճախ: Մեզ չանհանգրս-  
տացնելու համար անտեսանելի  
էկրան են քաշում:

**ԱՐԱՄ** - *(կեցվածք է ընդունում):*  
Հրանտ, տան բնակիչների կող-  
մից ընդունեք մեր բողոքի նո-  
տան: Ինչի՞ չեն վճարում:

**ԿԱՐԵՆ** - Արամ ջան, քեզ ինչ  
պատահեց, նոր լավ էիր...

**ԱՐԱՄ** - Տեղի համար: Վառելիքի  
համար: Գալիս են, իրանց քեֆին  
փչացնում են մեր անկախ օդն ու  
ոչինչ չեն վճարում:

**ԿԱՐԵՆ** - Հանգիստ, արտիստ: Ապ-  
րես, Արամ ջան: Առաջին անգամ  
քեզնից խելոք բան լսեցի: Ճիշտ  
ա, թող հարկ վճարեն:

**ՎԱԶԳԵՆ** - Վայ, ձեր ինչն եմ ասել...  
ոնց չեք ամաչում: Ծառը հայրս է  
տնկել ու ջրել, բայց ինձ ոչ մի  
բան պետք չէ:

**ԱՐԱՄ** - Իդեալական դարձնելու հա-  
մար շնորհակալ ենք, բայց թող  
վճարեն, չեն աղքատանա:

**ԿԱՐԵՆ** - Վազգեն ջան, դու տիեզե-  
րական կալոնկի տեր ես: Ինչ փո-  
ղեր են... ինձ գործի դիր:

**ՎԱԶԳԵՆ** - Խելքներդ զգե՛լ եք, ուշքի  
եկեք, ինչ եք խոսում:

**ԱՐԱՄ** - Սկզբում՝ փողերը, հետո՝ ի-  
դեալները:

**Պատշգամբում հայտնվում է Ա-  
մայան:**

**ԱՄԱԼՅԱ** - Այ մարդ, էս ինչ ա, գոր-  
ծի չե՞ս գնալու:

**ԱՐԱՄ** - Էս ա գործը, այլմոլորակա-  
յինների հետ հաշիվ ենք պար-  
զում:

**ԱՄԱԼՅԱ** - Էդ ինչքան ես խմել, որ  
այլմոլորակայինի հետ գործ ես  
բռնել: Հիմա կիջնեմ՝ այլմոլորա-  
կային կդարձնեմ:

**ՀՐԱՆՏ** - Տիկին Ամայա, նրանք ե-  
կել են մեզ կատարյալ մարդ  
դարձնեն:

**ԱՄԱԼՅԱ** - Կատարյալ ապուշ կսար-  
քեն:

**ԿԱՐԵՆ** - Ժողովուրդ, այլմոլորակա-  
յիններ են եկել...

**ԱՄԱԼՅԱ** - Ինչ ես ձենդ զցել: Ով  
մեկնել ա, ով էլ, Աստված հոգի-  
ները լուսավորի, տանջանքից  
պրծավ: *(Լերս է գնում):*

**Քիչ անց մուտքից դուրս են գալիս  
Ամայան ու Միրուշը:**

**ՄԻՐՈՒԾ** - Հլը տես, էկել են, ուրեմն՝  
կան: Ո՞վ կմտածեր...

**ՀՐԱՆՏ** - Սա այլմոլորակային տիե-  
զերանավ է, անձնակազմը ներ-  
սում է՝ տասը հոգի: Նրանք  
օգնելու են մեր ժողովրդին:

**ԱՄԱԼՅԱ** - Էրեկվա էրագս ա: Յուղ  
ու բրինձ են բաժանելու:

**ՀՐԱՆՏ** - Ինչ յուղ ու բրինձ... նրանք  
մեզ կօգնեն իդեալական դառնալ:

**ԿԱՐԵՆ** - Իսկ քեռի Հրանտը նրանց  
ներկայացուցիչն ու թարգմանիչն  
է:

**ԱՄԱԼՅԱ** - Յան... լավ եք տեղավորվել, պրոֆեսոր:

**ՍԻՐՈՒԸ** - Տիեզերանավը ինչո՞ւ ասեի նման չի:

**ԿԱՐԵՆ** - Ափսեները ջարդվել են: Ապուրամանով են եկել:

**ԱՐԱՄ** - Գնդակի նման ա: Կարո՞ղ ա՝ «Արարատի» հաղթանակի պատվին են սարքել:

**ՎԱԶԳԵՆ** - Էս ժողովուրդը համեստությունից չի մեռնի:

**ԱՐԱՄ** - Բա ո՞նց, էդ ձևով են արտահայտում իրանց հարգանքը:

**ԿԱՐԵՆ** - Արամ ջան, էսօր մի խելոք բան ասել ես, էլ պետք չի: Առողջությանդ վնաս ա:

**ԱՄԱԼՅԱ** - (*կոտրատվելով*): Թող դուրս գան, ուզում եմ ծանոթանալ, դեսից-դենից խոսալ:

**ՀՐԱՆՏ** - Նրանք մոլեկուլների են փոխակերպված... գիտեն, որ հայերը զգայուն են, սրտից՝ թույլ... որ մենք քիչ ենք ու մեզ պետք է պահպանել:

**ՍԻՐՈՒԸ** - Տես, ոնց են մեր մասին հոգում, չէ՛ մեր կառավարությունը:

**ԱՐԱՄ** - Կառավարությունը հազիվ հասցնում է իր մասին մտածել:

**ՍԻՐՈՒԸ** - Հերիք է ջուր ծեծեք, ինչո՞ւ եք կանչել:

**ՀՐԱՆՏ** - Բարեկամներ, մենք պետք է իդեալական դառնանք, այդպիսին դարձնենք մեր ժողովրդին: Ժողովուրդն էլ իր մեծ առաքե-

լությամբ աշխարհով մեկ կցրվի՝ բոլորին իդեալական կդարձնի ու կփրկի մոլորակը:

**Դադար:**

**ՍԻՐՈՒԸ** - Նորից մենք ենք առաջինը:

**ԱՐԱՄ** - Ասում էի, չէ՛, սա կազմակերպված գործ ա:

**ԱՄԱԼՅԱ** - Էլ բան ու գործ չունենք՝ պատվիրաններ քարոզենք: Ընտանիք ինչո՞վ պիտի պահենք:

**ԱՐԱՄ** - Բա որ ծեծեն... պիտի իմանանք, չէ՛, ինչ շահ ունենք:

**ՍԻՐՈՒԸ** - Այսքան տարի սեր ու եղբայրություն էին քարոզում, ոսկե սարեր էին խոստանում, և ի՞նչ... իշխանության հասան ու թքեցին մեր վրա: Էլ հիմար չկա, որ հենց էնպես իդեալական դառնանք: Ես խմորի կրեմը պիտի պատրաստեմ, պատվեր ունեմ:

**ԱՐԱՄ** - Եթե իրանք էդքան ճիշտ այլմոլորակային են, թող թթենու հյութի համար վճարեն:

**ԿԱՐԵՆ** - Վազգենը փողից հրաժարվեց, ո՞րն է արդարությունը:

**ՍԻՐՈՒԸ** - Վազգեն, ինչի՞ց ես հրաժարվել:

**ԿԱՐԵՆ** - Տիեզերանավի վառելիքը թթենու հյութն է, իսկ ծառը Վազգենի հերն ա տնկել ու ջրել...

**ԱՄԱԼՅԱ** - Ի՞նչ... ծառը բոլորինն ա: Ելանգը մենք էլ ենք բռնել:

**ՍԻՐՈՒԸ** - Չգիտեմ՝ դուք ինչ եք բռնել, ծառը մերն ա:

**ՀՐԱՆՏ** - Հանգստացե՛ք... վերջացրե՛ք...

**ՎԱԶԳԵՆ** - Պապ, մի բան ասա... սրանք ոնց որ կապից թռել են:

**ԱՄԱԼՅԱ** - Մեզնից կատարյալ ապուշ են ուզում սարքել... չի ստացվի: Հրանտ, քեզ աշխատանքի համար վճարում են:

**ԱՐԱՄ** - Պրոֆեսոր, խոստովանիր:

**ՎԱԶԳԵՆ** - Ինչ եք հարձակվել մարդու վրա:

**ԱՄԱԼՅԱ** - Իսկ մեզ տանջանքների համար ոչինչ չի հասնում:

**ՎԱԶԳԵՆ** - Ուշքի էկեք, ուրիշ ժողովուրդ երանության մեջ կընկներ, եթե իրենց ընտրեին, իսկ մենք...

**ՍԻՐՈՒԾ** - Թող իրանց բախտից մի քիչ էլ մեզ տան:

**ԿԱՐԵՆ** - Զեռի Հրանտ, ամոթ է լինել իդեալական ու աղքատ: Գժի տեղ կդնեն:

**ԱՐԱՄ** - Հրանտ Վարդանովիչ, ինչքան են վճարում:

**ՎԱԶԳԵՆ** - Ո՛վ, ինչ... ձեզ միայն փողն է հետաքրքրում:

**ՀՐԱՆՏ** - Լավ, լավ... *(Զարանում է:)*  
Ասացին...

**ԱՄԱԼՅԱ** - Հը՛... մի տաս հազար դրամ կտամ:

**ԱՐԱՄ** - Կնկա խելք: Կանաչով վերցրու, հազարից ոչ պակաս:

**ԿԱՐԵՆ** - Է՛, ես ըլնեի... Ավելի շատ վերցրու: Լավ քեֆ կանենք:

**ՀՐԱՆՏ** - Որոշել եմ հրաժարվել: Հանուն ձեր բարօրության:

**ՍԻՐՈՒԾ** - Հանուն մեր բարօրության՝ մեզ տուր:

**ԱՄԱԼՅԱ** - Պրոֆեսոր, հարևաններից թաքցնելու բան չունես:

**ՀՐԱՆՏ** - Եթե պնդում եք... ժամը՝ տաս սլտոն:

**ՍԻՐՈՒԾ** - Զիչ զիբիլ ունեինք, հիմա էլ՝ սլտոն, դրանով երևի իմ թխվածքն էլ չեն առնի:

**ԱՐԱՄ** - Մեզ իրանց սլտոն-մլտոնները պետք չեն, թող տեղի համար վճարեն, ու կանաչով:

**ԱՄԱԼՅԱ** - Հաստատ խաբելու են: Առանց վճարելու կթռնեն:

**ԿԱՐԵՆ** - Զեռի Հրանտ, իսկ փոխանակման կուրսը ո՞րն է:

**ՀՐԱՆՏ** - Մի սլտոնը հազար դոլար է:

**Երկար դադար:**

**ԲՈԼՈՐԸ** - Ինչ...

**ԱՄԱԼՅԱ** - Յան... *(Ընկնում է Արամի ձեռքերի վրա:)*

**ՍԻՐՈՒԾ** - *(մատնների վրա հաշվում է):* Էդ ինչքան կրեմ կլինի... ինչքան կրեմ...

**ԱՐԱՄ** - Պապ, Կարեն, օգնեք:

**Պապն ու Արամը Ամալյային տանում են տաղավար, պառկեցնում նստարանի վրա: Կարենը սկսում է գոռալ, բայց ձայնը դուրս չի գալիս:**

**ՍԻՐՈՒԾ** - Աստված իմ... *(Ընկնում է Վազգենի ձեռքերի վրա:)*

**ՎԱԶԳԵՆ** - Պապ, օգնի:

**ԱՄԱԼՅԱ** - Արամ, մեռնում եմ...

**ԱՐԱՄ** - Այ կնիկ, մեռնելու ժամանակ ես գտել, ապրանքը չի ծախվել, տոկոսի տակ ենք: Ո՞նց եմ թաղելու...

**ԱՄԱԼՅԱ** - Թող պրոֆեսորը մի քիչ սլտոն տա՝ չեմ մեռնի:

**Օնիկն ու Վազգենը Միրուշին պառկեցնում են տաղավարի մյուս մատարանին: Օնիկը մոտեցնում է Կարենին:**

**ՕՆԻԿ** - Կարեն, այ տղա, քեզ ինչ էլ դավ: *(Ցայտադրյուրի ջրի շիթն ուղղում է Կարենի վրա:)*

**ԿԱՐԵՆ** - *(հիմարավուն):* Սլտոնչիկ-պոնչիկ, պոնչիկ-սլտոնչիկ... Ընդմիշտ կոկա-կոլա:

**ՀՐԱՆՏ** - Կարենին տաղավարում դնենք:

**ՕՆԻԿ** - Էնտեղ կանանց պալատն ա: Մի հատ չհասցնեմ...

**ԿԱՐԵՆ** - *(սթափվում է):* Պապ, ես քո դմբուզը գիտեմ:

**ԱՄԱԼՅԱ** - Արամ, սլտոնները հլը չեն բաժանում: Մեռնում եմ...

**ԱՐԱՄ** - Պապ, դեղատնից դեղ առ: Կամ՝ էս յան, կամ՝ էն յան...

**ՕՆԻԿ** - Խեղկատակություն: Զավեշտանք: *(Գնում է:)*

**ԱՄԱԼՅԱ** - Ինչքան եմ ասել, առավոտները վազի, բախտդ ձեռքիցդ բաց մի թող: Մեռնում եմ...

**ԿԱՐԵՆ** - *(գնդի շուրջն է պտտվում):* Ինչի՞ բանակցելու չգնացի, սլտոնչիկ-պոնչիկները իմը կըլնենին:

**ՍԻՐՈՒԾ** - Վազգեն, կատարիր վերջին շնչիս ցանկությունը, թթնու հյութի փողը կվերցնես՝ աղջիկներիս տեղը տեղին մարդու կտաս...

**Բոլորը տնքում են: Կարենը ծնկի է գալիս Հրանտի առջև:**

**ԿԱՐԵՆ** - *(կրքոտ):* Զեղի Հրանտ, հարգելի պրոֆեսոր...

**ՀՐԱՆՏ** - Այ տղա, ի՞նչ ես անում... ամոթ է, վեր կաց:

**ԿԱՐԵՆ** - Չէ, չէ, պատրաստ եմ երեք, լավ, գոնե մեկ սլտոնով աշխատել: Պարտքերս կփակեմ, Անահիտը կվերադառնա... ամբողջ կյանքս քեզ համար կաղոթեմ:

**ՀՐԱՆՏ** - Բաց թող ինձ... Ես խելագարվել է, օգնեցեք...

**ԱՄԱԼՅԱ** - Հիմա կօգնենք:

**ՍԻՐՈՒԾ** - Մեր սլտոնների վրա աչք ա դրել:

**Ամայյանն ու Միրուշը վեր են ցատկում, վազում, բռնում են Կարենի ձեռքերը: Ես դիմադրում է: Քարշ տալով տաղավար են մտցնում:**

**ԿԱՐԵՆ** - Դուք նոր մեռնում էիք... դուք իրավունք չունեք...

**ԱՄԱԼՅԱ** - Երեխաներ չունես, կնիկդ արտասահմաններում ա, փողը ինչի՞դ ա պետք:

**ԿԱՐԵՆ** - Բաց թողեք... Վեց տարի ամուսնացած ենք, մի տարի ենք իրար հետ ապրել, երեխա չունենք: Ո՞նց ունենանք... Գիշերը

կարոտով տանջվում եմ... երազախաբ, Անահիտին եմ փնտրում... Ո՞ր ես, ո՞ր ես...

**ՍԻՐՈՒԾ** - Կարեն ջան, ժամանակն է էդպիսին: Հրանտ Վարդանովիչը գլուխ կհանի այլմոլորակայիններից:

**ԱՄԱԼՅԱ** - Իսկը սրտիցս ես խոսում, Սիրուշ ջան:

**ՍԻՐՈՒԾ** - Հրանտ ջան, նրանց վարձով բնակարանը կտամ: Ամեն ինչ փայլում է ու պսպղում: Քեզ էլ փայ կտամ:

**ՎԱԶԳԵՆ** - Ա՛յ կնիկ, ո՞ր ա մեր հայկական հյուրասիրությունը:

**ԱՄԱԼՅԱ** - Չհասկացա... մենակ մենք ենք էջի ականջում քնած:

**ԿԱՐԵՆ** - Ահա կնոջ նենգությունը:

**ՀՐԱՆՏ** - Բավական է, այստեղ հայ ժողովրդի բախտն է որոշվում, իսկ դո՞ւք... մեջներդ սրբություն չի մնացել: *(Քարանում է: Քիչ անց:)* Ես խնդրեցի փողը հանձնել մանկատանը:

**ԱՄԱԼՅԱ** - Լավ չստացվեց... Չէ, մանկատան համար՝ լավ ա...

**ԱՐԱՄ** - Պրոֆեսոր ջան, մենք, իհարկե, հպարտ ժողովուրդ ենք, բայց հիմա ո՞վ կհրաժարվի փողից:

**Մուտքից դուրս է գալիս Լևոնը:**

**ԼԵՎՈՆ** - Ի՞նչ եք հավաքվել:

**ԿԱՐԵՆ** - Բարի լույս, Լևոն ջան, այլմոլորակայիններով տիեզերանավ է եկել:

**ԼԵՎՈՆ** - Էս կյանքից մաքուր թե

գժվել եք, գնացեք, հացի փող աշխատեք: *(Լռություն:)* Ի՞նչ եք կանգնել, չհասկացա՞ք:

**ՎԱԶԳԵՆ** - Աշխարհը քոնը չի, մենք էլ՝ քո ստրուկները:

**ԿԱՐԵՆ** - Վազգեն, մի կատաղի, մեր Լևոնը հանաք ա անում: *(Ծիծաղում է:)* Այլմոլորակայինները ուզում են մեզ իդեալական դարձնեն:

**ԼԵՎՈՆ** - Իդեալականը՝ էդ ես եմ: Տգետ ու անբան էիք համարում, հըմի տեսա՞ք՝ ով ա մարդը: Փտած ինտելիգենտներ, դուք ո՞ւմ եք պետք, էս կյանքում ի՞նչ ունեք անելու:

**Դադար: Բոլորը շփոթված են:**

**ՀՐԱՆՏ** - Ինչպէս չեք ամաչում, կողոպտեցիք, խաբեցիք, հիմա էլ մարդատեղ չեք դնում... ներողություն խնդրեք: Իսկո՞յն:

**ԼԵՎՈՆ** - Թանաքաման, ձեռդ կտրի:

**ԱՐԱՄ** - Լևոն ջան, հարևան ենք, էլի... Պրոֆեսորին մեծ փողեր էին տալիս, բայց նա մանկատանը տվեց, մեր մասին ի՞նչ կմտածեն:

**ԼԵՎՈՆ** - Իսկ ձեր մասին ի՞նչ մտածեն: Դուք էլ ժողովուրդ եք: Ծուտով ձեզնից կազատվեմ, ամբողջ տունը իմն ա լինելու: *(Լռություն:)* Կարեն, Արամ, վաղը ծառը կկտրեք:

**ԱՐԱՄ** - Ո՞նց կտրենք: Լևոն ջան, հիշո՞ւմ ես, կապիկի նման ճյուղե-

րին թռվռում էինք, թուփ էինք ուտում:

**ԼԵՎՈՆ** - Էդ դու մարդ չդառար: Պառավին՝ ծերանոց կամ էլ թոռան մոտ: Տունը քանդելու եմ, թույլ-սովորյուն ունեմ:

**ՍԻՐՈՒԾ** - Լանեն սիրում է իր տունը, ուզում է հողին մոտիկ լինել:

**ԼԵՎՈՆ** - Ուզում ա հողին մոտիկ լինի՝ թող մեջը պառկի:

**ՎԱԶԳԵՆ** - (*պայթում է*): Տո, այ տականք, չեմ նայի փողերիդ, ընենց կհասցնեմ՝ ասամներդ կոլ կտաս:

**ԼԵՎՈՆ** - Հը փորձի...

**ՎԱԶԳԵՆ** - Ու կփորձեմ: Ախր, մեջդ փուչ ա...

**Աքլորի նման բախվում են, դժվարությամբ բաժանում են իրարից:**

**ՍԻՐՈՒԾ** - Այ մարդ, ո՞ւմ հետ ես գլուխ դնում, կնստացնեն՝ ազատելու փող չի հերիքի:

**ՀՐԱՆՏ** - Վերջ տվեք կռվին, միայն դա էր պակաս...

**ԼԵՎՈՆ** - Սաղ քանդելու եմ: Սաղ իմն ա: Սանդ...

**ՀՐԱՆՏ** - Բայց ի՞նչ իրավունքով, սա մեր բակն է...

**ԼԵՎՈՆ** - Իմ իրավունքով: Իմ: Ռանդ էդեք իմ բակից:

**ՕՆԻԿ** - (*մոտենալով՝ լսում է նրա վերջին բառերը*): Չես կարող համբերել՝ մինչև սատկենք:

**ԼԵՎՈՆ** - Օնիկ պապիկ, բարի լույս:

**ՕՆԻԿ** - (*Լևոնի վրա է քշում, նա*

*ընկրկում է*): Բանդո՞ւմ ես, ջարդո՞ւմ ես... իսկ դու ի՞նչ ես կառուցել: Ի՞նչ ես ստեղծել այս հողի վրա: Ո՞ւմ ես դուրս քշում:

**ԼԵՎՈՆ** - Օնիկ Վանիկովիչ, խոսքը ձեր մասին չի: Ապրեք, ինչքան ուզում եք: Ձեր որդին մեր ազգի պարծանքն ա, բարևներս Վանիկ Օնիկովիչին... (*Գնում է: Դադար: Լսվում է հեռացող մեքենայի աղմուկը*):

**ԱՄԱԼՅԱ** - Տեսնո՞ւմ եք, տգետները ոնց մարդ դարձան: Թքած ունեն մեզ վրա:

**ՍԻՐՈՒԾ** - Բանի ընտանիք է կործանել... Աստված տա՝ ամեն ինչից զրկվի, մեր կաշվի մեջ հայտնվի:

**ԿԱՐԵՆ** - Բեռի Հրանտ, պատմի, ո՞նց են էնտեղ ապրում:

**ՀՐԱՆՏ** - Կաթնաղբյուրի բնակիչները երջանիկ են ապրում:

**ԱՐԱՄ** - Դե ասա՝ Ամերիկա, ու վերջ:

**ԿԱՐԵՆ** - Չէ, Ավստրալիա: Էրեկ Կոիշ Անդոն էր զանգել: Սիդնեյում ա: Ասում ա՝ դրախտ ա:

**ԱՐԱՄ** - Հրանտ, աշխատանք կամ, աշխատավարձը տալիս են:

**ՀՐԱՆՏ** - Աշխատավարձ չեն տալիս, հոգու պահանջով են աշխատում:

**ԿԱՐԵՆ** - Մեզ պես են ապրում:

**ՍԻՐՈՒԾ** - Խեղճ ժողովուրդ... գուցե հումանիտար օգնություն ուղարկենք:

**ՕՆԻԿ** - Ո՞նց թե... ասում էիր՝ երջանիկ են ապրում:



**ՀՐԱՆՏ** - Իրանց մոտ փողը փողոցում թափած ա:

**ԲՈՒՆՈՐԸ** - Ո՞նց... չի կարող պատահել:

**ԱՐԱՄ** - Հրանտ, տենց հանաք մի արա, սրտից թույլ ենք:

**ՀՐԱՆՏ** - Ուզում ես մի բան գնել՝ բարձրացնում-առնում ես, մանրը նորից փողոց ես գցում:

**ԿԱՐԵՆ** - Հանգիստ, արտիստ: Էդպես բան Ավստրալիայում էլ չկա: Գոնե մի քիչ մանր տային, պարտքերս կտայի, Անահիտն էլ կողքս կլիներ:

**ԱՄԱԼՅԱ** - Հրանտ, իսկ վիզամ: Վիզա կարելի՞ է ստանալ:

**ՎԱԶԳԵՆ** - Դուք սրտից չէ, գլխից եք թույլ, ո՞նց եք թռչելու այնտեղ:

**ԱՐԱՄ** - Մի կերպ տեղ կհասնենք: Ապրանքս կտանեմ:

**ՀՐԱՆՏ** - Իրենց ոչինչ պետք չէ, ամեն ինչ ունեն:

**ԿԱՐԵՆ** - Հրանտ քեռի, քեզ էլ տոկոսը կտանք: Չենք խաբի:

**ՀՐԱՆՏ** - Այնտեղից կարելի է վերադառնալ տասը տարի հետո:

**ԿԱՐԵՆ** - Հոյակապ է: Ջոքանչս հրեշտակների հետ ա վռվռում, պարտատերերին էլ որդերն են ուտում: Yes! Այ թե որտեղ ա հայի բախտը:

**ԱՐԱՄ** - Պրոֆեսոր, իսկ էնտեղ հայեր կան:

**ԿԱՐԵՆ** - Որտեղ հայ չկա:

**ՀՐԱՆՏ** - Չհարմարվեցին: Խնդրեցին իրենց ետ ուղարկել:

**ԱՄԱԼՅԱ** - Ո՞նց ապրես, երբ փողոցում փողը թափած ա, ամեն ինչ օրենքով ա: Բա դա կյանք ա: Հայի սիրտը կպայթի:

**ԿԱՐԵՆ** - Կռիշ Անդոն էլ էր լացում: Բոլոր մարդիկ երջանիկ են ու ժպտում են, ոչ խաբեություն, ոչ սուտ...

**ՍԻՐՈՒԾ** - Մեր ժողովուրդը մոր փորն էլ ընկնի՝ դժգոհ ա:

**ԱՐԱՄ** - Էդպես ենք ծնվել:

**ԱՄԱԼՅԱ** - Բայց ես մի բան չհասկացա՝ ո՞րն է մեր շահը:

**ՎԱԶԳԵՆ** - Աշխարհը սիրո և խաղաղության մեջ կապրի:

**ԿԱՐԵՆ** - Բեռի Հրանտ, մի նեղանա, էդ պատիվը ուրիշին եմ տալիս: Մի քանի սլտոն տային: Հոգիս կծախեմ, մենակ պարտքերիցս պրծնեմ:

**ԱՐԱՄ** - Ով ուզում ա, թող կատարյալ դառնա:

**Հրանտը նորից է քարանում:**

**ԿԱՐԵՆ** - Հրահանգ է ստանում յուրայիններից:

**ԱՐԱՄ** - Իրանց հետ կտանեն, ըտենց խելքերը ընդեղ պետք են:

**ԱՄԱԼՅԱ** - Ինքը թռնում ա, մեզ էլ դժոխքում ա թողնում:

**ՀՐԱՆՏ** - (սթափվելով): Բարեկամներ, ուրախ լուր...

**ԱՐԱՄ** - Հը՞... մի քիչ սլտոն են տալու:

**ՀՐԱՆՏ** - Հիմա հեռուստակամուրջ է լինելու Հայաստանի ու Կաթնաղբյուրի միջև: Մեզ կտեսնեն իրենց մոլորակում:

**ՍԻՐՈՒԹ** - Վայ, դրսի շորերս քիմ-մաքրման եմ տվել:

**ԱՄԱԼՅԱ** - Ես էլ...

**ԱՐԱՄ** - Որ իմանայի՜ տոնավաճառից բոլորին նոր շորեր կբերեի:

**Արամը, Կարենը, Ամալյան, Միրուշը գնում են:**

**ՀՐԱՆՏ** - Սպասեք, ինչի՞ց եք ամաչում:

**ՍԻՐՈՒԹ** - Թող արեզիդենտին նկարահանեն, լավ հագնված է, բանոց է խոսում...

**ՀՐԱՆՏ** - Մենք մեղավոր չենք, որ այսպես ենք ապրում:

**ԿԱՐԵՆ** - Գտա՛, Սևակը ֆոտոմակետներ ունի, գլուխները հանովիղնովի են: Դրանց ետևում կանգնենք:

**ԱՐԱՄ** - Գործ ա ասում: Գնանք, բերենք:

**ԱՄԱԼՅԱ** - Չէր խանգարի՜ մեզ էլ մի քիչ կարգի բերեինք:

**Բոլորը մուտքով ներս են մտնում:**  
**Հրանտը քարանում է:** Քիչ անց ֆոտոմակետներով դուրս են գալիս Արամը, Կարենը: Գետնին են դնում «Քլինթոնին», «Չապլինին», «Բարդոյին», «Լորենին», «Մտալինին», «Եկատերինա Երկրորդին»: Հայտնվում են Միվան, Միրուշը՝ հարդարված: Հանում են ֆոտոմակետների

գլուխները և կանգնում դրանց ետևում. Վազգենը՝ Ստալինի, Կարենը՝ Քլինթոնի, Արամը՝ Չապլինի, Ամալյան՝ Բարդոյի, Միրուշը՝ Լորենի: Որք կանգնած է Եկատերինա Երկրորդը:

**ԿԱՐԵՆ** - Ես Զինթոնի մորը շատ եմ հարգում, ինչ տղա է բերել, հը՛... Սազում ա՛ Ամերիկայի արեզիդենտի կոստյումը:

**Հայտնվում է Օնիկը՝ զինվորական հագուստով, կրծքին շքանշանների շերտիկն է:**

**ԿԱՐԵՆ** - Պապ, Եկատերինա Երկրորդն ա մնացել, կկանգնեն:

**ՕՆԻԿ** - Ինչո՞ւ չեմ կանգնի, նա էր, որ Ռուսաստանը մեծ տերություն սարքեց: (Կանգնում է ետևում):  
Հը՛, ոնց է:

**ԱՐԱՄ** - Լավ է, որ գիշեր չի:

**ՀՐԱՆՏ** - Ո՞վ է մեր մասին պատմելու... Ինչ պիտի ասենք:

**ԿԱՐԵՆ** - Միայն լավը... որ հարուստ ենք, երջանիկ ենք:

**ՀՐԱՆՏ** - Բայց դա կեղծիք է:

**ԱՐԱՄ** - Կարենը ծիշտ է, մեր երկրի պատիվը պահենք:

**ՀՐԱՆՏ** - Եթե այդպես եք ուզում... Կարեն, հենց որ գնդի վրայի լամպը վառվի՜ սկսի:

**Լամպը վառվում է:**

**ԿԱՐԵՆ** - Բարև ձեզ, բանական եղբայրներ: Ուրախ ենք ձեզ ողջունել մեր սուրբ հողի վրա: Մենք՝ հայերս, աշխարհի հնագույն ժո-

ղովուրդն ենք: Մենք պարծենում ենք մեր անցյալով, ուրախ ենք ներկայով, հավատում ենք ապագային:

**ԱՐԱՄ** - Էդ մեկը չափն անցար, ախպերս:

**ԿԱՐԵՆ** - Ահա մեր փառավոր քաղաքի համեստ բնակիչները: Նրանք աշխատում ու ստեղծագործում են ի շահ անկախ հանրապետության:

**ՎԱԶԳԵՆ** - Հերիք ա սուտ ասես, չեմ նայի, որ եթերում ենք:

**ՕՆԻԿ** - Ես եմ մեղավոր, էն ժամանակ պիտի վզին տայի:

**ԿԱՐԵՆ** - Սա՛ տիկին Սիրուշը, հրուշակեղենի ֆաբրիկայի տնօրենը: Նրա քաղցրավենիքը վաճառվում է արտասահմանում: Խոսքը ձեր է, տիկին Սիրուշ:

**ՍԻՐՈՒԾ** - Հաուդուդուդու: Չծախված թխվածքներից ալերգիա ու լուծունենք:

**ԿԱՐԵՆ** - Ինչ համեստություն, չխոսենք հաջողությունների մասին: Տիկին Ամալյան կուտյուրյե է: Վերսաչին, դե Ռիչին նրա աշակերտներն են:

**ԱՄԱԼՅԱ** - Ես դերձակ եմ, ոչ մի վերսպաչի, Դե Զիչի չգիտեմ:

**ԿԱՐԵՆ** - Ինչպիսի կրքեր, ինչ էմոցիաներ... Խոսքը ձերն է: Դե...

**ԱՄԱԼՅԱ** - Բելե, լաո, քելե, լաո... Արի գնանք մեր էրգիր: Էլի...

**ԿԱՐԵՆ** - Էլ պետք չէ: Սա Արամն է: Մեծ բիզնեսմեն է, ստրատեգիական ապրանքների իրացման կետեր ունի:

**ԱՐԱՄ** - Ձեռ ա առնում... հլը փորձի շալվար հագնել առանց դրանց:

**ԿԱՐԵՆ** - Ահա խիզախ օդաչու Ասոյան Օնիկը, նա խաղում է ժողովրդական թատրոնում: Այս պահին Եկատերինա 2-րդի դերում է: Պապ, մի բան ասա:

**ՕՆԻԿ** - Ախտունգ, ախտունգ, օդային տագնապ: Երկնքում Ասոյան Օնիկ է...

**ԿԱՐԵՆ** - Պապ, քեզ ինչ եղավ: Մեր երկրում վետերանները շրջապատված են սիրով ու հոգատարությամբ:

**ՎԱԶԳԵՆ** - Համբերության բաժակս լցվել ա:

**ԿԱՐԵՆ** - Վազգենը՝ բեռնափոխադրման գործակալության տնօրենը: Ցանկացած բեռ նա կհասցնի ձեր մոլորակ: Հա-հա-հա... Կատակ էր:

**ՎԱԶԳԵՆ** - (պայթում է): Վերջ, էլ հանաք չես անի...

**Վազգենը հետապնդում է Կարենին, նա փախչում է: Բոլորը վազում են նրանց ետևից, փորձում են բռնել, հանգստացնել:**

**ԿԱՐԵՆ** - Դադարեցրեք հեռարձակումը... քեռի Հրանտ, օգնի...

**Կարենը ծառն է բարձրանում,  
Վազգենը կանգնած է գնդի  
առջև:**

**ՎԱԶԳԵՆ** - Մենք ամաչելու բան  
չունենք, աղքատ ենք, բայց  
խղճի, ժողովրդի ու Հայրենիքի  
առջև մաքուր ենք: Մոռացել եք,  
ինչպիսին էինք մենք, մոռացել եք  
ձեր անցյալը:

**Դադար: Վազգենը նստում է տա-  
ղավարում, ծխում է:**

**ԱՐԱՄ** - Գալակտիկայով մեկ խայ-  
տառակեց: Հիմա ղնց ենք իդեա-  
լական դառնալու, ղվ մեզ  
կվստահի այդ առաքելությունը:

**ՕՆԻԿ** - Բա դուք չէիք ուզում...

**ԱՄԱԼՅԱ** - Ծատ էլ ուզում էինք: Մե-  
նակ թե Արամի ապրանքը վաճա-  
ռենք... էժան կտանք:

**ԿԱՐԵՆ** - Վազգեն քեռի, ես հո ծիտ  
չեմ, որ ծառի վրա նստեմ:

**Վազգենը ձեռքը թափ է տալիս,  
Կարենը ցատկում է ծառից:**

**ԱՄԱԼՅԱ** - Այ Վազգեն, ղվ էր լեզ-  
վիցդ քաշում:

**ԱՐԱՄ** - Ազգի պատիվը գետնով  
տվեց, ցեխի հետ խառնեց...

**ՕՆԻԿ** - Ազգի պատիվը մենք չէ, որ  
զգել ենք:

**Բոլորն սկսում են գոռալ, ձեռքե-  
րը թափահարել:**

**ԱՄԱԼՅԱ** - Կարենը ուզում էր, որ  
լավ լինի...

**ՍԻՐՈՒԾ** - Պետք էր ճշմարտությունը  
ասել...

**ԱՄԱԼՅԱ** - Ամեն ինչում կոմունիստ-  
ներն են մեղավոր...

**ՕՆԻԿ** - Կոմունիստներին ձեռք  
չտաս: Պատերազմում հաղթե-  
ցին, էսպիսի երկիր կառուցե-  
ցին...

**ԱՐԱՄ** - Բա ճամբարները, գնդա-  
կահարությունները, սղվը...

**ՕՆԻԿ** - Բա որ հիմա ազատության  
մեջ են փախնում...

**ԿԱՐԵՆ** - Կաթից կտրած դեմոկրատ-  
ներին ձայն էինք տալիս...

**ԱՐԱՄ** - Առաջինը դու վազեցիր:

**ԿԱՐԵՆ** - Իսկ դու կեղծ քվեաթեր-  
թիկներ էիր գցում:

**ԱՄԱԼՅԱ** - Եթե նորմալ ժողովրդի  
պես չենք կարող ապրել, թող մեզ  
ոչնչացնեն: Մի ռումբ գցեն, ու  
պըրծ:

**ԱՐԱՄ** - Թող Ամերիկային ծախեն:

**ՀՐԱՆՏ** - Ուշադրություն: Կաթնաղբ-  
յուրի պրեզիդենտը մեզ հրավի-  
րում է իր մոլորակը:

**ԿԱՐԵՆ** - Չհասկացա՞ք՝ ինչ ասեց  
մեզ պրեզիդենտը:

**ԲՈԼՈՐԸ** - Ուռա՛: Կեցցե՛ն Կաթնաղբ-  
յուրի պրեզիդենտը:

**ԲՈԼՈՐԸ** - Կեցցե՛ն Հայաստանի և

Կաթնաղբյուրի ժողովուրդների բարեկամությունը:

**Համընդհանուր խանդավառություն, ուրախություն:**

**ԱՄԱԼՅԱ** - Աչքներս լրյս... Աստված

խղճաց մեզ, ազատեց հոգսերից:

**ՍԻՐՈՒՇ** - Հս, Ամալյա ջան, հա,

ման կգանք գալակտիկայով մեկ:

**ՀՐԱՆՏ** - Բայց, թույլ տվեք... բա կա-

րելի է հիմա թողնել-գնալ:

**ԱՐԱՄ** - Անհրաժեշտ է: Քանի փլա-

տակների տակ չենք մնացել:

**ԱԻՐՈՒՇ** - Խեղճ ժողովուրդ, գրկվեց

մեծ առաքելությունից:

**ԿԱՐԵՆ** - Զեռի Հրանտ, ամենալավը

թոնելն է:

**ՎԱԶԳԵՆ** - Թոնել... ձեր խիղճը ձեզ

կտանջի, ուշքի էկեք:

**ԱՐԱՄ** - Վազգեն ջան, հոգնել ենք սպասելուց ու հույսով ապրելուց:

**ՍԻՐՈՒՇ** - Կարեն, բա դու ո՞նց ես թոնելու: Բա Անահիտը...

**ԱՐԱՄ** - Ընդեղ նոր տիեզերական սեր կգտնես:

**ԿԱՐԵՆ** - (տխրելով): Ո՞նց եմ առանց Անահիտի թոնելու... ո՞նց...

**ՀՐԱՆՏ** - Տիեզերանավի հրամանատարը համաձայնվեց նրան էլ վերցնել: Որտեղ է Անահիտը:

**ԿԱՐԵՆ** - Բուլղարիայում, Պլովդիվում:

**ՀՐԱՆՏ** - Հրամանատարն ասաց, որ Անահիտը ձեզ հետ կլինի:

**ԿԱՐԵՆ** - Ուռա, բոլորս թոնում ենք:

**Հնչում է քոչարի: Բոլորը շրջան են կազմում, պարում են:**

**ԵՐԿՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Տեսիլ առաջին**

**Կեսօր է: Նստարանին մատած է Նանեն՝ տոնական հագնված: Դակատին մետաղադրամներով գլխանոցն է: Տիեզերանավի շուրջը պտտվում է Օնիկը՝ ծանր փայտը ձեռքին: Վազելով բակ է մտնում Կարենը:**

**ՕՆԻԿ** - Կանգնիր, ո՞վ է:

**ԿԱՐԵՆ** - Ես եմ՝ Կարենը:

**ՕՆԻԿ** - Տեսնում եմ, որ դու ես: Մոտ չգաս, կդադնեմ: Նշանաբանը:

**ԿԱՐԵՆ** - Զո ձեռը հիվանդանոց կրնկնեմ: Հա... «Հայաստան»:

**ՕՆԻԿ** - «Վերադարձ»: Անցի:

**ԿԱՐԵՆ** - Պապ, ստորագրի, բնակարանի վաճառքի լիազորագիրն է:

**ՕՆԻԿ** - Ես պահակակետում թղթեր չեմ ստորագրում:

**ԿԱՐԵՆ** - Հին ոսկոր: Լավ, վազեմ՝ մնացածը անեմ-պրծնեմ:

**Կարենը գնում է: Տնից դուրս են գալիս Վազգենն ու Միրուշը, մտնում են տաղավարին: Օնիկը թաքնվում է ծառի ետևում:**

**ՍԻՐՈՒՆԸ** - Որտեղ ես ու աղջիկներս՝  
էնտեղ էլ դու:

**ՎԱԶԳԵՆ** - Ես չեմ թռչի, սա իմ  
քաղաքն է, իմ տունն է:

**ՍԻՐՈՒՆԸ** - Հանուն աղջիկներիդ  
ապագայի ու երջանկության:

**ՎԱԶԳԵՆ** - Անտուն թափառել  
տիեզերքով մեկ... ավելի լավ ա  
մեռնել: Այստեղ են մեր ծնողների  
գերեզմանները:

**ՍԻՐՈՒՆԸ** - Հավերժ հիշատակ  
նրանց, բայց ողջերի մասին  
մտածիր: Վատ կլինի՝ կվերա-  
դառնանք:

**ՎԱԶԳԵՆ** - Էդ ժամանակ ուրիշ աշ-  
խարհ կթռչենք:

**ՍԻՐՈՒՆԸ** - Ես դեռ ապրել եմ ուզում,  
թոռներ մեծացնել...

**ՎԱԶԳԵՆ** - Որ բոլորս թռնենք,  
գնանք, ո՞վ է էս տանը ապրելու:  
Ո՞վ է մեր ծերերին թաղելու:

**ՍԻՐՈՒՆԸ** - Ով բարոյապես թաղեց,  
հիմա էլ թող ֆիզիկապես թաղի,  
մեկ ա՝ ուրիշ բան անել չգիտեն:  
Ինչ կլինի աղջիկներիդ հետ: Հի-  
մա լավ ամուսինը ցեղական ցլի  
նման ա, որ արածի առանց դար-  
դի ու էն գործով զբաղվի:

**ՎԱԶԳԵՆ** - Ինչ գործով:

**ՍԻՐՈՒՆԸ** - Թոռներ մեզ նվիրի: Դե,  
դու շատ լավ հայր ես, պալատներ  
ես կառուցել, փեսաներն էլ հեր-  
թում կոտորվում են:

**ՎԱԶԳԵՆ** - Սևակը լավ տղա է, հայ-  
րենիք է պաշտպանել: Ծնողները

մեկնեցին Ամերիկա, իսկ ինքը  
Նանեի ու Անուշի համար մնաց:

**ՍԻՐՈՒՆԸ** - Խելք չունի: Անուշին ու-  
զում ա՝ թող ծնողների մոտ տա-  
նի:

**ՎԱԶԳԵՆ** - Ուրեմն, Ամերիկա՝ հա՛,  
այստեղ՝ չէ՛:

**ՍԻՐՈՒՆԸ** - Հա՛, Վազգեն ջան, հա՛:  
Կարծում էինք՝ օր ծերության լավ  
կապրենք: Ո՛նց չէ: Զո  
վիրահատությունը, աղջիկների  
ուսումը, ու ամեն տեղ փո՛ղ, փո՛ղ...  
ամառանոցը ծախեցինք: Դու որ  
Երևանի կեսը կառուցեցիր, սև  
օրվա համար ի՞նչ ունես: Մեզ ու  
մեր պատերը: Ուզում եմ՝ երեխա-  
ներս ու թոռներս նորմալ երկրում  
ապրեն:

**ՎԱԶԳԵՆ** - Ինչ-որ ձակատին գրված  
է՛ էն էլ կլինի:

**ՍԻՐՈՒՆԸ** - Հայի խելք: Մենք պիտի  
մեր ձակատագիրը որոշենք:

**Նրանք գնում են տուն: Գալիս է  
Հրամուր:**

**ՕՆԻԿ** - Կանգնիր: Ո՞վ է: Նշանաբա-  
նը:

**ՀՐԱՆՏ** - (*հոգնած*): Պապ, չճանձ-  
րացա՛ր: «Հայաստան»:

**ՕՆԻԿ** - «Վերադարձ»: Անցի:

**ՀՐԱՆՏ** - Ամեն ինչ հանգիստ է:

**ՕՆԻԿ** - Ես եմ պահակակետում:  
Վազգենը թռչել չի ուզում:

**ՀՐԱՆՏ** - Ամեն մարդ ինքը պիտի  
որոշի: Պա՛պ, արի քեզ փոխարի-  
նեմ:

**ՕՆԻԿ** - (փայտը հանձնում է): Վտանգի դեպքում տագնապ բարձրացրու:

**ՀՐԱՆՏ** - Ճիշտ այդպես, ընկեր հրամանատար:

**Օճիկը գնում է: Տնից դուրս են գալիս Ամալյան և Արամը, ձեռքերին՝ տուփեր, կապոցներ, որոնք դնում են շրջանի մեջ:**

**ԱՄԱԼՅԱ** - Արամ, գնա մնացածի ետևից: (Արամը գնում է:)

**ՀՐԱՆՏ** - Տիկին Ամալյա, անհամեստ հարց. սա ինչ է:

**ԱՄԱԼՅԱ** - Ո՞նց թե՛ ինչ... Վերոնիկայի օժիտն է:

**ՀՐԱՆՏ** - Իսկ բանի ինչու իջեցրիք:

**ԱՄԱԼՅԱ** - Տարօրինակ հարց է, հիլ պրոֆեսոր է կոչվում:

**ՀՐԱՆՏ** - Մեկնելուց առաջ արևին եք հանել:

**ԱՄԱԼՅԱ** - Մեզ հետ ենք տանելու: Առանց օժիտ չենք թռչի:

**ՀՐԱՆՏ** - Բայց թույլ տվեք... ինչ օժիտ: Այսքանը տիեզերանավի մեջ չի տեղավորվի:

**Հայտնվում է Արամը մեծ ճամպուրակներով, դրանք կապոցների կողքն է դնում:**

**ԱՄԱԼՅԱ** - Սա բոլորը չի, հլա սերվիս ու հին խալի...

**ՀՐԱՆՏ** - Պրեզիդենտը առանց օժիտի է հրավիրել:

**ԱՄԱԼՅԱ** - Թող քաղաքակրթված ժողովրդից սովորեն: (Արամին.)

Դու դեռ ստեղ ես: (Արամը գնում է:)

**ՀՐԱՆՏ** - Տիկին Ամալյա, ես ձեզ պաշտոնապես հայտարարում եմ՝ կամ դո՛ք, կամ օժիտը:

**ԱՄԱԼՅԱ** - Դե լավ, լավ... (Հայտնվում է Արամը՝ ճամպուրակներով:)  
Սրանք ետ տար:

**ԱՐԱՄ** - Սաղ գծվել են՝ դուրս տարներս բեր: Սա կազմակերպված գործ ա: Բա ո՞նց...

**Արամը տանում է իրերը: Բակ է վազում Սևակը: Աջ ոտքից կաղում է:**

**ՍԵՎԱԿ** - Բեռի Հրանտ, էդ ձիշտ է...

**ՀՐԱՆՏ** - Այո, տղաս, արտերկրային քաղաքակրթությունները գոյություն ունեն:

**ՍԵՎԱԿ** - Լավ կլիներ՝ չլինեին: Գուցե Անուշի հետ փախնենք, մեր պատճառով տիեզերանավի թռիչքը չեն հետաձգի:

**ՀՐԱՆՏ** - Իրականությունից կարելի է փախչել, ինքդ քեզնից՝ ոչ:

**ՍԵՎԱԿ** - Գնամ, Անուշին տեսնեմ: Մենք կորոշենք մեր կյանքը:

**Սևակը գնում է: Հրամարը Նանեին է մտտեմում:**

**ՀՐԱՆՏ** - Նանե ջան, կողքդ նստեմ:

**ՆԱՆԵ** - Նստի, Հրանտ ջան, նստի:

**ՀՐԱՆՏ** - Սիրում եմ կողքդ նստել: Բեզնից այնպիսի հավատ ու կենսախնդություն է բխում, դա ինձ ուժ էր տալիս: Եթե բոլորս գնանք,

ի՞նչ կլինի մեր հայրենիքի հետ: Լորից թափառումնե՞ր: Պանդըխտություն: Հավերժ կսկիծ ու կարոտ... Էլ չենք գտնի մի հող, որ Հայրենիք կոչենք: (Լսվում է դուրսի լացը: Թափվում են թթենու տերևները:)

**ԼԱՆԵ** - Բալա ջան, ժողովուրդը էն ժամանակ է մեռնում, երբ իր ոգին ու հավատն է մեռնում: Մարմինը հողի փայն է: Մենակ ոգին ու հավատն է հավերժական: Դա օդի մեջ է... քարի մեջ... պտուղի համի մեջ է... հին գրքերի մեջ... մեր աչքերի մեջ է... Ու քանի մեր հողը կա, ոգին ու հավատն էլ կլինի: Աստծու ուժերը օգնում են մեզ: Աղոթենք, բալա ջան: Աղոթենք ու հավատանք...

**Դուրսից լաց է լինում: Ծառից թափվում են տերևները:**

**Տեսիլ երկրորդ**

**Երեկո:** Տաղավարում՝ սեղանին սպիտակ սփռոց է: Զքի տակ երգելով Միրուշը սեղան է գցում: Հարևանները բերում են՝ ո՛վ ինչ ունի: Տոնական են հազմված: Օմիկը բերում է երեք լիտրանոց տակառը:

**ՍԻՐՈՒԾ** - Պապ ջան, էս ի՞նչ է:

**ՕՆԻԿ** - Կոնյակ, հարսանիքի համար

էի պահում: Տղաս անուն դրեց՝ վայել չէ...

**ՍԻՐՈՒԾ** - Պետական գործիչ աս, ինքն իրան չի պատկանում:

**ՕՆԻԿ** - Դրանք ժողովրդին ձրի էլ պետք չեն: Վարորդի հետ փող է ուղարկում: Որ մեռնեմ՝ կիմանա, որ էդ փողերը մանկատուն եմ ուղարկել:

**ՍԻՐՈՒԾ** - Թոշակով ղնց ապրես, ամեն ինչ ծախել ես:

**ՕՆԻԿ** - Ասա՛ դիմանանք մինչև հաղթանակը: Պատերազմն անցա ու ոչինչ, ողջ եմ:

**ՍԻՐՈՒԾ** - Էս պատերազմ չի... Էլ բեթար:

**ՕՆԻԿ** - Չգիտես՝ ով է յուրայինները, ով է՝ թշնամին:

**Օմիկը գնում է: Գալիս է Ամալյան, ձեռքին՝ տոլմայով ափսե:**

**ՍԻՐՈՒԾ** - Ի՞նչ անեմ, Վազգենը կողի ա ընկել՝ չեմ թոնի, ու վերջ:

**ԱՄԱԼՅԱ** - Կոնյակից հետո բոլորս էլ կթոնենք: Սևակն էլ ա թոչում:

**ՍԻՐՈՒԾ** - Հաստակո՞ղը... Վազգենից բեթար ա լինելու: Ցերեկը եկել էր, համոզում էր:

**ԱՄԱԼՅԱ** - Աստծո դեմ մեղք ես գործում, ախր, իրար սիրում են: Անուշը ղնց էր կովից Սևակին սպասում, քանի գիշեր խնամեց հիվանդանոցում: Նրանց բաժանել չի կարելի:

**ՍԻՐՈՒԾ** - Մի շաբաթ առաջ գիշերն արթնացա՝ սիրոս անհանգիստ



էր: Լայեմ՝ ծառի մոտ մեկը չոքել աս: Իջա ներքև, կամաց մոտեցա, տեսնեմ՝ Լանեն ծառի առաջ աղոթում աս: Լսեմ՝ Աստծուն աղաչում աս, որ փրկի ժողովրդին: Չդիմացա... Լաց էի լինում ու իրա հետ աղոթում: Մեկ էլ վերջում աղաչում աս, որ տիեզերանավը գա: Կարծեցի՝ խելագարվել աս...

**ԱՄԱԼՅԱ** - Լա սուրբ է, ո՞նց է մեզ համար տառապում:

**Գալիս եմ Կարենը, Արամը, Հրամուրը, Վազգենը:**

**ԿԱՐԵՆ** - Տոնական սեղանը պատրաստ է հրաժեշտի քեֆի:

**ՍԻՐՈՒԾ** - Մի քիչ էլ ծխեք:

**ԿԱՐԵՆ** - Ճիշտ այդպես:

**Տղամարդիկ նախաքեմ եմ գալիս: Ծխում եմ:**

**ՀՐԱՆՏ** - Ուրեմն թոչո՞ւմ եք:

**ԱՐԱՄ** - Հա, պրոֆեսոր ջան: Ամեն մեկի բախտը՝ իրա հետ: Աստված խղճաց մեզ ու տիեզերանավ ուղարկեց:

**ՀՐԱՆՏ** - Այո: *(Սկսում է հազալ:)*

**ԿԱՐԵՆ** - Քեռի Հրանտ, ի՞նչ եղավ:

**ՀՐԱՆՏ** - Հետ եմ սովորել... վաղուց չեմ ծխել:

**ԱՐԱՄ** - Մերն աս:

**ՀՐԱՆՏ** - Պի՞նդ է ... *(Հազում է:)*

**Վազգենը մոտենում է քթնուն: Թափվում են տերևները:**

**ԿԱՐԵՆ** - Քեռի Հրանտ, մեզ մեղադրում էք:

**ՀՐԱՆՏ** - Ես ձեզ ի՞նչ դատավոր: Աղջկա ընտանիքը Մոսկվայում է, թոռնիկս էլ այնտեղ ծնվեց:

**ԱՐԱՄ** - Քեզ կանչում էին, բայց չգնացիր:

**ՀՐԱՆՏ** - Ինձ ի՞նչ է պետք. Լեւլիի գերեզմանին այցելեմ, մեկ էլ՝ թաղվեմ գրքերի մեջ:

**ԱՐԱՄ** - *(ջղային):* Տասը տարի մեռած ենք՝ թաղած չենք, մի կերպ կառչել ենք կյանքից: Ո՞ր ա արդարությունը... մենք ոչ մեկին պետք չենք:

**ՀՐԱՆՏ** - Ոչ ոք ձեզ մեղադրելու իրավունք չունի:

**ԿԱՐԵՆ** - Ուրեմն՝ մենք քեզ համար օտար ենք, սիրտդ էլ չի ցավում՝ թոչում են, թող թոչեն: Էստեղ մնանք, որ կյանքներս նարդու կամ սեղանիկի մոտ անցկացնենք: Աշխատելը մոռացել ենք: Մեզ պետք չի ոչ մտածել, ոչ ստեղծագործել, մենակ կեր ու քեֆ արա: Սենց երջանիկ, անկախ ժողովուրդ ենք: *(Դադար: Հրանտին.)* Մի խնդրանք ունեմ:

**ՀՐԱՆՏ** - Ի՞նչ է պետք, տղաս:

**ԿԱՐԵՆ** - Օնիկ պապի հետ բնակարանս վաճառեք ու պարտքերս տվեք: Ինչ որ մնա՝ պահի Լանեի թաղման համար: Թագուհու նման կթաղես:

**ՀՐԱՆՏ** - *(արցունքը սրբելով):* Լացս բերիր, շան տղա:

**Դադար:**

**ԱՐԱՄ** - Լավ աշուն ա:

**ՀՐԱՆՏ** - Հա, վաղուց այսպես չէր եղել:

**ԿԱՐԵՆ** - Լավ բերք կլինի:

**ԱՐԱՄ** - Պրոֆեսոր ջան, նկուղի բանալիներն են, ցախ կա, պահածոներ... Ձմեռը պետք կգա:

**ՀՐԱՆՏ** - Ծնորհակալություն:

**Մոտենում է Օնիկը:**

**ՕՆԻԿ** - Թռչում եք: Ապրեք... զուգվել-զարդարվել եք:

**ԿԱՐԵՆ** - Գիտես՝ մեզ համար հեշտ ամ:

**ՕՆԻԿ** - Մարմիններդ կփրկեք, բա հոգո՛ւ հետ ինչ եք անելու: Էլ ինչի՞ եք մենակ գնում, ամբողջ Երևանն էլ տանեիք:

**ԱՐԱՄ** - Պապ, մի ճնշի: Ավելի լավ ա՛ ասա, ի՞նչ անենք:

**ՕՆԻԿ** - Դուք ամեն ինչ որոշել եք: *(Ձեռքը թափ տալով մոտենում, շոյում է ծառի բունը, Վազգենին:)* Ո՞նց է հասակ առել: Հայրդ ամեն առավոտ ջրում էր, երեխայի պես ուրախանում էր թթի հասնելուն, բայց մի անգամ թութ չկերավ:

**ՎԱԶԳԵՆ** - Բժիշկները արգելել էին: Մահից առաջ մի բուռ համտես արեց ու ժպիտով հոգին տվեց: Ինձ թվում է՝ հորս հոգին ծառի մեջ է: Ամեն առավոտ խոսում եմ հետը... Իսկ այսօր ծառը լռում է: Ի՞նչ է մարդկանց պակասում, ի՞նչ են աշխարհից տանելու: Պապ, տղուդ ասա՝ թույլ չտա, որ ծառը կտրեն:

**ՕՆԻԿ** - Նրանից ոչինչ չեմ խնդրի:

**ՎԱԶԳԵՆ** - Ապրես, պապ: Ամո՛թ մեր սպիտակ մազերին, մենք պիտի ծառը պաշտպանենք:

**ՍԻՐՈՒԾ** - Տղամարդիկ, ամեն ինչ պատրաստ ա:

**ԱՄԱԼՅԱ** - Ծուտ արեք, թռիչքին քիչ ա մնում:

**Բոլորը տաղավար են մտնում, նստում են:**

**ՍԻՐՈՒԾ** - Բա ո՛ր ա Հրանտը, չէ՞ որ նա մեր թարգմանիչն ա:

**ԿԱՐԵՆ** - Լանեի մոտ ա մտել: *(Գոռում է:)* Հրանտ քեռի, քեզ ենք սպասում:

**Հրանտը դուրս է գալիս տնակից, գունատ է:**

**ՍԻՐՈՒԾ** - Հրանտ Վարդանովիչ, Լանեն չի գալու:

**ՀՐԱՆՏ** - Ի՞նչ... այո: Ոչ, չի գալու:

**ԱՄԱԼՅԱ** - Պրոֆեսոր, ինչո՞ւ եք գունատվել:

**ՀՐԱՆՏ** - Վաղուց չէի ծխել:

**ՍԻՐՈՒԾ** - Մի բան կեր՛կանցնի:

**ՀՐԱՆՏ** - Այո-այո... շնորհակալություն:

**Դադար:**

**ԱՄԱԼՅԱ** - Ի՞նչ եք քթներդ կախել, էդպե՛ս են ծանապարհ դնում:

**ԱՐԱՄ** - Հա, ոնց որ քելեխի սեղան լինի:

**ԱՄԱԼՅԱ** - Լեզուդ չորանա, այ մարդ:

**Դադար:**

**ՍԻՐՈՒԾ** - Մի բան կերեք, առավոտից սոված եք:

**ՕՆԻԿ** - Կարեն, լցրու: Էնպես ճանապարհ դնենք՝ երկար հիշեք: *(Կարենը կոնյակ է լցնում:)* Եկեք խմեք մեկնողների կենացը: Ափսոս, որ հրամանատարը ես չեմ, էնպես տեղ հասցնեի...

**Ծիծաղում են բոլորը, բացի Հրանտից:**

**ՍԻՐՈՒԾ** - Ձեզ համբերություն, մեզ էլ՝ շուտ վերադարձ:

**ԱՄԱԼՅԱ** - Կզանք, սեղան կզցենք, կոնյակ կխմենք: Ամեն ինչ նորից այսպես կլինի:

**ՎԱԶԳԵՆ** - Էլ երբեք այսպես չի լինի:

**ԿԱՐԵՆ** - Մենք անպայման կվերադառնանք: Մի քիչ փող կհավաքենք ու կվերադառնանք:

**ԱՐԱՄ** - Առանց հարևանների ու բարեկամների ո՞նց կլինի: Առանց էս բակի ու ծառի ո՞նց կլինի: *(Խփում է բոլորի բաժակներին ու համբուրվում:)*

**ԱՄԱԼՅԱ** - Տես, ո՞նց ա բացվել... վերջում լացելու ա:

**ԱՐԱՄ** - Հոյակապ կոնյակ ա, պապ:

**ԿԱՐԵՆ** - Փառահեղ է... պապ, էլի կամ:

**ՕՆԻԿ** - Տանձլ ես ուզում, շան տղա: Բո բարիքը սեփական հողում խմի:

**ԿԱՐԵՆ** - Դե լավ, պապ, մի շիշ տանենք՝ զարմացնենք:

**ՕՆԻԿ** - Զարմացրիք: Հայրենիքը փրկելու փոխարեն փախչում եք:

**ԱՄԱԼՅԱ** - Էկեք չվիճենք...

**ՕՆԻԿ** - Դուք էս տեսակ կոնյակ խմել եք:

**ՎԱԶԳԵՆ** - Որ Էրեբունի-Երևանի 2750-ամյակն էինք նշում:

**ՕՆԻԿ** - Ճիշտ այդպես: Այսքան տարի է անցել՝ աչքիս առաջ է:

**ՍԻՐՈՒԾ** - Համաժողովրդական տոն էր, ուրախությունից լաց էինք լինում: Սեղաններ էին բացել բակում ու փողոցում, երգ ու պար՝ մինչև առավոտ: Նանեն պասուց տոլմա էր պատրաստել՝ Վանի: Մատներդ հետը կուտեիր:

**ԱՄԱԼՅԱ** - Արամը ինձ ծնողների հետ ծանոթացրեց: Զահել էինք...

**ՍԻՐՈՒԾ** - Ուրախ-զվարթ ապրում էինք...

**ԱՐԱՄ** - Հիմա ամեն ինչ փող ու պաշտոնի կոռիվ ա:

**ԿԱՐԵՆ** - Բա ես որտե՞ղ էի, որ Երևանի օրն էին տոնում:

**ՕՆԻԿ** - Սեղանի տակ չոչ էիր անում: Հորդ հետ շուրթերիդ էս կոնյակից քսեցինք... Լավ մարդ էր, Աստված հոգին լուսավորի:

**ԿԱՐԵՆ** - Դրա համար մանկությունից ծանոթ համ է:

**Բոլորը շինծու ծիծաղում են: Դադար:**

**ՍԻՐՈՒԾ** - Իսկ Նանեին հիշում եք... տարազով, ճակատին՝ արծաթ դրամները... Գեղեցկուհի էր:

**ԿԱՐԵՆ** - Ինքը հիմա էլ ա սիրուն:

**Հրանտը ճակատն է սրբում:**

**ԱՐԱՄ** - Հրանտ ջան, վա՛նտ ես:

**ՍԻՐՈՒԾ** - Կոնյակ խմի, էս կոնյակը ամեն բան կբուժի:

**ՀՐԱՆՏ** - Այո, այո... շնորհակալություն: *(համում է:)*

**ԱՄԱԼՅԱ** - Էդքան տարի համերաշխ ապրեցինք՝ ոչ կռիվ, ոչ մի չար խոսք: Երեկոյան տղամարդիկ նարդի են խաղում, խորոված անում... լավ էր...

**ՍԻՐՈՒԾ** - Նեղիի հետ պատշգամբում թեյ էինք խմում... Մեր աղջիկները նույն օրը ծնվեցին, Հրանտն ու Վազգենը ծննդատան պատերի տակ էն համերգը տվեցին... հիշում եք:

**ՕՆԻԿ** - Կարեն, քնե՛լ ես, տղա:

**Կարենը կոնյակ է լցնում:**

**ԱՐԱՄ** - Վազգեն ջան, պատմի, ոնց Հրանտի հետ գնացիք գինի բերելու մեր հարսանիքին:

**ՎԱԶԳԵՆ** - *(նյարդային):* Ինչքան կարելի է...

**ԱՄԱԼՅԱ** - Հրանտ Վարդանովիչ, դու պատմի, խնդրում ենք: *(Հրանտը բացասաբար գլուխն է օրորում:)* Մի շաբաթ քե՛ֆ էինք անում, հիշում ես:

**ՎԱԶԳԵՆ** - *(պայթում է):* Հիշում ես,

չես հիշում... Ինձ հանգիստ թողեք:

**ՍԻՐՈՒԾ** - Գիտես՝ մեզ համար հեշտ է: Աստված տեսնում է՝ մեր սրտում թախիժ կա, բայց հանուն երեխաների, հանուն ձեր...

**Ձեռքը թափ տալով ուզում է սեղանից հեռանալ: Օնիկը պահում է նրան, համբուրում է ձեռքը, գրկում:**

**ՕՆԻԿ** - Ներիր մեզ, աղջիկս, ներիր...

**ՎԱԶԳԵՆ** - *(խույ):* Հիշում եք Հրանտի դիսերտացիայի պաշտպանությունը: Ծենքի բնակիչները...

**ԱՐԱՄ** - Սաղ բակը, հարազատները, նույնիսկ քեռի Միշան էր էկել:

**ՕՆԻԿ** - Իսկ Գեորգի Ստեփանովիչը ինչ ձկներ էր բերել: Արաքսից:

**ԱՐԱՄ** - Լավ բան շատ կար, չէ՛, Հրանտ Վարդանովիչ:

**ՀՐԱՆՏ** - Այո, այո...

**ԱՐԱՄ** - Տրամադրությունդ մի տեսակ է: Բան է պատահել:

**ՀՐԱՆՏ** - Հոգնել եմ...

**ԱՐԱՄ** - Բիչ է մնացել, շուտով կթռչենք:

**ԿԱՐԵՆ** - Մարդուն ի՛նչ է պետք՝ տուն, լավ հարևաններ, մեկ էլ՝ սիրած գործ...

**ՍԻՐՈՒԾ** - Ինչ սրտով ենք թռչում: Մեր սրտերը մնում են ձեզ հետ, այս բակում:

**ՎԱՋԳԵՆ** - Լքված Սրտերի Հանրապետություն:

**Դադար:**

**ՕՆԻԿ** - Ես խելագարվում եմ լռությունից, ո՞ր է երեխաների աղմուկը, գնդակի հարվածը, ապակու շրխկոցը... Ո՞ր է աղավնիներ թռցնող տղան: Ո՞ր է կռունկը, որ զարնանը բույն էր դնում թթենու վրա: *(Դադար:)* Երբ մանչեր չեն ծնվում ու ծերերը մեռնում են՝ քաղաքներ են կործանվում:

**Վազքով գալիս է Լևոնը, այլայլված է, ցայտադրյալից ջուր է խմում, լվանում է դեմքը: Մոտենում է:**

**ԼԵՎՈՆ** - Հլը նայի, կոնյակ են խմում: Ֆալշ ամ: *(Վերցնում է բաժակը, խմում է:)* Հոյակապ կոնյակ աս: Հլը դեռ ասում են՝ աղքատները վատ են ապրում: Իմ գեղեցկուհուն չե՞ք տեսել:

**ՍԻՐՈՒՇ** - Ընկերոջդ հետ գնաց: Ճամպրուկներով:

**ԼԵՎՈՆ** - *(խելագար ծիծաղում է):* Քցեցին... Բռնեմ՝ մորթելու եմ: Տակ տվեցի, ամեն ինչ կորցրի: Ուրախացեք, նախանձում էիք ինձ... աչք էիք դրել հարստությանս վրա:

**ԱՄԱԼՅԱ** - Կեղտոտ փողերդ ո՞ւմ են պետք:

**ՍԻՐՈՒՇ** - Կնոջդ ու տղաներիդ դուրս

արեցիր՝ թեթևալիկին բերեցիր, խաբում էիր, գողանում, ընտանիքներ էիր քանդում: Աստված էլ հո կամ...

**ԼԵՎՈՆ** - Հոյսով ապրեք... *(Կարենին.)* Փողը ե՞րբ ես տալու:

**ԿԱՐԵՆ** - Օնիկ պապը բնակարանը կծախի ու պարտքը կտա:

**ԼԵՎՈՆ** - Տոկոսով: Բա ի՞նչ եք հավաքվել:

**ՕՆԻԿ** - Մեկնում են:

**ԼԵՎՈՆ** - Հեռո՞ւ:

**ՕՆԻԿ** - Կաթնադրյուրներ:

**ԼԵՎՈՆ** - Կազինո, ավտոմատ խաղեր կամ:

**ՀՐԱՆՏ** - Այնտեղ արգելված է:

**ԼԵՎՈՆ** - Ափսոս: Դե լավ, ես գնացի: Տեսնեմ՝ ինչ ասանացել:

**Լևոնը անհաստատ քայլերով գնում է:**

**ՍԻՐՈՒՇ** - Լևոնից ազատվեցինք: Վազգեն ջան, հանգիստ կարող ենք թռչել:

**ՕՆԻԿ** - Եթե ամեն մեկը պաշտպաներ իր բակը, տունը, իր հոգին՝ այսպես չէր լինի:

**ԼԵՎՈՆ** - *(մուտքի շեմին շրջվում է):* Շուտ եք Լևոնին թաղում... հլը ոտի կկայնեմ, իմս կասեմ...

**Ինչ-որ մեղեդի երգելով ներս է մտնում: Մեղանի շուրջը ճնշող լռություն է:**

**ՎԱԶԳԵՆ** - *(կոնյակը մի շնչով խմում է):* Խոսում ենք, խոսում... Խոսքեր ենք գտնում, պատճառներ որոնում, փորձում ենք արդարանալ... Գնում ենք: Ինչի՞ համար, ո՞ր... Գուցե մենք ժողովուրդ չե՞նք, գուցե Հայրենիք չունենք: Հեշտ է բախտից բողոքել, օր-օրի սպանել հոգին ու հավատը, իսկ հետո գնալ: Բայց ո՞վ է կառուցելու մեր տունը, ո՞վ է տնկելու ծառը, ո՞վ է ծնելու սերունդներին: Ամեն մեկը մտածում է ընտանիքը փրկելու մասին, բայց ո՞վ է փրկելու Հայրենիքը: Չէ՞ որ թշնամին չի նվաճել ու չի կողոպտում նրան, այլ՝ մենք: Մենք: *(Երկար դադար:)* Ով մեկնել է՝ չի վերադառնա: Ու կկորցնի ծառը ևս մի տերև ու կչորանա ևս մի ձյուղ: *(Դուրս է գնում տաղավարից:)*

**ՍԻՐՈՒԾ** - Վազգեն, էդ ո՞ր...  
**ՎԱԶԳԵՆ** - Տուն: Իմ տունը: *(Մոտքով ներս է մտնում:)*  
**ԱՐԱՄ** - Հրանտ քան, շամ է մնում թռիչքին:  
**ՀՐԱՆՏ** - Կես ժամ:  
**ՍԻՐՈՒԾ** - Գնամ, իրերը հավաքեմ ու Վազգենին համոզեմ:  
**ԱՄԱԼՅԱ** - Մենք էլ գնանք, ճանապարհից առաջ մեր տանը նստենք:  
**ԿԱՐԵՆ** - Իսկ ես ի՞նչ անեմ...

**Արամը, Սիրուշը, Ամայյան, Կարենը գնում են: Մնում են Հրանտն ու Օնիկը:**

**ՕՆԻԿ** - Բամ է պատահել:  
**ՀՐԱՆՏ** - Լանեն հոգին ավանդեց:  
**Դադար:**  
**ՕՆԻԿ** - Ասե՛նք նրանց...  
**ՀՐԱՆՏ** - Թող նրանց հիշողության մեջ կենդանի մնա:

**Տեսիլ երրորդ**

**Կեսգիշեր:** Բակ են վազում Սևակն ու Անուշը՝ անձրևից թրջված: Տեսնելով մութ պատուհանները՝ կանգ են առնում: Տիեզերանավը չկա, ոչ ոք չկա: Անուշը լաց լինելով մոտենում է ծառին, Սևակը հետևում է նրան:

**ՍԵՎԱԿ** - Լաց մի լինի:  
**ԱՆՈՒԾ** - Թռել են... ո՞նց պիտի ապրեմ:  
**ՍԵՎԱԿ** - Բայց ես կամ, մեր սերը կա, Լանեն, քեռի Հրանտն ու Օնիկ պապը... ովքեր մնացել են քաղաքում: Մենք մենակ չենք:  
**ԱՆՈՒԾ** - Բայց նրանք չկան... ո՞նց գնամ տուն...  
**ՍԵՎԱԿ** - Լրանք տասը տարուց վերադառնալու են ու միանգամից կընկնեն թոռների գիրկը: Գնանք, ինձ մոտ կգիշերես:

**Բացվում է պատուհանը:**

**ՍԻՐՈՒՇ** - Էդ ո՞ր ես Անուշին տանում, նա տուն չունի...  
Գիշերվա էրկուսն ա՛ դեռ ման են գալիս:

**ԱՆՈՒՇ** - *(ուրախ)*: Մայրիկ... դուք չե՞ք մեկնել:

**ՍԵՎԱԿ** - Սիրուշ մայրիկ, մնացե՛լ եք:

**ՍԻՐՈՒՇ** - Մնացինք, մնացինք...  
Կամաց, հայրիկը քնած է: Անուշ, տուն: Սևակին էլ հետդ բեր:

**ՍԵՎԱԿ** - Ես է՛լ գամ...

**ՍԻՐՈՒՇ** - Արի, արի, քո սիրած գաթան եմ թխել:

**ՍԵՎԱԿ** - Տուն մտնեմ, Նանեին տեսնեմ...

**ՍԻՐՈՒՇ** - Էնտեղ գնալ պետք չէ, արի մեզ մոտ:

**ԿԱՐԵՆ** - *(հայտնվելով)*: Իսկ ո՞վ ինձ մի կտոր գաթա կիյուրասիրի: Կոնյակից հետո քաղցրը ձգում է:

**ՍԻՐՈՒՇ** - Դու էլ արի, քաղցրակերու շատախոս: *(Ծիծաղում է:)*

**ՍԵՎԱԿ** - Կարեն, մնացե՛լ ես... իսկ ո՞վ է թռել:

**ԿԱՐԵՆ** - Հանգիստ, արտիստ: Նեգր Լևոնին ենք ուղարկել: Մեկ էլ տե-

սար՝ էնտեղ նրանից մարդ սարքեցին:

**ԱՐԱՄ** - Որ քնել չեք ուզում, գոնե սուրճ եփեք:

**ԱՄԱԼՅԱ** - Բա հետո ո՞նց ես քնելու, վաղը գործի ես:

**ԱՐԱՄ** - Էլ տոնավաճառ չեմ գնա, հերիք է, զզվել եմ:

**ԱՄԱԼՅԱ** - Բա ո՞նց ենք ապրելու:

**ԱՐԱՄ** - Կապրենք, չենք կորի...  
Կարևորը՝ միասին ենք:

**ՍԻՐՈՒՇ** - Արամ ջան, ես կեփեի, բայց սուրճ չունեմ:

**ԱՄԱԼՅԱ** - Սուրճը՝ ինձնից:

**ՕՆԻԿ** - Էս խի՞ ա մութ: Լույսերը վառեք, մենք միասին ենք:

**Բոլոր պատուհաններում վառվում են լույսերը՝ բացի չորրորդ հարկից:**

**ԱՐԱՄ** - Հրանտ ջան, էդ կազմակերպված գործ ա, դուք Վազգենի հետ նորից գինու ետևից պիտի գնաք:

**ՀՐԱՆՏ** - Մենք միշտ պատրաստ ենք:

**ԿԱՐԵՆ** - Ամալյա ջան, մի ուրախ բան երգիր:

**Ամալյան երգում է, աստիճանաբար նրան ձայներ են միանում, երգը տարածվում է Երևանի մութ փողոցներով և արձագանքվելով՝ վերադառնում է բակ:**



## Անուշ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ

Այն հանգամանքը, որ հերոսները գաղթականներ են Հունաստանից, զարմանալիորեն համընկավ մերօրյա այս ողբերգության արքեոիպային կոնտեքստի հետ. չէ՞ որ տրագեդիան ստեղծվել է Անտիկ Հունաստանում, և հասկապես առաջին հույն ողբերգակներն են, որ առաջ են բերում «նախահոր մեղսանքի համար հատուցում», «մեղքի դիմաց մեղք», «արյան վրեժի օրենքի» առասպելական, տոհմային հասկացությունները: Սուսցվում է՝ «Մերսեդեսը» մերօրյա «Օրեստես» է, սակայն մար-

դու կյանքին ուղղություն տվող գերբնական ուժերի և բանականության դիրքերից: Ճակատագրի և նախաինամության մեջտեղում հյուսված պատում, քանի որ ճակատագիրը տարերային է, նրա որոգայթը հավասարապես կարող են ընկնել և մեղավորը, և անմեղը, մինչդեռ վրիժառությունը բանականության արդյունք է, որ ուղղված է մեղսագործներին պատժելու համար:

Երբևէ գործողություններում չհայտնվող Մերսեդեսը պիեսի առանցքում է՝ իբրև դիցաբանական քավության նոխազ, իբրև մի ազգի ճակատագրի, նրա գենետիկ հիշողության կրող, որ, ի վերջո, զոհաբերվում ու ակամա հոշոտվում է այն մարդկանց կողմից, որոնց ապրեցրել էր:

Պիեսի մի բևեռում ֆանտասմագորիան է, դիցաբանական տարերքը իր՝ զոհաբերումը իբրև գերագույն և անխուսափելի իրողություն հասկացությանը, իսկ մյուս բևեռում իրական դժոխքն է՝ եղեռնի զոհ, աշխարհասփյուռ հայի ճակատագիրը, որը նրան հետապնդելու է նոյնիսկ մեկ դար անց: Դրանց կապող կամուրջը Մեղքի հանրայնացման գաղափարն է, որի շնորհիվ չեզոքանում է այդ մեղքի իրական նշանակությունը: Մեղսակից ես, ուրեմն հավասարապես «մեղավոր չես»՝ փաստում է Ֆրեյդը Այնուամենայնիվ, Ջարուհին ևս զոհաբերվում է, քանի որ մեր ժամանակներում դատապարտելի է և վտանգավոր ճշմարիտ Հայրենասեր լինելը: Ահա թե ինչու «Հայրենասիրական ֆարս» բնորոշեցի թատերաստուրը:



# ՄԵՐՍԵՂԵՍ

Դրամա մեկ գործողությամբ՝ երեք արարով  
Հայրենասիրական տրագիֆարս՝  
անտիկ հունական դրամայի մոտիվներով

---

Մաս առաջին՝	<b>Օրիորդ Չարուհի</b>
Մաս երկրորդ՝	<b>Մադամ Չարուհի</b>
Մաս երրորդ՝	<b>Խեղճ Մերսեղես</b>

## Գործող անձինք

**ՉԱՐՈՒՀԻ** - երիտասարդ, համակրելի կին, ներկայացման ընթացքում փոխվում է, սկզբում 25-30 տարեկան է

**ՄԵՐՍԵՂԵՍ** - նրա ձայնը 50-60 տարեկան կնոջ ձայն է հիշեցնում

**ԳՈՒՍՏՐ** - նորաձև, էֆուգենսիկ, ճշացող արտափնով աղջիկ, 20-25 տարեկան

**ՈՐԳԻ** - Չարուհու հիվանդ որդին, նախընտրելի է, որ խաղա 30-50 տարեկան տղամարդ, սակայն մանկական դասիվածով, միշտ լուռ է: Գժվար է կռահել, որ նա հիվանդ է

Օֆիկ, Մերոճ Չարուհու դստեր երեխաները, Չարուհու հաճախորդները, արձարանի երիտասարդներ, հյուրեր, սասիրներ, անցիկ հունական խոր, Նեմեսիս: Այս բոլոր դրվագային կերպարները կերպարանափոխվելով խաղում են նույն 10-15 հոգի դերասանները:

---

## Մաս առաջին

### ՕՐԻՈՐԴ ՉԱՐՈՒՀԻ

Բենը մութ է: Լսվում է հեռացող նավի շշակի սուլոց, միմյանց բարեմաղթանքներով ճանապարհող մարդկանց ձայներ, դրանց մեջ հատկապես հստակ ու ավելի բարձր՝ Մերսեղեսի ձայնը. «Տղայ, կամ աղջիկ քույրիկս, չմոռնա՛-աս... կաղաչե՛-

եմ, չոճուխին մասին անպայման մեզի լուր կ'ուտաս, չմոռնա՜-աս, կաղաչե՜-եմ, հասնես ցն լուր տուր, Չարուհի՜-ի, աղջի՜-իկ»:

Աղմուկին գուգահեռ աստիճանաբար լուսավորվում է բեմը. շփոթահար կանգնած է Չարուհին: Մի ձեռքին մեծ ճամպրուկն է, մյուսին՝ փոքրիկ ծաղկամանով կիտրոնի ծառի շիվեր: Նա աջ ու ձախ է նայում, ասես գտնում է քրոջն ու թափահարում է թաշկինակը, երջանիկ դեմք ունի ու քրոջը ժեստով հասկացնում է, որ ամեն ինչ լավ է լինելու:

Լույսը մարում է: Երբ նորից միանում է՝ Չարուհին բեմի այլ անկյունում է:

**ԶԱՐՈՒՏԻ** - Միշտ ինչ-որ տարօրինակ սարսուռ էր զգում Հայաստան բառը լսելիս, ասում էր. «Հեռուն հայրենիքը սիրելը ավելի լավ է, չեմ կրնար պատկերացրել հսկայական, ձյունապատ լեռը այդքան մոտիկեն, կարծես կջգմե ինձի իր մեծությամբ: Սուկալով կմսիմ: Նկարներուն մեջ գեղեցիկ է, չեմ վիճեր: Ոչ աման, դուն ալ մի երթար, քույրիկս»: «Է, է, Մերսեդես, ինչեն կվախնասուկոր, ատիկա մեր երկիրն է, քուկդ և իմ: Օր մը անպայման պիտի գամ իմ հայրենիքս, պիտի չի դիմանամ, թռելով պիտի հասնիմ Հայաստանս»: *(Ծիծաղում է, խանդավառվում է:)* Հավանաբար նրանից էր, որ Մերսեդեսը մեծ էր ինձնից տասը տարով ու ինձնից ավելի երկար ապրելով հունական հողում, ավելի ուժեղ էր զգում կապը իր ծննդավայրի հետ: Չէ, պարզապես նստակյաց, ծանր բնավորությունն էր պատճառը. չէր սիրում փորձարարության ենթարկել իր կյանքը:

Քայլում է, գնում է, գալիս է այս ու այն կողմ:

Օրեցօր ծաղկող Սովետական Հայաստանի մասին լուրերը ամեն օր սողոսկում էին Սալոնիկի մեր բնակարան, թերահավատություն էին առաջացնում Մերսեդեսի հոգում, բորբոքում իմ կարոտն ու տենչը առ հայրենիք: Կոմունիստ ագիտատորները պատմել էին, որ հացն ու մեղրն անվճար է, իսկ առուներով կաթ է հոսում այնտեղ: Պիտի երթամ...

**ՄԵՐՍԵՂԵՍԻ ձայնը.** «Դուն քեզի հեջ չե՞ս հարցներկոր՝ ադի ինչպե՞ս եղավ որ պատերազմեն հետո հայրենիքը այդպես ծաղկած վիճակի մեջ էր, երբ Սալոնիկայի մեջ պատերազմի մթնոլորտն էր դեռ: Միտքեդ հանե, միամիտ աղջիկ»:

**ԶԱՐՈՒՏԻ** - Մի օր էլ չդիմացա: Գիշերը վեր թռա տենդով բռնված, հայկական արյունը երակներումս ուռչել, պայթել էր, ու դրա մանրագույն մասնիկները թափանցել էին ուղեղիս, հոգուս, խղձիս, երևակայությանս, գիտակցությանս ամենահեռավոր անկյունները: Վազեցի, քնած քրոջս անկողնում թափահարեցի,

արթնացրի՝ Մերսեդես, Մերսեդես, պիտի օգնես, պիտի երթամ, Մերսեդես:

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը՝** «Կաղաչեմ, հաճիս միտքեդ հանէ, մեր մեծ հայրերը անապատներուն մեջ առանց գերեզմաններու մնացած են, մեր ծնողները այստեղ՝ Հունաստանի մեջ թաղված են, հոս է մեր ծննդավայրը, մենք հոս ծնած ենք, մենք անոնց չենք կրնար լքել: Քնացիր, հանգստացիր, Զարուհի, գլուխեդ հանէ ասանկ հեքիաթներ»:

**ԶԱՐՈՒՀԻ** - Հավաքվեցի ու քառասունութ թվին մի խումբ ներգաղթյալների հետ ճանապարհ ընկա Հայաստան:

**Մթություն, դարձյալ մավի շչակի սուլոց, դարձյալ Մերսեդեսի լացկումած ձայնը:**

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը**- «Չոչուխին մասին չմոռնա՛-աս, համառ աղջիկ»:

**Չարուհին թաշկինակը բարձրացնում է ու լայն ժպիտով թափահարում՝ քրոջը հրաժեշտ տալով:**

**ԶԱՐՈՒՀԻ** - Քանի որ լուրեր էին հասել, որ նամակների բովանդակությունը ստուգվում էին, զգուշավոր Մերսեդեսը պայմանական նշան որոշեց մեզ համար. մի որոշ ժամանակ ապրելուց հետո նամակ էի գրելու քրոջս, որ-

տեղ պիտի նրան տեղեկացնեի՝ արդյոք արժե՞ գալ Հայաստան, թե՞ ոչ: Լավ լինելու պարագայում նամակում գրելու էի, իբրև մեր ազգականուհին տղա զավակ ունեցավ, վատի դեպքում՝ աղջիկ: Ահա սա էր հիշեցնում մի վերջին անգամ իմ խեղճ Մերսեդեսը: Մերսեդեսը, որ այդպես էլ չամուսնացավ ու պիտի իմ երկու զավակների պահապան հրեշտակը դառնար:

**Տեսարանը փոխվում է: Նավի շչակի փոխարեն այժմ գնացքի ձայներ են: Զարուհին նստած է գնացքում՝ իր ճամպրուկի վրա: Խառնամբխի ձայն, մեկ վրացերեն, մեկ էլ գլումրվա բարբառով մեկումեջ հնչող արտահայտություններ: Զարուհին լուսամտից նայում է՝ աչքերում հավատ, հույս, սպասվող երջանկություն:**

**ԶԱՐՈՒՀԻ** - Կզգամ, անպայման կզգամ, երբ Վրաստանեն թրեհը դուրս գա և մտնենք Հայաստան, կզգամ, վստահեմ կզգամ: Հայրենիքիս հոտը ուրիշ է, երկինքը՝ ուրիշ կապույտ է, արդեն կսկսիմ երազել...

**Այս մտքերով տարված Զարուհին քուն է մտնում, ենթադրվում է, որ ժամանակ է անցնում, մեկ էլ վեր է թռչում շչակի աղմուկից, մարդկանց խոսակցություններից:**

**ԶԱՐՈՒՀԻ** - Գնացքը կանգ առավ

հերթական կանգառում, որն ինձ համար վերջինն էր:

**Ձեռքն է առնում կաշվե ճամպրուկն ու մեծ պաստառը, որի վրա մեծ տառերով գրված է՝ «Օրիորդ Ջարուհի», ու կանգնում է կայարանում:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Լենինական: Կայարան: Թշվառության հոտ, թափառող սոված շներ, աղքատիկ հագնված, բայց զվարթ մարդիկ: Հետաքրքիր է, իսկապես զվարթ են նրանք:

Աղմուկ-աղաղակ, առևտուր ամող մարդկանց ձայներ գյումրվա բարբառով, դրանց միջից հատկապես պարզ լսվում է մի տղամարդու ձայն, որ բղավում է՝ քյալլա՛... քյալլա՛: Մարդկանց բղավոցներ՝ տո կեցիր, իմ հերթն է, ապուշի մեկը, դեսն անցնիր, իշուն գլուխ և այլն: Չայները մի պահ խլանում են:

**ԶԱՐՈՒՇԻ** - *(ապշած ու քարացած, աչքերը հանդիսասրահ հառած, կտրուկ ասում է):* Սոսկալի էր, այդպես չէի պատկերացրել հայրենիքի հետ առաջին հանդիպումը:

Աղմուկը վերսկսվում է: Կուլխաներից, ասես ամբողջի միջից պոկվելով, հայտնվում է կնոջ ու տղամարդու զվարթ զույգ՝ մեկի ձեռքում սովետական ցանցկեն տոպրակ է, որի միջից երևում է կովի գլուխ: Նրանք լայն ժպիտով ու սրտաբաց նետվում են

վախից քարացած Ջարուհու վրա:

**ՍԵՐՈՓ** - Օրիորդ Ջարուհի՛, Սալունիկի՛ց, մենք ենք՝ Սերոփն ու Օֆիկը, չե՞ք ճանչի: Ներող կեղնիք, քյալլա կառնեինք, էդոր հմար կդորմ ուշացանք: Վերջ, ան պրծանք, տուն պղի էրթանք: Էսոր դուն մեր դոնաղն ես, ներ ու գլխներուս վրա տեղ ունիս:

Մերժը ձեռքից վերցնում է ճամպրուկը, իսկ Օֆիկը ուզում է ծաղկամանը վերցնել, որը Ջարուհին ուղղակի խլում է կնոջ ձեռքերից, այն միշտ իր գրկում սեղմած է: Երեքով սկսում են քայլել, Ջարուհին հայացքը չի կարողանում կարել ցանցկեն տոպրակից, հանկարծ թուլացած ընկնում է նրանց ձեռքերի վրա: Քայլը շարունակվում է: Բեմում լույսերի ու երաժշտության միջոցով պետք է ցույց տալ Ջարուհու խելակորույս հոգեվիճակը, քառս, աղմուկ, ճիչեր, մի խոսքով՝ սահմանեցուցիչ զգացողություն, կիսախավար:

**ԶԱՐՈՒՇԻ** - Աչքերիս առաջ աշխարհը պտտվեց, պտտվեց, փոկ եկավ: Լսեցի դաշտում մորթվող անասունների բառաչը, ոտքերիս տակով արյան գետեր հոսեցին: Ծիչեր, մղձավանջ... ծիծաղող տղամարդու ձեռքի ահռելի պսպղուն կացինը իջնում է անասունի վզին, այնտեղից արյուն է ցայտում, լցվում դահճի թևերին: Լա թևով սրբում է արևից խանձ-

ված ճակատը, ու արյան շիթերը, քսվելով ճակատին, հոսում են քթով վար:

**Մի պահ լուսավորվում է Մերժի ժպտացող դեմքը՝ քյալա՛... քյալա՛... Չուգահեռաբար, կուլիսներից մի գծով դանդաղ, միօրինակ, ռիթմիկ պար հիշեցնող շարժումներով դեպի մյուս կուլիսներն են անցնում հունական տրագեդիայի դիմակներով, երկար սպիտակ տունիկաներով մարդիկ՝ ինչպես անտիկ հունական դրամայի Խորը, հնչեցնելով՝ Չարուհի՛-ի, ավաղ, ավաղ, իգուր եկար, Չարուհի՛-ի: Չարուհի՛-ի, ետ գնա քանի դեռ ուշ չէ, Չարուհի՛-ի:**

Տեսարանն ավարտվում է ձիերին ուղղված Մերժի բղավոցով, որ տեղից շարժվեն: Բենը լուսավորվում է, լսվում են ձիու քայլի ձայներ, ասես ֆայտոնով գնում են երեքով:

**ՕՖԻԿ** - Չարուհի, Չարուհի, զարթնի, ազիգ, էս ի՞նչ փորձանք էգավ գլխներու: Սփրտնել է, չմեռնի՞ խայտառակ ըլլինք: Էլի, աչքերդ բաց, այ ախչիկ, խո հիվանդ չէ՞ իսիգ, հայմի գլխներու ջարմա դի դառնա:

**ՍԵՐՈԺ** - Օրիորդ Չարուհի, հիմի տուն կերթանք, սաղ կանցնի, կդորմ հաց կուղես, երեխանց հետ կխաղաս, խորաթա կենենք, կանցնի կերթա, մոյան կենես:

**Նրանք քափահարում են աղջկան, Օֆիկը պայուսակից շշուռ է հանում, ցանում Չարուհու վրա:**

**ՕՖԻԿ** - Չարթնավ, զարթնավ, արիս, օրիորդ Չարուհի, արիս: Ի՛նչխ եք, լավ եք: Խեղճ ախչիկը վայթե էդ ճամփից էր դիվոդե:

**ՍԵՐՈԺ** - Յավաշ, հասինք տուն, աշե թե քեզի ինչ պդի հյուրասիրենք: Դուն հաստատ քու Հունաստանում էդորից կերած չես էղնի:

**Տուն: Շների հաչոց, երեխաների աղմուկ: Երեքով պայմանականորեն հայտնվում են Մերժենց տանը: Բակում երեխաներ են վազվզում, հարևաններ կան տանը, որ ջերմ ողջագուրվում են:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Մտածեցի՛ հաստատ երեք գամփոներին կերակրելու համար էին գնել այդ քյալա կոչվածը ու մի քիչ սիրտս տեղն ընկավ: Բայց մտքումս նամակ էի շարադրում քրոջս հետևյալ բովանդակությամբ. «Դեռ չէ ծնած, բայց հավանաբար՝ աղջիկ կըլլայ»: Այսպես հասա ամենամոտ մահճակալին ու խորը քուն մտա, արթնացա ուշ երեկոյան՝ ազգականուհու ծայնից:

**Հայտնվում է Օֆիկը, բարձր տրամադրությամբ:**

**ՕՖԻԿ** - Օրիորդ Չարուհի, զարթնա՛ր: Լավ դինջցա՛ր, մաղաղ քեզի: Հմի պիդի ծաշենք, ձեր պատվին ավանդական ամենահամով ծաշն ենք էփե, սաղս իշտայներս պահած քեզի կսպասենք: Դե քելե, քելե երթանք:

Այս ասելով Օֆիկն անցնում է ետնաբեմ, որտեղ Սերոժը մի կտոր սեղան է դրել, շուրջը երեք աթոռ, սեղանին՝ բուսաֆորական կովի գլուխը: Օֆիկը նստում է սեղանի մոտ, ու երկուսով սկսում են իրենց ճաշկերույթը՝ բարձր տրամադրությամբ:

**ԶԱՐՈՒՇԻ** - Ճաշասենյակում բարիքներով բեռնված սեղանը տեսնելուն պես անհաղթահարելի սով զգացի: Երեխաները սենյակում վազվզում էին, աղմկում անհոգ: Ավագները, այդ թվում նաև մի քանի հարևան, վաղեմի բարեկամների պես ինձ ողջունելով՝ մոտեցան սեղանին: Հետո հայտնվեց Սերոժը՝ ձեռքին ահռելի մատուցարան, որի վրա տեսա կայարանից գնված կովի գլուխը՝ դուրս ընկած աչքերով ու լեզվով, գոլորշին վրայից քուլաքուլա բարձրացող: Երբ Սերոժը մատուցարանը հանդիսավորությամբ դրեց սեղանին, կինն արդեն նրան էր սպասում՝ մի ձեռքում դանակ, իսկ մյուսում կացին: Նույն այն արյունոտ ու շողշողացող կացինը, որ երազում էի տեսել: Կարծեցի, թե նորից երազում եմ, բայց ականջ ծակող ձիչերով դեպի սեղանը վազող երեխաների խելահեղ խումբն ինձ ստիպեց հասկանալ, որ այդ ամենը տեղի

է ունենում արթմնի: Երեխաները վրա տվեցին կերակուրին սովից փախածների պես: Հետո սկսեցին իրար այնպես հրմշտել, ինչպես առավոտյան՝ կայարանում հերթի մեջ կանգնած մարդիկ: Նրանք հարձակվեցին խեղճ անասունի վրա՝ մեկը պոկելով լեզուն, մյուսը մատները մխրձելով աչքերը հանեց, իսկ հարևանուհին նրանց մի կողմ հրելով կառչեց այտերից ու տասը մատն այնտեղ խրելով՝ մերկացրեց կենդանու այտոսկրը: Հաշված թոպենների ընթացքում մաքրազարդված գանգը սկսեց շողշողալ:

Այս ընթացքում, Չարուհու մեմախսությամբ զուգահեռ, Սերոժն ու Օֆիկը բեմի ետևում հռչատում են կովի գլուխը: Այս բառերից հետո Սերոժը կնոջից վերցնում է կացինն ու տուր թե կտաս՝ մեջտեղից ճեղքում է կենդանու գանգոսկրը: Նրանք վերցնում են կտորները, լպստում մատները, ծիծաղում են, այս ամենն անձայն, թույլ լույսով լուսավորված, հատուկ երաժշտական մոտիվով:

**ԶԱՐՈՒՇԻ** - Մասերի բաժանված, ջախջախված ոսկորների արանքից փայլատակեց կենդանու ուղեղը: Հիմա էլ ոհմակը վրա տվեց լպրծուն ու զազրելի այդ զանգվածին՝ ո՛վ գդալով, ո՛վ մատներով

պոկոտելով դրանից: Ուղեղի դեղին յուղը ծորաց արմունկները, թափվեց շորերին ու հատակին: Գրգռված ախորժակներից խելակորույս տանտերերը, ուղեղը ծամելով ու լպստելով մատները, ժամանակ առ ժամանակ հասցնում էին բղավել...

**ՍԵՐՈԺ** - *(ծորուն ձայնով):* Օրիորդ Ջարուհի, քա կդորմ փորցե, էնբես համով է օր մադներդ էլ հեղը կուղեն:

Բենում հայտնվում են սատիրներ, հարձակվում են Ջարուհու վրա, քարշ են տալիս ետմաբեմ, բարձրացնում են ճաշկերույթի սեղանին ու սկսում քաշքշել: Մղձավանջ: Պետք է իսկական բաքոսյան խրախճանքի տեսարան ստեղծել, որտեղ Ջարուհին կարծես զոհաբերվում է՝ որպես քավության նոխազ: Մա ներկայացման ելակետային տեսարանն է: Ապա սատիրները, ինչպես նաև Մերոժն ու Օֆիլը, շուրջպար են բռնում «զոհասեղանի» շուրջ ու միստիկ ծիսակարգային պար են պարում, մինչև որ Ջարուհին փախչի զոհասեղանից (մեռնող-հարություն առնող աստվածության պես) ու վազի բեմառաջը՝ շարունակելով:

**ՋԱՐՈՒՀԻ** - *(շնչակտուր, զզգզված):* Թվաց՝ ներկա եմ ինչ-որ հեթանոսական ծեսի, բաքոսյան խրախճանքի, որի ժամանակ հո-

շտովում էր Քավության Նոխազը: Արհավիրք էր, թե աշխարհի վերջը՝ չհասկացա, բայց ամբողջ օրը փակվեցի սենյակում ու լաց եղա մինչև լուսաբաց:

**Դադար, ամեն ինչ երազի պես հօքս է ցնդում: Ջարուհին միայնակ նստած է հուսահատ:**

**ՋԱՐՈՒՀԻ** - Նախամարդու բնագղով, գայլի ախորժակով մարդկանց այս բարբարոս արարողակարգը մինչև կյանքի վերջը չի լքի ինձ: Դեռ հաճախ կիիշեմ այս տեսարանը, երբ հայրենիքում դժվարությունների կհանդիպեմ ու հենց այս հիշողության շնորհիվ կհաղթահարեմ ամեն ինչ: Վստահ էի, որ եթե այս օրը մարսեցի, ապա այլևս ոչ մի բան չի կարող ինձ հիասթափեցնել կամ կոտրել հայրենիքում:

**Դարձյալ գանցքի ձայն: Ջարուհին դարձյալ նստում է իր ճամպուրակին՝ կրծքին սեղմած կիտրոնի շյուղով ծաղկամանը:**

**ՋԱՐՈՒՀԻ** - Հաջորդ օրը, Երևան մեկնող գնացքում, ջանում էի մոռանալ նախորդ օրվա սահմոկեցուցիչ իրադարձությունների շարքը, սակայն մտքում անվերջ կրկնում էի. «Աղջիկ է, քույրիկս, Մերսեդես, աղջիկ է, աղջիկ է, աղջի՛-ի՛-իկ»:

### Մաս երկրորդ

## ՄԱԴԱՄ ԶԱՐՈՒՋԻ

**ԶԱՐՈՒՋԻ** - Երևանում ինձ դիմավող հեռավոր ազգականների ճաշի առաջարկները միանգամից մերժեցի: Որոշ ժամանակ ապաստանվեցի նրանցից մեկի մոտ՝ կիսաքաղց, հաց և թեյ համտեսելով, մինչև կլուծվեր ժամանակավոր կեցության հարցը: Արդեն կոփված լինելով հայրենիքում՝ փորձեցի խուսանավել Արթիկ ճանապարհվող հայրենադարձների ցուցակում հայտնվելուց, ապա նաև, Փառք Տիրոջը (*ուզում է խաչակնքել, հետո վախեցած ձեռքերը պահում է*), կարողացա մի փոքրիկ կարի արհեստանոց բացել ուղիղ քաղաքի կենտրոնում, Մոսկովյան կոչվող փողոցի վրա, որտեղ գործերս սկսեցին լավանալ:

Ճամայրուկից ուրախ-ուրախ հանում է կարի մեքենան, տարբեր թղթի և շորերի կտորներ, կանացի մանեկեն, նստում է դիմացն ու հետագա մենախոսությունն ամբողջապես կառուցում կարի մեքենայի շուրջ:

Բենում 40-ականների երաժշտություն է, էկրանին երևում են այդ ժամանակաշրջանի ոճով, նորաձև հագնված կանայք, սև ու սպիտակ կադրեր, լավ կյանք: Զարուհին անվերջ կարում է ու կարում: Մեղանի մի անկյունում Հունաստանից բերված ծաղկա-

մանն է, որը մա ջրում է խոսելու ընթացքում, տարբեր տեսարաններում՝ մաքրում է տերևների փոշին, փխրեցնում է հողը:

**ԶԱՐՈՒՋԻ** - (*երաժշտության միջից՝ բարձրաձայն*): Հունաստանից հետս վերցրած կանացի հագուստի նոր ֆասոնները շատ շուտով գտան իրենց հասցեատերերին: Բաղաքի բոլոր պչրուհիները, այդ թվում՝ պաշտոնյա կուսակցականների պճնամով կանայք ու սիրուհիները, մեկը մյուսին տեղյակ պահելով, սկսեցին հագնվել օրիորդ Զարուհու մոտ: Հունաստանից եկած աղբար Զարուհու համբավը անհանգստացրել էր նրանց:

Հազցնում է մանեկեմին: Քիչ անց, խոսելու ընթացքում մակվեր է կենում ու բենում կախված երկար պարանից ամեն խոսքի հետ մեծ, գրոտեսկային լվացքի սեղմիչներով կպցնում է թղթե հագուստներ:

**ԶԱՐՈՒՋԻ** - Մերսեդես, լսում ես: Օր ու գիշեր կարում, ձևում, նրանց եմ մատուցում ծնկները ծածկող կիսաշրջագետստներ, մեծ-մեծ գրպաններով ու կոճակներով զարդարված, վերևից ներքև լայնացող թիկնոցներ, արևապաշտպան մոդայիկ գլխարկներ:



Բենում հայտնվում են կոկետու-  
հիներ, պարաններից վերցնում  
են թղթե զգեստներն ու փոխարե-  
նը սեղմիչով կպցնում գրոտես-  
կային մեծ թրթաղրամներ:

**ԶԱՐՈՒՇԻ** - Հարուստ հաճախորդու-  
հիներիս միջոցով ձեռք բերված  
կլորիկ գումարով ու նրանց ամու-  
սիներին կապերի շնորհիվ՝ նաև  
խուսափեցի մյուս հայրենադարձ-  
ների պես Զեյթուն թաղամասում  
բնակարան ստանալուց: Մի կար-  
գին հողակտոր ձեռք բերեցի  
նույն տեղում, որտեղ իմ կարի  
արիեստանոցն էր: *(Կարը շարու-  
նակելով:)*

Բենում հայտնվում է գլխարկով,  
փողկապով ու ակնոցով տղա-  
մարդ, պարանից հավաքում է  
թրթաղրամները, փոխարենը պա-  
րանից կախում է մեծ պաստառ,  
որի վրա գեղեցիկ տուն է պատ-  
կերված: Կարող է հիշեցնել  
մանկական նկարներում պատ-  
կերված տնակները, տան մի կող-  
քը կպցնում է թղթից կտրված  
մամա, մյուս կողմում՝ պապա:

**ԶԱՐՈՒՇԻ** - Այս ընթացքում քրոջս  
լավատեսական նամակներ էի  
գրում պարբերաբար, պատմում  
հայրենիքից, հարևաններից, տե-  
ղի սովորություններից, բարքե-  
րից, կարգերից, գործերից, բայց  
ոչ մի անգամ չէի ակնարկում նրա  
գալու մասին, ասենք՝ նստակյաց  
Մերսեդեսն իսկի չէր էլ տենչում  
նման բան:

Այս ասելով վեր է կենում, մի քա-  
նի տան պարագաներ բերում բեմ  
ու դասավորում իր շուրջ՝ տնային  
հարմարավետություն ստեղծե-  
լով: Ապա վերցնում է ծաղկամա-  
նը՝ կիտրոնի շիվը չորացել է,  
անհանգստանում է, մի ուրիշ  
ծաղկամանում ինչ-որ սերմեր է  
ցանում՝ ընթացքում պատմելով.

**ԶԱՐՈՒՇԻ** - Սալոնիկից բերած սեր-  
մերը շյուղեր տվեցին, բայց այդ-  
պես էլ ծառ չդարձան, չգիտեմ՝  
ինչու, քույրիկս, երդվում եմ, ա-  
մեն ինչ արեցի, ինչպես որ  
հարկն է, քո սովորեցրածի պես,  
իսկ ձիթենու շիվերն առհասա-  
րակ չորացան:

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - Աման, հավա-  
նաբար ցուրտ եղած է, տես դուն  
ալ չմսիս...

**ԶԱՐՈՒՇԻ** - Է, լավ, ցավալի է, բայց  
մոռնանք: Մերսեդես, Մերսեդես,  
գուշակիր՝ ինչ պիտի ասեմ, Մեր-  
սեդես, ամուսնանում եմ ու ինչ-  
պես խոստացել եմ՝ շուտով  
զարմիկներ էլ կունենաս:

**Խոսելու ընթացքում Զարուհին  
մոտենում է պարանին, սեղմիչը  
հանում է ու կնոջը բերում-  
կպցնում է տղամարդու կողքին:**

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - Աչքերնիս  
լույս, աչքերնիս լույս, ծագուկս:  
Հարևաններին պիտի կանչեմ,  
Սիրտակի պիտի պարենքկոր:

**ԶԱՐՈՒՇԻ** - Քոչարի, Մերսեդես, քո-  
չա-րի: *(Երկուսով ծիծաղում են:)*  
Ամուսնացա հյուսն Արամի հետ:

Բարի, աշխատասեր, հոգս տեսած մարդ էր, իրար հասկացանք: Սկզբում տեղափոխվեցի նրա հայրական տուն, ինչպես ընդունված էր այստեղ: Տարիների ընթացքում միասին կառուցեցինք մեր տունը: Երկու զավակ ունեցանք՝ աչքաբաց ու ձարպիկ աղջիկ ու թույլ, հիվանդոտ տղա, ով, հետագայում պարզվեց, հոգեկան լուրջ հիվանդություն ուներ:

**Տրամադրության կտրուկ անկում: Ջարուհին կարի մեքենայի առաջ նյարդային ու տենդագին կարում է:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Կյանքը քրոջս գրված նամակներում հիասքանչ, իսկ իրականում՝ չարքաշ մի ընթացք էր՝ լի սարսափներով, արգելքներով, շարունակ վախերով, ինչ է թե՛ մեկը մի անզգույշ արտահայտություն չանի հարևանի մոտ, իբրև մի բան այն չէ այս կառավարության սիստեմում, ինչ է թե՛ այս, ինչ է թե՛ այն: Երկիր չէ, բանտ է...

**Հուզմունքից շեղվելով, մատը ծակում է ու կանգ է առնում մի պահ, մատը տանում է բերանը՝ ասես ցավը մեղմելու համար:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Մինչև կյանքիս վերջ ինձ պիտի մեղադրեմ երեխայիս հիվանդ լինելու համար՝ պատիժ էր, Տիրոջ պատիժն էր, որ զավակներիս չմկրտեցինք, հա, հաս-

տատ դա էր պատճառը մեր բոլոր դժբախտությունների: Կմկրտես, բա չէ՞, անհավատներ...

**Ետևում վառվող լույսով երևում է կարճ կիսաշրջագեստով, աչքի զարնող արտաքինով, սիգարետը ձեռքին դուստրն ու նրա ոտքերի մոտ կուչ եկած տղան: Լույսը մարում է՝ անհետացնելով նրանց: Ջարուհին շարունակում է կարել: Էկրանին երևում են 50-ականները բնութագրող կադրեր: Կարելի է ցույց տալ, թե ինչպես են մոնումենտի այգու Ստալինի արձանը ցած բերում՝ բարձրացնելով Մայր Հայաստանի արձանը:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Հիսուսներեք թիվ: Մենավ Ստալինը, ընկավ երկաթե վարագույրը: Կյանքը մի տեսակ նոր ընթացք ձեռք բերեց, թթվածինը՝ նոր որակ, մարդիկ քիչ թե շատ շունչ քաշեցին, բացվեցին ծանապարհները:

**Դռան զանգ, մի կուլիսից վազում է Ջարուհու դուստրը դեպի դուռը (դիմացի կուլիս), նրա ետևից՝ տղան: Նրանք մերս են քարշ տալիս մեծ ծանրոց:**

**ԴՈՒՍՏՐ** - (մազերը ժապավեններով երկու պոչիկ կապած, դարոցականի հագուստով): Մորաքույր Մերսեդեսից է, թող, թող, հիմար...

**ԶԱՐՈՒՇԻ** - (վազելով, շնչակտուր): Սպասեք, սպասեք, նամակ չկա՞:

**Ջարուհին երջանկացած վերցնում է նամակը, մի կողմ քաշված**

անձայն կարողում է: Երեխաները քրքրում են ծանրոցը, հանում խաղալիքներ, հագուստներ, տղան առնում ու փախչում է մի շրջագգեստ, քույրը քաշում է կատաղած, խփում ձեռքերին, տղան թողնում է, վերցնում խաղալիքներն ու հրճվում է:

Նորից զանգ, նորից ծանրոց, այս տեսարանը կրկնվում է մի քանի անգամ: Կարելի է երեխաների արտաքինի մեջ դետալային փոփոխությամբ ցույց տալ ժամանակի հերթագայումը:

Այս անգամ աղջիկը բեմում սկսում է հագնել ծանրոցի հագուստները: Չարուհին հավաքում է մի մասը, նույն սեղմիչներով կպցնում պարաններից ու վրան պիտակներ փակցնում՝ հիսուն ռուբլի, տասը ռուբլի, տաքատոքսան ռուբլի և այլն:

**ԶԱՐՈՒՇԻ** - Հոգսս թեթևացրիր, քույրիկս: Սկսեցի գաղտնի վաճառել ուղարկածդ, այսպես կոչված, արտասահմանյան ապրանքը: Այժմ արդեն ախպար Զարուհուց կարելի էր գնել նորածն հագուստ, օժանելիք, ծապոնական անձրևանոցներ, մինչև այդ չտեսնված՝ կանացի ներքնաշորեր: Վերջապես հանգստացրի աչքերս տարիների լարված աշխատանքից: Առևտուրը լավ էր ընթանում, դրա շնորհիվ կարողացանք երկրորդ հարկ կանգնեցնել տան գլխին: 60-ականներին ծանրոցներից մեկում առաջին անգամ տղամարդու ջինսե տաքատ տեսա,

այն, որ Արամիս համար էիր ուղարկել: Չէի էլ կռահում, թե շուտով ինչ պահանջարկ պիտի վայելեր այդ կոպիտ, բայց բամբակյա ու հարմարավետ կտորից կարված հագուստը: Բո շնորհիվ քաղաքի կեսը ջինսե հագուստ սկսեց կրել, քույրիկս: Ինչ, սուրճ, վերջապես, Մերսեդես, շնորհակալ եմ, շնորհակալ եմ: *(Երանությանմբ, ոգևորված սուրճի փաթեթը համբուրում է, պահում գլխից վեր ու պտույտներ գործելով սրճեփ բերում:)* Սուրճ, սուրճ, հրաշահամ ու մոգական խմիչքը, առանց որի մի ժամանակ կոժվարանայի կյանքը պատկերացնել: Սակայն այստեղ՝ հայրենիքում, բուրժուական խմիչք էր հորջորջվել այն: *(Զրքջում է:)* Միայն, այսպես կոչված, «հալոցքի տարիներին» հնարավորություն ունեցա նորից ըմբռնելու անմահական, հարազատ ըմպելիքը:

**ՄԵՐՍԵՂԵՍԻ** ձայնը - Անուշ ըրե, բան մը չէ:

Հնչում է Բիթլզ, մի քանի երիտասարդ սրճարանային թեթև աթոռներ ու սեղաններ են բեմ բերում: Չարուհին նրանց օգնում է ու սկսում է ձեռքի սրճեփից սուրճ լցնել սեղանի բաժակների մեջ: Շուրջը երկարամազ տղաներ ու կարճագեստ աղջիկներ են արագ նստում, հայտնվում է մակ Չարուհու՝ արդեն ժապավենները հանած դուստրը կարճ կի-

սաշրջագգեստով: Երիտասարդները անձայն, բայց շատ ակտիվ շարժումներով զրուցում են, նրանց ձայնը խլացել է Բիթլզից: Կարևոր ու ժամանակին հատուկ դետալ է, որ երիտասարդները սուրճը լցնեն սուրճի գավաթի տակի ավսեների մեջ ու այնտեղից խմեն: Ջարուհին ծաղկամաններ է բերում մեխակներով, դնում է սեղաններին ու շարունակում է պատմել:

**ԶԱՐՈՒՇԻ** - Բացվեց քաղաքում առաջին բացօդյա սրճարանը՝ Կազիրյոկը, որտեղ հավաքվող երկարամազ Բիթլզ լսող տղաները, կարծ կիսաշրջագգեստներով աղջիկները, տարբեր նկուղներից դուրս եկած արվեստագետներն ու մտավորականները պնակներից էին ըմպում նորահայտ հեղուկը, պնակների շուրջ էին վայելում արգելքից ազատագրված արտասահմանյան գրողների ու փիլիսոփաների ստեղծագործությունները:

**Երիտասարդներից մեկը գիրք է հանում ու ասում՝ Կաֆկա, մեկ ուրիշն է հանում՝ Նիցշե, մյուսը՝ Քամյու:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Կյանքի որակն իսկապես փոխվեց: Բայց... բայց ես կողքից նայում ու դժվարություններ տեսած մարդու կասկածամտությամբ այնքան էլ չէի հավատում, թե ամեն ինչ կարգավորվեց:

Մթնում է: Սրճարանը դատարկվում է: Էկրանին Ծիծեռնակաբերդն է, մարդկանց հոսքը: Ջարուհին մի ծաղկամանից վերցնում է զույգ մեխակներ՝ հայացքը հեռվին գամում:

**ԶԱՐՈՒՇԻ** - 65 թվին բոլոր հայրենադարձներս հայրենիքում անցկացրած երկար տարիների մեջ վերջապես մեկ անգամ ի սրտե գոհանալու առիթ ունեցանք: Կառուցվեց Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողը: Սա իրադարձություն էր համայն հայության համար, բայց սպեղանի՝ հատկապես նրանց համար, ովքեր իրենց ծնողներից էին լսել ջարդի պատմությունները, և հատկապես նրանց համար, ովքեր իրենց ծննդավայրերից հայրենիք վերադառնալուց հետո այլևս առիթ չէին ունեցել հարազատներին տեսնելու: Այնպես որ, սա հուշակոթող էր նաև օտար փերում թաղված մեր ծնողների հիշատակին՝ ոչ միայն կորուսյալ երկրի, այլև ապագայի հայրենիքի կարոտն ու ցավը սրտերում: Մերսեղես, մի ամբողջ օր մնացի հուշահամալիրում, վերհիշեցի անմոռանալին, մեկիկ-մեկիկ համբուրեցի բերած ծաղիկներն ու խնամքով շարեցի դրանք անմար կրակի շուրջ՝ իմ անունից, քո անունից: Հոգուս թաքստոցներից մեկ անգամ ազատորեն հանեցի խնամքով թաքցրած բոլոր

ցավերը, մտքում ինձ թույլ տվեցի մեկ անգամ թաքուն աղոթել հեռավոր օտար ավերում թաղված մեր ծնողների, նրանց նախնիների հոգիների հանգստության համար ու արտասվեցի մինչև լուսաբաց իմ փոխարեն, քո փոխարեն, անհայրենիք հայերի, բոլորիս փոխարեն, Մերսեդես: Այդ օրերին ամուսիններով որոշեցինք նաև վարձով տալ տան առաջին հարկը: Միշտ պետք է ետ զցած կոպեկ ունենալ: Տնվորները կուսակցական աշխատանքի ուղեգրով մարզից Երևան տեղափոխված կոմսոմոլի ինստրուկտորն ու նրա երիտասարդ կինն էին: Վերջինիս աչքերը մայրաքաղաքին կյանքի մանրուքներին հենց ես բացեցի: Իսկ մենք քաշվեցին անօրինական կառուցված, կիսասարք երկրորդ հարկ: Ու այն է, այն է, թվաց՝ ոտքի ենք կանգնում, երբ մի օր տանը հայտնվեցին դատական կատարածուններ՝ հայտարարելով, որ տունը բռնագրավվում է: Բավական հիմնավոր փաստարկներ բերեցին՝ պահանջելով ու չստանալով մի շարք փաստաթղթեր:

**Բեմում հայտնված տղան անխոս պոկում է տունը պատկերող պաստառն ու մեջտեղից ցուցադրաբար պատռում այն:**

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - Չարուհի, շատոնց է չես գրեր, ո՞ր կորած ես, աղջիկ:

**ԶԱՐՈՒՇԻ** - Ամեն ինչ լավ է, հոյակապ է, դուն մի անհանգստանար, քույրիկ: *(Դահլիճին.)* Զեզ պատմելու բան չէ, չպիտի պատմեմ, որ հայրենադարձի միամտության, վստահող բնավորությանս շնորհիվ ընտանիքս հայտնվեց փողոցում: Լավ է, որ ամուսնուս կիսախարխուլ պապենական տունը դեռ կար Սարի թաղում, որտեղ այլևս ոչ ոք չէր ապրում: Չէի կարողանում հասկանալ՝ ո՞վ կարող էր նրանց այդքան մանրամասն տեղեկություններ տալ տան չեղած փաստաթղթերի մասին: Հարյուր անգամ գլխիս էի տալիս Հայաստան գալու համար, մտքում անդադար կրկնում էի՝ աղջիկ, աղջիկ, աղջի-հի-իկ: Պատահածից ամիսներ հետո անցնում էր մեր երբեմնի տան մոտով, սրտի կսկիծով տեսա, որ տան գլխին երրորդ հարկ էր կանգնեցված, իսկ պատշգամբում ճանաչեցի մեր տնվոր կնոջը: Կինն ընկերուհու հետ սուրճ էր խմում, ցուցադրաբար ծիծաղում, կատակում էր: Ամեն ինչից երևում էր, որ ամուսնու գործերը լավ են ընթանում: Ես նույնիսկ հասցրել էր քաղքենուն հատուկ պահվածքի նրբություններ յուրացնել: Նկատեցի՝ կնոջ հագին իմ կարած ու նվիրած մոդայիկ զգեստն էր: Զախջախված ու գունատ տուն հասա, ճանապարհին հիշելով հայրենա-

դարձ ընկերներիցս մեկի խոսքերը, թե. «Զարուհի, Զարուհի, ինչ մեղք որ եկեր ես, վալիզդ հավաքե ու յալլա, ուր կրնաս հոն գնա քանի ուշ չէ, քանի որ սա այն երկիրն է, ուր եթե օր մը գլուխդ ալ կտրեն ու փեշիդ մեջ դնեն, պիտի ըսես՝ էֆֆերիմ, շնորհակալ եմ»:

**Զարուհին ծոցից հանում է քրոջ լուսանկարը, համբուրում է ու դնում է դիմացը: Հուսահատ վերցնում է թուղթն ու գրիչը և վերջապես քրոջը նամակ գրում. նա բարձրաձայն է գրում: Ետևում աննկատ հայտնված Խորը թելադրում է նամակի բովանդակությունը:**

**ԽՈՐ** - «Անգին, իմաստուն քույրիկս, **ԶԱՐՈՒՀԻ** - Բույրիկս, լսում ես...

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ԶԱՅՆԸ** - Այստեղ եմ, միշտ կողքիդ եմ, ասա, Զարուհի:

**ԽՈՐ** - *(արձագանքի պես):* ...Ամեն անգամ կը հետաձգեի Հասմիկի մասին լուրը, բայց այլևս չեմ կրնար զսպել, քու կանխագագամունքերդ արդարացան. սիրելի Հասմիկը, Հասմիկը, կհիշե՞ս, այո, նա, դուստր ունեցավ, անալ՝ ջուխտ:

**ԶԱՐՈՒՀԻ** - Անալ՝ ջուխտ, Մերսեդես»: *(Զարուհին հոնգուր-հոնգուր լալիս է վերջապես:)*

**Երգչախումբն անհետանում է:**

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - *(մի լավ ծիծաղում է, հետո կտրուկ լրջանում):* Աչքերնիդ լույս, շնորհավոր,

Աստված պահէ, բայց պզտիկ խրատմը ինձմե՝ ավելի լավ կ'լլայ նոր զավակներ չունենա, քանի որ նորեն կրնան աղջիկներ ըլլալ ու նորեն՝ զույգ, իսկ անոնց դեռ պետք է ամուսին գտնել:

**Դարձյալ Զարուհին նամակ է գրում՝ քրոջ լուսանկարի դիմաց նստած:**

**ԶԱՐՈՒՀԻ** - Ծնորհակալ եմ, քույրիկս, հերթական ծանրոցիդ համար, զավակներս անչափ ուրախանում են ամեն անգամ: Նրանց երախտագիտությունը, բարեմաղթանքները, ջերմագին ողջույններն ու համբույրները պարտավոր եմ քեզ հաղորդել, նրանք շատ են երազում քեզ տեսնել:

**Աջ կողմից երևում է Զարուհու դուստրը:**

**ԴՈՒՍՏՐ** - *(նայում է լուսանկարին ու ծիծաղում):* Այ քեզ բան, մայրիկ, որքան գեր է: Կեցցե առատաձեռն մորաքույրը, ոչ միայն մեզ է կերակրում, այլ ինքն էլ լավ սնվում է: Մահից հետո քանի հազար որդ կկշտանա նրա պարտ մարմնի շնորհիվ:

**ԶԱՐՈՒՀԻ** - *(թաքցնելով լուսանկարը):* Անամոթ, աներես, ապերախտ, մեկ ուրիշը հուշարձան կկանգնեցներ այդ սուրբ կնոջ պատվին: Իսկ դու...

**ԴՈՒՍՏՐ** - *(ոխերիմ):* Կփախչեմ, չեմ ապրի ձեզ հետ:

**ԶԱՐՈՒՇԻ** - Ընկերներդ արդեն տարբեր տեղերում սովորում են, դու էլ ուսում առնեիր:

**Աղջիկը ճանճրացած ձեռքն է թափ տալիս, փախչում է:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Հիմա նկատեցի, որ փոքրիկ աղջիկս իսկական օրիորդ է դարձել: Գրավիչ է, ճարպիկ, աչքաբաց, նաև շատ նորաձև է հագնվում: Ուսման հանդեպ առանձնապես սեր չունի, ուստի չզարմացա, որ մի օր հայտնվեց տանը Սարի թաղի տղերքից մեկի հետ՝ հայտարարելով, որ ուզում են ամուսնանալ:

**Ջարուհին ճամպրուկից մեծ սպիտակ կտոր է հանում ու սկսում հարսանեկան շոր կարել: Շորը հագցնում է մանեկենի վրա, այն երկար շլեյֆ ունի, որի վրա անդադար աշխատում է:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Աղջկան պատվով ամուսնացնել էր պետք: Արիեստավոր ամուսինս առաջին անգամ որոշեց նախաձեռնությունը վերցնել իր վրա. մի ճամպրուկ հավաքեցինք արտասահմանյան իրերով, որ Ռուսաստան մեկնի ու այնտեղ փորձի ավելի թանկ վաճառել: Վստահ էր, որ կօգնեն Ռոստովի իր սարիթաղցի ընկերները: Վաճառքը, որ այսքան տարիներ ամուսիններով իրականացրել էինք շատ զգուշավոր, պատուհաս դարձավ ամուսնուս գլխին այս անգամ:

**ԶԱՐՈՒՇԻ** - Մերսեդես, Մերսեդես, Ռոստովում Արամս բռնվել էր սպեկուլյացիայի մեղադրանքով: Անամուսին մնացի:

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - Վայ, վայ, Զարուհիս, ծագուկս:

**Խորի ձայնը կուլիսներից կրկնում է Մերսեդեսի ասածը:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Այնքան վիշտ տարած սիրտս ալիքվեց, ալիք-ալիք բաբախեց ու վկայեց՝ էլ չի գա: Աղջիկս չարացավ, որ չի արժանանա երազած հարսանիքին ու փախավ սիրածի հետ:

**Ջարուհին շորի շլեյֆն ամեն խոսքի հետ սկսում է քանդել ու պարանների պես օղակել իրեն:**

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - Ինչու կուլասկոր, մաղթե որ երջանիկ ըլլան, քոյրս:

**ԶԱՐՈՒՇԻ** - Ասում են՝ աղջիկս բնակվում է մի շքեղ տանը:

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը**- Ինչպես է: Այն ծանրոցում հարսանեկան նվեր էի ուղարկել, փոխանցեցի՞ր:

**ԶԱՐՈՒՇԻ** - Դեռ չէ, Մերսեդես, շնորհակալ եմ, շնորհակալ եմ, քոյրս: *(Բառերն է որոնում:)* Գրեթե չի այցելում:

**ԽՈՐ** - Երբեք չի այցելում մեզ:

**Երևում է հիվանդ տղան, կծկված ինչ-որ խաղալիքով է խաղում:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Լսել եմ՝ աղջկաս ամուսինը ցեխավիկ է, մի հարցրու,

չգիտեմ՝ դա ինչ է, բայց գիտեմ, որ ապահով են ապրում:

**Տղայի կողքին հայտնվում է աղջիկը:**

**ԴՌԻՍՏՐ** - Չեմ ներել ու չեմ ներելու քեզ այն բանի համար, որ հասարակ դերձակ ես, որ հայրենադարձ լինելուդ պատճառով ինձ ամենուրեք «ախպարի ճուտ» են կանչել, հորս սպեկուլյանտի համբավի համար, ինչի պատճառով, վերջիվերջո, բանտում հայտնվեց, իմ չկայացած, ճոխ հարսանիքի համար, որ պիտի ամենահիշվողը լիներ սարիթաղցիների կյանքում, հիվանդ որդուդ համար (*եղբայրը ձգտում է դեպի քույրը, քույրը կոպիտ վանում է նրան*), նրա պատճառով շատ եմ ամաչել ընկերներիս մոտ ու վերջապես այն բանի համար, որ մատը մատիդ չխփեցիր ժամանակին հեռանալու համար այդ անիծյալ երկրից: Հիմա, վերջապես, ցեխավիկ ամուսնուս շնորհիվ փախա քո ամոթալի ընտանիքից, էլ եկողը չեմ: (*Անհետանում է:*)

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - Էհ, Չարուհիս, քու մոլի հայրենասիրությունդ անհասկանալի էր նույնիսկ ինձի համար, քեզի կսեհկոր չէ... Էհ, ինչո՞ւ կայպանես աղջկան, մի նեղվիր, չոճուխ է, հետո ճիշտ կսեկոր, կարծես թե գեշ կլլամր, եթե Միջերկրականի ավերուն վրա մեծնային զարմիկներս:

**Չարուհին կանգնում է տղայի կողքին, շոյում է գլուխը:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Կյանքս վերջնականապես նվիրեցի որդուս: «Գժանոց ուղարկիր դրան»՝ ասում էին հարևաններս: Խենթացմա՞ք (*Չարուհին գազազում է*), խենթացմա՞ք, անբաններ, դո՛ւրս, դո՛ւրս բոլորդ տնիցս: (*Տեղը չի գտնում զայրույթից, հետո նստում է տղայի կողքին ու հետը խաղում նույն խաղալիքով:*) Զսան տարիներն անցան գրեթե առանց իրադարձությունների: (*Վերևից անդադար նամակներ են թափվում, որոնք Չարուհին խոսելով հավաքում է ու կապոց սարքում:*) Մեկ անգամ միայն ամուսնուս մասին չհաստատված մի լուր հասավ Ռոստովից եկած մի հայից:

**ԽՈՐ** - Ամուսինդ բանտից դուրս եկել ու նոր ընտանիք է կազմել ռուս կնոջ հետ:

**ԶԱՐՈՒՇԻ** - Լսում ես: Ոչ հավատացի, ոչ էլ չհավատացի, ընդունեցի իբրև կյանքի հերթական հարված, իբրև իրողություն:

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - Հասկցա, հասկցա, բայց ի՞նչ կրնաս ընել:

**ԶԱՐՈՒՇԻ** - Ուրախալի լուր էլ ունեմ, Մերսեդես, վերջապես-ես: (*Պարում է:*)

**ԽՈՐ** - Տատիկ է դարձել: Դուստրը զավակ է ունեցել, արու զավակ:

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - Որո՞ն կնմանի, հելե պատմե տեսնեմ:



**ԶԱՐՈՒՇԻ** - Չգիտեմ:  
**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - Է, յալլա, աղ-  
 ջիկ, պատմե վերջանանք:  
**ԽՈՐ** - Չի տեսել, ավանդ, չի տեսել:  
**ԶԱՐՈՒՇԻ** - *(դարձյալ ոգևորված)*:  
 Արդեն երկուսն են, լսում ես, Մեր-  
 սեդես, քույրիկս, երկուսն են:  
**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը**- Աչքերը ինչ

գույն են, ինձի պես կապոյտ,  
 երանի քեզի, որ քովն ես:  
**ԶԱՐՈՒՇԻ** - Դժվար է ասել:  
**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - Է, նորեն սկ-  
 սար, չքնանաս, հիմա պատմե:  
**ԽՈՐ** - Չի տեսել, չեն կանչել, պատ-  
 ժել են, ավանդ, ավաղ, Զարուհի:  
**ԶԱՐՈՒՇԻ** - *(գլխիկոր)*: Նրա ծնունդն  
 էլ չվայելեցի:

### Մաս երրորդ

### ԽԵՂՆ ՄԵՐՍԵԴԵՍ

Էկրանին փաստագրական կադ-  
 րեր 90-ականների ցույցերից:  
 Զարուհին հայտնվում է տաք,  
 բայց խղճուկ հագնված, բռունցք  
 արած կանգնում էկրանի ֆոնին  
 ու ասես ձուլվում կանգնած  
 մարդկանց, նրանց հետ վանկար-  
 կելով՝ մի-ա-ցո՛ւմ, մի-ա-ցո՛ւմ...

Հագում է, ձեռքերն է շփում: Պոկ-  
 վում է մարդկանցից, գալիս-հեռ-  
 վում է ճոճաթռոխ, հագնում է  
 ակնոցը, ծածկվում շալով: Տա-  
 րիքն է երևում արդեն:

**ԶԱՐՈՒՇԻ** - 80-ականների վերջ:  
 Գորբաչով, պերեստրոյկա: Նախ-  
 րիտի ու ատոմակայանի հարց,  
 չդադարող միտինգներ, պարե-  
 տային ժամ, գործադուլ, Ղարա-  
 բաղյան շարժում, երկրաշարժ,  
 պատերազմ՝ իր բոլոր հետևանք-  
 ներով: *(Նորից բռունցք արած  
 քղավում է:)* Ա-զա-տու-թյո՛ւն,  
 ան-կա-խու-թյո՛ւն: Ծուտով հին  
 աշխարհը փուլ կգա, շուտով, բան  
 չմնաց, ու հայրենիքս անպայման  
 ազատ ու անկախ կտեսնեմ:

**ԶԱՐՈՒՇԻ** - Օրերը ձգվում են անցու-  
 մային ժամանակներում, սովի,  
 քաղցի, օրեցօր աճող տազնապ-  
 ների մթնոլորտում: Մերսեդես,  
 ինչպես էս: Մենք լավ ենք, քիչ  
 մնաց, ամեն ինչ շուտով կվերջա-  
 նա կանցնի: Հիմա ուղղակի աչ-  
 քերս գրեթե չեն տեսնում,  
 մատներիս հողերը տձևացել են,  
 սիրտս է ծանրացել: Վաղուց ո-  
 չինչ չեմ կարում, միայն երբեմն  
 հարևանների խնդրանքով կար-  
 կատում, ձևափոխում եմ ինչ-որ  
 բան՝ օգնելու համար: Մարդկանց  
 ձեռքին փող չկա, հազիվ են գո-  
 յատնում:

**ՄԵՐՍԵՂԵՍԻ ձայնը** - Կանցնի, ասալ կանցնի, հաջողություն, հաջողություն կմաղթեմ ձեզի:

**ԶԱՐՈՒՇԻ** - Հիշում եմ՝ մեծ պապս միշտ ասում էր՝ այլևս հաջողություն չի մնաց ջանքմ, հաջողության ժամանակը շատոնց անցեր է: *(Մերսեղեսին.)* Չէ, մենք վատ չենք, է, ուղարկած բարիքներովդ լավ էլ ապրում ենք:

**ՄԵՐՍԵՂԵՍԻ ձայնը** - Մտածեցի, որ հունական կերակուրները կարոտցած կլլաս: Ադոր համար քիչ մը ուտելիք կղրկեմկոր քեզի: Գիտեմ, գիտեմ, որ ծայրը ծայրին կհասցնես: Միայն անոր համար, որ կարոտցած կլլաս: Ի՞նչ սիրող կուզե, ըսէ հաճիս ատիկա կպատրաստեմ ու գալ անգամ կղրկեմ, Զարուհիս:

**ԶԱՐՈՒՇԻ** - Չեղավ, էլի սկսեցի՞ր, ամեն ինչ կարգին է, ամեն ինչ լավ է, Մերսեղես:

**ՄԵՐՍԵՂԵՍԻ ձայնը** - Չոճուխներն ինչպէս են:

**Զարուհու ճոճաթռռի կողքին հայտնվում է աղջիկը երկու երեխաների հետ: Աղջիկը հուսահատված է, երեխաները նետվում են պահածոյի տուփեր վրա:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Ոչինչ մի ասա: Ուրախ եմ, որ եկաք, երջանիկ եմ, որ եկաք, աղջիկս:

**Զարուհին մոտենում է թռռիկներին, գգվում է: Պահածոները ձեռքներն է տալիս, նրանք հեռանում են:**

**Դարձյալ գալիս են: Զարուհին ճոճաթռռին գամված է, մոտ է կանչում բալիկներին, սիրում է, կոնֆետ ու միրգ է տալիս: Նրանք հեռանում են:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Մի անգամ աղջիկս իմիջիայլոց ասաց, որ ամուսնու գործերը վատացել են, ապրել չի լինում: Նա սկսեց ավելի ու ավելի հաճախ գալ, երեխաների հետ: Հրեշտակներ են, անմահն հրեշտակներ: Առաջարկեցի ինձ մոտ տեղափոխվել ընտանիքով՝ ինձ հոգ տանելու պատրվակով, չէ, չէ, հիվանդ չեմ, Մերսեղես, այդպես ասացի, որ գան:

**Էկրանին դարձյալ ժողովուրդն է, աղաղակում են՝ ան-կա-խություն: Հայրենասիրական որևէ երգ կամ Հայաստանի օրհներգն է հնչում էկրանից: Աղջիկն ու թռռները վազում են Զարուհու մոտ: Զարուհին ճոճաթռռին անշարժ գամված՝ բռնում է նրանց ձեռքերը:**

**ԶԱՐՈՒՇԻ** - Հրձվանքով լսեցի հայրենիքիս անկախության լուրը, Փառք Աստծո, զոնե թոռներս իրենց ազատ-անկախ երկրի մեջ կմեծանան: Վստահ էի, որ այդ հեքիաթային օրը գալու է, վերջ տառապանքին, շուտով նրանք կապրեն արդար երկրում:

**Ճոճաթռռին թեթև ճոճվելով համրանում է, դեմքին ժպիտ կա ու խաղաղ է: Դուստրը փակում է մոր աչքերը:**

**ՄԵՐՍԵՂԵՍԻ ձայնը** - Չարուհի...  
(Չայնի մեջ տազնապ կա: Լոուիթ-  
յուն:)

**ԽՈՐ** - Չարուհիիիիի... (Ինչպես  
Մերսեդեսի արծազանքը:)

**ԴՈՒՍՏՐ** - Գնացիր, լավ պրծար,  
խոսք չկա: Ինչ իմանայիր, որ հե-  
ռանալով մեզ կտակեցիր մի  
խարխուլ, անտեր հայրենիք:  
Փրկվեցիր այն սև-մութ տարիներ-  
րից, որոնք հետևելու էին անկա-  
խությանը ու որոնց համեմատ  
դրախտ կթվար ապրածդ տառա-  
պագին կյանքը, մամ:

Հայտնվում է եղբայրը, քույրը  
ուքով փշտացնում է, նա վախե-  
ցած փախչում է: Քույրը նայում է  
աջ, ձախ, վերցնում է հեռախոսը,  
ինչ-որ համար հավաքում: Որոշ  
ժամանակ անց լսվում է շտապ-  
օգնության մեքենայի ձայն: Աղ-  
ջիկը քարացած դեմքով կանգ-  
նած է:

**ԵՂԲԱՅՐ** - (խոսում է առաջին ու  
միակ անգամ): Ինձ մի ուղարկի  
գժանոց, խելոք կմնամ, քույրիկ,  
թե կուզես՝ հաց էլ չեմ ուտի,  
նրանք ինձ այնտեղ կսպանեն:  
Մի մութ անկյուն տուր ինձ նկու-  
ղում ու վերջ, չեմ երևա, չեմ խան-  
գարի, մի ուղարկի, կսպանեն,  
քույրիկս:

Մալխակ շորերով մարդիկ տա-  
նում են տղային: Տղան գլխիկոր  
հետևում է նրանց:

**ԴՈՒՍՏՐ** - Պետք է էն պառավին  
գրել քրոջ մահվան մասին, չէ, մի

րոպե, բա որ դադարի ծանրոց-  
ներ ուղարկել, այդ ժամանակ  
ինչպես ենք ապրելու:

**ՄԵՐՍԵՂԵՍԻ ձայնը** - Երագիս մեջ  
մամային ու պապային տեսա,  
տխուր էին: Վերջերս տեսակմը  
ռոմանտիկ դարձեր եմ, Չարու-  
հիս: Սկսեր եմ հիշել ծովի ափե-  
րուն անցուցած քու և իմ արևոտ  
մանկությունը, մեր գաղթական  
ծնողներին, որ կհիշես, միշտ  
տխուր էին, քանի որ երբեք չի  
կրցան մոռնալ եղերնի չարչա-  
րանքները, հազար ինը հարյուր  
տասնհինգը և գաղթի ժամփանե-  
րը: Չարուհիս, արդեն տունեն չեմ  
կրնար դուրս գալ, երևի այդ է  
պատճառը, որ այս ամենը կհի-  
շեմկոր: Էհ, տարիքս առեր եմ,  
ամեն կողմս կցավի կոր, հողա-  
ցավեր ունեմ անտանելի, չեմ  
կրնար քալել: Աս ինչ կլլա հետս:  
Չարուհի... (Դարձյալ տազնապ  
կա ձայնում:)

**ԽՈՐ** - Չարուհիիիիի... (Ինչպես  
Մերսեդեսի արծազանքը:)

**ԴՈՒՍՏՐ** - (հերթական նամակը  
ձեռքին): Չեմ հասկանում, ինչո՞ւ  
է պառավը այդքան անկարևոր  
բաներ գրելու վրա ժամանակ  
ծախսում այնտեղից այստեղ: Որ-  
քան ճանճրալի է:

**ՄԵՐՍԵՂԵՍԻ ձայնը** - Կը հիշես՝ ան-  
գամ մը մեղուներու փեթակը  
խառնեցինք և խենթացուցինք ի-  
րենց: Դուն ձարալիկ ըլլալով  
կրցար փախիլ, իսկ ես դանդա-

ղաշարժ և գիրուկ կանգնած մնացեր էի շփոթված... մարմնիս վրա գրեթե տեղ չէր մնացած, որ մեղուները չխայթեին: Օրեր շարունակ հիվանդանոցին մեջ պառկած մնացի, կյանքի մահի պայքար էր, Աստված փրկեց: Իսկ մայրիկը ու հայրիկը միշտ հիշելով կխնդային ըսելով. «Մեր խեղձ թոմպուլիկ չոճուխը քիչ մնաց անդէ աշխարհ երթար, զգույշ եղիր, որ հետո ուրիշ օր մը գլխուդ փորձանք չբերես, աղջիկ»: (Ծիծաղում է:)

(Նորից տազնապած): Զարուհի, ինչ եղար, ձայն հանե, հաճիս Զարուհիս: Գրեթե մեկ տարի անցավ, բայց մեկ տող մըն ալ չես գրած: Այս ինչ եղավ: Վերջերս շատ գեշ կզգամկոր ու հավանաբար երկար չապրիմ:

**ԴՈՒՍՏՐ** - Այս մեկը չեղավ: (Լուրջ անհանգստացած:) Հապա ծանրոցները:

Նույն պահին դռան զանգ, փոստատարը բերում է անհավանական մեծ չափի ծանրոցը: Դուստրը և՛ շփոթված է, և՛ երջանիկ: Քարշ է տալիս ծանրոցը, շատ ծանր է, երբեմն սայթաքում, ընկնում է վրան: Վերջապես բերում է դանակ, բացում է: Բազմաթիվ գունավոր պահածոների տուփեր են քափվում: Նա հապշտապ կարդում է:

**ԴՈՒՍՏՐ** - Մսի պահածո, խոզի մսի պահածո, տավարի մսով պահածո, գառան մսով պահածո, խա-

վիրաներ, պոմիդորով պահածո, սպիտակ լոբի, ծեծած սիսեռ...

**Տուփերը ոգևորված նետում է այս ու այն կողմ, վերցնում է հերթական տուփը, փնտրում է վրայի գրվածքը, չի գտնում, ուտերը թոփվում է, մի կողմ է դնում, շարունակում է խրախճանքը: Դրամի հաստ կապոց է գտնում, աչքերը փայլատակում են, այն համբուրում է: Երեխաները սկսում են խաղալ տուփերով:**

**ԴՈՒՍՏՐ** - Վաղը մայրիկի մահվան տարին է, ժամանակին հասավ ծանրոցդ, մորաքույր, շքեղ կնշենք, բոլորը կտեսնեն՝ ինչ հրաշալի դուստր եմ ես: (Բւժիծաղում է: Վերցնում է հեռախոսը, տխուր դեմք ընդունում ու համարներ հավաքելով, բոլորին ասում:)

Վաղը մայրիկի մահվան տարին է, կսպասենք:

Բեմը լցվում է մարդկանցով, բոլոր այն հերոսներն են, ովքեր արդեն հայտնվել են բեմում տարբեր տեսարաններում: Բոլորն էլ սեղաններով ու աթոռներով են, արագ դնում են իրար կողքի, երկար սեղան է ստացվում, շուրջը շարում են աթոռներն ու նստում: Հյուրերից մեկը Դուստրը օգնում է բոլոր պահածոները սեղանին շարել, նրա ձեռքն է ընկնում առանց պիտակի տուփը, պտտեցնում է, ոչ մի գրված տող չի գտնում, բացում է, գրալով բարձրացնում է միջի գորշավուն փոշին.

**ՀՅՈՒՐ** - Հաստատ կենսաբանա-

կան հավելում է, հիմա արտասահմանում դրանք շատ մոդայիկ են, ամեն ինչի մեջ գրում են:

**Դուստրը վերցնում է տուփը, հոտոտում է, հետո սկսում է փոշին լցնել բոլոր կերակուրների մեջ:**

**ԴՈՒՍՏՐ** - Ասում են՝ մարսողության ու իմունիտետի համար շատ լավ է, համ էլ կերակուրը դառնում է ավելի համեղ: Էհ, ո՞ր ենք՝ մինչև նրանց հասնենք:

**ՀՅՈՒՐԵՐԻՑ ՄԵԿԸ** - 90-ականներին հյուծված ու վատառողջ հայ ժողովուրդ ենք, չի վնասի:

**Ոմանք քահ-քահ ծիծաղում են: Աղջիկը տուփը դատարկելուց հետո այն դնում է հատակին, բեմի կենտրոնում, երևացող տեղում: Հյուրերը մի լավ ուտում-խմում են, սրբում են բոլոր ավետները:**

**Առաջին հյուր** - (*բաժակ բարձրացնելով*): Խեղճ մադամ Զարուհի, Աստված հոգիդ լուսավորի:

**Երկրորդ հյուր** - Ափսո՛ս, բարի ու տոկուն կին էր, դաժան կյանք ապրեց:

**Երրորդ հյուր** - Ինչ ոսկի ձեռքեր ուներ, ոնց էր կարում, ոնց էր կարում:

**ՕՖԻԿ** - (*հիմարավուն ժպտով*): Էսօրվա պես հիշեմ զը, կայարան պզդիզ ատչիզ էր կայնաձ, վախեցաձ, իրեն կորցուցաձ, ինչխ բայդուշ ըլլիր: Ձեռքն է թուղթմե՛ «Օրիորդ Զարուհի»: Ըշտը տուն տարանք, տաքացուցինք, քնցու-

ցինք, հըմը ուղել չուզեց: Էդման է չհասկցանք ինչի՛:

**ՍԵՐՈԺ** - (*երանության ժպիտը դեմքին*): Ինչ քյալա էր, ինչ քյալա էր, հմի էլ էդպես քյալա չկա՛:

**Դռան երկար զանգ, Դուստրը վազում է դեպի դուռը: Ներս է լցվում Խորը և նրան մեկնում նամակ:**

**ԴՈՒՍՏՐ** - (*ծրարի վրա կարդում է*): Մադամ Նեմեսիս, Հունաստանից: (*Սեղանի ետևում լուսավորվում Նեմեսիսի արձանը: Կարդում է նամակը:*) «Անունս մադամ Նեմեսիս է, ձեր մորաբրոջ՝ Մերսեդեսի, միակ հայ հարևանուհին եմ:

Այդ ընթացքում Խորի անդամներից մեկը վերցնում է պահածոյի տուփը և որպես ծխական սափոր՝ դանդաղ զգուշավորությամբ ձեռքից-ձեռք է փոխանցում: Նեմեսիսի արձանը կենդանանում է ու շարունակում է Դասեր խոսքը:

**ՆԵՄԵՍԻՍ** - «Ցավով տեղեկացնում եմ, որ Մերսեդես մորաքույրը մահացավ ու նրա աձյունի մոխիրը ուղարկում եմ ծանրոցով՝ անանուն պահածոյի տուփով: Քանի որ մոխիրը հատուկ սափորով օրենքով ուղարկելը չափից մեծ գլխացավանք կարող էր դառնալ, ուստի նախընտրել եմ ավելի հեշտ ու բավական հնարամիտ այս ձանապարհը: Տուփը մոխրագույն է, առանց պիտակի:

Ի սեր բոլոր աստվածների, խաղաղությամբ հանգչեցրեք հայրենի հողում սիրելի մորաքրոջը:

**Բոլորը քարանում են տեղերում:  
Նեմեսիսը իջնում է պատվանդանից ու դանդաղ քայլելով շարունակում է նամակը՝ միանալով Խորին ու կատարելով նրանց պարի շարժումները:**

**ԼԵՄԵՍԻՍ** - «Վերջին ժամանակները իրոք Մերսեդեսը շատ վատ էր զգում իրեն: Հաճախ կանչում էր ինձ ու պատմում, որ սիրտը վատ բան է կանխագույժ, վատ երագներ է տեսնում, շատ անհանգիստ է քրոջ համար, որ նրանից լուր չունի: Ասում էր, որ կյանքն անցավ քրոջ մասին լուրերի սպասելով, նրա ընտանիքի, նրա երեխաների մասին պատմություններով: Թեև նրանց չի տեսել, բայց սիրում է իր երեխաների պես ու վերջիններիս համար է ապրել, որ քաղցած ու մերկ չմնան: Ասում էր, որ օրեցօր զգում է մահվան մոտալուտ գալուստը, ամեն օր ձեռքն ընկած ամենալավն ու համեղը կուտակում է, որ վերջին ծանրոցն ամենածանրը լինի երբևէ ուղարկածներից: Մի երեկո էլ կանչեց ինձ ու ասաց. «Նեմեսիս, գիտեմ, այս գիշեր մեռնելու եմ, չհասցրի վերջին ծանրոցն ուղարկել»: Ապա երկուսիս համար էլ անսպասելիորեն խնդրեց:

**ՄԵՐՍԵԴԵՍԻ ձայնը** - «Աձյունս Հայաստան դրկե. գոնե կյանքիս

վերջը կմիանամ քույրիկիս՝ Ջարուհիիս, զարմիկներիս կտեսնեմ, իրենց երեխաներուն: Գոնե անոնք կուգան իրենց սիրելի մորաքրոջ գերեզմանին այցելության: Եվ անպայման չմոռնաս, հաճիս վերջին ծանրոցին հետ կոկիկ գումարը հարազատներուս հասցնել, որ իմ մահվան հիշատակին սեղան պատրաստելու համար նեղություն չունենան, քաղցր հիշեն իրենց մորաքրոջը»:

**Երգչախմբի անդամները տուփը փոխանցելով հասցնում են Նեմեսիսին, ով պատվանդանին է դնում այն հատուկ զգուշափրությանբ: Տուփը լուսավորվում է վառ լույսով: Նրանք շարունակում են իրենց ծխական պարը՝ պտտվելով պահածոյի տուփի շուրջ:**

- ԽՈՐ** - Խեեեեեեեեեեեեեեեեեե...
- ԽՈՐ** - Խեեեեեեեեեեեեեեեեեե...
- ԽՈՐ** - Նամակը ուշ հասավ:
- ԽՈՐ** - Ճակատագիր էր, նախախնամություն, գործը մոյրաների ձեռքի:
- ԽՈՐ** - ...Դժբախտ Մերսեդես, ինչի մամանար, որ մի օր կերակուր էր դառնալու իր ամբողջ գերդաստանի համար:
- ԽՈՐ** - Կերակուր էր դառնալու...
- ԽՈՐ** - Կերակուրուուուր...
- ԽՈՐ** - Գերդաստանի համար:
- ԽՈՐ** - Դժբախտ Մերսեդես:

**Լույսերը մաքրում են: Վերջ:**

## Epilogue

Պիեսի հիմքում իրական ձակատագրեր ու իրադարձություններ են:

**Նեմեսիս** - Անօրեններին ու գողոզներին ըստ արժանվույն պատժող աստվածուհի, հատուցման մարմնավորումը

**Մոյրաներ** - ձակատագրի աստվածուհիներ, նրանք երեքն էին՝ Կլոթո, Լաքսիս, Ատրոպոս

\*\*\*

Պիեսն, ըստ էության, մոնոդրամա է, որը հյուսվում է Ջարուիու և նրա քրոջ՝ Մերսեդեսի նամակագրական կապի հիման վրա: Այս կերպ ցանկացել եմ ընդգծել հերոսների խորը միայնակությունը: Ջարուիին գրեթե միշտ բեմում մենակ է ու զրուցում է քրոջ ձայնի հետ: Թվում է՝ Մերսեդեսն ամենուր է, կենդանի գործող կերպար, բայց նա այդպես էլ չի երևալու բեմում:

\*\*\*

Ներկայացումը պետք է հագեցած լինի բավական ֆունկցիոնալ լուսային էֆեկտներով: Բեմական ձևավորումը զուսպ է, մի քանի իրեր տեսարանից-տեսարան օգտագործվում են շատ պայմանական ու տարբեր ժամանակաշրջաններին տիպական բեմական միջավայր են ստեղծում՝ ձամպուրկ, կարի մեքենա, մանեկեն, սեղաններ, աթոռներ և մի քանի այլ մանրուքներ:

Երաժշտական ձևավորումը պետք է լինի հարուստ, բազմազան և խոսուն՝ որպեսզի կարողանա տեսանելի դարձնել գրեթե կես դար իրար հաջորդող տարբեր ժամանակաշրջաններն ու փուլերը, որոնցով անցնում է Հայաստանը՝ ի դեմս Ջարուիու: Այն պետք է լինի ջազից մինչև ոռօնոլ, 50, 60, 80, 90-ականներին բնորոշ ուրիշներ ու ոճեր:

Յուրաքանչյուր պատմական շրջանը ներկայացնելու համար, բեմական գործողությանը զուգընթաց, օգտագործվում է պրոյեկտոր բեմի երկայնքով մեկ, որով ցուցադրվում է ֆոտոկոլաժ կամ խրոնիկալ ֆիլմ՝ ժամանակային կոնտեքստն ավելի ցայտուն դարձնելու համար:

Ջարուիին խոսում է արևելահայերեն, ինչով ընդգծել եմ Ջարուիու՝ հայրենիքին ձուլվելը, հայաստանցի դառնալը: Միայն քրոջը նամակներ գրելիս երբեմն օգտագործում է արևմտահայերեն արտահայտություններ: Կարելի է նաև Ջարուիու ամբողջ տեքստը փոխադրել արևմտահայերենի՝ ըստ բեմադրիչի ցանկության, կամ դերասանուհու սփյուռքահայ լինելու պարագայում: Մերսեդեսը միշտ խոսում է արևմտահայերենով, պիեսում հնչում է նաև գյումրվա բարբառը:

ՄԵՐ ԼԵԴԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵԴԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵԴԻՆԱԿԸ



## Սաթենիկ ՂԱԶԱՐՅԱՆ

*Նուբար Զանոյանի  
պատմվածքն անմիջապես  
գրավեց, նրանում թատրոն  
կար, և ես փորձեցի  
առանձնացնել այդ  
թատրոնը:*



# ԻՄ ՄԻՐԵԼԻ

(ըստ Նուբար Չանոյանի «Քասիմի գուլպաները» պատմվածքի)

## Գործող անձինք

ՏՂԱՄԱՐԴ

ՏԻԿՆԻԿ

ՃԱՄՊՐՈՒԿ

Տղամարդը ներս է մտնում, ձեռքի ճամպրուկը դնում է հատակին:

ՏՂԱՄԱՐԴ - (կասկածով): Որքան հիշում եմ, իմ ճամպրուկը մոխրագույն էր: (Ուշադիր տնտղում է ճամպրուկը:) Ոչ: Թե՛ կապույտ էր: Սա կապույտ է: Ախ, որ ասում էի՝ քիչ խմի՝ չէիր լսում: Ամեն անգամ մի պատմության մեջ ես ընկնում, բայց չես խրատվում: Հիմա էլ ճամպրուկի գույնն է ուրիշ: Եթե միայն գույնը լիներ... Բայց ինչ եմ նստել ու մտածում եմ՝ կապույտ էր, թե՛ մոխրագույն, ավելի լավ է՝ ճամպրուկը բացեմ: Անմիջապես կհասկանամ՝ ճամպրուկն իմն է, թե՛ իմը չէ: (Բացում է ճամպրուկը:) Հետաքրքիր կլինի, եթե իմը չլինի: Հապա ղումը պիտի լինի... Է... բայց... բայց իմը չէ: (Հերթով հանում է կանացի ներքնա-

զգեստներ:) Կարծում եմ, սա (թափահարելով կրծկալը) չեմ հագնում: Թե՛ն եղել է ժամանակ, որ մտածել եմ, թե ինչ կլիներ, եթե հագնեի: (Փորձում է իր վրա:) Զիչ է մնում՝ կասկածեմ: Լավ, ինչ անեմ: Գուցե զանգեմ ու պահանջեմ իմ ճամպրուկը: Պահանջեմ, բայց ումից: Չէ: Երևի պիտի գնամ օդակայան: Օ՛ֆ... Այո: Հյուրանոցի հերթապահին խնդրեմ, թող գնա ճամպրուկիս ետևից: Նրան կվճարեմ, հարկ էլ չի լինի, որ ինքս գնամ օդակայան: (Ձանգում է:) Այո... Այո, 251 համարից է: Այո, այո... ոչ, ինչ եք ասում, շատ գոհ եմ և անչափ շնորհակալ: Ձեր հյուրանոցը հյուրընկալ է, համարը՝ հարմար և ճաշակով

կահավորված: Բայց ես այլ հարցով եմ ձեզ անհանգստացնում... ցանկանում եմ ձեզ խնդրել... հասկանում եք, այնպես է պատահել, որ իմ ճամպրուկի փոխարեն օդակայանում վերցրել եմ ուրիշի ճամպրուկը... Այն կապույտ է, մինչդեռ պետք է մոխրագույն լիներ... Չէ, ինչ եք ասում, ես հիվանդ չեմ, իսկապես կապույտ է: Մի խոսքով, ես ուզում եմ, որ գնաք և բերեք իմ ճամպրուկը: Այո: Այո: Ճիշտ հասկացաք: Դե, իհարկե, կվճարեմ հավելյալ ծառայության համար: (Դնում է լսափողը: *Ճամպրուկից հանում է կանացի զգեստն ու փռում սեղանին: Այն հսկայական չափսերի է:*) Տեսնես ինչպիսին է կինը, որ հագնում է այս զգեստը: Ավելի պարկի է նման, քան զգեստի: Օհ, օհ, օհ... (Պահում է իր վրա, փաթաթվում զգեստի մեջ, ապա հագնում է:) Հա-հա-հա... իսկը՝ պարկն ընկած մուկ: Երբեք չեմ մտածել, որ կհագնեմ այս չափսի հագուստ, այն էլ՝ կանացի: (Հանում է զգեստը: *Ճամպրուկից հանում է ներքնաշորերը, հերթով նայում, ապա հագնում: Կրծկալը հագնում է գլխին ու*

*հռհռում է:*) Հա-հա-հա... Սա գլխարկ է: (Չանգում է ձեռքի հենախոսք: *Դժգոհ:*) Օ, Բեթթի, դո՛ւ ես: Այո, այո, բարեհաջող... Տեղ եմ հասել, տեղավորվել... Հանգստանում եմ: Ինչ... Չէ, ինչ ես ասում, չես խանգարում, բայց ես քեզ կզանգեմ: (Անջատելով հենախոսք:) Միայն տեսնեիր, թե ինչ կա գլխիս: (Չափում է ներքնաշորը:) Բեթթին այնքան բարալիկ է: Սա Բեթթիին չի լինի: (Հագնում է: Երգում է:) Բեթթի, Բեթթի, դու բարալիկ, բարալիկ, բայց այս հագուստի տերը բավականին լավն է: Լավը: Վատ չէր լինի եթե... իսկ սա՝ միայն Բեթթիի գլխին կլինի: (Դուռը թակում են: Հանկարծակիի եկած՝ վազում է մեկ՝ դռան կողմը, մեկ՝ ետ, փորձում է հանել կանացի շորերը:)

**ՏՂԱՄԱՐԴ** - Ով է:

**ՁԱՅՆ** - Մենք բարի լուր ենք հաղորդելու:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ինչ... Միթե կարողացել եք մտնել հյուրանոց և ձեր բարի լուրը հաղորդելու համար անհանգստացնում եք ինձ, այն էլ՝ այս պահին: Հեռացեք անմիջապես: Անգամ հյուրանոցում հան-

գիստ չեն տալիս: (Զանգում է հերթապահին:) Ինչո՞ւ եք թույլ տվել, որ օտար մարդիկ մտնեն հյուրանոց: Ոչ... Հապա ովքե՞ր են: Չգիտե՞ք: Ոչ... Չեն թակում, գուցե գնացին: Ես նրանց ուղարկեցի՝ ուր հարկն է: Հիմա կնայեմ: (Մոտենում, բացում է դուռը: Փակում է:) Ոչ ոք չկա: Նրանք չկան:

**Կրկին թակում են դուռը:**

**ՏՂԱՄԱՐԴ** - Ո՞վ է... Կրկին բարի լուր... Ես բարի լուրի կարիք չունեմ, գնացեք գրողի... Բայց գուցե ծամարուկս է: Ծամարուկս գտնելը նույնպես բարի է:

**ՁԱՅՆ** - Հերթապահն է:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ախ, հա... երևի ծամարուկս եք բերել:

**ՁԱՅՆ** - Ոչ: Զանգել եք, իբր ինչ-որ մարդիկ ձեզ անհանգստացնում են: Այստեղ ոչ ոք չկա: Իսկ ծամարուկը դեռ չեն գտել:

**ՏՂԱՄԱՐԴ** - Այլևս հարկավոր չէ: Նրանք ինձ չեն անհանգստացնում, կարելի՞ է, որ դուք ևս չանհանգստացնեք: (Զննում է հագուստը, չգիտի՝ հանի՞, թե՞ դուռը բացի: Դուռը չի բացում, խոսում է փակ դռան ետևից:) Վերջ... Վերջ: Այստեղ հանգիստ

չկա: Սա հյուրանոց չէ: Ես կրողոքեմ: Վերջ: Այսպես չի կարելի: Ես վերջնականապես ցնդել եմ: Կարծես հեռացան, հա՛, լավ... Կանացի նման չափսերն ինձ երբեք չեն հրապուրել, մինչդեռ հիմա տարվել եմ և անգամ Զեթթիի մասին մտածել չեմ ցանկանում: Հա, խոստացա զանգել Զեթթիին... Նա սպասում է: Բայց եթե զանգեմ, ի՞նչ պիտի ասեմ, որ սիրում եմ՝ չեմ սիրում, որ կարոտում եմ՝ չեմ կարոտում, թե՛ երագում եմ իր հետ անցկացվելիք գիշերվա մասին... ոչ, ոչ: Ես երագում եմ այս կնոջ հետ հանդիպման մասին: Հետաքրքիր է, դեռ երեկ չգիտեի, որ իմ հոգին սիրում է կամ, ավելի ճիշտ, կարող է սիրել նման չափսերի կնոջ: Իսկ այսօր...

**Զանգում է սենյակի հեռախոսով:**

**ՏՂԱՄԱՐԴ** - Դուք կարո՞ղ եք բերել...

**ՁԱՅՆԸ խոսում է այնպես, որ հանդիսատեսը չհասկանա:**

**ՏՂԱՄԱՐԴ** - Այո, այո, հյուրանոց... 251 համարը... Խնդրում եմ: Վերցրեք իմ պատվիրածն ու բերեք: Լավ է: Կեցցեք քաղաքա-

կրթությունը: Մի քանի ընտանիքներ և պատվերող ինքն իրեն կհայտնվի քեզ մոտ:

**Դուք թակում եմ:**

**ՏՂԱՄԱՐԴ** - Ո՞վ է:

**ՁԱՅՆ** - Ձեր պատվերը: Առաքիչն է:

**ՏՂԱՄԱՐԴ** - Թողեք դռան ետևում:

**ՁԱՅՆ** - Ոչ, դուք պետք է ստորագրեք:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ախ հա, լավ, հիմա...

**Տղամարդը հանում է հագուստի մի մասն ու կիսաքացում դուք, ստորագրում է և մերս քերում հսկա տուփ: Դուք փակում է: Առաքիչը չի երևում:**

**ՏՂԱՄԱՐԴ** - Ուֆ... (Բացում է տուփը, դուրս է բերում փչովի տիկնիկ: Սկսում է փչել: Քիչ հետո նրա գրկում հայտնվում է հսկա տիկնիկ-կին: Հիացած նայելուց հետո վրայից հանում է կանացի ներքնաշորերը, հագնում է տիկնիկին:) Իրական չէ, բայց ինչ-որ կերպ կկարողանամ հասկանալ, թե ում եմ սիրահարվել: Հոյակապ է... Չեմ էլ ցանկանում, որ գտնվեն իրերս: Ինձ թվում է՝ սրանք ևս իմն են:

**Չանգում է բջջային հեռախոսը:**

**ՏՂԱՄԱՐԴ** - Բեթթին է: Ինչ պիտի ասեմ: Մի՞թե չի հասկանում, որ չեմ ուզում պատասխանել: Չանգում է... Տանը չեմ: Հեռախոսը չեմ վերցրել ինձ հետ ու չեմ պատասխանում: (Չանգն անընդհատ հնչում է:) Չէ, երևում է՝ պիտի պատասխանեմ... Լավ, լավ, արդեն տանն եմ: Գտնվել եմ: Հիմա կվերցնեմ: Ահա... Լսում եմ: Բեթթի, դո՞ ես, դե... լոգարանում էի... չէ, ի՞նչ ես ասում, ինչպե՞ս կարող եմ արհամարհել կամ մոռանալ: Ոչ, չգաս... Ես ինքս: Ինչո՞ւ պետք է այդքան ծանապարհ կտրես ու... (Մի կողմ:) Գաս մի տեղ, որտեղ քեզ չեն սպասում: Միևնույն է, պիտի գմս... Ի՞նչ ասեմ, կամքը քոնն է: Եթե քեզ սպասեի, ինքս կզայի...

**Տիկնիկին մատեցնում է բազմոցին, ինքն էլ է մատում:**

**ՏՂԱՄԱՐԴ** - Ախ, հա... բայց մենք ծանոթներ չենք, ես չգիտեմ քո անունը: Բեթթի, Բեթթի... Գիտե՞ս, Բեթթին այն աղջիկն է, այսինքն՝ իմ նախկին ընկերուհին է, ում սիրում էի: Մտածում էինք՝ իրար

կհասկանանք ու կամուսնանանք: Բարի ու նուրբ աղջիկ է, երբեք չի խանգարել, չի քննարկել իմ որոշումները, գնացել եմ գործուղումների, ահա, եկել եմ առանց նրան ու գտել եմ քեզ: Զո ա՛նունը... Դու արդեն իրական դարձար, իսկ ի՛նչ կլինի, եթե Զեթթին գա ու տեսնի: Չէի մտածել... Կխանդի՛: Բայց դե... մենք դեռ չենք ծանոթացել: Դե, իհարկե, բայց Զեթթին հո չգիտի: Նա կտեսնի իմ բազմոցին փռված կնոջն ու... ուրիշ ի՛նչ պիտի մտածի: Նրան կասեմ՝ սա քո մտածածը չէ, իսկ նա կհավատա թե ոչ՝ իր գործն է: Չէ, սիրելիս... Անուն... Հիմա... Իսկ գուցե դո՛ւ ես խանդում: Չէի մտածել: Մենք դեռ չենք ծանոթացել: Բայց Զեթթին մինչ այն թույլ էր, երբ դու չկայիր: Հասկանո՞ւմ ես: Դե... դու դեռ տուփի մեջ էիր: Զեթթին իմ անցյալն է, իսկ դու՝ իմ ներկան: Ներկան: Իսկ եթե նրան այլևս չգտնեմ, եթե նա չգա՛ իր իրերի ետևից: Ես ինչպե՛ս կունենամ այդ ներկան: Տխրեցի: Դեռ քեզ չունեցած՝ պիտի կորցնեմ: Ախ, հա, դու հիմա կմտածես՝ այս ի՛նչ ծանծրալի, անհետաքրքիր տղամարդ է, որ արագ ծանոթա-

նալու փոխարեն ինչ-որ մտքերի ետևից է ընկել: Արամ: Վերջ, ես ծանոթացա, այժմ ձեր հերթն է: Նեֆրի... Գեղեցիկ է հնչում... ստացվեց, չէ՛, այնպես չէ՛: Մտքովս չէր անցնում, որ կարող եմ կանացի հնչեղ անուններ հորինել: Հարկավոր է սա նշել: Պարենք, թե՛ խմենք:

**Միացնում է երաժշտություն,  
սկսում է պարել տիկնիկի հետ:**

**ՏՂԱՄԱՐԴ** - Դուք այնքան թեթև եք... ձեր չափսերի համեմատ: Նման եք փետուրի: Լավ էլ պարում եք: Հոգնեցի... Նստե՛նք: Հանգիստ տեղավորվիր: Զգա՛ ինչպես քո տանը: Ես էլ իմ տանը չեմ, սակայն ինձ զգում եմ՝ ինչպես իմ տանը: (Հանում է վերնաշապիկը:) Հոգնեցի, շոգ է: Վաղուց այսքան չէի պարել: (Հանում է գուլպաները: Հոտ է քաշում:) Ա... ըհը... ըհը... (Հազում է, զզվանքից փսխելու շարժումներ անում:) Այ քեզ գարշահոտ... Մի՞թե այսքան փնթի եմ: Դե, իհարկե, արդեն քանի օր է՝ գուլպաներս չեմ փոխել: Իսկ ինչպե՛ս փոխելի: Այս ճամպրուկում միայն նուրբ զուգագուլպաներ են,

դրանք հո չէի հագնի: Հը, էհ... Ինչ իմանամ, կրծկալը կհագնեմ, գուգագուլպաները՝ ո՛չ: Ինչ, ինչ ասացիր... Կներես, քեզ մոռացել էի: Թեև... գուցե դու էլ մի պահ ինձ մոռացար: Չէ՞ որ այս գարշահոտը դու էլ զգացիր: Ո՛վ է մեղավոր: Դու: Ինչո՞ւ տարար իմ ճամպրուկը: Ինչ է, չէիր տեսնում, որ այն կապույտ չէ: Մոխրագույն է: Հասկացանք, ես ցրված ու փնթի եմ, իսկ դո՞ւ, չէ՞ որ դու կին ես, այն էլ՝ այսպիսի... Նրբաճաշակ: Լավ, մի նեղացի, քեզ չեմ մեղադրում, գուցե գնացել էիր ինչ-որ տեղ, իսկ ես վերցրի առանց նայելու, հարբած էի: Ներիր, լավ... Հիմա կասես՝ այս տղամարդը նոր է ծանոթացել ու արդեն վիճում է: Այդպես մի մտածի, ես կովարար չեմ, ուղղակի ցանկանում եմ բացատրել իրավիճակը: Դու գեղեցիկ, չափազանց նրբաճաշակ կին ես, իսկ ես այնքան ծուլ եմ, որ ծուլանում եմ գուլպաներս լվանալ կամ հիշել, թե ինչ գույն ունի իմ ճամպրուկը: Կարծում եմ՝ մենք ծանոթանում ենք: Իսկ Զեթթիին հիշեցի, որովհետև նա իմ նախկին ընկերուհին էր և միշտ բար-

կանում էր իմ փնթիության վրա, ահա, նայիր, եթե անգամ մուրճով չեն փափկում այս գուլպաները, ինչ կարելի է մտածել այս տղամարդու մասին: Եվ, հետո, ես չեմ սիրում անհավատարմությունը: Դու էլ, չէ՞... Կարծում եմ՝ մենք նման ենք: Այդպես ճիշտ է: Եթե զույգերը միմյանց չեն սիրում, ավելի լավ է՝ հեռանան: Ես այդպես էլ կասեմ Զեթթիին ու նա ինձ կհասկանա, այնպես որ... մի անհանգստացի, ես պատվիրաններ չեմ խախտի, որքան հասկացա՝ դու անչափ հավատացյալ ես, այլապես ինչ գործ ունեին այս Ավետարանները քո ճամպրուկում: Ինչ... միթե զբաղվում ես քարոզով... չէ, դու նրանցից չես, ովքեր տնե-տուն բարի լուր են հաղորդում: Դու ազնիվ քրիստոնյա ես: Ամուսնանալիս մենք խորանի առջև էլ երդում կտանք ու կհամբուրվենք: Կհամբուրվենք... Չես էլ հիշեցնում, որ մենք դեռ չենք համբուրվել: Դրա համար էլ այդքան անտարբեր ես, մտածում ես՝ սա ինչ տեսակ երիտասարդ է, որ քանի ժամ է՝ դատարկ խոսում է, խոսում ու ոչ մի քայլ չի անում, հիվանդ է, ինչ է... Իսկ գուցե

կասկածեցի՞ր իմ սեքսուալ հնարավորությունների կամ ուղղվածության վրա: Ոչ, ոչ, միայն ոչ՝ դա: Ամեն ինչ կարգին է: Զեզ շփոթության մեջ է գցել իմ հագուստը, մի մոռացի, որ այն քոնն է, ես փորձեցի, որ քեզ զգամ, տեսնեմ, հասկանամ և, վերջապես, հոգով միաձուլվեմ: Այսպես... Ուզում ես, կհանեմ բոլորը: Խնդրեմ: Զեզ լինի, քո... ահա, ահա, վերջ: *(Հանում է կանացի գուգագուլպաները:)* Հիմա, կարծում եմ, դու կհավատաս, որ ես տղամարդ եմ: Վերջ: Էլ չեմ ցանկանում, վերջ... դու ինչո՞ւ մտար իմ կյանք: Դու ինչո՞ւ, ինչո՞ւ... Ես ունեի իմ Զեթթիին ու ապրում էի, իսկ լավ, թե վատ... նա ինձ սիրում էր, իսկ դու... ո՞վ ես դու, որ անգամ չես խոսում, չես արձագանքում... որտեղի՞ց հայտնվեցիր, այս ճամպրուկի՞ց... Իսկ այս ճամպրուկը... որտեղի՞ց հայտնվեց: Ախ, հա... Ինչո՞ւ հենց այս ճամպրուկը, կարող էր, չէ՞, մի այլ ճամպրուկ լինել, որի մեջ, ասենք, տղամարդու հագուստներ լինեին, կամ թե մի ուրիշ բան, ասենք... Ես ինչ գիտեմ, չգիտեմ: Մի բան, որն ինձ այսքան չհուզեր: Բայց

սպասիր, ճամպրուկն ինչ մեղավոր է, չէ՞ որ ասում են՝ ամեն ինչ փնտրիր քո ներսում: Է... չբացեիր, քեզ ո՞վ էր թույլ տվել բացել այդ կապույտ, ուրիշի, օտար մեկի ճամպրուկը: Չէ՞ որ դա նաև դեմ է վարվեցողության կանոններին: Ահա: Փնտրիր, և կգտնես: Ես չեմ տարբերում գույները, դու ինչ մեղավոր ես: Ներիր, որ բղավեցի քեզ վրա: Ես չեմ տարբերում գույները: Տեսար՝ մոխրագույն չէ, տանեիր, հանձնեիր համապատասխան տեղում, ու վերջ: Վերջ: Դու մոխրագույնի տերն ես:

**Դռան քակոց:**

**ՏՂԱՄԱՐԴ** - Ո՞վ է:

**ՁԱՅՆ** - Ձեր ճամպրուկը, պարոն: Մի ծեր կին եկել է իր ճամպրուկի ետևից: Խնդրեց, որ իրենը իջեցնեմ իր մոտ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Հիմա, հիմա... *(Հանում է ներքնաշորերն ու շրջագգեստը, տեղավորում ճամպրուկում, տալիս դռնից դուրս, վիատված փակում է դուռը, մոտենում օդը դուրս մղված և անօգնական ընկած տիկնիկին:)* Իմ սիրելի Զեթթի:



Աննա  
ՅԱԲԼՈՆՍԿԱՅԱ

## ՀԱՐԹՈՒԿՆԵՐ

---

*Դրամա*

**Գործող անձինք՝**

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - ՍԱՐԱ, 25 տարեկան երիտասարդ, արդեն գոյություն չունեցող դրոշմների և հին հարթուկների կոլեկցիոներ

**ԿՈՆՅԱ** - նրա կրտսեր եղբայրը, 9 տարեկան, կակազում է, բայց երբեմն խոսում է անկապական

**ՄԱՅՐ** - նրանց մայրը, տարեց կին

**ՔԵՈՒ** - Իվան, նրանց հորեղբայրը, տարեց տղամարդ, կղզու փրկարար կայանի ղեկը

**ՊՐՈՖԵՍՈՐ ՇԵԿԼԻ** - անգլիացի կոլեկցիոներ ու ճանադարհորդ, 50 տարեկան, խնամված, մարզված, Մարիայի ամուսինը

**ՄԱՐԻԱ** - դրոշմաբեր կինը, ռուս, 30 տարեկան



Գործողությունը տեղի է ունենում ցամաքից ոչ հեռու գտնվող կղզում: Կղզին ասես սահմանային գոտի է, վերջին հանգրվան, որ նրա բնակիչներին տա-  
րանջատում է երևակայական սահմանից: Մահմանը պետական չէ, ավելի  
շուտ՝ զգայական: Դա մի եզր է, գիծ, որի վրա մշտապես հավասարակշռու-  
թյունն են փորձում պահել ներկայացման հերոսները՝  
անէության մեջ չընկնելու համար:

Կղզին փոքրիկ ու բավական ամալի հողակտոր է, որի վրա է գտնվում ձկնոր-  
սական գյուղակը: Կղզիաբնակները ձկնորսներ են, ծով են դուրս գալիս փոք-  
րիկ նավակներով, ձուկ են որսում ու տանում վաճառելու քաղաք՝  
մայրցամաք: Մա շատ արստրակտ կղզի է, կարծես գոյություն չունի քարտե-  
զի վրա, և ներկայացման հերոսները մշտապես զգում են այդ աշխարհագ-  
րական պատրանքը: Նրանք շրջապատված չեն պարզապես ջրով, դա  
ավելին է, քան ջուրը: Կղզիաբնակներն անընդհատ փորձում են իրենց համո-  
զել, որ իրենք կան, ապրում են:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բենի կենտրոնում հարթուկի տախ-  
տակն է: Նրա առջև, դեմքով հանդի-  
սատեսը կանգնած մարդը զոլավոր  
հագուստով է, որը բանտային հա-  
մազգեստ է հիշեցնում: Հարթուկող  
Մաշան է: Փոքրիկ, համարյա խա-  
ղալիքային հին հարթուկով հարթու-  
կում է գոյություն չունեցող երկրների  
դրոշմներ: Հարթուկում է խնամքով,  
վարժ շարժումներով հարթուկը սա-  
հում է մետաքսե ուղղանկյունների  
վրայով: ԽՄՀՄ, ԳՂՀ, Հարավսլա-  
վիա, Չեխոսլովակիա, Յենեն, Արա-  
բական Հանրապետություն, Տիբեթ...  
Տախտակի կողքին հսկայական չու-  
զունն հարթուկ է ու հին թեյնիկ: Հար-  
թուկողը շուտ-շուտ եռացրած ջուրը  
խմում է թեյնիկի քթիկից: Քթի տակ  
կամաց երգում է. «Мой адрес не дом  
и не улица, мой адрес не дом и не  
улица, мой адрес...»: Փորձում է հի-  
շել նախադասության ավարտը, չի  
կարողանում ու նորից սկսում է  
սկզբից: Հարթուկի տախտակի աջ  
կողմում ուղեփակոց է: Կարմիր-  
սպիտակ շերտերով ներկված փայ-  
տի վրա նստած է Կոլյան, նրան

թվում է, որ հեծնել է ձիուն ու «նո» գո-  
ռալով անտեսանելի կոշկախթաննե-  
րը խրում է ուղեփակոցի կողերը: Իսկ  
ուղեփակոցն իջնում ու բարձրանում  
է վեր, կարծես կարուսել լինի:  
Հարթուկի տախտակի ձախ կողմում  
փայտե տնակ է, ասես թռչնի բույն  
լինի՝ ներկված սև-սպիտակ շերտե-  
րով: Տնակը սահմանային պահա-  
կակետ է հիշեցնում: Տանիքի տակի  
անցքից մեկ էլ տեսար՝ հայտնվում է  
նարնջագույն պլաստմասսայե կլուն,  
նայում է շուրջը, հիվանդագին բզզում,  
բայց հնչյուն չի արձակում: Տնակի  
ետևում ծառերի ուրվագծերն են, իսկ  
նրանց մեջտեղում ցցված է դատարկ  
դրոշակաձողը: Հարթուկողի թիկու-  
նում, ինչ-որ տեղ՝ հեռվում, ասես մա-  
ռախտուղի մեջ երևում է ջարդված  
նավակի քիթը, որը փակված է  
պատռված ձկնորսական ցանցով:  
Նավը մեկ հայտնվում է, մեկ անհե-  
տանում կապտավուն ծխի մեջ:  
Լավում է ծովի աղմուկը:  
Հարթուկողը խնամքով, երկու մատ-  
ներով դասավորում է հարթուկված  
դրոշները:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (մտախոհ թքում է հարթուկին): Հարթուկի տախտակ:

**ՏՆԻԳ լավում է Մոր ճայնը:**

**ՄԱՅՐ** - Կոլյա, տուն արի: Դասերդ դեռ չես արել:

**ԿՈԼՅԱ** - Մամ, մի քիչ էլ...

**ՄԱՅՐ** - (ջղային): Ո՛ւմ եմ ասում, շուտ՝ տուն: Թե չէ եղբորդ նման դատարկապորտ կդառնաս, ամբողջ կյանքում չույլ ու փալաս կհավաքես:

**Հարթուկողը հանգիստ է վերաբերում Մոր խոսքերին, պարզ է, որ առաջին անգամ չի լսում դրանք: Կոլյան չկամ իջնում է ուղեփակոցից ու հարթուկի տախտակի կողքով գնում է դեպի տուն:**

**ԿՈԼՅԱ** - Է՞դ ում դրոշն է:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Բիրմայի:

**ԿՈԼՅԱ** - Էդ երկիրն է՞լ արդեն չկա:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չէ, ինչո՞ւ... կա:

Միայն հիմա անունն ուրիշ է՝ Մյանմա, ու դրոշն էլ ուրիշ է:

**ԿՈԼՅԱ** - Բա ինչի՞ են փոխել:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Եկավ խունտան ու զավթեց իշխանությունը...

**ԿՈԼՅԱ** - Ով եկավ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Խունտան:

**ԿՈԼՅԱ** - (գոռում է): Մամ, ի՞նչ բան է խունտան:

**ՄԱՅՐ** - (գոռում է ներսից): Կոլյա, շուտ՝ տուն:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Խունտան զինվորական

դիկտատուրա է: Դու կարդա, կարդա... Ոնց էլ լինի, երկուսդ պիտի ուղղես:

**ԿՈԼՅԱ** - (հետաքրքրված): Իսկ էդ խուն... տան... ինքը... մարդկանց սպանել է:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Սպանել է:

**ԿՈԼՅԱ** - Ըհը, ուրեմն կկարդամ: Բայց միևնույն է, չեմ հասկանում, ինչի՞ ես էդ դրոշները հավաքում: Երկրներն արդեն չկան...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Իսկ դու ինչի՞ ես ուղեփակոցի վրա խաղում:

**ԿՈԼՅԱ** - Չգիտեմ: Կայք է տալիս:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (թախծոտ): Հա, էլի... ինձ էլ է կայք տալիս:

**ՄԱՅՐ** - (համբերությունը սպառված): Կոլյա-ա-ա...

**Կոլյան ներս է վազում: Քիչ անց դուրս է գալիս Մայրը, ձեռքին՝ ևս մի մեծ հարթուկ, բայց սա քրոնգից է:**

**ՄԱՅՐ** - Քանի՞ անգամ եմ խնդրել, որ էս դագաղները գազօջախի վրա չդնես:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Մամ, սրանք դագաղ չեն: Հարթուկ են: Լավ էլ գիտես, որ դրանք ածուխով պիտի տաքացնել կամ վառարանի մեջ դնել, իսկ մենք ոչ մեկն ունենք, ոչ մյուսը... Ես էլ տաքացնում է գազօջախի վրա, փոխարենը հետո մի ամբողջ ժամ պահում են ջերմությունը, այնքան դրոշ կարելի է հարթուկել... Դրանք դագաղ չեն...

իզուր ես այդպես... Մամ, դրանք շատ լավն են: Գեղեցիկ են: Հին են: Ծատ փող արժեն:

**ՄԱՅՐ** - Բա ինչո՞ւ ոչ ոք չի գնում: Էդ ինչո՞ւ իմ թռչակով եմ երկուսիդ պահում: Կոլկան անհեր է մեծանում, իսկ դու...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ես էլ... (Համբուրում է մորը:)

**ՄԱՅՐ** - (հրր՝ խիստ): Զսանհինգ տարեկան առողջ անբան... հարթուկներ ես հավաքում: Հասկացիր, ես հավերժական չեմ, մեռնեմ՝ Կոլկան ո՞ւմ է պետք:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինձ է պետք:

**ՄԱՅՐ** - Սաշա, խնդրում եմ, թարգիր դրանք՝ դրոշներ, հարթուկներ, թեյնիկներ... Գնա, աշխատի, հը՞...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Փրկարար կայանո՞ւմ:

**ՄԱՅՐ** - Հորեղբայրդ վաղուց է առաջարկել:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (հասնու, չար): Լա ինձ հորեղբայր չէ: Սպանեն՝ մոտը չեմ գնա:

**ՄԱՅՐ** - Չէ մի չէ՛ սպանեն... Էլ դարդ չունեն... Եղբորդ մասին մտածիր:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Իսկ ես մտածում եմ: Մտածում եմ: Ծուտով փող կունենանք: Ծատ փող: Ամեն ինչ կփոխվի, Կոլկան քաղաքում կսվորի, ես կվերանորոգեմ տունը, նավակը...

**ՄԱՅՐ** - (աղերսանքով): Նավակը պետք չէ...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Զեզ կբուժենք:

**ՄԱՅՐ** - Էդ ի՞նչ փողերով:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (ասես սարսափելի գաղտնիք է հայտնում): Մի քանի հարթուկ կվաճառեմ:

**ՄԱՅՐ** - Ո՞ւմ է պետք մետաղի ջարդոնը: Էդ բուլբուլի դիմաց մի նորմալ հարթուկ էլ չեն տա, գուլորշի արձակող: Իսկ ինձ հենց էդպիսի հարթուկ է պետք...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Մամ, չես հասկանում, էդ պլաստմասսաներից ոչ մեկը չի համեմատվի իմ ունեցածի հետ: Այ, դու չես հավատում, բայց շուտով կտեսնես... Անգլիայից մի պրոֆեսորի հետ նամակագրական կապ ունեմ, նա հայտնի կոլեկցիոներ է: Հենց որ լսեց իմ կոլեկցիայի մասին, միանգամից ասաց, որ էլ ոչ մեկի հետ բանակցություն չվարեմ, որ ինքը շուտով կգա ու կգնի հարթուկները: Նրան հատկապես հետաքրքրում է չուգունը, որոշ չափով՝ բրոնզը...

**ՄԱՅՐ** - Բայց ո՞նց կգա էստեղ՝ էս մեր ծակուռը, քո հարթուկների ետևից: Սաշա, դու լրիվ ես ցնդել: Էդ ի՞նչ պրոֆեսոր է, հարթուկագնտ:

**Անսպասելի ծովից լավում է շարժիչի աղմուկ:**

**ՄԱՅՐ** - Չհասկացա... փոստային նավա՞կ է: Բայց էսօր չորեքշաբթի է, իսկ նա ուրբաթ օրերն է...

Քամու աղմուկի միջից լսվում են օտար լեզվի նմանվող ձայներ: Հայտնվում են պրոֆեսոր Շեկլին ու Մարիան: Շեկլին բարձրահասակ է, խորաթափանց աչքերով, ազատ խոսում է ռուսերեն: 50-ին մոտ է, բայց ավելի երիտասարդ է երևում: Նոր է սկսել ճաղատամալ, բայց դա տեսքը չի փչացնում: Պրոֆեսորը ուրախ է: Այս օտար երկրում ամեն ինչ նրա համար զարմանալի է: Օրջակա աշխարհն ու մարդկանց ընկալում է որպես թանգարանային մտուշներ, դա նրան դարձնում է մի փոքր ցինիկ, թեև բավական նրբորեն զգում է իրավիճակները, մարդկանց ու նրանց փոխհարաբերությունները:

Մարիա Շեկլին նրբատես է՝ մոդայիկ վերարկու, բարձրակրունկ կոշիկներ, պստիկ պայուսակ, շիֆոնե կապույտ շարֆ... Նա վաղուց է ապրում արտասահմանում, սա նրա առաջին այցն է Ռուսաստան երկար բացակայությունից հետո: Հուզված է, զգացմունքները խեղդում են՝ վայրի ուրախությունից մինչև սպանիչ մեղամաղձություն: Կարծես թեթև հարբած լինի:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - (անզլիական առողանությամբ): Ներեցեք, ես... հասցեն ձիշտ է: Պոլին կղզի, Գոգոլի փողոց, տուն տասներկո: Ալեքս... Կոլեկցիոներ... Մենք... հարթուկների խնդրով...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (հուզված): Ալեքսանդրը ես եմ: (Նայում է Մորը:) Բեզ որ ասում էի... (Պրոֆեսո-

րին.) Բարև... բարև ձեզ: Ես սպասում էի ձեզ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ծատ ուրախ եմ, Պոլ... շատ ուրախ... Իսկ սա միսիս Ծեկլին է, իմ կինը... Մարիա... Ճիշտ հասկացեք, նախ և առաջ ինձ հետաքրքրում է այն հարթուկը, որի մասին ասում էիք... չուզում... վուշե ու բամբակե կտորեղենի համար... վենզելներով... Իսկ... օհ, տեր Աստված, ահա այն:

Պրոֆեսորը տեսնում է հարթուկի տախտակի վրայի մեծ չուզունե հարթուկն ու նետվում դրա կողմը: Այնպես է ձեռք տալիս չուզունին, ասես փխրուն ծաղիկ լինի, ուշադիր զննում է, քնքշորեն շոյում հնագույն վենզելները:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - O, great!

Մայրը չում է աչքերը՝ տեսնելով, թե ինչ հիացմունքի մեջ է պրոֆեսորը այդ «մետաղի ջարդանից»:

**ՄԱՐԻԱ** - (խոսում է առանց առողանության, ձեռքը պարզում է Հարթուկողին): Մաշա: (Ժպտում է մորը:) Բարև ձեզ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Մաշա: Ծատ հաճելի է:

**ՄԱՐԻԱ** - (անկեղծ): Ինձ էլ շատ հաճելի է: Իրոք:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - (համբուրում է ապշահար Մոր ձեռքը՝ բաց չթողնելով հարթուկը): Ուրախ եմ ծանոթանալ... Պոլ: (Հարթուկողին.) Իսկ ձեզ մոտ նայելու բան կա կար-

ծես... միանգամից անցնենք ձեր կոլեկցիան նայելուն, բայց մի փոքր հանգստանալ պետք է... Երկու օր է՝ ճամփա ենք գալիս: Ասացեք, այստեղ որտեղ... ուզենալ... գիշերել... մնալ... Ես ուզել...

**ՄԱՅՐ** - (ոչ մի կերպ ուշքի չի գալիս): Ուզել՝ ինչ...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ուզել...

**ՄԱՐԻԱ** - Նա ուզում է ասել՝ հոթել, հյուրանոց... Կայարանում խոսել եմ մարդկանց հետ, նավակը կլինի միայն վաղն առավոտյան, այնպես որ, մինչև վաղը այստեղ ենք, պետք է գիշերելու տեղ փնտրենք... (ժպտում է:) Ցույց կտամք, որտեղ է հյուրանոցը:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (շփոթված): Հյուրանոց... Մեզ մոտ հյուրանոց չկա:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ինչպե՞ս թե՛ չկա: Հյուրանոց չկա՞: Ուզել... չկա...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չկա:

Անձանոթ ձայներ լսելով՝ տնից դուրս է վազում Կոլյան ու աչքերը չու՞մ նորեկների վրա, պտտվում է ճամպրուկների շուրջը, զննում է արտասահմանյան դրոշմները:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - (նորից անդրադարձնալով հարթուկին): O! Miracle!

**ԿՈԼՅԱ** - Մա, սրանք ո՞վ են: Մա, սրանք արտասահմանցի՞ են, ինչ է...

**ՄԱՅՐ** - Կամաց, մի գոռա, անհարմար է:

**ՄԱՐԻԱ** - (ծնկի գալով Կոլյայի առաջ): Ողջույն, անունդ ի՞նչ է:

**ԿՈԼՅԱ** - Նիկոլայ:

**ՄԱՐԻԱ** - (ձեռքը պարզելով): Իսկ ես Մաշան եմ:

Կոլյան զարմանքով, սարսափով ու ուրախությամբ սեղմում է նրա խնամված սպիտակ ձեռքը՝ հայացքը չհեռացնելով նրանից: Տղան հիացմունքից կարկամել է՝ զգալով Մաշայի օժանդակի քույրը: Նա միանգամից սիրահարվում է միսիս Շեկլիին:

**ՄԱՐԻԱ** - Եթե հյուրանոց չկա... Գուցե տեղացիներից մեկը սենյակ է վարձով տալիս: Մենք միայն մի գիշեր, առանձնապես բան պետք չէ... Միայն տաք սենյակ ու տաք ջուր...

**ԿՈԼՅԱ** - Սենյակ... Հորեղբայրը ազատ սենյակ ունի:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (ջղային): Չէ: Նրա մոտ չեն գնա:

**ՄԱՅՐ** - Բայց ի՞նչ է պատահել, ի՞նչ սենյակ, մնացեք մեզ մոտ, եթե Սաշենկայի մոտ եք եկել: Տեղներս լայն չէ, բայց հարմար է: Ու հետո, ձեզ մի էնպիսի բորջջով կերակրեմ, որ ամբողջ կղզում չեք ծարի:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (համոզիչ): Եվրասիական մայրցամաքում՝ նույնպես:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Բո՞րջջ... Ի՞նչ բան է բորջջը:

**ՄԱՐԻԱ** - Պոլ, դա... ճաշատեսակ

է... բազուկից կարմիր սուպ: Ծատ համեղ է:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Կարմիր սո՞ւպ:

**ՄԱՅՐ** - Հա, լավ եփված, յուղալի, լոբիով, մսով, դափնետերևով...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Դափնե... դափնետե...

**ՄԱՐԻԱ** - Դափնի, դափնու տերև...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Մաշա, եթե անկեղծորեն՝ ես շատ սոված եմ:

**ՄԱՐԻԱ** - (Մորը): Մենք չէինք ուզենա ձեզ...

**ՄԱՅՐ** - Ի՞նչ եք ասում... այսպիսի հյուրեր: Մենք միայն երջանիկ ենք, ձիշտ է, Կոյա:

**Կոյան կարմրում ու գլուխը կախում է:**

**ԿՈՒՅԱ** - Ճիշտ է:

**ՄԱՅՐ** - Ամեն օր չէ, որ այսպիսի հյուրեր ենք ունենում... Կոյա, օգնիր, ծամպրուկները ներս տանենք:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - O, no problem! Ես ինքս:

**Պրոֆեսորը վերցնում է ճամպուկները, ուզում է բուրբ միանգամից տանել, բայց դրանք շատ են, մեկը ձեռքից դուրս է պրծնում: Գամպրուկը բացվում է, այնտեղից դուրս են թափվում շիֆոնե շարֆեր՝ բազմազույն, նուրբ, շատ գեղեցիկ:**

**ՄԱՅՐ** - (Մաշային): Սրանք ձերն են:

**ՄԱՐԻԱ** - (նեղ զգալով): Իմն են...

**ՄԱՅՐ** - Ախ, էս ի՞նչ գեղեցկություն է:

Այ, էս դեղինը... ջահել ժամամակ սրա նմանը ունեի...

**Մարիան հանում է դեղին շարֆը, փակում ճամպրուկն ու շարֆը մեկնում է Մորը:**

**ՄԱՐԻԱ** - Սա՛ ձեզ:

**ՄԱՅՐ** - Չէ-չէ... պետք չէ: Դրա համար չասի, որ դուք... Պետք չէ: Ես ունեմ:

**ՄԱՐԻԱ** - Խնդրում եմ, վերցրեք: Ես իսկապես ուզում եմ ձեզ նվիրել:

**Մաշան այնպես անկեղծ է, որ սկզբունքային Մայրը հանկարծ մեղմանում է, շփոթված վերցնում է շարֆն ու սեղմում դեմքին:**

**ՄԱՅՐ** - Ծնորհակալ եմ: Չգիտեմ, բայց հանկարծ հիշեցի... ասես երեկ լիներ... Մայրս էր պատմում... Պատերազմի ժամանակ հոսպիտալում բուժքույր էր: Ամեն օր այնքան ցավ էր տեսնում, այնքան խիզախություն... մի զինվորիկ էր իրենց մոտ պառկած: Հարմոն էր նվագում, ամեն մեկի համար բարի խոսք էր գտնում... Ոտքից էր վիրավոր, բեկորից... փտախտ սկսվեց: Ի՞նչ էր մնում անել... փրկել էր պետք, ոտքը կտրել... իսկ նարկոզ չկա: Եվ ի՞նչ... վիրաբույժը մի շիշ օդի խմցրեց ու՛ վիրահատական սեղանին... իսկ նա ծպտուն անգամ չհանեց: Երբ վիրահատությունից հետո պառկած էր արնաշաղախ

կճատ ոտքով, բոլոր քույրերը, բոլոր զինվորները լալիս էին, իսկ ինքը երգեր էր երգում բարձր ձայնով... Ասում էր՝ առանց ոտքի ապրել կարելի է, իսկ առանց երգի՝ ոչ մի կերպ... Խնդրեց՝ մորը գրենք, որ ողջ-առողջ է... Երբ դուրս էր գրվում, մայրս նրան հենակներ տվեց, իսկ ինքը գրպանից, ֆոկուսնիկի պես, հանեց այ, էսպիսի շարֆ... վառ դեղին, ոնց որ արև... Ծքեղ, շիֆոնից... Թե որտեղից էր գտել պատերազմի մտադացի մեջ: Հենց սրա նման շարֆ էր: Ու ասում է մորս՝ սուտ էի ասում, առանց երգի էլ ապրել կարելի է, առանց հոգու անհնար է... Նվիրեց էդ շարֆը: Իսկ մայրս ինձ նվիրեց, տասնութամյակիս առթիվ: Միայն թե կորցրի, երբ տեղից-տեղ էինք տեղափոխվում: Ծնորհակալություն: Ծնորհակալ եմ, Մաշենկա: Դե, ինչ ենք այստեղ անում, տուն գնանք:

**Մայրը Պրոֆեսորին ուղեկցում է տուն, Կոլյան հետևում է նրանց, շարֆերով լի ճամպրուկը տանում է, ասես թանկարժեք մի բան: Նրանք ներս են գնում, այնտեղից լավում է Պրոֆեսորի ձայնը. «Ի՞նչ բան է հեռակը»: Մարիան մտտեցում է հարթուկի տախտակին:**

**ՄԱՐԻԱ** - Դրոշներ եք հավաքում:  
**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Հա:

**ՄԱՐԻԱ** - Բայց սրանք...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Հա, երկրների դրոշներն են, որոնք արդեն քարտեզի վրա չկան:

**ՄԱՐԻԱ** - Կոլեկցիայի սկզբունքը դա՞ է:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինչ-որ իմաստով...

**ՄԱՐԻԱ** - Իսկ կարելի՞ է հարցնել՝ ինչու: Գոյություն չունեցող երկրներ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ես էլ չգիտեմ: Հաճախ եմ մտածում... ինչ-որ մեկը պետք է հիշի: Երևույթների նկատմամբ, որոնք դադարում են գոյություն ունենալուց, միշտ կասկած է առաջանում՝ գուցե իրո՞ք դրանք չեն եղել:

**ՄԱՐԻԱ** - Բայց ինչպե՞ս... Կա պատմություն, հիշողություններ, արխիվներ, ոմանց կյանքը, անգամ՝ ցավը... Այ, հենց նոր ձեր մայրը... պատմեց, թե ինչ է կատարվել իր մոր՝ ձեր տատի հետ մի ուրիշ ժամանակ, ուրիշ երկրում, կես դար առաջ, բայց ամեն ինչ այնպես կենդանի էր նրա պատմածով...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ոչ թե պատմածով, այլ ձեր շարֆով: Դա էլ դրոշ է: Ամեն մարդ ունի իր դրոշը: Բայց դրոշ ունենալը քիչ է: Պետք է գտնվի այն մեկը, ով քո դրոշը կհանի ձամպրուկից, կհարթուկի, կբարձրացնի վեր... Դա պահի պաթոսն է: Ու դուք միանգամից

կարողացաք գուշակել իմ Մոր դրոշը... Ինչ վերաբերում է պատմությանը... Որքան էլ տարօրինակ է, բայց ինձ թվում է, որ թե՛ հիշողությունները, թե՛ ցավը աբստրակտ են: Դրանք ոչնչի հետ կապ չունեն՝ ոչ մի փաստերի կամ դեպքերի... Ցավը տարօրինակ տաղանդով է օժտված՝ ապրում է իր կյանքով: Գոյություն ունենալու համար ապացույցի կարիք չունի:

**ՄԱՐԻԱ** - Իսկ դ՞նք... Դուք կարիք ունե՞ք:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ես էլ չունեմ:

**ՄԱՐԻԱ** - Իսկ ինչո՞ւ եք ապացույցներ հավաքում, որ այդ երկրները, համենայնդեպս, գոյություն ունեցել են:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Դրանք ապացույցներ չեն, պարզապես կտորեղեն է: Արժեքավոր են նրանով, որ աշխարհում էլ ոչ մեկը դրանց պատիվ չի տա, չի բարձրացնի դրոշակաձողին ու չի համբուրի նրա եզրը...

**ՄԱՐԻԱ** - Իսկ դուք կանե՞ք:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Երևի թե... հա:

**ՄԱՐԻԱ** - Բայց ինչո՞ւ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Որովհետև զվարճալի է: Երբեմն ինքս էլ կասկածում եմ, որ գոյություն ունեմ, որ կա այս տունը, կղզին... Այ, հիմա խոսում եմ ձեզ հետ ու չեմ հավատում, չեմ հասկանում, թե ծովի մեջտե-

ղում ո՞նց մեզ գտաք... Իսկ երբ կանգնում ես գոյություն չունեցող կղզու կենտրոնում ու համարյա կախարդական այս հարթուկով հարթուկում ես անհետացած երկրի դրոշը՝ ինչ-որ չափով սթափեցնում է... Ամեն ինչ դառնում է հասկանալի: Ներեցեք, հիմար-հիմար դուրս եմ տալիս... Երևի հանգստանալ եք ուզում, իսկ ես ձեր վրա փորձարկում եմ իմ հիմար տեսությունը: Դուք հոգնել եք, չե՞:

**ՄԱՐԻԱ** - Հոգնել եմ: Ոչ, դա զառանցանք չէ: Ու ձեր տեսությունն էլ ինձ հիմար չի թվում:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Տարօրինակ է, բայց... շնորհակալ եմ...

**Տնից դուրս եմ գալիս Պրոֆեսորը, Մայրն ու Կոլյան: Քարը եմ տալիս խոհանոցային սեղանը, բերում բեմի կենտրոն:**

**ՄԱՅՐ** - Մաքուր օդին ընթրենք, լավ եղանակ է:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Մաշենկա, այստեղ շատ լավ է: Գնանք, տես, թե ինչպես եմ տեղավորվել:

**ՄԱՐԻԱ** - Լավ, Պոլ, գնանք:

**Պրոֆեսորը գրկում է կնոջ ուսերը, նրանք տուն են մտնում: Մայրը սպիտակ սփռոց է փռում սեղանին: Ներսից լսվում է Պրոֆեսորի խուլ ձայնը. «Չքավորություն ու շատ նեղվածք է: Ինչպե՞ս են նրանք այստեղ ապրում»:**



**ՄԱՅՐ** - Սաշա, էդ պրոֆեսորն ու իրա կինը ոնց որ հեքիաթ լինեն: Չէ, իսկապես գնելու են էդ հարթուկները:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Որոնք որ կհամաձայնվեն վաճառել:

**ՄԱՅՐ** - Սաշա, միայն հիմարություն չանես... ախր, դա...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Մամ, ամեն ինչ լավ կլինի:

**ՄԱՅՐ** - Ինչքան կտա դրանց համար:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ոնց որ թե շատ: Ծատ թանկ, մամ:

**ՄԱՅՐ** - Ախ, տեր Աստված, երբ նրանք հայտնվեցին՝ քիչ մնաց փետանայի... Անգլիացիներ՝ ու մեզ մոտ, կղզում... Անունն էլ ծիծաղելի է՝ Պոլ...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Մամ, Պոլը մեր Պավելն է:

**ՄԱՅՐ** - Իսկ Մաշան... կինը մերոնցից է... ինչ լավն է: Բա ո՞նց, էնտեղ նրա նմանին չես գտնի... Օխ, միայն թե ամեն ինչ լավ լինի: (Խաչակնքում է: Տուն է մտնում:)

**ԿՈԼՅԱ** - Իսկ Մաշան գեղեցիկ է: Կարմրեցի՞ր, ես տեսա:

**Հարթուկողը շրմփացնում է նրա ծոծրակին:**

**ԿՈԼՅԱ** - Հիմար:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Դասերդ արա:

**ԿՈԼՅԱ** - Ու նրանից բուրում է, ոնց որ... (Ձեռքով անորոշ շարժում է անում:)  
Ոնց որ... երկնքից:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ո՞ւմ ասացի՞ գնա:

**Կույան գնում է դեպի տուն:**

**ԿՈԼՅԱ** - Չեմ հասկանում, ինչի՞ն է պետք էդ պրոֆեսորը: (Գնում է:)

Մայրը սեղան է սարքում՝ շարում է ափսեները, նախապես մանրակրկիտ սրբելով դրանք, դնում է անձեռոցիկներ, գդալ-պատառաքաղ ու, վերջապես, կենտրոնում՝ տոնական սպիտակ ապուրամանը՝ բորշշով: Կույան քարշ տալով բերում-շարում է աթոռները: Հարթուկողը դրոշն ամրացնում է կենտրոնական դրոշակածողին:

**ՄԱՅՐ** - Նստեք ընթրելու:

Պրոֆեսորն ու կինը դուրս են գալիս տնից, մոտենում են սեղանին: Երբ բոլորը իրենց աթոռների մոտ են, անսպասելի թնդում է երաժշտություն՝ Տիբեթի հիմնն է: Հարթուկողը դանդաղ բարձրացնում է տիբեթական դրոշը: Բոլորը քարանում են: Կույայի ու Մոր համար դա սովորական բան է: Պոլն ու Մարիան ապշած են: Հնչում է հիմնի վերջին ակորդը: Հարթուկողը հանգիստ մոտենում է սեղանին, վերջապես բոլորը նստում են:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Սա ձեզ մոտ աղոթքի փոխարեն է: Ինչո՞ւ տիբեթական դրոշ: Ձեր ընտանիքում բուդդայականներ են:

**ՄԱՅՐ** - (խաչակնքելով): Աստված հեռու պահի:

**ՄԱՐԻԱ** - Պոլ, պատկերացնո՞ւմ ես, Սաշան հավաքում է գոյություն չունեցող երկրների դրոշներ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Իսկապէս... հետաքրքիր է:

**ԿՈՒՅԱ** - Ամեն անգամ ընթրում ենք տարբեր դրոշների տակ: Երեկ Միացյալ Եմենի դրոշն էր, նախորդ օրը՝ ԽՍՀՄ-ինը:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ինչո՞ւ այսօր Տիբեթի դրոշն է:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Իմ սիրած դրոշներից մեկն է՝ Ձնե առյուծներ կարմիր-կապույտ շողերի ու արեգակի ֆոնին: Ծատ սիրուն է:

**Մայրը բորշը լցնում է ավսեմները:**

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Այս դրոշը պաշտոնապես արգելված է: Ես եղել եմ այնտեղ՝ Յու-Յանգ նահանգում, տեսել եմ ավերված տաճարներ:

**ԿՈՒՅԱ** - Սաշա, իսկ ո՞վ է ավերել տաճարները:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Մինչև 1949 թվականը Տիբեթը անկախ էր: 49-ի սեպտեմբերին Չինաստանը, առանց պատերազմ հայտարարելու, ներխուժեց Տիբեթ: Չինացիները նվաճեցին երկրի արևելյան մասն ու նրա կենտրոնը՝ Չամդո քաղաքը:

**ԿՈՒՅԱ** - Բա Տիբեթում բանակ չկա՞ր:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Տիբեթում բանակ կար, բայց չէր կարող դիմագրավել Չինաստանի բազմամիլիոն բանակին: Չինացիներն ավերեցին տիբեթական սրբավայրերը: Ով փորձում էր պաշտպանվել՝

սպանում էին կամ քշում ճամբարներ:

**ԿՈՒՅԱ** - Նրանք ճամբարների ունեին:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Որոշ տվյալներով, դրանք մինչև հիմա էլ կան:

**ԿՈՒՅԱ** - Բայց Տիբեթում կար ինչ-որ մի... ղեկավար... թագավոր... ինչո՞ւ նա ոչինչ չարեց:

**ՄԱՐԻԱ** - Ոչ թե թագավոր, այլ Դալայ Լամա:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Մաշենկա, մինչ այդ Տիբեթը կառավարում էր ռեգենտը:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Այն ժամանակ Նորին Սրբություն Դալայ Լաման 16 տարեկան էր, բայց համարձակվեց ու ընդունեց երկրի կառավարումը: Ավելի ուշ տիբեթական պատվիրակությանը ստիպեցին Չինաստանում ստորագրել խաղաղության պակտ, որն իրականում ենթադրում էր ավելի լայնածավալ ներխուժում:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Պայմանագիրը կոչվում էր «17 կետ Տիբեթի խաղաղ ազատագրման համար»:

**ԿՈՒՅԱ** - Եվ ի՞նչ... նրանք այդպես էլ ետ չվերցրին իրենց հողերը: Ոչինչ չարեցին:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Արեցին: Փորձեցին ապստամբել: Չինական իշխանությունները փողոցներում հազարներին գնդակահարեցին: Ու երեխաների... շատ:

**ԿՈԼՅԱ** - Իսկ այդ Դալալա... լայման:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Դալայ Լաման փախավ Հնդկաստան:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Դրահմասալում տիբեթցիները կազմակերպեցին Արտաքսված Տիբեթական Կառավարություն:

**ԿՈԼՅԱ** - Արտաքսված: Ու նրանք մինչև հիմա արտաքսված են: Գիրքը կամ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Կա, դարակի վրա:

**Կոլյան տեղից վեր է թռչում:**

**ԿՈԼՅԱ** - Մա, շնորհակալություն, շատ համով էր: *(Տուն է մտնում:)*

**ՄԱՐԻԱ** - Իսկ ես Տիբեթի մասին միայն գիտեմ, որ այնտեղ Նոր տարին գալիս է առավոտյան ժամը վեցին: Ու բուդդայականները տաճարներում իրար ողջունում են մետաքսե կամ չթե սպիտակ շարֆերով: Այդ շարֆերը մաքուր մտքերի խորհրդանիշ են:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - *(Ժպտում է):* Իսկ ես դա չգիտեի:

**ՄԱՐԻԱ** - Դուք ծիծաղում եք ինձ վրա: *(Մորթ.)* Ծատ համեղ բորչ էր, վաղուց չէի կերել: Համեղ է, չէ՞, Պոլ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Հա, լավն էր: Դուք պատմությունը վատ չգիտեք, Ալեքս: Ես պատմաբան եմ, ասիական երկրների մասնագետ ու զարմացած եմ ձեր իմացությամբ: Հետաքրքրվում եք:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Անկեղծորեն՝ տանել չեմ կարող պատմությունը: Անօգուտ գիտություն է, միևնույն է, ուշ թե շուտ ամեն ինչ մոռացվում է: Ինձ թվում է, որ շուտ է մոռացվում...

**ՄԱՅՐ** - Դե, միք լսի նրան, դա անում է հանուն Կոլյայի՝ հիմն, դրոշ, որպեսզի նրան հետաքրքիր լինի...

**ՄԱՐԻԱ** - Հանուն Կոլյայի...

**ՄԱՅՐ** - Չէ, դուք ուրիշ բան չկարծեք, Կոլյան շնորհքով տղա է, առաջ միայն հինգերով էր սովորում, բայց հոր մահից հետո...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - *(նեղսրտած):* Մա...

**ՄԱՐԻԱ** - Ներեցեք, անձնական ոչինչ չէի ուզում հարցնել...

**ՄԱՅՐ** - Դե... կյանքում ամեն ինչ էլ պատահում է... Մեր Կոլյան էլ, ահա... հիվանդացավ... շատ երկար... Քանի բժշկի ենք տարել... Իսկ երբ դպրոց վերադարձավ, պարզվեց, որ շատ է ետ մնացել, հատկապես պատմությունն ու աշխարհագրությունը: Դե, Սաշան էլ, որպեսզի զվարճացնի նրան, դրոշների էս ներկայացումները հորինեց...

**ՄԱՐԻԱ** - *(զարմացած):* Ուրեմն, դուք սա անում եք... Ինչ հուզիչ է: Եվ, իսկապես, շատ մանկավարժորեն... Թեև, ներեցեք, մանկավարժորեն... ինչ ապուշ բառ է: Պարզապես սա շատ ճիշտ է:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Խաղային մեթոդ:  
Ազդող բան է:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (*ուրախ*): Թե չէ... չէ՛ որ մտածեցիք, թե խելագար եմ: Ամեն անգամ ընթրիքից առաջ խելագար կոլեկցիոները բարձրացնում է գոյություն չունեցող երկրի դրոշմ: Մտածեցիք, չէ՛, որ ցնդածի մեկն եմ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Դե, դե... (*ժպտում է*):  
Դե, մի քիչ... Բայց հիմա ամեն ինչ պարզվեց:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Այսինքն՝ պարզվեց, որ խելագար չեմ: Այսպես եմ վարվում, որ եղբայրս հեշտությամբ սովորի, հա՛:

**ՄԱՅՐ** - Սաշա...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Բայց դուք ասացիք...

**ՄԱՅՐ** - Մենք ձեր գլուխը տարանք, Մաշենկա: Ավելի լավ է, ձեր մասին պատմեք:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ուրեմն այսպես, դուք սխալվում եք: Հանուն եղբորս չեմ անում, այլ հանուն ինձ: Դա ինձ դուր է գալիս: Ինձ դուր է գալիս հավաքել հարթուկներ, նրանցով հարթուկել այս դրոշներն ու բարձրացնել կղզու վրա... Այնպես որ ես, իրոք, խելագար եմ: Ես սիրում եմ ծեսեր: Դուք կարդացել եք դրոշի էտիկետը՝ միջազգային կանոնները:

**ՄԱՐԻԱ** - (*խոնարհում է հայացքը*):  
Ոչ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինձ շատ են դուր գալիս այդ կանոնները, դրանք

անգիր գիտեմ: Մի քանի կետեր պարզապես սիրում եմ: «Իջեցնելիս դրոշը չպետք է դիպչի գետնին կամ այլ առարկայի՝ ձեռքերից բացի: Դրոշը պետք է ծալել խնամքով, հարգանքով ու հանդիսավոր»: Լսում եք. խնամքով ու հանդիսավոր: Ու ոչինչ՝ ձեռքերից բացի... Ինչ խոսքեր են... «Դրոշը պետք է բարձրացնել արագ, իսկ իջեցնել դանդաղ ու հանդիսավոր»: Էլի հանդիսավոր, հասկանո՞ւմ եք: Ու դանդաղ: Ծամանական բան կա էստեղ... «Ազդարարության ժամանակ դրոշը որոշ ժամանակ բարձրացնում են մինչև գագաթն ու իջեցնում դրոշակաձողի մեջտեղը: Նախքան դրոշն իջեցնելը այն բարձրացնում են մինչև գագաթը»: Այ թե ձգարտություն է... Ուղիղ մեջտեղը: Մի միլիմետր ոչ վերև, ոչ ներքև: «Դրոշը գերեզման չեն իջեցնում»: Դե, պարզ է, ո՞վ դրոշը գերեզման կդնի: Դրոշը ռեժիմի կյանքի խորհրդանիշն է: Իջեցնել այդ խորհրդանիշը գերեզման, անգամ այն մարդու գերեզմանը, ով մահացել է այդ դրոշի համար... «Պատերազմներում զոհված զինվորների հիշատակման օրը մինչև կեսօր դրոշը իջեցված է, իսկ կեսօրից հետո մինչև մայրամուտ բարձրացնում են վեր»: Մինչև կեսօր: Ու՛ վերջ:

Դրանից հետո ժամանակը կծկում է և դրոշը, և հիշողությունները...

**Տիան լուսություն է տիրում:** Պրոֆեսորը Հարթուկողին նայում է բժշկի հետաքրքրությամբ, ասես զննում է եզակի ախտանիշ: Մարիան ու Մայրը նեղ են զգում: Հարթուկողը ցրված-հանգիստ է: Անսպասելի ուժեղ քամի է բարձրանում, քիչ է մնում՝ տապալի Տիբեթի դրոշը, բարձրացնում է սփռոցի եզրերն ու Մաշայի պարանոցի շարֆը:

**ՄԱՅՐ** - Եղանակը փչանում է, դուրըս չի գալիս:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (Մաշային): Այսեդորա Դունկանին եք նման:

**ՄԱՐԻԱ** - Չէի ուզենա նրա ծակատագիրն ունենալ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Առաջին անգամ կնոջս տեսել եմ, երբ պարում էր:

**ՄԱՐԻԱ** - (ամաչկոտ ժպտում է): Ինքնագործ թատրոնում էի խաղում: Դերս առանց խոսքի էր, քամին էի: Դուրս էի թռչում ծախկուլիսից, բեմում պտտվում, թափ տալիս ձեռքերս, մազերս ու կորչում աջ կուլիսում: Այդպիսի դեր էր:

**ՄԱՅՐ** - Ներկայացումը ղնց էր կոչվում:

**ՄԱՐԻԱ** - Ալիսան հրաշքների աշխարհում:

**ՄԱՅՐ** - Իսկ այդ հեքիաթում քամի կա:

**ՄԱՐԻԱ** - Մեր ներկայացման մեջ կար: Ես դուրս էի թռչում ամեն

անգամ, երբ տեսարանը լցնել չէր լինում: Իրականում, Ալիսայի դերը իմն էր, ամբողջ ամառ փորձ էի արել, բայց... Վերջին պահին դերը տվեցին հնչյունային օպերատորի սիրուհուն, նա հրաժարվում էր ապարատուրան բերել, եթե... հասկանում եք: Ռեժիսորը կատաղել էր, բայց ելք չուներ, պրեմիերան ինչպես խաղայինք, իսկ ազդագրերն արդեն փակցրել էին... Հրավիրել էին շրջանային երկու ղեկավարների, դատավորին, ինչ-որ մայորի ու, չգիտես ինչու, գերեզմանատան տնօրենին... Ռեժիսորն էլ տեղի տվեց: Այն ժամանակ տասնինը տարեկան էի, իսկ սիրուհին՝ համարյա քառասուն: Չգիտեմ, Քերոլի մտքով նման բան կանցնե՞ր... Թեև, ինչ իմանաս, մեկ էլ տեսար՝ հավանեց... Դրանից ավելի սյուրռեալիստական Ալիսա էլ երբեք չեմ տեսել...

**ՄԱՅՐ** - Չեմ հասկանում, քառասուն տարեկան կինը ղնց կարող է փոքրիկ աղջկա դեր խաղալ:

**ՄԱՐԻԱ** - Որոշ տեղերում սպանելու աստիճան լավն էր, նա խողովակների նման երկար ոտքեր ուներ ու լայն ուսեր: Երբ մենախոսությունից բառեր էր արտաբերում, ծիծաղից մեռնել կարելի էր...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Հատկապես ինչ բառեր:

**ՄԱՐԻԱ** - «Ես հիմա շարժվում եմ, ասես հեռադիտակ լինեմ: Մնաք բարով, ուռքեր»: Իսկ ես պատվում էի նրա շուրջը՝ պատկերելով քամի: Բայց դժվար թե մեկի մտքով անցնեն, որ ես քամի էի:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Իսկ իմ մտքով անցավ: Ոչնչի հետ շփոթել չէր լինի՝ քամի էր: Ես նորից էի ուզում դիտել այդ ներկայացումը:

**ՄԱՅՐ** - Իսկ ո՞նց հայտնվեցիք... մեզ մոտ... այստեղ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ուսումնասիրում էի առևտրական դասի կենցաղը գավառական քաղաքներում: Մենագրություն էի գրում, փորփրում էի արխիվները, հարյուրավոր փոքրիկ թանգարաններ եմ այցելել երկրով մեկ... Հենց այդ ժամանակ էլ սկսեցի ամեն տեսակի իրեր հավաքել՝ ամանեղեն, իլիկներ, զանգակներ ու, վերջապես, հարթուկներ: Ռուսական հարթուկներն ինձ ցնցեցին: Ինձ պատմեցին մի մարդու մասին, նա էնսկում գերեզմանատան տնօրենն էր, հետաքրքրվում էր երկրագիտությամբ, մեծ արխիվ էր հավաքել հարյուր-երկուհարյուր տարի առաջ էնսկում ապրած մարդկանց մասին... Այցելեցի նրան, ապրում էր գերեզմանատանը, հին եկեղեցուց ոչ հեռու: Նրա տունը... ասես կի-

նոյից լիներ... ուրվականների մասին պատմող ֆիլմից: Ամբողջ օրը օդի խմեցրեց, իսկ երեկոյան հայտարարեց, որ թատրոն ենք գնում: Ես չէի պատկերացնում, թե այդ վիճակով ինչպես կարող եմ հայտնվել թատրոնում: Չգիտեմ էլ՝ ինչպես համոզեց: Բայց շնորհակալ եմ իրեն, ինչպես ոչ ոքի: Նստեցինք առաջին շարքում, ինձ շատ վատ էի զգում, չէի հասկանում՝ որտեղ եմ գտնվում... Բայց երբ բեմ վազեց Մաշենկան ու սկսեց պատվել՝ պատկերելով քամին, ես... ինչպես են դասում... ես...

**ՄԱՅՐ** - Օյաղացամբ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ճիշտ այդպես: Օյաղացա:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Եթե շատ երկար ձեռքերիդ մեջ պահես շիկացած կրակխառնիչը, ի վերջո կվառվես, եթե դանակը քաշես մատիդ վրայով՝ մատից արյուն կգա, եթե մի շնչով գլխիդ քաշես «Թույն» գրված սրվակի պարունակությունը, վաղ թե ուշ, համարյա հավանական է, որ քեզ վատ կզգաս:

**Մաքիան ծիծաղում է:**

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ի՞նչ, ներեցեք...

**ՄԱՐԻԱ** - Դա հեքիաթից է... Ալիսայից:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - (Հարթուկողին): Անգի՞ր գիտեք այդ հեքիաթը:

**ՄԱՅՐ** - Չէ, ինչ եք ասում, Սաշան շատ տարօրինակ հիշողություն ունի: Դեռ մանկությունից միտքն էր պահում տողեր, նախադասություններ հին լրագրերից, բանաստեղծության կտորներ, տարօրինակ անվանումներ... Դրանք մեկ էլ տեսար՝ միտքն են գալիս: Փոխարենը մշտապես մոռանում է խոհանոցում փակել ջրի ծորակը: Տարրական բաներ չի հիշում ու երբեմն դժվարանում է Կոլյային ասել, թե ինչ է անում յոթը բազմապատկած ութով:

**Նորից ուժեղ քամի է բարձրացում, լավում են ճայերի սուր ճիչերը: Պրոֆեսորը ծալում, մի կողմ է դնում անձեռոցիկը:**

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ծնորհակալություն, շատ համեղ էր: Ալեքսանդր, դեմ չէ՞ք լինի, եթե հենց հիմա նայենք կոլեկցիան:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Լավ, միայն մորս օգնեմ՝ սեղանը հավաքենք:

**ՄԱՐԻԱ** - Ես կօգնեմ:

**ՄԱՅՐ** - Դե, չէ, ինքս գլուխ կհանեմ:

**ՄԱՐԻԱ** - Ես կօգնեմ:

**Մարիան արագ ու վարպետորեն գործի է անցնում: Հարթուկողմ ու Պրոֆեսորը տուն են մտնում:**

**ՄԱՐԻԱ** - Ծնորհակալություն հրաշալի ընթրիքի համար: Ես ինձ նեղ եմ զգում... մենք ոնց որ վիրավորեցինք Սաշային:

**ՄԱՅՐ** - Չէ, ինչ եք ասում, պարզապես նա միշտ նյարդայնանում է, երբ խոսում եմ հոր մասին:

**ՄԱՐԻԱ** - Ինչ է պատահել նրան:

**ՄԱՅՐ** - Ձոհվել է փոթորիկի ժամանակ: Խեղդվել է:

**ՄԱՐԻԱ** - Տեր Աստված...

**ՄԱՅՐ** - Երեք տարի առաջ... իսկ մենք մինչև հիմա չենք կարող հավատալ, ուշքի չենք գալիս: Կարծես արդեն համակերպվել ենք, ընդունել ենք, որ նա չկա, ու ապրում ենք, բայց լինում է, գլուխդ բարձրացնում, երկինք ես նայում ու մտածում ես՝ չէ, չի կարող պատահել... Սկզբում սպասում էի, ափ էի գնում, նայում՝ չի՞ երևում նավակը, մտածում էի՝ այ, հիմա կգա, կնստենք ընթրելու... Հոր մահից հետո Կոլյան սկսեց կակազել, իսկ Սաշան լռում է: Օրերով: Միայն ես գիտեմ, որ մեղավոր է համարում Իվանին՝ հորեղբորը: Իվանը փրկարար կայանի պետն է: Այդ օրը նախագուշացրել էր Միշային, որ չի կարելի ծով դուրս գալ՝ փոթորիկ է լինելու: Իսկ նա որոշեց, որ կհասցնի, հաջորդ օրը Կոլյայի ծննդյան օրն էր ու ինքն ուզում էր խաղալիք գնացք գնել... Կոլկան շատ էր ուզում: Սարսափելի, ահեղ փոթորիկ սկսվեց... Սաշան վազեց կայան, խնդրեց, որ

փրկարարների բրիգադն անմիջապես ծով դուրս գա, բայց Իվանը՝ ոչ մի կերպ... Ասաց, որ չի կարող խաղալ մարդկանց կյանքի հետ, որ մնում է միայն սպասել, որ հույս կա... Բայց երբ փոթորիկը հանդարտվեց ու փրկարարներն սկսեցին որոնել՝ գտան միայն նավակի բեկորները, իսկ երկու օր անց ափ ելավ նաև դիակը...

**ՄԱՐԻԱ** - Սարսափելի է...

**ՄԱՅՐ** - Հա...

**Նրանք ամանեղենը տանում են տուն: Հարթուկողը սեղանին է շարում հարթուկներ, ամենամեծը՝ մինչև 10 կգ ու պստիկ, որ տեղավորվում է ափի մեջ: Գալիս է Պրոֆեսորը, խոնարհվում է ու սկսում զննել դրանք: Հարթուկողը պտտվում է սեղանի շուրջը: Շեմին կանգնած Մարիան հայացքով հետևում է Սաշային:**

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Այս հարթուկներով ամեն առավոտ հարթուկում են իմ կղզին: Ամառվա վերջին, երբ երկինքը զնգում է ծանրացող շոգի բեռան տակ, կղզին հարթուկում են երկաթե կափարիչով չուգունե հարթուկով: Հարյուր տարի առաջ տանտիկինը ցած է գցել, փխրուն պատյանը ձաքել է ու նա հարթուկը տվել է վարպետին: Դե, այդ վարպետն էլ կափարիչը երկաթից է կոփել: Սա չեմ տաքացնում, նրանով հովացնում են տոթ

օգոստոսի կարճատև երեկոները: Բայց երբ տապի վերջին պատանը լուծվում է աշնան կույզ եկած շնչառության մեջ՝ ձեռքս եմ վերցնում այս մեկը, որ նման է ծովային լաստանավի: Նրա ետևում անցք կա, իսկ ինքը սնամեջ է: Ներս եմ հրում շիկացած հեսանն ու թեթևորեն սահեցում աշնանային մշուշոտ մակերեսով: Ոչ ոք չգիտե, թե ինչու սեպտեմբերի վերջ կղզի են վերադառնում տաք օրերը: Ես գիտեմ: Կղզու երկինքը ես տաքացնում եմ այս լաստանավով ու որոշ ժամանակ երկարացնում եմ երանությունը: Բայց հեսանը չի կարող երկար պահել ջերմությունը: Իմ չուգունե ու բրոնզե զինվորները սառում են, ինչպես զոհված զինվորները՝ ձմռանը մեծ պատերազմում: Դա անխուսափելի է: Եվ այդ ժամանակ ինձ այլ բան չի մնում, ես վերցնում եմ տասկիլոգրամանոց հրեշն ու քրտնքի մեջ կորած՝ հարթուկում եմ փետրվարի շինելի ծանր մահուղը: Դա դժվար ու համարյա անօգուտ գործ է: Երբեմն ինձ հաջողվում է մի քիչ տաքացնել ձնե սփռոցը, բայց դեռ երբեք չի հաջողվել ստիպել արևին, որ գոնե մի երկու անքամի օր բաց թողնի ձմռան կեսին... Նա լուսավորում է պայծառ, երկրին մոտիկ ու պաղ: Ձմռան շինելը ճրթճրթում է բարակ



սառցակալած կեղևով: Ես ինձ անուժ եմ զգում: Ու երբ իմ իզուր աշխատանքը հուսահատության ձև է ընդունում և ձեռքերս թմրում են նոր կտավի մտքից միայն, հանկարծ հարթունքն անշարժանում է ձմռան եզրին՝ ֆշոցով հալեցնելով կեղտոտ ձյան մնացորդները: Այն, ինչ անվերջ էր թվում՝ հանկարծ ավարտվում է: Մարտին դեռ ցրտոտ է, բայց գարունը ուրիշ զգեստ չունի՝ չթից բացի, փոթերով ու ժանյակներով... Այդ ժամանակ դողացող ձեռքերով, աշխարհում ամենաշատը վախենալով այրել բարակ, համարյա թափանցիկ այդ կտորը՝ ես տաքացնում եմ այս պստիկ հարթուկը: Նա շատ փոքր է, ընդամենը քսան գրամ... Ութսունվեց տարի առաջ երկու աղջնակ՝ տերտերի դուստրերը, սրանով հարթուկում էին իրենց տիկնիկների զգեստները: Իսկ ես հիմա հարթուկում եմ Գարնան հանդերձանքը: Դա ամենաերջանիկ ժամանակն է, միակ ժամանակը, երբ ինձ թվում է, որ չթի փոխարեն իմ տիկնիկային հարթուկի տակ դեղում են թիթեռների թևիկները ու նրանց հպումից աշխարհ է վերադառնում ջերմությունը, ծնվում է կրկին...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ինչ եք ուզում սրա համար:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Այս մեկը չի վաճառվում:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ինչպե՞ս թե՛ չի վաճառվում:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Այդպես, չի վաճառվում: Այս հարթուկը գտել եմ արդեն հանգուցյալ ծեր դերձակուհուց, նրան ամբողջ գյուղը գիտեր. շատ վաղուց նա առագաստներ էր կարել... Մամ, հիշում ես, նա պատմում էր, թե ինչպես էր խաղում քրոջ հետ: Նա տիկնիկի զգեստները կարում էր խատուտիկներից ու ժանյակի կտորտանքից, իսկ քույրը հարթուկում էր: Ծեր կինը ծիծաղում էր, պատմում, որ նրանք շատ էին կռվում այդ հարթուկի համար, իսկ մի անգամ նույնիսկ երդվեցին երբեք չխոսել իրար հետ, իբր՝ էլ քույրեր չեն, թշնամի են մինչև գերեզման... Ամբողջ կյանքում միասին ապրեցին, շատ էին սիրում իրար... Երբ քույրը մահացավ, դերձակը հիվանդացավ ու մի տարի չանցած մահացավ: Մահվանից առաջ կանչեց ինձ ու նվիրեց այս հարթուկը: Ասաց՝ գիտեմ, որ լավ ձեռք եմ հանձնում, միայն խոստացիր, որ չես վաճառի: Ես խոստացա:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Բայց ես լավ գին կտամ: Հազար: Երկու հազար: Դուք գինն ասեք:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ոչ: Վերցրեք սա կամ էն մեկը՝ բրոնզից:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Բայց ինձ փոքրիկն է պետք, վաղուց էի այդպիսին փնտրում: Եվ Նյու Հեմփշիրում, և Մեյբրունում, և Տոկիոյում: Հանդարտվեք ու պարզապես մտածեք, թե ինչ գումար կարող եք պահանջել դրա դիմաց:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Դա չի վաճառվում:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Երեք հազար:

**ՄԱՅՐ** - Սաշա... Սաշա:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ներեցեք, պրոֆեսոր:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Հինգ հազար:

**ՄԱՅՐ** - Սաշենկա, ի սեր Աստծո, մտածիր... Մենք կարող ենք տունը վերանորոգել ու Կոլկային... ուսման համար, քեզ էլ...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Մամ, ես խոստացել եմ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Բայց այդ պառավը մահացած է:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ուրեմն՝ մահը դավաճանության առիթ է:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Բայց ինչո՞ւ այդպես... Ես պարզապես առաջարկում եմ շահավետ գործարք: Մտածե՛ք ձեր ընտանիքի մասին:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ես ամեն վայրկյան եմ մտածում ընտանիքիս մասին: Ասում եք՝ շահավետ... ինձ համար շահավետը տված խոսքին հավատարիմ մնալն է: Ես հաճախ եմ խախտել տարբեր խոստումներ ու էլի մեկը խախտել չեմ ուզում: Այս հարթուկը չի վաճառվում:

**Սաշան տուն է մտնում:**

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Շատ տարօրինակ է: Ես չէի ուզում վիճել: Բայց ես այստեղ եմ եկել գործով, և Ալեքսանդրը գիտեր այդ մասին: Հույս ունենամ, որ դեռ միտքը կփոխի:

**ՄԱՅՐ** - Հըմ... հասկանո՞ւմ եք... միք նեղանա, պարզապես Սաշան շատ բան է տեսել... նյարդային է, կասկածամիտ...

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Հասկանում եմ, բայց ես քարշ եմ եկել, հասել այստեղ... այսքան հեռու...

**ՄԱՐԻԱ** - Պոլ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Դե՛, ի՛նչ...

**ՄԱՐԻԱ** - Նա ուրիշ շատ հարթուկներ ունի:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Դրանք ինձ պետք չեն: Իմ կոլեկցիայում ավելի հետաքրքիր տեսակներ կան շինելի մահուդ հարթուկելու համար, մի բռնակո՛վ ու հանովի կողամասերով, հին գլանատախտակ կա վուշը հարթեցնելու համար, իսկ քսան գրամանոց տիկնիկային հարթուկ չկա: Ինձ դա է պետք: Ու ես դա կստանամ:

**Հարթուկողը տնից դուրս է գալիս, ձեռքին՝ ևս մի հարթուկ ու ամսագիր:**

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ավելի լավ է՝ սա վերցրեք, եզակի բան է: Գովազդվել է 1913 թվականի «Նևա» ամսագրում: Նայեք, այս անցքից

սպիրտ է լցվում: Վառում ես պատրույզն ու բոցը տաքացնում է մետաղական կմախքը: Էլ ոչ մի տեղ չեք գտնի: Սա պատրաստ եմ տալ շատ չափավոր գնով, իսկ ամսագիրը՝ անվճար:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Իրոք, եզակի մոդել է: Բայց դա կա իմ կոլեկցիայում, գտել եմ հենց այն գերեզմանատան պետի մոտ, ում մասին պատմեցի ընթրիքի ժամանակ: Բայց ես պատրաստ եմ ձեռք բերել այն, եթե կվաճառեք տիկնիկայինը: Մտածեք: Կամ, գիտե՞ք, ինչ... գիտեմ, որ այս առաջարկս ձեզ դուր կգա: Ես գնում եմ ձեր բոլոր հարթուկները: Միանգամից: Քսան հազար կվճարեմ:

**ՄԱՅՐ** - Ա-ա-ա-ա...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չէ, դա... այդքան պետք չէ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ուրեմն համաձայն եք:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Համաձայն եմ: Բայց տիկնիկայինը չի վաճառվում:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - *(փոքր-ինչ չարացած)*: Սա ի՞նչ բան է, եկել եմ այս... ռուսերեն ինչպես է... ծակ... ծակուռը, այս սատանայի տարած կղզին...

**ՄԱՅՐ** - Սաշա:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ցավում եմ, որ այս կղզին ձեզ համար սատանայի է... Ինձ համար այն Աստվածային է, ինչպես աշխարհի բոլոր կղզիները, ներառյալ՝ Անգլիան, եթե այն ընդհանրապես գոյություն ունի:

**ՄԱՐԻԱ** - Անգլիան գոյություն ունի, Սաշա:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Հա՛, իսկ ես գոյություն ունեմ: Ես գոյություն ունեմ, եթե մշտապես դավաճանում եմ իմ խոստումներին, խոստանում ու խաբում եմ... Գոյություն ունեմ, թե՛ ոչ: Ուզում եմ մարդ լինել: Բայց ոչ՝ փողի դիմաց: Պարզապես...

**ՄԱՐԻԱ** - Ես ձեզ հասկանում եմ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Իսկ ես՝ ոչ:

*Ուժգին քամի է բարձրանում:  
Ճայերն ավելի բարձր են ճչում:  
Տճից դուրս է վազում Կոլյան,  
ձեռքին՝ երկու կարմիր դրոշակ:*

**ԿՈԼՅԱ** - Սաշա, պարապիր ինձ հետ, չեմ կարող հիշել «Ժ» ու «Մ» տառերը:

**ՄԱՅՐ** - Կոլյա, հետո...

**ՄԱՐԻԱ** - Դրանք ի՞նչ դրոշակներ են:

**ԿՈԼՅԱ** - Սեմաֆորային:

**ՄԱՐԻԱ** - Ազդանշան եք ուղարկում ծո՞վ:

**ԿՈԼՅԱ** - Հա:

**ՄԱՐԻԱ** - *(Սաշային)*: Նրան սեմաֆորային այբուբենն էք սովորեցնում: Ինչ լավ է: Իսկ ես մանկուց երազել եմ սովորել...

**ԿՈԼՅԱ** - Կարող եմ քեզ ցույց տալ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Լսեք, փողն ինձ մոտ է: Քսան հազար: Հենց հիմա կարող եմ վճարել: Հիմա վճարում

եմ, իսկ առավոտյան մենք կմեկնենք, հարթուկները կբարձենք նավակի մեջ ու կգնանք: Իսկ դուք կմնաք՝ հարուստ ու երջանիկ: Մտածեք:

**Քանու նոր պոռթկում:** Գալիս է տարեց, մի քիչ խմած հորեղբայր Վանյան:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Փոթորիկի նախագգուշացում: Վաղվա համար հայտարարված է փոթորիկի նախագգուշացում... Ոչ մի տեղ էլ չեք մեկնի:

**ՄԱՅՐ** - Իվան, բարև: Կոլյա, բարևիդ հորեղբորդ:

**Կոլյան դժկամ մոտենում է հորեղբորը, ընթացքում շրջվելով եղբոր կողմը, իսկ նա կանգնած է՝ գլուխը կախ:**

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Ողջույն, Կոլյա, կյանքդ ո՞նց է: Իսկ դու, Սաշա, ինչո՞ւ չես բարևում: Ձեռք չես տալիս:

**Հարթուկողը բարձրացնում է գլուխը՝ կարմրատակել է, դողում է:**

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ու չեմ տա:

**Հարթուկողը շրջվում, վազում է դեպի ծովը: Մայրը փորձում է մրան կանգնեցնել, բայց նա արագ անհետանում է:**

**ՄԱՅՐ** - Ներիդ նրան... Ծանոթացեք, սա Իվանն է:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Իվան, կարելի է՝

Վանյա: Տիկիննն... *(Համբուրում է Մարիայի ձեռքը):* Տիկիննն...

**Պրոֆեսորը Իվանի ափից ազատում է կնոջ ձեռքն ու մեկնում իր, ոչ այնքան բարեհամբույր ձեռքը:**

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Պոլ:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Ինչ՞ պոլ:

**ՄԱՅՐ** - Պոլ... էդպես անուն է... անգլիական:

**ՔԵՌԻ** - Հա... Պոլ... այսինքն՝ Պավել: Իսկ ես՝ Իվան: Տես, է, եթե երկուսիս անունները միացնեն, կստացվի Իվան-Պավել... Իոհան-Պավել Երկրորդ՝ ոնց որ հանգուցյալ Հոռմի Պապը: Հանգուցյալ Պապը... Ես՝ Իոհան, իսկ դու՝ Պավել... Լրիվ համապատասխանության համար պետք է, որ մեզնից մեկը դառնա պապ, մյուսը՝ հանգուցյալ: Ինձ համար պապ լինելն արդեն ուշ է, հիսունս ապրել եմ, իսկ երեխա չկա... ուրեմն՝ ես կլինեմ հանգուցյալը... հոռմեական, իսկ դու, Պոլ, կլինես Պապ... տես, թե ինչ գեղեցկուհի կին ունես... մեկին կծնի...

**ՄԱՅՐ** - Իվան, խնդրում եմ քեզ...

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Ջոն-Պոլ, իսկ ֆրանսերեն՝ Ժան-Պոլ... ոնց որ Բելմոնդոն...

**ՄԱՅՐ** - *(Մարիային ու Պոլին):* Դուք ներեք նրան... նա ընդհանրապես չի խմում:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Խմում եմ, խմում... Ի դեպ, պրոֆեսոր...

**ՄԱՅՐ** - Իվան:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - *(Կոլյային բարձրացնում, պտտում է):* Ա-ա-ա... Ես, ըհը, նրանց հորեղբայրն եմ: Հորեղբայր Վանյան: Առաջ ինձ սիրում էին եղբորս տղաները՝ Կոլկան ու Սաշկան: Իսկ հիմա՝ չէ, հիմա չեն սիրում: *(Սայթաքում, հազիվ է մնում ոտքի վրա:)*

**ՄԱՅՐ** - Իվան, թող նրան... Կոլյա, տուն գնա:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Չէ, չէ... էդ ո՞ր, արի, ես քեզ ցույց տամ, ոնց պետք է դրոշակներով... *(Կոլյայի ձեռքից վերցնում է դրոշակները:)* Տես, սա «Ա» տառն է...

**Քեռին փորձում է ցույց տալ, բայց ուժեղ է թափահարում ձեռքերն ու ընկնում է գետնին: Կոլյան տուն է վազում, Մայրը հետևում է նրան:**

**ՄԱՐԻԱ** - Թեղեք, ձեզ օգնեմ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Պետք չէ, Մաշա, ինքը կբարձրանա:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Այ, էդտեղ դու ճիշտ ես, կբարձրանամ: *(Դժվարությամբ ոտքի է կանգնում:)* Ցավում է:

**ՄԱՐԻԱ** - Ծանո:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Չէ-է... *(Բռունցքով խփում է կրծքին:)* Էստեղ է ցավում... էստեղ է վնասվել... հոգում: Սալջարդ: Պոլ, արի խմենք, հը:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ոչ, ես...

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Խնդրում եմ:

**ՄԱՐԻԱ** - *(Պրոֆեսորին):* Ինչ կա՞ որ, խմիր նրա հետ, կթեթևանաս:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Այստեղ խմելու չեն եկել, ես ուզում եմ գնել այդ սատանի հարթուկն ու գնալ... գրողի ծոցը:

**ՄԱՐԻԱ** - Սկսել ես հայիոյել ռուսի պես... Պետք չէ, շուրջդ մարդիկ են, ոչ թե հարթուկներ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Իսկ ես դրանում համոզված չեմ:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Լավ կոնյակ ունեմ, չհրաժարվես, Պոլ... Ու հետո, դու Հոռմի Պապը չես:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Ես պիտի խոսեմ այդ տղայի հետ:

**ՄԱՐԻԱ** - Մնա այստեղ, ինքս կփնտրեմ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Որ գտնես՝ փորձիր համոզել նրան:

**Մարիան գնում է ծովի կողմը: Քամին ոռնում է:**

**ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Ծովափ. սկսվում է փոքրիկը: Մթնշաղ: Քամի: Ջարդված նավակի բեկորներ: Հեռվում, բեմի խորքում՝ Հարթուկողի տան ուրվագիծը, երևում են դրոշակա-ձողերը:**

**Հարթուկողն ու Մարիան:**

**ՄԱՐԻԱ** - Ցուրտ է:

Մարիան պայուսակից հանում է սիգարետի տուփն ու կրակայրիչը: Հարթուկողը պիջակը գցում է Մաշայի ուսերին:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ծխում եք:

**ՄԱՐԻԱ** - Արի դու-ով խոսենք, լավ: Ծխում եմ: Ամուսնուցս գաղտնի: Պրոֆեսորին դուր չի գալիս, չէ որ մենք առողջ կենսակերպով ենք ապրում:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Պարզ է:

**ՄԱՐԻԱ** - Դժվար քեզ համար պարզ լինի:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինձ համար պարզ է... դուք... դու եկել ես ինձ համոզելու, որ վաճառեմ հարթուկը:

**ՄԱՐԻԱ** - Ճիշտ է, եկել եմ, բայց չեմ համոզի: Ընդհակառակը, հետաքրքիր կլինի, եթե բացառություն լինես:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Բացառություն ինչից:

**ՄԱՐԻԱ** - Քանի անգամ եմ տեսել, թե Պոլն ինչպես է գնել մի բան, որը չի վաճառվել: Ոնց էլ լինի, նա միշտ ստացել է իր ուզածը:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - ...քեզ էլ:

**ՄԱՐԻԱ** - (*հազում է*): Ես... ես... ես չեմ վաճառվել:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Սերեցեք... դա նկատի չունեի:

**ՄԱՐԻԱ** - Իսկ ի՞նչ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չգիտեմ:

**ՄԱՐԻԱ** - Գիտես:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չգիտեմ:

**ՄԱՐԻԱ** - Կարծում ես, հմայվել եմ հարուստ արտասահմանցիով, հա՛:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (*ուշադիր գննելով նրան*): Իսկ դուք... դու ուրիշ ես: Այստեղ, ինձ հետ, ուրիշ ես: Այնտեղ՝ տան մոտ, ուրիշ էիր: Ինչպես է ամեն ինչ փոխվում: Սերիր...

**ՄԱՐԻԱ** - Չէ, ես ուրիշ չեմ, ես իսկապես հմայվել եմ, հենց այդպես: Փոքր էի, ինձ ծաղրում էին, կենոնեխ էին ասում: Սիհար էի ու այ, այսքան քթով: Խոսում էի, ասես կտցահարում էի: Հայրս խմում էր, ու բոլոր տղամարդիկ, ում փոքրուց տեսել եմ, բոլորը հարբած էին: Ես այնքան երկար եմ վախեցել այդ ամենից, որ մինչև տասնհինգ տարեկան չէի կարողանում սիրահարվել: Դե, ոչ մի կերպ... Նույնիսկ գիշերները

լաց էի լինում: Այնպես էի ուզում...  
զոնե մեկին... թեկուզ շիկահեր մի  
շնիկի: Աղոթում էի Աստծուն: Ու  
աղոթքս տեղ հասավ: Մի տղա  
էր, լավը... ի դեպ, քեզ էր նման:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Եվ ի՞նչ:

**ՄԱՐԻԱ** - Ոչինչ: Նրան չորս անգամ  
եմ տեսել: Մի անգամ մեզ մոտ  
թատրոն եկավ, երկրորդ անգամ  
դիսկոտեկում՝ ինչ-որ ապուշ ե-  
րաժշտության տակ դանդաղ պա-  
րում էինք ու սիրտս թփրտում էր  
ինչ-որ տեղ ծնկներումս, և ուզում  
էի՝ վերջս գար, այնքան որ լավ էի  
զգում ինձ: Հետո կինո հրավիրեց:  
Պատերազմի մասին ֆիլմ էր:  
Միայն մենք էինք վերջին շար-  
քում: Ամբողջ ժամանակ աչքերս  
կկոցում էի, դատարկություն էի  
կուլ տալիս. համբույրի էի սպա-  
սում: Բայց նա շատ էր տարվել  
կրակոցներով:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Իսկ չորրորդ անգամ:

**ՄԱՐԻԱ** - Կարդացել ես Բունինի  
«Թեթև շնչառությունը»:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Դպրոցում:

**ՄԱՐԻԱ** - Վերջին անգամ հանդի-  
պեցինք կայարանում: Ծնողների  
հետ Գերմանիա մեկնեց:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Իսկ ի՞նչ կապ ունի  
թեթև շնչառությունը:

**ՄԱՐԻԱ** - Իսկ ինձ անընդհատ թվում  
էր, թե ես Օյա Մեչչերսկայան եմ,  
որ հիմա ինչ-որ մեկը դուրս կգա

զնացքից ու կզնդակահարի ինձ:

Մի ինչ-որ տգեղ ենթասպա:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինչո՞ւ... ինչո՞ւ ենթա-  
սպա:

**ՄԱՐԻԱ** - Չգիտեմ, հոգնեցի ապրե-  
լուց: Ենթասպամ... ալեբարդա,  
ռևուլվեր... չգիտեմ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ալեբարդամ... (Ծիծա-  
ղում է:) Գիտե՞ս, ինչ է ալեբար-  
դան: Ծատ հին ծակող-կտրող  
զենք է, դեռևս 17-րդ դարում  
արդեն հնացած: Բունինի պորու-  
չիկը ոչ մի ալեբարդա չուներ ու  
չէր կարող ունենալ:

**ՄԱՐԻԱ** - Ինձ համար միևնույն է,  
այդ բառն է ինձ դուր գալիս՝ ալե-  
բարդա:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Որովհետև այն հան-  
գավորվում է բակենբարդի հետ...  
Իսկ ի՞նչ եղավ հետո:

**ՄԱՐԻԱ** - Հետո՞... Ոչինչ: Խելքի եկա:  
Մի քանի տարի հետո: Երբ առա-  
ջին անգամ տեսա Պոլին, թվաց՝  
կյանքումս առաջին անգամ եմ  
տղամարդ տեսնում: Նա եկավ  
ներկայացման հաջորդ օրը:  
Վարդակակաչների խրճով: Նա  
այնպիսին էր... չգիտեմ, ինչպես  
բացատրեմ... անգամ «իդեալա-  
կան» բառը տեղին չէ, որովհետև  
ֆիլմի բառ է, իսկ նա իսկական  
է... հասարակ, ուժեղ: Ես մի տե-  
սակ շատ արագ... լցվեցի նրա-  
նով: Նա այնպիսի հեշտությամբ

փոխեց իմ կյանքը, ինչպես տիկնիկային թատրոնում փոխում են դեկորները: Մի ժամում: Միանգամից: Եվ այդ զգացումը, որ նախկինում երբևէ չէր եղել... հրաշքի զգացումը: Ինչպես բույր... լսում ես հրաշքի բույրը: Այնպես որ, ես հրապուրվեցի: Սիրահարվեցի: Ուժգին: Արտասովելու աստիճան: Ու մենք մեկնեցինք: Դրանից հետո առաջին անգամ եմ հայրենիքում... Ահա... Ժամանակ անց հասկացա, որ այն մարդը... վարդակակաչներով... նա մի քիչ տարբեր է (*ձեռքով ցույց է տալիս տան կողմը*) պրոֆեսոր Պոլ Ծեկլիից, հարթուկների կոլեկցիոներից: Նա լինում է հաշվենկատ, խիստ, երբեմն անգամ... անսիրտ է թվում, բայց դա... միայն թվում է, դա նորմալ է: Տղամարդը պիտի խիստ լինի: Դա ինձ դուր է գալիս: Հա, դուր է գալիս:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Կարծես ինքդ քեզ համոզում ես:

**ՄԱՐԻԱ** - Չեմ համոզում, ես նրան սիրում եմ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ես այդ մասին չէի հարցնում:

**ՄԱՐԻԱ** - Իսկ ես կարող եմ հարցնել: Ինչ խոստումների մասին էիր ասում: Ինչ ես խոստացել ու չես կատարել:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Այդպիսի խոստումներ

չատ են եղել: Տարբեր: Ինչպես բուլրի մոտ:

**ՄԱՐԻԱ** - Բայց և այնպես...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Տարեցտարի ինձ խոստացել եմ, որ ահա... հաջորդ դպրոցական երեկոյին կմոտենամ նրան ու կասեմ, որ սիրում եմ: Դա շարունակվեց հինգ տարի:

**ՄԱՐԻԱ** - Եվ ինչ... այդպես էլ չասացիր:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չէ, ինչո՞ւ... ասացի: Բայց ոչ երեկոյի ժամանակ: Մի անգամ աշնանը, դասերից հետո: Հիշում եմ, անձրև էր մաղում, թե ձյուն... Ասես ասեղները ծակծկում էին երեսդ... Պարզապես մոտեցա ու ասացի: Անսպասելի: Ինքս էլ չհասկացա՝ ինչպես: Իսկ նա (*ծիծաղում է*) նայեց ինձ... ու կամաց ասում է՝ քաշվի էստեղից: Առանց վիրավորելու, հանգիստ՝ քաշվի էստեղից: Առանց չարության: Ոնց որ շանը...

**ՄԱՐԻԱ** - Եվ ինչ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Թեթևացա: Մի վայրկյանում ամեն ինչ ցնդեց, անէացավ: Կար ու՛ վերջ: Ոչ մի սեր: Ու պետք էր այդքան համբերել: Ընդամենը՝ «քաշվի էստեղից», ու վերջ, ազատ ես:

**ՄԱՐԻԱ** - Իսկ ուրի՞շ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինչ՞ ուրիշ:

**ՄԱՐԻԱ** - Էլ ինչ ես խոստացել:



**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չգիտեմ... ոչինչ:  
 Հորս խոստացել եմ, որ հետը ծով եմ գնալու: Փոքրուց ծովը չեմ սիրում: Բոլոր տղաներն էլ երազում էին ձկնորս դառնալ, խնդրում էին հայրերին, որ իրենց էլ ծով վերցնեն, աղաչում էին, իսկ ես՝ ոչ մի անգամ: Ես ծով էլ չեմ սիրում: Ալերգիա ունեմ: Ես ընդհանրապես ցամաքային եմ... Իսկ այդ օրը հայրս ինձ ուզում էր հետը տանել: Գնանք, ասաց, կօգնես, որ Կոլյային նվեր ընտրենք:

**ՄԱՐԻԱ** - Մանկական երկաթուղի:  
**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (մի քիչ չարացած):

Էլ ինչ է մայրս պատմել:

**ՄԱՐԻԱ** - Զեզ մեղադրում ես, որ նրա հետ չեմ մահացել:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ես կարող էի նրան օգնել ու ոչինչ չարեցի: Ոչ ջրում, ոչ ցամաքի վրա: Ես ոչինչ չարեցի:

**ՄԱՐԻԱ** - Որքան կարելի է... դու ոչ մի մեղք չունես: Վերջ տուր այդ ինքնադատաստանին:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ես մեղավոր եմ, որ չկարողացա այդ այլանդակին ստիպել, որ փրկարար բրիգադ ուղարկեր...

**Քամին ուժգնանում է: Նրանք համարյա գոռում են, որ լսեն միմյանց:**

**ՄԱՐԻԱ** - Փոթորիկի գիրկը... որ նրանք էլ զոհվեին:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինձ համար մեկ է, միայն թե նա փրկվեր: Գոնե փորձեին:

**ՄԱՐԻԱ** - Կարծում ես, նա երջանիկ կլիներ, եթե բոլորն էլ մեռնեին...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (գոռում է): Ինձ ինչ, թող գոնե փորձեին: Այդ ժամանակ ես երջանիկ կլինեի...

**ՄԱՐԻԱ** - Ու դու կկարողանայիր:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չգիտեմ:

**Մի պահ քամին հանդարտվում է: Նրանք ծանր շնչում են, ասես բռնցքամարտի ռաունդից հետո: Դեմքներին աղև կաթիլներ են:**

**ՄԱՐԻԱ** - Եթե անգամ գլուխս անցներ,- մտածեց Ալիսան,- օգնես ինչ: Ո՞ւմ է պետք գլուխն առանց ուսերի:

**Նրանք լռում են:**

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ալիսայից բացի ուրիշ դեր ունեցել էս:

**ՄԱՐԻԱ** - Այո, ծովաստղի դերը «Կապիտան Նեմո»-ում:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ծովաստղի:

**ՄԱՐԻԱ** - Այո:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Եվ ինչ էր անում աստղը:

**ՄԱՐԻԱ** - Պառկած էր: Հատակին: Իսկ դու... հարթուկներից ու դրոշներից բացի էլի ինչ-որ բան սիրում ես:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չէ:

**ՄԱՐԻԱ** - Իսկ երաժշտությո՞ւն:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Երաժշտությո՞ւն... չէ:

Լա իրար է խառնում իմ կյանքը, առանց այն էլ երկրի ու երկնքի մեջտեղում եմ: Ինձ պետք է հողին կպած լինել, աղյուսներ ոտքերիս կապել, իսկ երաժշտությունը... կարծես նստած ես հրթիռի ներսում... թռիչքից առաջ... դուրս գալ չի կարելի, ու անհայտ է՝ կայաթփի հրթիռը, թե՛ վեր կսլանա: Ես վախենում եմ երաժշտությունից... Իսկ բանաստեղծություն... մի քիչ էլ ես եմ գրել:

**ՄԱՐԻԱ** - Իսկապե՞ս... գուցե մի բան կարդա՞մ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չէ:

**ՄԱՐԻԱ** - Ինչո՞ւ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չեմ հիշում: Համ էլ՝ հիմարություն է:

**ՄԱՐԻԱ** - Հիմարություն չէ: Կարդա, ես շատ եմ սիրում բանաստեղծություն լսել: Խնդրում եմ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ասացի՝ չէ: Երբեք ոչ մեկին այդ զառանցանքը բարձրաձայն չեմ կարդացել:

**ՄԱՐԻԱ** - Դու ինձ տեսնում ես առաջին ու վերջին անգամ, այստեղ, մեզնից բացի, ոչ ոք չկա: Ափն ամայի է: Փոթորիկ: Իմ կարծիքով, սրանից հարմար տեղ ու ժամանակ չկա... Եթե ամաչում ես՝ կշրջվեմ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Կշրջվե՞ս:

**ՄԱՐԻԱ** - Խոստանում եմ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Լավ, ու չնայես:

**Մարիան շրջվում է: Հարթուկողը երկար զննում է նրան, հետո մտտեմում ու համարյա ականջին հաված կարդում է բանաստեղծությունը:**

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Եթե ուտելու ոչինչ չկա, դու փորձիր

ծխել, բայց մեզ մոտ չի մնացել

ծխելիք. արի ինձ մոտ,

իմ ուրախություն

արի քնենք

եթե ծխել չի կարելի, դու փորձիր

երգել բայց մեզ մոտ չի մնացել

երգելիք. արի ինձ մոտ

իմ ուրախություն

արի քնենք

եթե երգել չի կարելի դու փորձիր

մահանալ բայց մեզ մոտ

ոչինչ չի մնացել

մահից. արի ինձ մոտ

իմ ուրախություն

արի քնենք

եթե մահանալ չի կարելի

դու փորձիր

երազել բայց մեզ մոտ

ոչինչ չի մնացել

երազներից (արի ինձ մոտ

իմ ուրախություն

Արի քնենք:

**Հարթուկողը բռնում է Մարիայի ձեռքը, դեմքը արագ շրջում իրեն ու համբուրում է շուրթերը:**

**ՄԱՐԻԱ** - Չէ, պետք չէ... Ես վաղուց տանը չեմ եղել. գլուխս պտտվում է: Պետք չէ: Ես, ախր, այստեղ եմ ծնվել, հարյուր կիլոմետր չկա... Քանի տարի է՝ մեր տանը չեմ եղել... Ինչ այստեղից գնացել եմ: Իսկ սա... խելահեղություն է, կանցնի: Պետք չէ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Դու, անշուշտ, զարմանում ես,- ասաց հերցոգուհին,- ինչու չեմ գրկում քո իրանը: Ճիշտն ասած, ես կասկածում եմ քո ֆլամինգոյին: Թե՛ գուցե փորձեմ: *(Գրկում է նրան:)*

**ՄԱՐԻԱ** - *(փորձելով ազատվել նրա գրկից):* Հերիք է մեջբերեք այդ հեքիաթը, թե չէ կխելագարվեմ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - *(ժպտալով):* Ոնց որ այն տղան լինեմ, ով քեզ այդպես էլ չհամբուրեց կինոթատրոնում...

**ՄԱՐԻԱ** - *(թույլ ժպտում է):* Իսկ ես այն աղջիկը, ով մեկ անգամ էլ ասում է «քաշվիր էստեղից»:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Դե, նա հենց այնպես... հիմար էր:

**ՄԱՐԻԱ** - Ո՛վ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Աղջիկը:

**Մարիան ետ է քաշվում: Նրանք քայլում են ասիով, լռում են:**

**ՄԱՐԻԱ** - Լավ բանաստեղծություն էր:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Հա, Կամմինգսն է, ամերիկացի բանաստեղծ:

**ՄԱՐԻԱ** - Ի՛նչ, ուրեմն, քոնը չէ՞ր...

Դու ծաղրում ես ինձ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չէ, պարզապես ուզեցի տպավորություն գործել:

**ՄԱՐԻԱ** - Գործեցիր:

**Լռում են:**

**ՄԱՐԻԱ** - Ինչո՞ւ ես ապրում այս ծակուռում, ինչո՞ւ քաղաք չես տեղափոխվում:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Բազմաբնակարան շէնք:

**ՄԱՐԻԱ** - Ինչո՞վ է վատ բազմաբնակարան շենքը:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Այնտեղ ձեղնահարկ չկա, իսկ այստեղ հին, կիսավեր խրժիթներում, փայտե ու քարե տներում, որոնցից ամեն մեկը ամենաքիչը հարյուր տարի առաջ է կառուցվել, ձեղնահարկ կա: Հին նամակներ, լուսանկարներ, տիկնիկներ, հարթուկներ, առնետներ...

**ՄԱՐԻԱ** - Առնետների պատճառով ես մնում:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինչ է՞ որ... պակամ պատճառ է:

**ՄԱՐԻԱ** - Դե, պարզապես...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Իսկ այստեղից կարելի է ընդհանրապես գնալ ինչ-որ տեղ:

**ՄԱՐԻԱ** - Բայց նավակները գնում են, չէ՞...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Նավակները: Երբ

ասացի «այստեղից», նկատի ունեի սա (*ցույց է տալիս կուրծքը*): Տեղերի տեղափոխումից գումարը չի փոխվում: Ինքս ինձնից ոչ մի տեղ չեմ գնա:

**ՄԱՐԻԱ** - Քեզ կոմս Մոնտե Զրիստո՞ ես համարում:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ես ինձ Իֆ դոյակ եմ համարում: Ու հետո, կղզին իմ ծեսերի համար իդեալական վայր է: Էլ որտեղ կարող եմ դրոշներ բարձրացնել:

**ՄԱՐԻԱ** - Նայիր...

**Բենի խորքում՝ տան տանիքին, մառախուղի միջից երևում է Հորեղբոր ուրվագիծը: Նա թափահարում է դրոշակները, նշան է տալիս:**

**ՄԱՐԻԱ** - Ինչ է ասում:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (*խուլ ձայնով*): Ոչինչ:

**ՄԱՐԻԱ** - Խնդրում եմ, ասա...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (*կրկնում է նրա շարժումները*): Ասում է... ներիր ինձ... ներիր ինձ... ներիր ինձ...

**Գաղար:**

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ես սիրում էի նրան...

**ՄԱՐԻԱ** - Խղճո՞ւմ ես նրան:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինձ եմ խղճում: Իսկ նա պարզապես հարբած է:

**ՄԱՐԻԱ** - Ինչո՞ւ եք ձեզ այդպես տանջում:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Նա պարզապես հարբած է:

**Հորեղբոր ուրվագիծն անհետանում է մշուշում:**

**ՄԱՐԻԱ** - Վերադառնանք:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Իմ մեջ ու ինձնից դուրս քանդվում է

*թղթախաղե կամուրջը*

*ու հիմա չգիտեմ՝ ինչ*

*ուղղություն ունի օստը*

*և ուր գնա, եթե նշած կետը*

*իստն է*

*ներսումս քահելական ու սուր*

*սուլոց է*

*և թևերի բախյուն, և շերշնեյ-ի*

*ու կրեստի բզզոց*

*շուրթերիս քարանում է աղոթքը՝*

*անկապ. Աստված,*

*գոնե հասկանամ, ո՞վ*

*կպատասխանի այս*

*հեշտ հարցին՝*



ինչո՞ւ բոլոր աղոթքները  
 խտացված են  
 տարողունակ SOS-ի մեջ...  
 Դե, իսկ ես քանդում եմ հյուսված  
 մազերի լռությունը  
 դրա համար էլ լսվեց սուլոցն ու  
 քանդվեց կամուրջը  
 ու ոչ թե SOS, այլ  
 շնորհակալություն  
 իստի ու օստի համար:

Ես գնում եմ կամրջով: Դու ես  
 իմ միակ կամուրջը:  
**ՄԱՐԻԱ** - Գեղեցիկ է: Դա էլ ամերի-  
 կացի բանաստեղծ է:  
**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Չէ:  
**ՄԱՐԻԱ** - Իսկ ո՞վ է:  
**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Վերադառնանք:

**ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ**

Հարթուկողի ընտանիքի տունը: Մենյակ: Անկյունում՝ մահճակալ,  
 կենտրոնում՝ երկու աթոռ, սեղան, վրան՝ օդու շիշ ու երկու բաժակ: Մեղանի  
 վերևում, առաստաղին՝ դռնակ է, որը տանում է տանիք: Դռնակը բաց է,  
 նրան հենած է սանդուղք, որը դրված է սեղանին, օդու շիշ կողքին:  
 Մանդուղքով իջնում է Հորեղբայր Վանյան, ցատկում նախ՝ սեղանին, հետո՝  
 հատակին: Նա հարբած է, ձեռքին տափաշիշ է: Աթոռին նստած  
 Պրոֆեսորը հարբած քնած է:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Նա ինձ երբեք չի  
 ների: (Նստում, օղի է լցնում:  
 Պրոֆեսորին.) Ի՞նչ անեն: Ինձնից  
 տարիուկես փոքր էր, բայց  
 բակում բոլորը վախենում էին  
 նրանից: Բոլորը: Անգամ բարձր  
 դասարանցիները: Մի մատ էր,  
 բայց բոլորի հախից գալիս էր:  
 Մենք հերթապահում էինք:  
 Ամանները լվանալու ցուցակ  
 կար: Հայրը՝ ծովում, մայրը՝  
 աշխատանքի, իսկ մենք, ուրեմն,  
 տանը... Դե, ուրեմն, գալիս է  
 Միշկան ու ասում՝ հանրահաշվի

խնդիրը լուծիր, իսկ ես քո  
 փոխարեն այսօր ամանները  
 կլվանամ: Ասում եմ՝ դե, լվա: Իսկ  
 նա՝ սկզբում՝ դու: Դե, ես էլ  
 ապուշի նման, անում եմ: Ըհը,  
 ասում եմ, լուծել եմ: Իսկ նա  
 վերցնում է տետրը, հեռու է  
 փախչում, խրխնջում ու ձենը  
 գլուխը գցում՝ լուծեցի՞ր, իսկ հիմա  
 ամանները լվա: Մի անգամ  
 չհամբերեցի, ախր, վիրավորա-  
 կան է, ու հիմնականում ինքս ինձ  
 համար, որ էդքան ապուշ եմ,  
 ամեն անգամ խաբվում եմ, ու

հարձակվեցի վրան, իսկ Միշկան ձարպիկ էր, դուրս պրծավ, ընկավ վրաս ու սկսեց խեղդել պիոներական վզկապով: Հենց էնպես չէ, որ ձև է անում, իսկապես է խեղդում՝ ցավում է, սարսափելի է, շունչս կտրվում է, աչքերս դուրս են պրծել, ուզում եմ ձեռքերը պոկել վզիցս, իսկ նա խեղդում է, սրիկան, մեռնելու աստիճան է խեղդում, ու վերջ: Ու հանկարծ դարակի վրա ձեռքս կպավ ցիրկուլին ու ես, մտածելու ժամանակ չկար, շատ էի ուզում ապրել, վերցրի ու խրեցի ուղիղ քամակը: Միշկան հո չգոռաց, ընկավ հատակին, վախեցա, մտածեցի, կարող է՝ վնասել եմ... տղամարդկային մասով... բայց ոչինչ, կենդանի մնաց: Իսկ նոր վզկապ ստիպված գնեցինք, հինը էնպես էր ձգել, դարձրել էր բինտ: Կամ էլ էս մեկը... Ծատ փոքր էինք: Նրա սիրած զբաղմունքն էր՝ իջնում էր նկուղ, վերցնում սատկած առնետն ու ընկնում մեր ետևից: Առնետի պոչից բռնած՝ մեր քիթն էր խոթում, իսկ մենք հո չէինք վախենում... հանգուց-յալներից: Այսինքն՝ առնետներից: Բնականաբար, արանքը ձղում էինք, փախչում, գոռոռում,

իսկ դա նրա ուզածն էր: Ու որտեղից էդքան ուժ, հո չէր մեզ հետապնդում, մինչև շունչներս կտրվում էր: Իսկ ես վատ վազող էի... լինում էր՝ զգում եմ, որ սիրտս դուրս է թռչում, կողս ծակում է, էլ վազել չեմ կարող: Ցած եմ գլորվում, իսկ ինքն իր առնետով արդեն կողքիս է, իսկ ես գոռում եմ՝ Միշա, այսր, ես քո եղբայրն եմ, քո եղբայրն եմ... Պետք չէ: Իսկ նա՝ հետո՞ ինչ, դու պիտի վազես բոլորի նման... Նա ինձ երբեք չի ների... Փոխարենը եթե մեկնումեկը ինձ կպներ բակում՝ վերջ: Միշան կսպաներ: Հենց էդպես՝ կսպաներ: Տանը ինձ հարթուկում էր, ոնց կարողանում էր: Իսկ բակում քանիսին է տփել իմ պատճառով: *(Խմում է օղին:)* Չի ների: Սաշա: Հետո սիրահարվեցի, սկսեցի ուղեկցել, ծաղիկներ, կոնֆետներ... ու մի օր, հիմարի մեկը, տուն բերեցի՝ ծնողներիս հետ ծանոթացնելու: Իսկ Միշան տեսավ նրան ու... վերջ: Իրեն կորցրեց: Ասում է՝ Իվան, ների՞ր ինձ, բայց էդ աղջկան ձեռիցդ կխլեմ, որովհետև էդպես չի լինի... առանց նրան չեմ կարող... չեմ ապրի: Նա իմ երեխաներին

պիտի ծնի: Ու ձեռքիցս խլեց:  
 Խլեց սրիկան: Որովհետև  
 իսկապես չէր ապրի: Էդ էր  
 Միշան: Ինչ անեմ, որ նա ինձ  
 ների: Գնամ խեղդվեմ:

**Գալիս է Մայրը:**

**ՀՈՐԵՂԱՅՐ** - Պրոֆեսորին էի  
 պատմում, թե ոնց Միշան քեզ  
 խլեց:

**ՄԱՅՐ** - *(նայում է պրոֆեսորին):*  
 Տեր Աստված, նա վաղուց քնած  
 է, հարկավոր է պառկեցնել:  
 Հիմա կգամ: *(Գնում է:)*

**ՀՈՐԵՂԱՅՐ** - Իսկ մի անգամ  
 ծամփով գնում էինք, թե ինչո՞ւ եմ  
 դա հիշում... Պարզապես քայլում  
 էինք ու լռում: Իրիկնանում էր:  
 Զրափոսերում նարնջագույն  
 լապտերներ... Չգիտեմ, ես չոր  
 մարդ եմ, բայց հանկարծ...  
 էնպիսի գեղեցկություն տեսա, էն-  
 պիսի ներդաշնակություն զգացի,  
 ոնց որ հարբած, կամ խելագար...  
 Նայում էի ոտքերի տակ, իսկ մեր  
 կոշիկների տակից ցեխաջուրն էր  
 ցայտում... Գեղեցիկ էր: Ու էնպես  
 սիրտս մրմռաց, կարծես թե...  
 Պրոֆեսոր, մի տեղ կարողացել եմ,  
 որ երջանկությունը քիմիական  
 ռեակցիա է... երբ արյունը եռ է  
 գալիս... ու կյանքում մի անգամ է

լինում: Ամեն մարդու կյանքում մի  
 անգամ արյունը եռում է: Դու  
 պիտի բոլորի պես վազես: Մեկ  
 անգամ... ու ես նայեցի նրան,  
 Միշային, իսկ նրա դեմքին  
 կարմրավուն ցուլքեր էին: Ծունչս  
 կտրվեց՝ փարավուն է, փարավուն  
 ճակատամարտից առաջ, եղ-  
 բայրս փարավուն է, ու էնպիսի մի  
 հպարտություն զգացի, էնպիսի  
 ցնծություն, որ երկուսով քայլում  
 ենք ճանապարհով, ու մեր  
 կոշիկների տակից ցայտող  
 ցեխաջուրը, ու լապտերները, ու  
 ես հասկացա, ոնց արյունս եռաց,  
 ամեն ինչ էնքան լավ էր... Ես  
 եղբայր ունեմ, նա՝ ինձ: Մենք  
 եղբայրներ ենք: Փարավուններ:  
 Պրոֆեսոր, եղբայրը պարզապես  
 արյան հարազատություն չէ,  
 եղբայրը հզոր, միստիկ մի բան  
 է... Եվ ուրիշ եղբայր ես չունեմ:  
 Եղբայրն ասես երրորդ թե է:  
 Չգիտեմ: Էն ժամանակ, էն գիշեր  
 ես երջանիկ էի: Իսկ մենք մի  
 խոսք անգամ իրար չասա-ցինք:  
 Էսպես բաներ, պրոֆեսոր:  
*(Խմում է:)* ...Ու երբ իմացա, որ  
 ինձ չի լսել, ծով է դուրս եկել,  
 էնպես չարացա... Ծատ չարացա,  
 բայց, երդվում եմ, մտածել  
 անգամ չէի կարող, ոչ նա կմեռնի:

Թեև դա էնքան հեշտ բան է: Մարդիկ մեռնում են: Ամեն օր: Այ, հիմա ասում եմ էս ամենը քեզ, պրոֆեսոր, իսկ ինչ-որ մի տեղ (*փակում է աչքերը*) մեռնում է շագանակագույն աչքերով մի պառավ... թոքերի բորբոքումից, կամ էլ մի մանչուկ՝ ավտո-վթարից, ջահել կինը՝ քաղց-կեղից, ու հենց հիմի մի դեռահաս պատուհանից դուրս նետվեց... Մարդիկ մեռնում են: Բայց որ Միշան մեռներ՝ ծիծաղելի էր: Դու պիտի վազես բոլորի նման... Էդ օրը ծով դուրս գալ չէր կարելի, չէր կարելի՝ ոչ ոք չէր կարող վերադառնալ, ոչ մեկը: Ոչ փրկարարների բրիգադը, ոչ ձկնորսները: Նրանից բացի: Նա պիտի լողար, քայլեր ջրի վրայով Հիսուսի պես: Ես չէի հավատում, որ... Ու փնտրում էինք, փնտրում էինք... նավակն արդեն գտել էինք՝ տաշեղ էր դարձել, ուզում էին վերադառնալ, բայց ես գիտեի, որ պետք է փնտրել, որ նա ողջ է... (*համում է:*) Ես մի սխալ գործեցի, պիտի վերցնեի նավակն ու ծով դուրս գայի: Փոթորիկին: Ու էնտեղ էլ մեռնեի: Նրա հետ: Երկուսով: Ինչպես մեռնում են եղբայրները: Բայց ես

մեռնել չէի ուզում, ես ուզում էի նրան սպասել: Ես գիտեի, որ Միշան կվերադառնա: Ես ուզում էի սպասել նրան: Միշտ ինձ է պետք եղել փրկել, ես եմ միշտ եղել թույլը: Ես, ոչ թե նա: Նա ինձ երբեք չի ների...

**Գալիս է Մայրը:**

**ՄԱՅՐ** - Աստված իմ... Վանյա, օգնիր ինձ... նրան պառկեցնել է պետք...

**Մայրն ու Հորեղբայրը բռնում են Պրոֆեսորի ձեռքերն ու ոտքերը, տեղափոխում մահճակալին: Փայլատակում է կայծակը: Ներսեն մտնում Հարթուկողն ու Մարիան: Մարիան նետվում է դեպի Պրոֆեսորը:**

**ՄԱՐԻԱ** - Ինչ է պատահել:

**ՀՈՐԵՂԵԱՅՐ** - Ոչինչ, մի քիչ խմել է ձեր կողակիցը... Վաղը թարմից թարմ կլինի:

**ՄԱՐԻԱ** - Բայց նա երբեք չի խմել:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Երբեք:

**ՄԱՐԻԱ** - Ծատ հազվադեպ: Եթե բան է պատահել... լուրջ բան... Տեր Աստված, այս ամենի պատճառը հարթուկներն են: Ներեցեք մեզ...

**Կրկին փայլատակում է կայծակը: Մթնում է: Լուսավորված է**



**միայն Հարթուկողի ու Հորեղբոր դեմքերը:**

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Խմենք, Սաշա:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ես չեմ կարող, հորեղբայր Վանյա:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Հորեղբայր... դու ինձ ասում ես «հորեղբայր Վանյա»:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Բայց դու հորեղբայրս ես...

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - (լալիս է): Չէ, ժիշտ... (Գրկում է Հարթուկողին):

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Հա: Ներիր ինձ:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - (լալիս է): Պետք չէ:

**Կրկին կայծակի փայլատակում: Դողացող լույսի մեջ կանգնած են Մայրն ու Կոլյան՝ պիժամայով: Կոլյան ամուր գրկել է Մորը:**

**ԿՈԼՅԱ** - Մամ, վախենում եմ:

**ՄԱՅՐ** - Պետք չէ, փոքրիկս, մի վախենա, գնանք քնենք:

**ԿՈԼՅԱ** - Նա ինձ մոտ է լողում, երկաթգծով:

**ՄԱՅՐ** - Ո՞վ:

**ԿՈԼՅԱ** - Նա:

**Կրկին կայծակ: Լույսի շրջանակում Հարթուկողն ու Մարիան են:**

**ՄԱՐԻԱ** - Դու չես կարող:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինչ չեմ կարող:

**ՄԱՐԻԱ** - Փոխել ամեն ինչ: Ես կօգնեմ քեզ: Գնանք մեզ հետ, կամ մենակ գնա: Մի բան արա:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ինչի՞ համար:

**ՄԱՐԻԱ** - Կտեսնես աշխարհը:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Աշխարհը շատ մեծ է, ինձ կղզի է պետք:

**ՄԱՐԻԱ** - Անգլիան էլ կղզի է:

**Մթնում է: Կայծակը լուսավորում է Պրոֆեսորի դեմքը: Նա խոսում է քնի մեջ:**

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Դու գիտես, ես ընդհանրապես չեմ կարողանում... Իսկ քեզ սիրում եմ: Չգիտեմ՝ ինչպես: Ես քեզ չեմ հիշում: Ես տեսնում եմ, որ քո ուզածը ինչ-որ ուրիշ բան էր: Կարծես շղթա՝ մի օղակը մյուսի ետևից... մեկը մյուսի ետևից... Բայց խնդրում եմ քեզ, մի գնա: Տիկնիկային: Զսան գրամ: Ժանյակներ ու կրինոլին... Ու-ու-ու... Մնա, չգնաս:

**Կրկին կայծակի փայլատակում: Լույսը Հարթուկողի ու Մարիայի դեմքերին է:**

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (կատակի տալով): Մնա:

**ՄԱՐԻԱ** - Ինչպե՞ս:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - (ծիծաղում է): Ես չգիտեմ:

**ՄԱՐԻԱ** - (ծիծաղում է): Ես էլ չգիտեմ:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Ապրում ես, ասես

տոնական բուկլետ ես թերթում,  
բայց ոչինչ ընտրել չես կարող...  
Ահա, վերցրու: *(Նրան է մեկնում տիկնիկային հարթուկը:)*

**ՄԱՐԻԱ** - Ոչ, չէ՞ որ խոստացել ես:

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - Խոստացել եմ չվաճառել: Սա նվեր է: Զո աղջիկները սրանով կհարթուկեն իրենց տիկնիկների զգեստները: Թե՛ նրանց համար չձմրթվող կտորից զգեստներ կգնես:

**ՄԱՐԻԱ** - Միայն...

**ՀԱՐԹՈՒԿՈՂ** - *(քիչ մոտենում է նրան):* Միայն՝ ինչ:

**ՄԱՐԻԱ** - Միայն չհամբուրես... խնդրում եմ: Թե չէ չես կարողանա...

**Մթնում է: Կայծակ: Լույսը Մոր դեմքին է:**

**ՄԱՅՐ** - Մարդկանց ոչ մի կերպ չեմ կարող բացատրել, որ պետք է մարդավարի ապրել:

**Նորից մութ ու կայծակ: Լույսը Հորեղբոր դեմքին է:**

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Դու պիտի վազես բոլորի նման:

Որոտ, ուժեղ քամի, ալիքների ռոնեց: Տունը ճոճում ու ճոճվում է, ամեն ինչ շարժվում է: **Կայծակի փայլատակում: Հորդ անձրև: Խավար:**

**ՉՈՐԲՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Ծովափ: Ջրի մակերեսը հարթ է ու հանդարտ: Նավակ: Մարիան, Պրոֆեսորը, Հորեղբայրն ու Կոլյան նավակի մեջ են տեղավորում ճամպրուկները: Մայրն ու Հարթուկողը ափին կանգնած նայում են:**

**ԿՈԼՅԱ** - *(Պրոֆեսորին):* Ու ոչ մի հարթուկ մեզնից չե՞ք գնի:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - *(զլխացավով):* Չեմ գնի:

**ԿՈԼՅԱ** - Բայց ինչո՞ւ:

**ՊՐՈՖԵՍՈՐ** - Դրանք ինձ պետք չեն:

**ՄԱՅՐ** - *(համարյա արտասվում է):* Դե, ոչինչ, ոչինչ... գուցե էլի կգաք... երբևէ...

**ՄԱՐԻԱ** - Գուցե:

**ՀՈՐԵՂԲԱՅՐ** - Նստեք, նստեք...

շտապել է պետք...

**ՄԱՐԻԱ** - Դե, մնաք բարով:

**ՄԱՅՐ** - Մնաս բարով, Մաշենկա:

**ՄԱՐԻԱ** - Մնաս բարով, Կոլյա:

**ԿՈԼՅԱ** - Ըհը:

**Պրոֆեսորը սեղմում է Հարթուկողի ու Կոլյայի ձեռքերը, համբուրում է Մոր ձեռքն ու նստում է նավակը, Հորեղբոր կողքին: Հորեղբայրը առույգ տեսք ունի, բայց՝ թեթևակի թախծոտ: Պրո-**

Ֆետորին տանջում է խումհարը: Մայրը, ինչ-որ բան հիշելով՝ վազում է: Ափին մնում են Հարթուկողն ու Մարիան: Երկար նայում են իրար:

ՄԱՐԻԱ - Դե... ցտեսությո՛ւն:  
ՀԱՐԹՈՒԿՈՂ - Ցտեսությո՛ւն:

Մարիան նստում է նավակը: Հորեղբայրը միացնում է շարժիչը: Հեռանում են ափից: Այն տպավորությունն է, ասես նավակը երկինք է բարձրանում, իսկ Կոլյան ու Հարթուկողը մնում են երկրի վրա: Հայտնվում է Մայրը՝ ճամպրուկով:

ՄԱՅՐ - Մաշենկա, դուք մոռացաք ձեր շարժերը:  
ՄԱՐԻԱ - Ոչինչ, ձեզ մնան, որպես հիշատակ:

նում է հիմն ու միաժամանակ վալս... Հարթուկողի տան մոտ գտնվող բուրբ դրոշածողերի վրա բարձրանում են դրոշներ՝ դրանք Մարիայի շիֆոնե շարժերն են՝ վարդագույն, կանաչ, կարմիր, պուլտ, դեղին, մանուշակագույն... Տանիքին հայտնվում է Հարթուկողը, ձեռքին՝ դրոշակներ: Նա ազդանշաններ է ուղարկում:

ՄԱՐԻԱ - (Հորեղբորը): Ի՞նչ է ասում:  
ՀՈՐԵՂԲԱՅՐ - Հեչ, խառը բաներ...  
ՄԱՐԻԱ - Ի՞նչ խառը բաներ...

Հորեղբայրը տառ առ տառ արտասանում է, իսկ արդեն բառերը որոտում են արձագանքվելով:



ՀԱՐԹՈՒԿՈՂ - Տուն գնամ, ինչ է, - ասաց նա: - Գիշերային օդը վնաս է կոկորդիս: (Մոր ձեռքից խլում է ծամպրուկն ու վազում տան կողմը: Նրան հետևում է Կոլյան: Նավակը դանդաղ պտտվում է դահլիճի վրայով: Մայրը լալիս է:)  
ԿՈԼՅԱ - Դե, մամ, դե, պետք չէ...

ՀՈՐԵՂԲԱՅՐ - Խառը բաներ են...

Շարժերը ծածանվում են քամուց: Տանիքի տակ նարնջագույն կլուն սկսում է կանչել:

Ռուսերենից թարգմանեց  
Կ. Խոդիկյանը

Հնչող երաժշտությունը հիշեց-



## Ալեքսանդր ՄՈՂՉԱՆՈՎ

Գործող անձինք

ԱՆԴՐԵՅ

ՕՔՍԱՆԱ

ՄԵԿԱ

ՄԱՅՐ

# ՄԱՐԴԱՍՊԱՆԸ

### ՄԵՆՅԱԿ

**ԱՆԴՐԵՅ** - Չեմ հասկանում, ինչու, երբ աղոթում ես, անգամ մտքում, լացկանություն է հայտնվում: Ասենք. «Ամենակարող Աստված, աղաչում եմ, ների՛ր իմ մեղքերը»: Մի՞թե նրան անպայման պետք է, որ ես ամեն ձևի դեմը պառկեմ, թավալ տամ կեղտի մեջ՝ կուլ տալով փսիինքս ու ներում խնդրեմ: Ինքը դրանից էներգիա է ստանում: Թե՛ դուրս է գալիս: Մի տեսակ էժան ձև է... Ինչ է, չի՞ կարելի նորմալ խոսել, հասուն մարդու պես: Հա, մեղք եմ գործել, պատահել է, ների՛ր, էլ չեմ անի: Կամ թե համբերության բաժակը

է լցվել՝ պատժիր, օրենքով՝ հարյուր անգամ «Հայր մերը» կարդամ, կամ քառասուն օր պաս պահեմ կամ հարյուր տարի՝ դժոխքում... Բայց որ՝ դրանով հարցը փակենք: Պարտքս վճարեցի, էլ պահանջ չունենաս: Էլ ոչ մի մեղք: Ոչ մի նվաստացում: Արժանապատվորեն: Թե՛ իսկապես դուրը գալիս է, որ իրեն ծառայեն վախկոտ կակղամորթները, որոնք երեխայի նման սողում են ինչ-որ տեղ՝ երկրի վրա ու արցունքները դեմքներին քսմամբ: Մյուս կողմից, ես էլ չեմ սիրում, երբ ինձ Դյուշա են ասում: Ինձ-նից ի՞նչ Դյուշես, կարո՞ղ է՝ կոն-

Ֆետ եմ: Նորմալ անուն կա՝ Անդրեյ Վիտալևիչ, այդպես էլ դիմեք: Դե, նա էլ է ուզում, որ իրեն մարդավարի դիմեն: Այսինքն՝ աստվածավայել՝ մոռոթ գետնին, ծնկի իջած ու լացակումած... Այսինքն՝ ես հասկանում եմ, որ ոչ մի Աստված էլ չկա, ու էս բոլորը հոգեբանական էֆեկտ է՝ աղոթեցիր, ու թեթևացար: Իսկ գուցե և ինչ-որ էներգետիկ խտացում կա տիեզերքում: Ինքդ ես խտացումը: Այ, հենց հիմա հեչ էլ թեթևացած ինձ չեմ զգում: Որովհետև սխալ եմ աղոթում: Ինչ-որ արժանապատվություն... Դու՝ ինձ, ես՝ քեզ: Բանավեճ: Բանակցություններ: «Դուրս արեք տաճարից առևտրականներին»: «Ես առևտուր չեմ անում»: Տեր, աղաչում եմ, ներիր ինձ: Մեղավոր եմ, գրողը տանի... թուհ, ներիր ինձ, Աստված: Վերջս եկել է: Մի բան արա, Տեր: Ինչ մտքովդ կանցնի՝ հազար անգամ «Հայր մերը», կամ մենաստան, կամ նույնիսկ՝ դժոխք, միայն թե Սեկան այսօր չգա: Միայն թե Սեկան...

**ՍԵԿԱ** - Մեր դպրոցում էլ մի Դյուշա կար, միայն նա չաղ էր, երբ կռվում էինք, քաշով ծնշում էր: Իսկ էս մեկը որդի պես նիհար է: Սատանան գիտե, կկարողանամ Մարոնովից փողը պոկել, թե՛ չէ:

Ասում են, Մարոնովը մի շաբաթ է՝ ինստիտուտում էլ չի հայտնվում: Ասա՝ ինչ ես ծակը մտնել, եթե արդեն կրվել ես: Պետք չէր նստել, եթե չես կարող: Իսկ Վիտալյան ասում է, որ էլի երեք օր կսպասի ու իր մտոցիկլը տեղացիներին կվաճառի: Ասում եմ՝ իսկ նրանք ինչքան կվաճարեն. երեսուն, քառասուն... Սա «Մինսկ» չէ ու «Ուրալ» չէ, անգամ «Դնեպր» չէ, սա, ախր, «Հոնդա» է: Աշխարհի ամենալավ տեխնիկան: Ես նույնիսկ պարետի հետ եմ պայմանավորվել երկու հազարով, որ ցախանոցի բանալին տա: Կարող է՝ Վիտալյայի պես սենյակում եմ պահելու, ամեն գիշեր հինգ հարկ վերև եմ քարշ տալու: Իսկ ամառը գյուղ՝ մերոնք կցնդեն... Եթե դեմուդեմ մնան՝ Դյուշան ոնց որ Մարոնովից բռնով է, կարող է և հախից գալ: Իսկ գուցե՝ ոչ: Էն մեր Դյուշան ավելի և՛ավ տարբերակ էր, իր քաշով կծնշեր:

**ՕՋՍԱՆԱ** - Սեկան, իհարկե, փող ունի ու սիրուն է ու էն գործից էլ և՛ավ է: Իսկ կարևորը՝ շատ է ինքնավստահ: Չորս տարի կլինի, որ ինստիտուտից քշել են, ու ոչինչ, պարետի հետ լեզու է գտել, ապրում է հանրակացարանում: Ապրել կարողանում է, դրա համար էլ

ապրում է: Միայն չար է ու երբեք ոչինչ չի նվիրում: Գոնե կինո տաներ, միայն օրերով նստի հանրակացարանում ու թուղթ խաղա:

**ԱՆԴՐԵՅ** - Աստված չկա, էդ բոլոր աղոթքները հենց էնպես է: Սեկան եկավ, հետն էլ իր քաճին բերեց, ոնց էր... Մարինկա, թե՛ Օքսանկա: Բերել էր, որ ցույց տար, թե ինձ ոնց է նվաստացնում, հա՛մ: Աստծու պես ինքն էլ է ձև թափում: Կամ էլ գործով տեղ էին գնում ու ճամփին, ձեռի հետ, եկան ինձ ստորացնելու: Օքսանկան գեշն է՝ աչքերը իրար կպած, ճակատը պզուկոտ, սանրվածքը կառէ, իսկ կուրծք չկա: Ծխում էր, շրջվեց մոխրամանը վերցնելու՝ քամակը սիրուն էր: Դեղին կիթառի աղեղ...

**ՕՔՍԱՆԱ** - Մահձակալին պառկած է ինչ-որ մի չմո՛ շապիկով ու սպորտային շալվարով: Սենյակը՝ կեղտ, սկզբում ուզում էի մոխիրը հատակին թափ տալ, հետո մտածեցի՝ բա որ հրդեհ ընկնի, մի տեղ մոխրամանի պես մի բան պիտի լինի:

**ՍԵՎԱ** - Նայում եմ էդ Դյուշային, ու էնպես եմ չարանում Մարոնի վրա: Փող չունես՝ մի խաղա, ինչ մի բանիս համար ես նստում խաղալու: Իսկ թե կրվել ես՝ վճարիր, ինչ ես պախկվել:

**ԱՆԴՐԵՅ** - Անգամ զարմանում ես, թե ոնց կարող է էսքան սիրուն մոռթ ունեցողը էսքան ոջիլ լինել: Միշտ էլ նրա քաճերը ամենալավն են: Ու սիրում են իրան, բախտն էլ բերում է խաղի մեջ: Մի բոյ չունի, բռունցքներն էլ փոքր են: Նրա սանրվածքը ուզեցի անել՝ ետևը կարճ, առաջը՝ չուկա: Իրեն սազում է, ինձ՝ չէ: Որովհետև նրա մազերը ետ են սանրվում, իսկ իմը աչքերիս է թափվում: Տեսել եմ, թե ոնց է Սեկան կռվում: Մենք ներքևում էինք նստած, հերթափոխի էինք: Գալիս է էդ մորուքավորը, հագին միշտ գորշ ալյասկա է, ոնց որ քսաներկու սենյակի աղջիկների մոտ է բունը: Ուրեմն, վերևից իջնում է իր դեբիլ ալյասկան հագած, մորուքը՝ սև, ոնց որ քրիստոսիկ, ու լույ հարբած: Երևում է՝ աղջիկները խմցրել են ու դուրս քշել: Իջնում է, մարդ է փնտրում, որ բարկությունը վրան թափի: Նույնիսկ չհասկացա, թե ինչ էր էդ քրիստոսիկը ուզում: Ինչ-որ բան ասաց Սեկային: Սեկան տեղից ելավ, հետը դուրս եկավ ու մի հարվածով գետնին փռեց, հետո մի քիչ կոխկրտեց: Վերադարձավ, նույնիսկ շունչը չէր կտրվել: Իսկ բռնցքամարտիկի հե՛տ ոնց կռվեց... Ամբողջ

հանրակացարանը դուրս էր թափվել: Բռնցքամարտիկն արդեն անջատվել է, Սեկան նրան՝ բախ, ու տապալում է: Թվում է՝ վերջ, բայց նա բռնցքամարտիկ է, նա միշտ էլ ոտքի է ելնում: Ավտոմատ: Պիտի որ պառկած մնար, որպեսզի Սեկան էլ ձեռք չտար, իսկ նա նորից ու նորից է տեղից բարձրանում: Արդեն բռլորն են ուզում, որ նա պառկած մնա, իսկ նա բարձրանում է ու բարձրանում: Իսկ Սեկան նրան տապալում է ու տապալում...

**ՕՔՍԱՆԱ** - Սեկան էդ չմոյին ասում է՝ փող ունե՛ս: Իսկ նա՝ գիտես, որ չունեմ: Բայց լրիվ կտամ: Սեկան նրան՝ ոչինչ էլ չես տա: Դու ինձ տասներկու կտոր ես պարտք, էդպես չէ՛:

**ԱՆԴՐԵՅ** - Էդպես է:

**ՍԵԿԱ** - Դու փող չունես:

**ԱՆԴՐԵՅ** - Ես կտամ:

**ՍԵԿԱ** - Մի հատ էլ ասա՝ «ես կտամ»:

**ՕՔՍԱՆԱ** - Ու Սեկան նրան որ չնայեց...

**ԱՆԴՐԵՅ** - Սեկան ասաց, որ Մարոնովը իրեն հիսուն կտոր է պարտք: Ու որ ինքը պատրաստ է հեչ անել իմ տասներկուսը, եթե ես գնամ Օսկոլ քաղաք, գտնեմ Մարոնովին, նրանից վերցնեմ հիսուն կտորն ու բերեմ Սեկային:

**ՕՔՍԱՆԱ** - Սեկան հանեց հարյուրանոց, հիսունանոց ու տասնոց, հարյուր վաթսուն ռուբլի, ու տվեց նրան: Ո՞նց է քեզ համար...

**ՍԵԿԱ** - Ավտոբուսի տոմս կգնես:

**ԱՆԴՐԵՅ** - Բա որ չտամ:

**ՍԵԿԱ** - Որ չտա՝ կսպանես:

**ԱՆԴՐԵՅ** - Ո՞նց:

**ՍԵԿԱ** - Ոնց ասես... օրինակ՝ դանակով: Դանակ ունե՛ս:

**ԱՆԴՐԵՅ** - Հա: Դու... լրջով... սպանեմ:

**ՕՔՍԱՆԱ** - Սեկան սեղանից վերցրեց ծալովի դանակը, ստուգեց սրությունն ու դեմքը ծռեց:

**ՍԵԿԱ** - Հարմար է: Օքսանան քեզ հետ կգա: Չեմ ուզում, որ փողերն առնես ու փախչես:

**ՕՔՍԱՆԱ** - Ե՛ս... նրա հե՛տ... ինչի՞ն է պետք:

**ՍԵԿԱ** - Կգնաս: Ավտոբուսի տոմսերը հարյուր քառասուն է, իմացել եմ: Կհերիքի երկուսիդ գնալ-գալու համար:

**ՕՔՍԱՆԱ** - Սեկա, հո չե՛ս ցնդել:

**ՍԵԿԱ** - Քեզ մոտ ինչ-որ հարցեր առաջացան, քաճի մեկը:

**ԱՆԴՐԵՅ** - Էդ Օքսանային ոնց որ անցած կիսամյակին հեռացրին, էնպես որ հանրակացարանում ապրում է միայն Սեկայի թույլտվությամբ, Սեկան դրա համար պարետին վճարում է: Հենց մի բան էն չէ՝ փասափուսադ քաշի գյուղ ու էնտեղ ձանձրույթից

սատկի: Կամ էլ մի տրակտորորիս-  
տի հետ ամուսնացի, դա էլ հե-  
ռանկար է:

**ՍԵԿԱ** - Մինչև վաղը փողն ինձ մոտ  
լինի:

**ՕՔՍԱՆԱ** - Սեկան ասաց, որ փողը  
մինչև վաղը լինի: Ու գնաց: Է՞ծի  
մեկը: Սա էլ ինձ է նայում:  
Խղճում է, ինչ է... Է՞ծ: Է՞ծ-է՞ծ: Այ-  
լանդակներ: Սադո սատկեք:

**ԱՆԴՐԵՅ** - Դե լավ... նորմալ է: Իմ  
վիճակը ավելի վատ է:

**ՕՔՍԱՆԱ** - Նորմալ... ի՞նչն է նորմալ:  
Հիվանդ ես: Միայն փորձիր  
կպռշկել, Սեկային կասեմ: Որ  
հասկանաս...

**ԱՆԴՐԵՅ** - Ու լաց եղավ: Նստել,  
գոռում է, իսկ ես իրերս եմ հավա-  
քում: Ծապիկներ, գուլպաներ...  
ինչ կա՝ մերս կլվանա:

**ՕՔՍԱՆԱ** - Գնում-գալիս է սենյա-  
կում, փալաս-փուլուս է թափ տա-  
լիս, իսկ ես մտածում եմ՝  
կարևորը սրա առաջ լաց չլինեմ,  
ցույց չտամ...

**ԱՆԴՐԵՅ** - Հետո գնում ենք  
միջանցքով, աղջկերքը դուրս են  
նայում դռներից, մեզ են նայում,  
բան չեն հասկանում:

**ՕՔՍԱՆԱ** - Եթե մտածում է, որ բոզ  
եմ, հեչ էլ բոզ չեմ:

**ԱՎՏՈՒՐՈՒՄ**

**ԱՆԴՐԵՅ** - Կայարանում մտքովս մի  
բան անցավ:

**ՕՔՍԱՆԱ** - Ինձ ասում է՝ դու փողո-  
ցում հլը ծխի, մինչև ես տոմսերը  
գնեմ, որ դրամարկղի առաջ  
քարշ չգանք: Ի՞նձ ինչ, կանգնել,  
ծխում եմ, մտածում եմ, թե ինչ ա-  
նասուն է էդ Սեկան: Ընդհանրա-  
պես, բոլորի վրա թքած ունենամ,  
ինձնից բացի: Ես էլ կարող էի  
քննությունները հանձնել, թոշակ  
ստանալ: Էստեղ շատերն են էդ-  
պես... Գալիս են, տեղավորվում  
հանրակացարանում, հետո ինս-  
տիտուտից դուրս են թռնում ու  
տարիներով ապրում են... ու ո-  
չինչ: Ինչ խոսք, տղաներին ավե-  
լի հեշտ է, եկար աղջիկների  
հարկը, ընտրեցիր ցանկացածին  
ու՝ ապրի: Իսկ աղջկան ամեն մե-  
կը չի վերցնի: Այ, աղավինները  
լավ են ապրում, իրենց քեֆին,  
թոշակ պետք չէ, սենյակ պետք  
չէ: Ամբողջ շաբաթը հանգստյան  
օր է:

**ԱՆԴՐԵՅ** - Տոմսերը վերցրի, դուրս  
եկա՝ կանգնել, աղավիններին է  
նայում:

**ՕՔՍԱՆԱ** - Ավտոբուս նստեցինք,  
իսկ ես էնպես տխրեցի, ասես  
տուն եմ գնում: Տանել չեմ կարող  
գյուղը: Էդ պարերը: Ու տղանե-  
րին, գեղական հիմարներին:  
Խմեն, ծեծվեն՝ ահա դրանց կու-  
տուրական հետաքրքրությունը:  
Թեև էստեղ էլ թատրոններ չեմ



գնում: Սեկան, անասունը, գոնե մի անգամ կինո չի տարել:

**ԱՆՂՐԵՅ** - Նստել ենք ավտոբուսում, մտածում եմ՝ պետք է նրան մի բան ասեմ կամ պատմեմ:

**ՕՔՍԱՆԱ** - Իմը ինձ հերիք չէ, սա էլ շրջվում է իր սրտառույզ... մոռթով ու ասում է...

**ԱՆՂՐԵՅ** - Ներիր, որ էսպես ստացվեց:

**ՕՔՍԱՆԱ** - Լսիր, թաթերդ հեռու տար:

**ԱՆՂՐԵՅ** - Չէ, ես պարզապես...

**ՕՔՍԱՆԱ** - Ուրեմն՝ սկզբի: Առանց քեզ էլ սիրտս խառնում է:

**ԱՆՂՐԵՅ** - Իմ սիրտը չի խառնում... բանս բուրդ է:

**ՕՔՍԱՆԱ** - Ձենը կտրեց, հանգստացավ: Սատանան քեզ հետ: Այ, էս փողոցով ինստիտուտ էի գնում: Իսկ էստեղ աղջիկներով զբոսնում էինք քաղաքի օրը: Հետո փայտե տներն են, հետո՝ նախկին հրշեջի աշտարակը, ասում են՝ ներսում ուզում են գարեջրատուն սարքել... հետո մենաստանն է, հետո՝ զինվորական մասը, իսկ հետո անտառն է:

**ԱՆՂՐԵՅ** - Նա չնկատեց, որ ուրիշ ավտոբուս նստեցինք: Դեռ չեմ ասի, որ իջնենք, նոր կասեմ: Սկզբում մտածում էի՝ վերջ: Իսկ հիմա կարող է և վերջ չլինել: Միշտ էլ մտածել եմ, որ հենց էն-

պես էս աշխարհ չեմ եկել: Ու ես ապացույցներ ունեմ: Հարյուրտոկոսանոց ապացույցներ: Էն ժամանակվանից, երբ ութերորդ դասարանից հետո ես ու Միշկան պատրաստվում էինք գնալ Արխանգելսկի կապի ուսումնարան: Արդեն փաստաթղթերն ուղարկել էինք, մեզ էլ կանչել էին: Մի շաբաթ էր մնացել մինչև քննությունները, անգամ բաներ էի կարդացել, ինչ-որ երկրաչափություն... Գիշերները Միշկայի հետ ֆռում էինք մոտոցիկլով, ծխում էինք, արձակուրդի վերջին օրերն էինք մսխում: Երազում էինք՝ ոնց ենք Արխանգելսկում ման գալու: Էդ ժամանակ էլ հայտնվեցին կոլորադյան բզեզները: Կարմիր, թունավոր թրթուրները խժռում էին կարտոֆիլի տերևները, մնում էին միայն ցողունները: Երբեք չէր եղել, միայն էր տարի: Պառավներն ասում էին, որ Ամերիկայից հատուկ կենսաբանական զենք են ուղարկել Ռուսաստան, որ գյուղերը սովից մեռնեն: Որովհետև մեզ մոտ միայն կարտոֆիլ է աճում: Մի խոսքով, ամեն օր մոտոցիկլով դաշտ էի գնում: Կեսկիլոյանոց մի բանկա հավաքեցի էդ թրթուրներից, հետո մեջը մի քիչ բենզին լցրի ու վառեցի: Նայում եմ՝ ոնց

են դրանք վառվում, ու հանկարծ վատ զգացի... սիրտս ետ տվեցի, բայց չօգնեց: Երեկոյան Միշկայի հետ ֆռում ենք մոտոցիկլով, զգում եմ՝ շատ վատ եմ: Ասում եմ՝ գնանք լողանանք, գուցե թեթևանա: Լողացանք, էլի վատ եմ: Սրտխառնոց... Գիշերը քիչ մնաց՝ մեռնեի, մայրս զանգեց հիվանդանոց, հետո ասաց՝ գնա ընդունարան, էնտեղ մորաքույր Սվետան է, հարևանուհին: Գնացի, նայեց աչքերս, փորս, լյարդս շոշափեց, ասում է՝ դեղնություն է: Երեք շաբաթ ինֆեկցիոն դիսպանսերում փակեցին: Ծնողներիս ու ընկերներիս պատվաստեցին, նրանք պլստացին: Միշկան գնաց Արխանգելսկ, ընդունվեց: Իսկ ես վերադարձա դպրոց: Միշկան չորս ամիս հետո ուսումնարանից փախավ, ասում էր՝ դժվար է, նորերին էնպես էին ծեծում, որ սենյակի պատերը արյան մեջ կորած էին: Միշկան էդպես էլ մնաց ութ դասարանի կրթությամբ, ծառայեց բանակում, հիմա զոդոլ է աշխատում: NO FUTURE! Իսկ ես դպրոցն ավարտեցի ու ինստիտուտ ընդունվեցի: Դրա համար էլ մտածում եմ, որ էդ ամենը պատահականություն չէր: Աստված էր ինձ նայում, ինքն էր ու-

ղարկել էդ մորեխին, այսինքն՝ կոլորադյան բզբզին ու դեղնությունը, որ ես ուսումնարան չընկնեմ: Ինչ-որ բան պիտի անեմ կյանքում: Մեծ երաժիշտ դառնամ կամ բանաստեղծ: Իսկ գուցե էդ ամենը նրա համար էր, որ Մարոնովին սպանեի: Գուցե նա Հիտլեր է դառնալու կամ ջերմամիջուկային ռումբ է սարքելու: Չէ, կարծում եմ, ավելի լավ է ստեղծագործական կողմը լինի... Օրինակ՝ նկարիչ դառնամ: Ճիշտ է, նկարեչ չեմ կարող, բայց հիմա էս հեչ պարտադիր չէ: Փառք Աստծո, Վերածնունդ չէ: Իհարկե, ոչ մեկին չեմ սպանի, հիմա ամեն ինչ հարթվեց: Ամեն ինչ նորմալ կլինի, հա, նորմալ:

**ՕԲՍԱՆԱ** - Որ քաղաքային բնակարան լինի: Երեք սենյակ: Լուսամփոփ: Կարելի է արխիվում աշխատել կամ խանութում: Կամ էլ կոմերցիոն ֆիրմայում: Էնտեղ շատ են վճարում, միայն, ասում են, անհասկանալի է, թե ինչ պիտի անես: Ու ասում են, որ էդ ֆիրմաներում բոլոր պետերը բոլոր կնիկներին շինում են: Դե, էդ տեսակ ավանդույթ է, բոլորն էլ մասին գիտեն: Է, թող շինեն, կարևորը, որ մարդը չիմանա: Հատկապես եթե պետդ Սեկայի պես մոռոթիկ է: Չէ, ավելի լավ է,

որ մարդս Սեկան լինի, իսկ պետը՝ մեկ ուրիշը, ավելի սիրունիկը: Չէ, ավելի լավ է՝ Սեկան պետը լինի, իսկ մարդս՝ սիրուն ու բարի: Ու որ ժլատ չլինի: Բայց միայն չմո չլինի, բայց փողը բռան մեջ պահի: Ամեն շաբաթ կինո կգնայինք: Գուցե հարավ մեկնեինք, թեև էստեղ ամենուր հիմա պատերազմ է, մեկ էլ տեսար՝ սպանեցին հեջի պես: Նրա համար կեփեի, շորերը կլվանայի, որդի կծնեի: Ես որ առաջին անգամ Սեկային տեսա, հետո երազս եկավ: Որ նրա կինը կարծիկ է, գեր ու տգեղ: Բայց փոխարենը նրանց բալիկը շատ սիրուն էր: Ու նրանք երկուսով կինո են գնում, իսկ ես ասում եմ՝ դե, գոնե ձեր փոքրիկի մոտ մնամ:

**ԱՆԴՐԵՅ** - Երբ որ հռչակավոր դառնամ, հետո գյուղ կգնամ, տուն կգնեմ կամ կկառուցեմ: Բայց որ անպայման՝ երկհարկանի: Աշխատասենյակս երկրորդ հարկում կլինի: Պատուհանները անտառին կնայեն: Ջարթնում ես առավոտյան, սոխակներն են ձենները գլուխները զցել: Անելու բան չկա, արդեն բոլոր հանրագիտարաններում ու դպրոցական ծրագրերում կաս: Աթոռին կիթառն է՝ միացրած, ամեն տեսակի երաժշտություն՝ ինչքան ուզես:

Բարձրախոսները՝ թույն: Պատին՝ սամուրայի սուր: Կողքին՝ աբսուրակտ նկար ու ձեռագիր վեպ «Իմ կյանքը» վերնագրով: Չէ, «Իմ հաղթանակները»: Չէ, «Իմ պարտությունները»: Էդպես ավելի զիլ է: Որ բոլորը տեսնեն, թե ինչ համեստ եմ: Ամեն ինչի հասել է, իսկ արդյունքներն ամփոփելով՝ հիշում է միայն իր պարտությունները: Էդպես էլ քայլել եմ կյանքում մի պարտությունից մյուս պարտությունը: Եվ էդպես ապրել մինչև ծերություն: Երբ արդեն գիտես, որ մահից հետո քեզ կհիշեն, մեռնելն էնքան սարսափելի չէ: Ու արդեն նորմալ է:

**ՕՋՍԱՆԱ** - Եթե բոլոր մարդիկ մեռնեին՝ վատ չէր լինի: Երբ մենակ դու ես մեռնում, դա, իհարկե, տհաճ է: Եթե անգամ գիտես, որ դրախտ ես ընկնելու: Ու եթե ամբողջ ընտանիքը քեզ շրջապատած՝ լիքը երեխեք, թոռներ, բոլորը նայում, սպասում են՝ երբ վերջապես շունչդ կփչես, սենյակը կազատես: Իսկ էսպես՝ կոծակը սեղմեցիր, ու ոչ ոք չկա: Ոչ ումք, ոչ թույն, ու որ առանց տանջանքի, պարզապես անհետացան: Մաքուր մոլորակ: Անտառներ, ծովեր ու ոչ մի մարդ: Այ թե զիլ կլինեիր: Էդ ժամանակ ոչ մեկի համար վիրավորական չէր

լինի: Անգամ խնդալու կլիներ: Մի ինչ-որ միլիոնատեր ամբողջ կյանքում աշխատել է, ամեն մի գրողը հավաքել է, իսկ էստեղ՝ բա՛խ, ու նույն պայմաններով, ինչ աղքատը: Իսկ հետաքրքիր է, եթե էդպես լինի, ո՞ր կկորչեն էդ բոլոր հոգիները: Ծառերի մեջ կվերաբնակվեն: Մարդիկ սրիկա են, ծառերի մեջ էլ իրար կուտեն: Բարդին՝ նոճուն. ի՞նչ ես էստեղ ձյուղերդ ցցել, դու էստեղ ընդհանրապես չես եղել: Ու սկսում են ձյուղերը թափ տալ: Հետո ինչ-որ զենք կհնարեն, մի ինչ-որ նեյտրոնային սղոց «Բարեկամություն», ու ամեն ինչ՝ սկզբից...

**ԱՆԴՐԵՅ** - Ավտոբուսը կանգնեց կամուրջի մոտ: Վարորդը շրջվեց ու գոռաց. «Ով մինչև կամուրջն է տոմս առել՝ դուրս եկեք»: Բռնեցի նրա ձեռքն ու քարշ տվեցի դեպի դուռը:

**ՕՔՍԱՆԱ** - Էնպես էի մտքերի մեջ ընկել, չնկատեցի՝ ոնց տեղ հասանք: Ոչ մի անգամ էդ Օսկոլում չէի եղել: Կանգնեցինք կամուրջի մոտ, նա բռնեց ձեռքս ու քարշ տվեց դեպի դուռը: Դե, իջանք, կանգնել ենք կանգառում: Աջից կամուրջն է, ձախից՝ ճանապարհը, շուրջը մաքուր դաշտն է: Է, հետո՞: Հետո՞ ինչ, հարցնում եմ: Ո՞ր է էդ քո Օսկոլը:

**ԱՆԴՐԵՅ** - Մի խոսքով, լսի, մի գաղափար ունեմ:

**ՕՔՍԱՆԱ** - Սկզբում նույնիսկ չհասկացա, թե ինչ է ասում: Տոմսը ոչ թե Օսկոլ է գնել, այլ լրիվ ուրիշ կողմ: Նույնիսկ ուրիշ ուղղությամբ: Այ թե է՞ժ եմ, ավտոբուսի վրան գրվածին անգամ չնայեցի նստելուց առաջ: Ու հիմա քաշվեցի: Ի՞նչ եմ ասելու Սեկային:

**ԱՆԴՐԵՅ** - Ի հարկե, չուրախացավ: Երևի մտածեց, որ կտանեմ անտառ ու լժում կխեղդեմ:

**ՕՔՍԱՆԱ** - Ինչ-որ մեկի մոր մասին էր պատմում:

**ԱՆԴՐԵՅ** - Դու ինձ լսո՞ւմ ես, թե՛ չէ: Մերս փող կտա: Կտա, ինչ որ պիտի տամ Սեկային, ու վերջ, էլ նրան պարտք չեմ: Ու ոչ մեկին էլ սպանել պետք չէ: Իսկ Սեկան թող ուրիշ մարդասպան գտնի:

**ՕՔՍԱՆԱ** - Պարզ է:

**ԱՆԴՐԵՅ** - Անսպասելիորեն հանդարտվեց: Ոնց որ թե նրա սրտով էլ չէր էդ սպանության թեման: Նույնիսկ տրամադրությունը բարձրացավ:

**ՕՔՍԱՆԱ** - Իսկ նա քեզ իսկապե՞ս փող կտա:

**ԱՆԴՐԵՅ** - Մի բան էլ ավելի:

**ՕՔՍԱՆԱ** - Ուրեմն գնացինք: Որտե՞ղ է քո միլիոնատեր մայրիկը:

**ԱՆԴՐԵՅ** - Իրականում հեչ էլ համոզված չէի, որ մայրս փողը

կտա: Կես տարի առաջ վագոն էր գնել, դարձրել էր խանութ ու աշխատած բոլոր փողերով ապրանք էր առնում: Նույնիսկ հորս միայն խմելիքի ու ծխելիքի փող էր տալիս: Բայց նրան համոզելու երկաթե փաստարկ ունեի: Պետք էր միայն...

**ՕՔՍԱՆԱ** - Մարդ էլ էդքան ապուշ կլինի: Պարզվեց՝ կամուրջից մինչև էդ իրենց Ծիչենգին դեռ հիստուն կիլոմետր էլ կա:

**ԱՆԴՐԵՅ** - Մեղավոր չեմ, որ փողը միայն էսքանին հերիքեց:

**ՕՔՍԱՆԱ** - Ու ո՞նց ենք էդտեղ հասնելու, ոտքերիս հաշվի՞ն:

**ԱՆԴՐԵՅ** - Գուցե մեքենա պատահի...

**ՕՔՍԱՆԱ** - Էդ ինչ խելքի տեր ես, հիմա ո՞վ է մայրուղու վրա կանգ առնում:

**ԱՆԴՐԵՅ** - Չգիտեմ, գուցե հեռավոր երթուղիների վարորդները... ծանծրանում են, ինչի՞ ուղևոր չվերցնեն:

**ՃԱՆԱՊԱՐՀ**

**ՕՔՍԱՆԱ** - Նրանց մեքենաների ապակիների վրա գրված է «Հրաման՝ ուղևորներ չվերցնել»: Կանգառի կապույտ թիթեղի վրա գրված էր. «Դավիդովը ոջիլ է»: Սա տեղական պատի թերթն է: Ուրո՞նք են էսօրվա վերջին նորությունները: «Դավիդովը ոջիլ է»:

Հետաքրքիր է, ինչ տեսք ունի էդ Դավիդովը: Գեր, ճաղատ ու պորտֆելով: Չէ, էդպեսների մասին կանգառներում չեն գրում: Երևի դեղնակտուցի մեկն է: Երևի նեղացրել է աղջնակին կամ էլ մի ուրիշ դեղնակտուցի, ու հիմա փառքը տարածվել է «Մոսկվա-Արխանգելսկ» մայրուղով մեկ՝ ոջիլի մեկը:

**ԱՆԴՐԵՅ** - Փոքր ժամանակ տան ետևում էդպես դանակ էինք խաղում Բորկա ու Նատաշկա Սիգալների հետ: Մի մատից, երկուսից, երեքից: Նրանք վերևում էին ապրում, Նատաշկան ամբողջ օրը դաշնամուր էր նվագում, իսկ տատիկս պոլի փետով առաստաղին էր խփում: Չորս ու հինգ մատներից ընդհանրապես հեշտ է: Կոնտուզիայից հետո տատի գլուխը ցավում էր, նա երկար մահացավ: Հետո ուսից, ծնոսից, շրթունքից, քթից, ձակատից: Իսկ Նատաշկան զինվորների հետ էր ման գալիս, հետո ամուսնացավ ոնց որ թե էլի զինվորի հետ: Հետո չեմ հիշում, էլի ինչ-որ ձևի պետք էր շարտել, իսկ վերջինը արևն էր՝ պետք էր ծխել ու ծխուկը վեր նետել: Իսկ լուսինը՝ ետ շարտել: Նատաշկան գնաց նրա մոտ, հետո վերադարձավ, նրանք ինչ-որ մեկին փող

էին պարտք, էնտեղ ուզել էին սպանել նրանց:

**ՕՔՍԱՆԱ** - Ոջիլի մեկը, ինչի՞ մեքենա չես կանգնեցնում:

**ԱՆԴՐԵՅ** - Չես տեսնում, ոչ մեկը չի կանգնում:

**ՕՔՍԱՆԱ** - Ապուշ, նրանք տեսնում են, որ մի ավազակ նստած դանակն է թափահարում: Դու լինեիր՝ կկանգնեիր:

**ԱՆԴՐԵՅ** - Դե որ էդպես է՝ ինքդ կանգնեցրու:

**ՕՔՍԱՆԱ** - Ու կկանգնեցնեմ, հեչի պես:

**ԱՆԴՐԵՅ** - Էդ պահին մեքենա է հայտնվում: Կանաչ «Չապորոժեց»: Միայն թե Վոլոկովցիի կողմն է գնում, ոչ թե Ծիչենգի: Էս մի հոգավորը մոտենում է ճամփեզրին, պարզում է ձեռքը, մեքենան կանգնում է: Մեջը երկու քյավթառ են, ամեն մեկը հարյուր հիսուն տարեկան: Լպստվում են՝ նստիր, աղջիկ, ման տանք:

**ՕՔՍԱՆԱ** - Քաղաք վերադառնանք, Սեկային կասեմ, թող ինքը սրա հետ հաշիվ մաքրի:

**ԱՆԴՐԵՅ** - Ալ քեզ էձ, որոշել է փախչել:

**ՕՔՍԱՆԱ** - Այ, էդտեղ իրար անցավ: Ծարտեց դանակը, վազեց մեքենայի մոտ, ինձ բռնեց, դրանց էլ ասաց՝ գնացեք, հարգելիներս: Երանք ծիծաղեցին՝ ջահելութ-

յուն... քիսե, քիսե, ու գնացին իրենց դրանդուլետով:

**ԱՆԴՐԵՅ** - Հո խփնված չես:

**ՕՔՍԱՆԱ** - Կարո՞ղ է՝ մինչև երեկո էստեղ պիտի մնամ: Ու ձեռքերդ էլ քեզ քաշի:

**ԱՆԴՐԵՅ** - Զգացի, որ կարմրեցի ու դրանից ավելի չարացա: Ինչ է իրեն ձևացնում... որ ինչ:

**ՕՔՍԱՆԱ** - Ու սկսեց գոռալ, որ ես եմ մեղավոր, որ իր հետ նստած եմ էստեղ: Չուզենայի՝ չէի գա: Ուզում էի, որ ձենը կտրեր: Պարզապես սսկվեր: Լռիր: Լռիր: Լռիր:

**ԱՆԴՐԵՅ** - Ուզում էի նրան բացատրել, որ ինքը ծիշտ չէ: Որ ինքն է մեղավոր էստեղ հայտնվելու համար: Որ ինքը ազատ մարդ է ու ինձ հետ եկավ, որովհետև ուզում էր գալ: Գուցե չգիտակցված: Բայց ինձ չուզեց լսել:

**ՕՔՍԱՆԱ** - Անցա ծանապարհի մյուս կողմը, ձեռքս մեկնեցի ու միանգամից սև «ԲՄՎ»-ն կանգնեց:

**ԱՆԴՐԵՅ** - Էնպես նստեց մեքենան, ասես ինձ սպասելու միտք չուներ: Վազեցի ու նստեցի ետևում, հակառակ կողմից: Ղեկին նստածը ձերմակ վերնաշապիկով էր: Ինձ ասաց, որ չքսվեմ կոստյումին: Ես միանգամից չնկատեցի, որ նրա պիջակը կախված է իմ կողքին, գլխիս մոտիկ:

**ՕՔՍԱՆԱ** - Մեքենայի մեջ լավ էր

բուրում ու ես միանգամից հիշեցի, որ երկու օր է՝ ցնցուղի տակ չեմ եղել: Հանրակացարանում մի ցնցուղը երկու հարյուր քսան սենյակի համար է, միշտ հերթ է, կարող ես լողանալ միայն գիշերը, էն էլ գիշերով ընտանեկան զույգերն են ուզում ջրի տակ շինվել, թեև ես ու Սեկան ոչ մի անգամ...

**ԱՆԴՐԵՅ** - Հաստատ բիզնեսմեն է: Ասում է՝ Արխանգելսկ եմ գնում, մինչև Շիչենգի ձեզ կհասցնեմ, իսկ դուք փոխարենը մտեք ոստիկանատուն ու հայտնեք, որ ճանապարհին վթար է եղել: Ես գործեր ունեմ, ոստիկանատուն մտնել չեմ կարող՝ արձանագրություններ, ցուցմունքներ...

**ՕՋՍԱՆԱ** - Լա ասաց, որ «Ջապորո-ժեցը» խփվել է ճամփի վրայի ծառին: Երկու բիծուկ են եղել, մեկը ողջ է, մյուսը՝ մեռած:

**ԱՆԴՐԵՅ** - Երևում է՝ էսօր ծերուկը պիտի մեռներ, իսկ Օքսանան՝ չէ: Հետաքրքիր է, որն է նրա կոչումն էս կյանքում: Առաջ թքած ունեի, թե ինչ կլինի կյանքի օրոք: Կարևորը՝ մահից հետո հիշեն: Հիմա, երևի թե, խելացվորվել եմ, հիմի ուզում եմ, որ կյանքիս ընթացքում էլ հարգեն: Ու որ փող լինի: Թեև փողը ընդհանրապես թուղթ է: Իսկ ես ժլատ չեմ, դրա համար էլ բիզնես չեմ կարող ա-

նել, դրա համար ժլատ պիտի լինես: Այ, էս մեկն էլ կանգնեց ոչ թե նրա համար, որ մեզ վերցնի, այլ որ մենք իր փոխարեն ոստիկանատուն գնանք՝ «Դու ինձ, ես քեզ», չես խաբի ու չես վաճառի: Էլի ռեկլամ հայտնվեց: Առաջ ընդհանրապես չկար: Հենց էդ առաջ էլ ուզում էիր, որ մարդկանց համար լավ լինի, որպեսզի աշխատանք լինի ու էլի նման բաներ: Իսկ հիմա ուզում ես, որ տուն լինի, մեքենա, փող: Ճամփորդություններ էլ: Առաջ մտածում էի՝ ուսապարկով կպտտվեմ աշխարհում, կապրեմ վրանի տակ: Իսկ հիմա հոթելներում են մնում, Մալդիվներ, ծով: Էս մեկը երևի հարյուր անգամ ծովում եղել է: Իսկ ես միայն մի անգամ ձմռանը, Ռիգայում:

**ՕՋՍԱՆԱ** - Անցած անգամ էլ երկար չէր սկսվում: Միայն թե չմնամ... Ասում են, եթե աբորտ անես, հետո էլ երեխա չես ունենա: Իսկ նա չի ամուսնանա, եթե անգամ մնամ: Հինգերորդ դասարանում, գրականության դասին: Երկրորդ հարկում, տասնչորսերորդ կաբինետում: Զգացի, ինչ-որ կաշուն բան է ոտքերիս: Ու տեսա, որ ոտքերս արնոտ են, շորս ու աթոռն էլ է արնոտ: Ուսուցչուհին տարավ զուգարան, միջադիր

տվեց ու տուն ուղարկեց: Իսկ դասարանում չճաղրեցին, կարծես վախեցան, ն տղաները, ն աղջիկները, որովհետև ոչ մեկի հետ դեռ չէր եղել, ես առաջինն էի: Ոչ ոք չհասկացավ, թե դա ինչ է:

**ԱՆԴՐԵՅ** - Իջանք մեքենայից, ու նա շարունակեց ճանփան: Էդպես էլ ուրիշ ոչինչ չասաց, անգամ հրածեշտ չտվեց: Մեքենան շարժվում էր կամաց, ասես սողում էր:

**ՕՔՍԱՆԱ** - Ոչինչ չպատմեց իր բիզնեսմենի կյանքից, երևի թե իրեն անհետաքրքիր էր մեզ պես քննադատների հետ խոսելը: Էնպես ամաչեցի տեսքիս համար: Ասես աղբանոցից էինք դուրս ելել:

**ԱՆԴՐԵՅ** - Մեզ մոտ էնպիսի գեղեցկություն է, ոնց որ բացիկի վրա՝ գետը, կամուրջը, ձախից՝ անտառը, աջից՝ սարը, վրան՝ եկեղեցին, որտեղ նախկինում տեխնիկում էր: Իսկ հիմի նորից եկեղեցի է: Էն կողմում խանութն է, հետո՝ ակումբը: Մի անգամ ակումբում նույնիսկ «Ստալկերը» համերգ տվեց, Անդրեյ Դերժավինը:

**ՕՔՍԱՆԱ** - Իհարկե, գյուղը վերջն էր... միայն ակումբի շենքն էր նորմալ, սյուներով, իսկ խանութների փոխարեն վագոններ էին:

**ԱՆԴՐԵՅ** - Հետո ոստիկանատունը

ցույց տվեցի՝ հինը՝ փայտե շենք, ու նորը՝ աղյուսից: Փայտե շենքը մեր գյուղի առաջին շինությունն է, որ կառուցվել է 37 թվին, երբ միացրել են գյուղերը: Էդտեղ մի անգամ հարբեցողներ են նստած եղել, գետինը փորել ու փախել են: Իհարկե, միանգամից բռնվել են, էստեղ ո՞ր կթաքնվես: Մտանք ոստիկանատուն, ճաղապատ պատուհանի ետևում ակնոցավոր, չաղիկ տղա էր նստած, պարզվեց՝ Անդրեյի համադասարանցին է: Միանգամից մոռացան «Չապորոժեցի» ծերուկներին ու սկսեցին քննարկել ինչոր Սաշկա Տուգարինովի, որը հարբած կախվել էր ցախանոցում:

**ՕՔՍԱՆԱ** - Տուգարինովը բանակից եկավ ու ամուսնացավ: Ծնողները մի սենյականոց բնակարան գնեցին էն ափին: Մի ամիս ապրեցին, հետո նա հարբած որ գալիս է, կինը կռվում ու ասում է, որ գնում է մոր տուն: Նա էլ գնում է ցախանոց ու կախվում է: Հետո կինը լալիս էր, ասում՝ լավ է՝ խմեր... բայց դե, էլ ի՞նչ...

**ՕՔՍԱՆԱ** - Չեմ հասկանում, ինչո՞ւ տրամադրությունը ընկավ: Երևի էդ Տուգարինովը մոտիկ ընկերն էր:

**ԱՆԴՐԵՅ** - Ախր, մանկապարտեզից



իմ թշնամին էր: Էն ժամանակվանից էինք կռվում: Ուժերս հավասար էին: Հետո նա ուժեղացավ ու ծեծում էր ինձ: Մի ժամանակ ոնց որ լավ էինք, մի անգամ նույնիսկ մեր տուն եկավ, ծայներիզ վերցրեց լսելու: Իսկ հետո նորից սկսվեց... Երբ որ դիսկոտեկում կապվ, թե վաղը խմելիք կգնեմ: Ես նրան՝ որտեղի՞ց քեզ համար խմելու բան գտնեմ: Իսկ նա՝ խմելիք կգնեմ: Իսկ ես նորից՝ որտեղի՞ց քեզ համար խմելու բան գտնեմ: Իսկ նա արդեն զգում է, որ ծիծաղելի է դառնում, բայց՝ խմելիք կգնեմ: Իսկ ես նորից՝ որտեղի՞ց: Ու էդտեղ նա խփեց: Դեմքիս, երկու անգամ: Ես ընկա: Կեպի ունեի, հորիցս էի վերցրել: Տուգարինովը մոտեցավ, լուռ կանգնեց, ծխեց, հետո ասում է՝ տուր կեպիդ: Վերցրեց ու գնաց: Չեմ հասկանում, ինչո՞ւ էի նրանից էդքան վախենում: Ախր, միշտ էլ լավ կռվող եմ եղել, անգամ ինձնից երկու, երեք տարով մեծերի հետ եմ կռվել: Էնպես էի կպչում՝ պոկել չէր լինում: Իսկ Տուգարինովից վախենում էի: Ինչ-որ վախ կաթվածահար էր անում ինձ: Երևի երբ միանգամից ես կռվում, ուժերդ հավաքում ես, իսկ երբ երկար ես վախենում ինչ-որ մեկից կամ ինչ-որ բանից, սկսում

ես քեզ ներշնչել ու էլ ոչինչ անել չես կարող: Մի անգամ խանութից դուրս եմ գալիս, դեմս է դուրս գալիս ընկերոջ հետ: Ասում է՝ բարև, չմո: Ես իրեն՝ ողջույն: Լակոտ, ատում եմ ինձ, որ էդպես ասացի: Հիմա վերջ, մեռել է, ու էլ չես ասի, որ ինքն է չմոն: Իսկ ես ապրում եմ: Պիտի որ ուրախանամ, բայց ուրախություն չեմ զգում: Ասես ինձնից մի մաս են կտրել:

**ՕՔՍԱՆԱ** - Ոստիկանությունից երևի տաս կիլոմետր էլ գնացինք սարի կողմը, հետո էլի ձամփով, տների կողքով ու վերջապես տեղ հասանք: Տունը երկու բնակարանից է, բակում ջերմոց կա, մի խոսքով, սովորական գյուղ: Հանկարծ շրջվում է ու ասում՝ արի մորս ասենք, որ դու իմ հարսնացուն ես:

**ՏԱՆԸ**

**ԱՆԴՐԵՅ** - Մայրս Օքսանային որ տեսավ՝ վախեցավ:

**ՄԱՅՐ** - Չգիտես ինչու սկզբում մտածեցի, որ նա ոստիկանությունից է ու Դյուշան հանցանք է գործել:

**ՕՔՍԱՆԱ** - Իսկ նա առաջ է հրում ու ասում է՝ մամ, ծանոթացիր, Օքսանան է, իմ հարսնացուն:

**ԱՆԴՐԵՅ** - Հետո մայրս կատաղեց:

**ՄԱՅՐ** - Բայց նա դեռ շատ ջահել է, նրան չի կարելի ամուսնանալ:

**ԱՆԴՐԵՅ** - Ինչ եղավ, մամ,

տասնվեց տարեկան հո չեմ, ժամանակն է, որ վարժվես:

**ՕՔՍԱՆԱ** - Տանտիրոջ պես պտտվեց բնակարանում, մտավ ննջարան, հարցրեց՝ հայրը քնամձ է: Ու կանչեց ինձ, իբր՝ արի, սենյակը ցույց տամ:

**ՄԱՅՐ** - Երկամր ես մնալու:

**ԱՆԴՐԵՅ** - Առավոտ գնալու եմ:

**ՄԱՅՐ** - Հորդ արթնացնեմ, թող բաղնիքը վառի:

**ԱՆԴՐԵՅ** - Հպարտությամբ ցույց տվի սենյակս: Տասներկու դարակ գիրք, որի կեսը անձամբ բաժկոնիս տակ դուրս եմ բերել գրադարանից: Կիթառս, ծայներիզներս, «Վոլնա» նվագարկիչը, ու կարևորը՝ պատուհանից երևացող տեսարանը: Էդպիսի տեսարան ոչ մի փողով չես գնի՝ լժակ, անտառ, ամպեր:

**ՕՔՍԱՆԱ** - Խղձուկ սենյակ, կահույքը՝ երկաթե մահձակալ, բազմոց ու գրադարակներ:

**ՄԱՅՐ** - Չհասցրի անգամ ոնց որ պետք է՝ վրան նայեմ: Հետաքրքիր է, լավ ընտանիքից է: Հարբեցող չէ՛: Լվալ, եփել գիտե՛: Պետք է ստուգել: Դեռ կտեսնենք, թե ինչ հարսանցու է: Ամեն ինչ շրփալ... կարծես երեկ էր, որ հատակին սողում էր, իսկ հիմա հարսնացու է բերել:

**ԱՆԴՐԵՅ** - Հայրս փայտ էր բաղնիք

տանում, հետո ծխնելույզից ծուխ բարձրացավ: Ես լռում էի:

**ՕՔՍԱՆԱ** - Թե քո ինչին է էս ամենը պետք...

**ԱՆԴՐԵՅ** - Քեզնից բան չի պահանջվում, պարզապես մի երեկո ոնց որ իմ հարսանցուն ես: Ոչ ոք քեզ չի ստիպում ամուսնանալ:

**ՕՔՍԱՆԱ** - Այ թե քաշվեցի...

**ԱՆԴՐԵՅ** - Սեկային շնորհակալություն կհայտնես:

**ՕՔՍԱՆԱ** - Գնա, ես քու... Հիմա դուրս կգամ էստեղից ու մորդ կասեմ, որ խաբել ես:

**ԱՆԴՐԵՅ** - Չէ, պետք չէ... Էդ դեպքում հաստատ փող չի տա:

**ՕՔՍԱՆԱ** - Ինչ խոսես սրա հետ, խփնված է:

**ԱՆԴՐԵՅ** - Մայրս էնպես զգույշ է դուռը թակում, որ պարզ զգացվում է՝ առաջին անգամ է էդպես թակում: Գնա, ասում է, հորդ օգնիր: Օգնելու ինչ կա: Դե լավ, գնացի:

**ՕՔՍԱՆԱ** - Ըհը, սկեսուրս եկավ ծանոթանալու: Նստեց դիմացս: Գեր, ներկած մազերի տակից սպիտակներն են երևում: Վրայից ծխախոտի հոտը...

**ՄԱՅՐ** - Նստել, նայում եմ՝ ոչ միս կա, ոչ ոսկոր: Հետաքրքիր է, ոնց է ծննդաբերելու: Նստեցի վառարանի մոտ, ծխեցի: Ինքն էլ նստեց, մեկ էլ տեսնեմ՝ սիգարե-

տի տուփն է հանում: Կանաչ գույնի, մենթոլ: Առը քեզ հա...

**ԱՆԴՐԵՅ** - Բաղնիք մտա, հայրս նստել, կրակին է նայում: Դե, ասում եմ, գործերը ո՞նց են:

**ՕՔՍԱՆԱ** - Սկեսրոջս հետ նստել ենք վառարանի մոտ, ծխում ենք: Ու ես նրան դուր չեմ գալիս:

**ՄԱՅՐ** - Որտեղի՞ց ես:

**ՕՔՍԱՆԱ** - Ռամենսկոյից:

**ՄԱՅՐ** - Էդ որտեղ է:

**ՕՔՍԱՆԱ** - Վաշկինսկի շրջանում:

**ՄԱՅՐ** - Ծնողներդ ո՞վ են:

**ՕՔՍԱՆԱ** - Մայրս փոստատար է: Հայրս մեռել է:

**ՄԱՅՐ** - Դյուշայի հե՞տ ես սովորում:

**ՕՔՍԱՆԱ** - Բնա-աշխում:

**ՄԱՅՐ** - Էդ ի՞նչ է որ...

**ՕՔՍԱՆԱ** - Բնագիտական-աշխարհագրական:

**ՄԱՅՐ** - Էքսպեդիցիա ես գնալո՞ւ:

**ՕՔՍԱՆԱ** - Դժվար: Պիտի պատմեմ, թե ո՞նց են ուրիշները գնում: Սենկևիչի պես:

**ՄԱՅՐ** - Էդ ուրիշ: Որտե՞ղ ես Դյուշայի հետ ծանոթացել:

**ՕՔՍԱՆԱ** - Հանրակացարանում:

**ՄԱՅՐ** - Որ ամուսնանաք, ընտանեկան սենյակ կտա՞ն:

**ՕՔՍԱՆԱ** - Ըհը, կտան: Էն էլ ո՞նց կտան: Ընտանեկանը փայտե բարաք է գետի ափին: Էն էլ սենյակի համար մարդիկ երկու տարի են սպասում: Կամ էլ

պարետին կաշառք են տալիս:

**ՄԱՅՐ** - Ոնց որ ոչինչ, թեև ծխում է: Հղիանա՛ կթարկի: Ես էլ եմ թարկել:

**ՕՔՍԱՆԱ** - Մեզ փող է պետք:

**ՄԱՅՐ** - Էդ ինչի՞ համար:

**ՕՔՍԱՆԱ** - Պարետին կաշառք տալու համար: Տասներկու հազար:

**ՄԱՅՐ** - Ինչի՞ էդքան շատ:

**ՕՔՍԱՆԱ** - Պարետը ժլատ է:

**ՄԱՅՐ** - Էդքան չունեմ: Ես խանութ ունեմ, փողերս ապրանքի մեջ է: Երկու հազար կտամ, մնացածը ինքներդ վաստակեք:

**ՕՔՍԱՆԱ** - Նորմալ կնիկ է, գործնական: Ոչ թե էդ Դյուշան... Ափսոս, որ փող չի տա, տղայի հույսը դա էր:

**ՄԱՅՐ** - Կարկանդակ եփեմ: Սիրո՞ւմ ես:

**ՕՔՍԱՆԱ** - Մորու մուրաբայով:

**ՄԱՅՐ** - Մուրաբա չկա: Ձկան լցոնով կլինի:

**ԲԱՂՆԻՔՈՒՄ**

**ԱՆԴՐԵՅ** - Ինչո՞ւ էսպես լուռ է: Նստել եմ հաշտում, մեջքս հենած դռանը: Մեջքս տաք է, իսկ հաշտում ցուրտ է: Սկսեցի մրսել: Դիմացի նստարանին սրբիչներ են՝ իմն ու նրանը: Հաշտի պատերին մեծ ձեղքեր են, որպեսզի ձմռանը դուրս գաս հովանալու, որպեսզի ջերմությունը ոնց որ փողոցում

լինի: Հիմա ձմեռ չէ, ինչո՞ւ էսպես ցուրտ է: Որովհետև հիմա պիտի ներսում լինեի, իսկ ես էստեղ եմ: Օրգանիզմս շոգին է վարժվել ու սովորական ջերմությունը շատ ցո՞ւրտ է թվում: Ի՞նչ է անում ներսում: Ինչի՞ էսպես լուռ է: Հեյ, քնե՛լ ես էդտեղ, ինչ է:

**ՕՔՍԱՆԱ** - Ի՞նչ ես ասում:

**ԱՆԴՐԵՅ** - Չքնես հանկարծ, կսառչես:

**ՕՔՍԱՆԱ** - Ավելի լավ է ներս գաս ու լողացնես, փեսացու:

**ԱՆԴՐԵՅ** - Լո՞ւրջ ես ասում:

**ՕՔՍԱՆԱ** - Ներս արի:

**ԱՆԴՐԵՅ** - Տեղիցս թռա, կիսավարտիքս հանեցի: Հետո նորից հագա: Իսկ նա մերկ է, թե՛ չէ: Բացում եմ դուռը, նայում եմ՝ մերկ է: Պառկել է թարեքին, բերանքսիվայր:

**ՕՔՍԱՆԱ** - Ներս արի, ի՞նչ ես կանգնել, ասես խորթ լինես:

**ԱՆԴՐԵՅ** - Ներս մտա, աշխատում եմ նրան չնայել: Իսկ նա պառկած է, էն տեսակ... գեղեցիկ: Մեջը բարակ, տուտուզը կլոր, ոտքերը... այ թե ասել եմ...

**ՕՔՍԱՆԱ** - Նայեցի՛ խեղճը նույնիսկ տեղում ձո՞ճվեց: Ինչ է, կյանքումդ մերկ աղջիկ չե՞ս տեսել: Վերցրու ավելն ու գործի անցիր: Վերցրեց ավելը, խոթեց եռման ջրով թասի մեջ:

**ԱՆԴՐԵՅ** - Պետք է, որ տերևները փափկեն: Ինչի՞ գլխարկ չես դրել:

**ՕՔՍԱՆԱ** - Ի՞նչ գլխարկ:

**ԱՆԴՐԵՅ** - Բաղնիքում գլուխդ պիտի պաշտպանես, թե չէ կվառվես:

**ՕՔՍԱՆԱ** - Ինչ-որ սպորտային, փոփոխիկով գլխարկներ է վերցնում ու մեկը իմ գլխին քաշում, մյուսը՝ իրեն: Մեր տանը երբեք գլխարկ չի եղել, առանց դրանց ենք շոգեհարվել:

**ԱՆԴՐԵՅ** - Հանկարծ պատկերացրի նրան այդ գլխարկով ու դահուկներով... ու մերկ:

**ՕՔՍԱՆԱ** - Հետո վերցրեց շերեփն ու շոգին ավելացրեց: Ծատ շոգեց:

**ԱՆԴՐԵՅ** - Սկզբում ավելով շփել, քրտնեցնել, հետո ավելով մաքրել քրտինքը: Ու դրանից հետո կարելի է շրմփացնել:

**ՕՔՍԱՆԱ** - Էյ, զգույշ:

**ԱՆԴՐԵՅ** - Համբերիր, էժ, թե չէ մայրիկ կդառնաս:

**ՕՔՍԱՆԱ** - Չգո՞ւյշ, քեզ ասի:

**ԱՆԴՐԵՅ** - Ավելի հարվածներից նրա թաց մաշկի վրա մնում էին կարմիր գույեր:

**ՕՔՍԱՆԱ** - Տես, է՛, քոնը կանգնեց...

**ԱՆԴՐԵՅ** - Ի՞նչ առաջարկություն կա:

**ՕՔՍԱՆԱ** - Վրադ պաղ ջուր լցրու:

**ԸՆԹՐԻՔ:**

**ՄԱՅՐ** - Տասնչորս տարեկանում տնից փախա: Ինձ էլ էն ժամանակ թվում էր, թե մայրս չի հաս-

կանում ու ուզում է գլուխն ազատել ինձնից: Գնացի Ժիխովո ու աշխատանքի անցա ակումբում: Եվ ֆիլմ էի ցուցադրում, և համերգներ էի կազմակերպում ու ազիտբրիգադի հետ մեկնում գյուղերը: Մի անգամ շրջանային թերթից սիրունիկ տղա եկավ ինձնից հարցազրույց վերցելու: Երան ամեն ինչ պատմեցի. և մեր գյուղի հաջողությունների, և կաթնատվության մասին: Հետո, հանգստյան օրերին, տուն գնացի, երեկոյան դուրս եկա զբոսնելու ու տեսնեմ՝ իմ ջահելն է գալիս: Պարզվում է՝ հարևան փողոցում էր ապրում, իսկ ես նրան չէի հանդիպել, որովհետև Պիտերում, ինստիտուտում էր սովորում: Իսկ դրանից առաջ սովորողվյալն ուսումնարանում, հազվադեպ էր գյուղ գալիս: Սկսեցինք հանդիպել: Մեկ նա է ինձ մոտ գալիս, մեկ՝ ես եմ իրեն այցելում: Համբուրվեցինք հարսանիքի նախօրերին, հին ծաշարանի դռան մոտ:

**ՕՔՍԱՆԱ** - Գուցե իսկապես ամուսնանամ նրա հետ: Մենք էլ համբուրվենք ծաշարանի դռան մոտ, հարսանիք անենք: Հարսանիքին անպայման կռիվ կլինի ամանեղեն ջարդելով: Խոզ կպահենք: Ես կսկսի աշխատել ինչ-որ գյուղտեխնիկայում, ես՝ գյուղքի-

միայում: Յախք, սիրտս խառնեց: Հետո կմեռնենք: Չէ, ավելի լավ է միանգամից ցախանոց ու՝ կախվել:

**ԱՆԴՐԵՅ** - Օքսանան շրջվեց ու ասաց՝ գնանք ծխենք: Տնից դուրս եկանք, նստեցինք պատշգամբում, նա տուփը հանեց: Խնդրեցի մի քիչ ցածր նստել, որ փողոցից չերևա, էստեղ ընդունված չէ, որ աղջիկները ծխեն: Եթե աղջիկը ծխեց, ուրեմն՝ բոզ է:

**ՕՔՍԱՆԱ** - Համենայնդեպս, դու հարսնացուս ես, ասում է: Ապուշ: **ԱՆԴՐԵՅ** - Ինչ-որ բանից ջղայնացավ: **ՕՔՍԱՆԱ** - Խոսեցի մորդ հետ: Ես փող չի տա:

**ԱՆԴՐԵՅ** - Ո՞նց թե՛ չի տա:

**ՕՔՍԱՆԱ** - Ասաց՝ երկուս կտամ, մնացածը ինքներդ վաստակեք:

**ԱՆԴՐԵՅ** - Ի՞նչ ես արել, հիմարի մեկը: Ես պիտի խոսեի նրա հետ:

**ՕՔՍԱՆԱ** - Է, խոսիր: Օգո՞տն ինչ...

**ԱՆԴՐԵՅ** - Ես ամեն ինչ փչացրեց: Մորս դուրը չեկավ: Ու նա արդեն տրամադրվել է, որ փող չունի ու մեզ ոչինչ չի տա: Հակառակը համոզել չի լինի: Ներս գնացինք, մորս խնդրեցի ինձ հետ դուրս գալ պատշգամբ խոսելու: Երկու ժամ համոզեցի, ոնց ասես չխնդրեցի: Փող չկա, ու վերջ: Բնականաբար:

**ՄԱՅՐ** - Փող չկա, ու վերջ:

Տասնչորս տարեկանից ծնողներին ցուցաբերելու խնդիրը: Ու սրանք էլ թող իմանան, թե չէ համ կքաշեն: Եվ, ընդհանրապես, դեռ ջահել է ամուսնանալու համար: Ման եկեք, ապրեք, հիմի դրան թարս չեն նայում: Թե չէ ամուսնանալն ու բաժանվելը մեկ է լինում: Կամ ավելի վատ՝ չեն բաժանվի ու ամբողջ կյանքում կտանջվեն: Փող չկա, և վերջ:

**ԳԻՇԵՐ**

**ՕՔՍԱՆԱ** - Մտածում էի Սեկայի մասին: Ընդհանրապես նա հանգիստ բնավորություն ունի: Խաղալու ժամանակ էլ... Երբ խաղում է, հավեսդ գալիս է՝ քաղաքավարի է, ժպտում է: Ի դեպ, խաղն էլ նույն անունն ունի՝ սեկա: Բայց նրան խաղի պատվին չեն Սեկա անվանել, այլ որ ազգանունը Սեկուշին է: Բոլորը երկուական կարտ են վերցնում, հետո նայում ու էլի են վերցնում, կամ չեն վերցնում: Հետո սկսվում է՝ ես էլի տասն եմ դնում, ես փակում եմ ու հետո՝ տասը: Գինն են բարձրացնում: Հետո նայում են կարտերին, ում մոտ որ 21 է, նա էլ կրում է: 21-ը օչկո է կամ սեկա: Եթե դրանից ավելի է՝ կրվեցիր: Քիչ է՝ էլի կրվեցիր: Եթե ամեն մեկի մոտ էլ 21 է, նորից են բաժանում կարտերը: Էդպես օրերով

կարող են խաղալ: Սեկան ինձ ասաց, թե ինչու է միշտ կրում: Ամեն անգամ, կրելուց առաջ, նա երաժշտություն է լսում: Ու եթե կա էդ երաժշտությունը՝ գինը բարձրացնում է: Չէ՛՝ կարտերը նետում է: Դրա համար էլ միշտ կրում է: Ժուլիկ չէ, պարզապես երաժշտություն է լսում: Ինչ լավ կլիներ, եթե սրա փոխարեն նա լիներ կողքիս...

**ԱՆԴՐԵՅ** - Պառկած է իմ անկողնում, իմ սպիտակ ֆուտբոլկան հագին ու նայում է ինձ: Հետո ձգվեց ու ասաց՝ էստեղ արի:

**ՕՔՍԱՆԱ** - Ծառ իզուր: Համբուրվել չգիտե, կուրծք շոյել չի կարող: Քսմսվում է կույրի պես, մամայի պտուկն է փնտրում:

**ԱՆԴՐԵՅ** - Ինչ կրքոտն էր: Ես նրան շոյում եմ, համբուրում եմ, համբուրում եմ... բայց ոչինչ չստացվեց: Ամենավճռական պահին չկարողացա: Ինքս էլ չհասկացա՝ ոնց էդպես ստացվեց: Երևի հուզմունքից էր... հարբած էլ չէի, արդարանալու տեղ էլ չկա: Մեղավորը ես եմ:

**ՕՔՍԱՆԱ** - Ծառ էլ ուշքս չէր գնում...

**ԱՆԴՐԵՅ** - Ծրջվեց դեպի պատն ու լռեց, իսկ ես նստեցի բազկաթոռին ու երկար նստեցի՝ նայելով պատուհանին: Էսօր իմ կյանքի ամենադժբախտ օրն է: Հանդի-

պեցի աղջկա ու սիրեցի, նա կարող էր իմը լինել, իսկ ես ինքս նրան կորցրի: Բայց երևի դեռ կարելի է ամեն ինչ ուղղել: Եթե հիմա կարողանայի պառկել կողքին, գրկել ու համբուրել Դոն Ժուանի կամ Կազանովայի պես ու խռպոտ ձայնով ասել. «Պստիկս, արի մեկ էլ փորձենք»: Ու հետո էնպիսի սեքս ցույց տայի, որի նմանը երբեք չէր տեսել: Բայց ես չեմ կարող: Չեմ համարձակվի: Նա կարող է ինձ քշել, ասել՝ գնա էստեղից, իմպոտենտ:

**ՕՔՍԱՆԱ** - Ինչ է անում էդտեղ իմպոտենտը: Էսօր քնելու միտք ունի՞, թե՞ չէ: Ախր, մրսում եմ:

**ԱՆԴՐԵՅ** - Գրողը տանի, ախր, սա կարող էր ֆանտաստիկ վերջին գիշեր լինել: Ոնց որ Կլեոպատրայի հետ: Իսկ վաղը՝ ինչ լինելու է, թող լինի: Այ, էդ ժամանակ նա կիմանա, կզղջա, որ ափսոսաց տասներկու հազարը: Ախր, խանութում ամեն օր է էդքան վաստակում: Զոհեց որդուն օրվա եկամուտը տնտեսելու համար: Բոլոր թերթերում սրանց նման վերնագրեր կլինեն: Հետմահու կփառաբանվեն: Իմ մասին ֆիլմ կնկարեն՝ ինչ տղա էր... Կամ, ընդհակառակը, երեխեքին կվախեցնեն: Չքնես՝ կգա չար Դյուշան ու կմորթի քեզ: Հետաքրքիր

է, ինչ է հիմա մտածում Մարոնովը: Երևի հանգիստ քնած է ու չգիտե, որ վաղը իրեն կսպանեն: Որտե՞ղ պիտի խփես, որ մեկ հարվածով սպանես: Սրտին չես հասնի, էստեղ կողերն են: Ուրեմն՝ փորի: Ասում են՝ ցավոտ է: Ես չեմ ուզում, որ ցավ զգա: Ես պարզապես չեմ ուզում նրան սպանել: Չէ, չեմ ուզում, ես պետք է նրան սպանեմ: Իսկ եթե ընդհանրապես չգնամ: Թաքնվեմ: Բայց Սեկան մեկ ուրիշին կուղարկի ինձ սպանելու: Իսկ եթե ոստիկանություն գնամ: Հա, տեսանք էդ ոստիկանությունը, էստեղ նստած Կոլկա Կուստովը թքած ունի ամեն ինչի վրա: Ինչ է, հսկողություն պիտի սահմանի մեր տան վրա, թե՞ կգնա ու կձերբակալի Սեկային: Իմ ձերմակ ֆուտբոլկան ընկած էր հատակին: Կամաց մոտեցա մահձակալին ու պառկեցի նրա կողքին: Օքսանան արդեն քնել էր: Մերկ: Գեղեցիկ: Նայում էի Օքսանայի ծոծրակին, վզին ու ուսերին: Ուզեցի ոռնալ, որ նա էսքան մոտիկ է ինձ ու էսքան հեռու: Ես ուզում էի մեռնել նրա համար: Կամ սպանել:

**ԱՌԱՎՈՏ**

**ՕՔՍԱՆԱ** - Առավոտյան իրար հետ չէինք խոսում: Մաման մեզ նա-

խաճաշ տվեց՝ հնդկաճավարի շիլա ու կոֆե, ավելի ձիշտ, իր ասածով՝ կոֆե: Հետո ինձ կանչեց պատշգամբ ու տվեց տասներկու հազարը: Ասաց՝ ոչ մի դեպքում Դյուշային չտամ, ինքս հանձնեմ պարետին: Ու որ արևկող սենյակ ընտրեմ:

**ԱՆԴՐԵՅ** - Նախաճաշից հետո մայրս Օքսանային տարավ պատշգամբ ու ինչ-ու բան սկսեց քչիչալ: Ամենաշատը վախենում էի, որ Օքսանան բերանբացություն կանի: Երեկվանից հետո ձևացնելու ինչ պատճառ ուներ: Բայց ոնց որ ոչինչ չասաց, որովհետև երկուսն էլ շատ գոհ դեմքով ներս եկան:

**ՄԱՅՐ** - Դե, աղավնյակներս, երկար հրաժեշտից օգուտ չկա: Մարշ ավտոկայան:

**ԱՆԴՐԵՅ** - Ու մայրս սրբեց արցունքը: Հետո՝ էլի մեկը: Գրկեց Օքսանային, իսկ ինձ բռունցք ցույց տվեց: Բարի մայրիկս: Դե, մնաս բարով, ներիր, եթե մի բան էն չէր: Սպասիր նորությունների ու ուշագնաց չլինես:

**ՕՔՍԱՆԱ** - Ուզում էի միանգամից ասել փողի մասին, իսկ նա առաջ ընկավ, ոնց որ ինձ հետ չլիներ: Էդպես էլ ամբողջ ծամփան գնացինք. ինքն՝ իր համար, ես՝ ինձ:

**ԱՆԴՐԵՅ** - Վախենում էի նրան

նայել, վախենում էի ինչ-որ բան ասել: Ինձ թվում էր՝ նույն պահին ձեռ կառնի կամ վիրավորական մի բան կասի: Առաջ էի ընկել, որ հայացքս վրան չընկներ, համ էլ ծամփան էի ցույց տալիս:

**ՕՔՍԱՆԱ** - Էդպես էլ հասանք ավտոկայան: Լավ, թող մի քիչ տանջվի, հետո կասեմ, քաղաք հասնելուց հետո: Ու փողն էլ կտամ: Կարող է, ինչի՞ն պետք է... Նա խնդրեց սպասել ավտոկայանում, իսկ ինքը մտավ վագոն, ինչ-որ բան պիտի գներ:

**ԱՆԴՐԵՅ** - Լավ է, որ հիշեցի, ախր, դանակս մոռացել էի ծամփեզրին, երբ Օքսանան մեքենան կանգնեցրեց: Մտա վագոն ու ծալովի դանակ գնեցի մետաղե բռնակով: Հետո գնացի ավտոկայան: Օքսանան պառկել էր պատուհանի մոտի նստարանին ու բոլոր պառավները նրան էին նայում: Իսկ նա նայում էի բիծուկին, որը փորձում էր զանգել ավտոմատ հեռախոսից:

**ՕՔՍԱՆԱ** - Ոնց որ կրկես լինի՝ պատից կախված է ավտոմատ հեռախոսն առանց լսափողի: Մոտենում է էդ բիծուկը, կոպեկը խցկում ներս ու փորձում է համարը հավաքել: Հասկանում է, որ ինչ-որ բան էն չէ: Ոնց որ թե ձայն պիտի լսի, կամ էլ դրա նման պես



մի բան... Իսկ լսափողը չկա: Հինգ րոպե ցցվել էր էդ հեռախոսի դիմաց: Հետո գնաց, նստեց իր պառավի կողքը:

**ԱՆԴՐԵՅ** - Գնացի ու դրամարկդից երկու տոմս գնեցի մինչև Օսկոլ:

**ԱՎՏՈՒՐԱԿ**

**ԱՆԴՐԵՅ** - Ինչքան են տալիս սպանության համար: Մի ութ տարի: Ամենաքիչը: Էդ ժամանակ կլինեմ քսանյոթ տարեկան: Զահել տարիներս... Դրանից հետո մի տեղ հանգիստ կապրես, մեղքդ կքավես: Տեր Աստված, ներիր մեղավորիս: Չէ, էսպես չի կարելի: Եթե հիմա արդեն զոջում եմ, բայց, միևնույն է, գնում եմ մեղք գործելու, ուրեմն ասածս հաշիվ չէ: Եթե իսկապես եմ զոջում, չափտի սպանեմ: Պետք է գնամ ու ասեմ Սեկային՝ գնա, քու... Ու թող ինձ սպանեն: Բայց գոնե հաստատ դրախտ կընկնեմ: Իսկ եթե դրախտ չկամ: Ընդհանրապես ոչինչ չկա: Չի կարող պատահել, որ էդպիսի գիտություն ունենանք ու մինչև հիմա պարզ չլինի՝ կամ դրախտ, թե՛ չկա: Աստված է՛լ կա, թե՛ չկա: Դե, գոնե քվանտային մակարդակում: Իսկ գուցե հեջ էլ մի լավ գիտություն չունենք, եղածն էլ աչքակապություն է: Հիմա որ կարդում ես միջնադարյան մի բան՝ էիս, դուք,

խավարամիտներ, մի՞թե պարզ չէ, որ Երկիրը պատվում է Արեգակի շուրջը: Տարրական բան է, արեգակնային համակարգ... Իսկ նրանք բոլորին այրեցին խարույկների վրա: Հետաքրքիր է, Ջորդանո Բրունոն հիմա դրախտում է, թե՛ դժոխքում: Իսկ եթե մեռնելուց հետո ընկնում ես էնտեղ, որտեղ էիր կյանքիդ վերջին ակնթարթին: Այսինքն՝ կրակի մեջ: Պատմում էին, ոնց է մի մորքուր Ծիչենգից ինքն իրեն վառել: Սովորական մորքուր, տղայի հետ հանգիստ ապրում էր, տղան դպրոցն ավարտեց, գնաց տեխնիկում: Մենակ էր ապրում ու մանրից գժվեց: Գիշերը վերցրել է բենզինի կանխտորը, գնացել է դաշտ, բենզինը լցրել վրան ու... Երևի սարսափելի է՝ վառվում ես, շուրջդ կրակ է, ցավ, ու ոչ մի կերպ չես մեռնում, ուզում ես մեռնել, որպեսզի ամեն ինչ վերջանա, բայց վառվում ես ու վառվում: Իսկ հետո մեռնում ես, ու դրանից հետո նորից կրակ, միայն թե դա արդեն հավերժ է ու էլ ոչ մի բանի հույս չկա: Ուրիշ բան է՝ դանակը փորը... թեև էդպես էլ ցավոտ է, աղիքներ են, կարող է երկար մեռնես: Ավելի լավ է՝ սիրտը, բայց կարող ես կողին կանել, վարժվածություն է պետք: Մի՞թե իսկապես սպանելու եմ նրան:

**ՕՔՍԱՆԱ** - Ավտոբուսից սոխի հոտ էր գալիս: Ձախից մի տղամարդ էր նստած՝ պիջակով, սպիտակ պուտաձոր վերնաշապիկով, սպորտային անդրավարտիքով ու երկարաձիտք կոշիկներով՝ վերջն էր: Բա սանրվածքը՝ առջևում կարձ, ետևում մազերը մինչև ուտերը: Ու բեղերը: Նստել է ու ինքն էլ է հասկանում, որ սիրուն է ու ավտոբուսի բոլոր կնիկներն ուզում են իրեն: Այ, էդպես մեկի հետ ամուսնանաս: Հանգստյան օրերին երևի անտառ է գնում: Տուն է գալիս, սեղանին է շրմփացնում նապաստակը, իսկ ես ջուր եմ տաքացնում ոտքերը լվանալու համար:

**ԱՆԴՐԵՅ** - Թաքնվելն անօգուտ է: Բոլորը գիտեն, որ Մարոնովը պարտք է Սեկային, ու ես էլ պարտք եմ Սեկային: Օքսանան էլ տեղնուտեղը ամեն ինչ կպատմի, հենց որ մենքերը հայտնվեն: Էստեղ հարցաքննում են շատ մանրամասն, նրան կստիպեն, որ ամեն ինչ պատմի, նաև էն մասին, որ փորձեցինք սեքս անել ու իմը չկանգնեց... Քննիչը կծիծաղի, երևի ջահել մեկը կլինի, ինձնից մի չորս տարի մեծ: Հասարակ գործ է, ինչո՞ւ փորձառու աշխատակիցներին հանձնա-

րարեն, թող ջահելությունը վարժվի փիսիկների վրա:

**ՕՔՍԱՆԱ** - Պատուհանից երևում էին ծառերը: Ճանապարհին մոտ թփերն են, հետո՝ սոժիներ: Ես բոլոր ծառերը գիտեմ, դպրոցից, բնագիտությունից: Բայց անտառից վախենում եմ: Երբ հայրս մեզ լքեց, ես մտածում էի, որ նա ինձ անտառ է տարել ու թողել: Իսկ երբ նա մեռավ, ամառ էր ու մորս հետ որոշեցինք յոզայով զբաղվել նիհարելու համար: Հետո գիշերը նստած արևածաղիկ ենք չռթում հեռուստացույցի առաջ ու մայրս հանկարծ ասում է՝ ինչ լավ ենք զբաղվում յոզայով: Ու հո չենք ծիծաղում...

**ԱՆԴՐԵՅ** - Նա ինձ ընդհանրապես չի խղճում: Եթե կատու ունենար ու եթե ընտրեր՝ ինձ սպանեին, թե կատվին, իհարկե, նա կընտրեր, որ ինձ սպանեին: Էնպես նայեցի իրեն, որ չնկատի: Պառկել էր աչքերը փակ ու ժպտում էր: Տեսնենք, ոնց կժպտա, երբ աչքերի առաջ կսպանեմ Մարոնովին: Մի հարվածով: Առ քեզ, կողիդ տակ, ստացիր... Մարոնովը նայում է, բայց արդեն վերջ, կյանքը գնում է: Հա, ուզում եմ, ապրել: Կապրեմ: Բանտում էլ են ապրում, կվարժվեմ: Կսպանեմ: Կդառնամ մարդասպան: Ես ար-

դեն սպանել եմ նրան: Ես մարդասպան եմ:

**ՕՔՍԱՆԱ** - Արթնացա, երբ ավտոբուսը կանգնեց:

**ԱՆԴՐԵՅ** - Հասանք:

**ՕՔՍԱՆԱ** - Հենց որ ավտոբուսից դուրս եկանք, տեսա ոչ թե քաղաքային ավտոկայանը, այլ ծոմոված վահանակ, վրան գրված՝ Օսկոլ...

**ԱՆԴՐԵՅ** - Ձենը գլուխը օգեց՝ ինձ ո՞ր ես բերել, ապուշ:

**ՕՔՍԱՆԱ** - Ասաց, որ եթե ուզում եմ, կարող եմ սպասել էստեղ: Ու գնաց դեպի ավտոմատ հեռախոսը: Էս մեկը լսափող ուներ: Գնացի նրա ետևից, բայց ոչինչ չեմ հասկանում:

**ԱՆԴՐԵՅ** - Զանգեցի Միշկա Կոպցովին ու հարցրի, թե որտեղ է ապրում Մարոնովը: Հասցեն տվեց:

**ՕՔՍԱՆԱ** - Ոչ մեկին էլ պետք չէ սպանել:

**ԱՆԴՐԵՅ** - Էդ ինչի՞:

**ՕՔՍԱՆԱ** - Ասացի՝ պետք չէ: Մայրդ ինձ փողը տվել է: Ուզում էի միանգամից քեզ տալ, բայց դու ձևեր թափեցիր ապուշի նման:

**ԱՆԴՐԵՅ** - Գրպանից հանեց թղթադրամները:

**ՕՔՍԱՆԱ** - Տասներկու հազար: Կտաս Սեկային, ու վերջ:

**ԱՆԴՐԵՅ** - Կատաղեցի: Ո՞նց էս

հիմարը չի հասկանում, որ փողն արդեն ոչինչ չի նշանակում, քանի որ ես ապրելու եմ, իսկ Մարոնովը հիմա կմեռնի: Իսկ ես կապրեմ:

**ՕՔՍԱՆԱ** - Ու գնաց փողոցով:

**ԱՆԴՐԵՅ** - Մտածում էի՝ կմնա ավտոկայանում, տոմս կգնի ու կմեկնի, բայց նա հետևեց ինձ: Սկզբում ինձ համար կարևոր էր, որպեսզի տեսներ, իսկ հիմա՝ թքած: Հիմա ինքն էլ ոչինչ չի նշանակում:

**ՕՔՍԱՆԱ** - Արևը վառում է ծոծրակս, շուտով գլխումս ծակ կբացի ու միջից թիթեռ դուրս կթռչի, ու ես կմեռնեմ: Ու ամբողջ կյանքս նրա ետևից գնալու կարիք չի լինի:

**ԲԱԿՈՒՄ**

**ԱՆԴՐԵՅ** - Բակ մտանք, ու միանգամից տեսա Մարոնովին: Նստել էր մանկական կարուսելին, կողքին իրենից մեծ երկուս, ջահել՝ ամեն մեկը քսանհինգ տարեկան: Նրա ետևում, երկրորդ հարկի պատշգամբում, մի տղամարդ կանգնած ծխում էր: Լավ պատրաստվել էին: Կարո՞ղ է, Միշկան էր մատնել: Ոչինչ, կհասցնեմ նրան խփել, գուցե մեկին էլ հետը:

**ՕՔՍԱՆԱ** - Անդրեյն ասաց, որ մոտիկ չգնամ: Ու չփախչեմ, երբ ինքն ընկնի ու դրանք սկսեն իրեն

ծեծել, որպեսզի որսորդի բնազդը դրանց մոտ չարթնանա:

**ԱՆԴՐԵՅ** - Ձեռքս մտցրի գրպանս ու շոշափեցի դանակի կոթը: Ես պիտի դուրս հանեմ, հետո ձախ ձեռքով բռնեմ ու բացեմ շեղբը: Երկար կտևի, շատ երկար... Եթե բոլորը միանգամից վրա տան... պետք է ուշադրությունները շեղել, ինչ-որ բանի մասին խոսել: Ո՞վ է սրանց զգուշացրել: Ուրիշ տարբերակ չկա, Միշկա Կոպցովն է:

**ՕՔՍԱՆԱ** - Ես մոտեցավ ու բարևեց դրանց:

**ԱՆԴՐԵՅ** - Ասի, որ Սեկայի կողմից եմ եկել, Մարոնովը նյարդայնացած ցնցեց ոտքը: Էն երկուսը իրենց հանգիստ պահեցին:

**ՕՔՍԱՆԱ** - Մարոնովը ցածրահասակ տղա է երկար շագանակագույն մազերով: Մի անգամ ինստիտուտում եմ տեսել, զիլ վերնաշապիկ էր հագել, վրան՝ կոմիքս առնանդամի արկածների մասին:

**ԱՆԴՐԵՅ** - Մարոնովը գրպանից ցելոֆանե փաթեթ հանեց ու պարզեց ինձ:

**ՕՔՍԱՆԱ** - Անդրեյը ընկրկեց, իսկ էն երկուսից մեկը ծիծաղեց ու ասաց՝ տակդ չշռես, ատրժանակ չէ:

**ԱՆԴՐԵՅ** - Մարոնովն ասաց՝ էստեղ հիսուն հազար է: Ինքը հատուկ

վկաներ է կանչել, որ բոլորը տեսնեն՝ ինքը փողը տվել է:

**ՕՔՍԱՆԱ** - Անդրեյը շարունակում էր աջ ձեռքը պահել գրպանում, ծախով վերցրեց փողն ու երկար ժամանակ չէր կարողանում գրպանը խոթել, հա՛ ձեռքը փուստ էր գնում:

**ԱՆԴՐԵՅ** - Մարոնովն ասաց՝ տես, չկորցնես, հերս ստիպված մոտոցիկլը ծախեց:

**ՕՔՍԱՆԱ** - Անդրեյն ասաց՝ չեմ կորցնի:

**ԱՆԴՐԵՅ** - Լարումն անցավ: Էն երկուսը ոնց որ թե ուզում էին էլի զրուցել, ծխել կամ գուցե խմել: Բայց ես ասի՝ վերջ, տղերք, հաճելի էր ձեզ հետ գործ ունենալը, ցտեսություն:

**ՕՔՍԱՆԱ** - Մենք վերադարձանք: Ու ես լսեցի, թե էդ երկուսից մեկն ասաց մյուսին՝ արի գնանք ու ավտոկայանի մոտ փողերը խլենք:

**ԱՎՏՈԿԱՅԱՆՈՒՄ**

**ԱՆԴՐԵՅ** - Ավտոկայանում վիճեցինք: Ես ասաց, որ զգվում է ինձնից ու չի ուզում ինձ հետ ավտոբուս նստել:

**ՕՔՍԱՆԱ** - Էշություն էր դուրս տալիս, որ մենակ գնալը վտանգավոր է: Ես էլ ասի՝ փողերն ինձ տուր: Եթե նույնիսկ նրանք մեզ հետևեն, չեն մտածի, որ փողն ինձ մոտ է: Նրանք քեզ մոտ

կինտրեն: Իսկ դու կգաս հաջորդ ավտոբուսով:

**ԱՆԴՐԵՅ** - Հասկացա, որ պարզապես ուզում է ինձնից գլուխն ազատել: Որ ինձ հետ տիաժ է, ու համաձայնվեցի:

**ՕՔՍԱՆԱ** - Փողի փաթեթը ինձ տվեց: Իսկ ես տասներկու հազարը տվեցի: Վերջ, քվիթ ենք: Ընդմիշտ:

**ԱՆԴՐԵՅ** - Նրան ավտոբուս նստեցրի ու երբ դուրս եկա ավտոկայանի շենքից, տեսա էն երկուսին, ուղիղ իմ վրա էին գալիս: Ծրջվեցի ու վազեցի, նրանք էլ վազեցին: Վազեցի փողոցով, հետո մտա երկհարկանի տան բակը, ուզում էի փայտանոցից մի փայտ վերցնել, բայց հասկացա, որ չեմ հասցնի: Վազելով մտա շենքը, քաշեցի բնակարանի դուռը՝ փակ էր: Սկսեցի թակել ու գոռալ. «Օգնեք, սպանում են»: Էդ պահին դրանք վրա հասան ու քարշ տվին փողոց: Ծունչները էնպես էր կտրվել, որ անգամ չձեծեցին: Միանգամից խուզարկեցին: «Ո՞ր է փողը», - հարցրեց մեկը: «Գնացին», - ասի: «Ո՞ր», - զարմացան: «Աղջիկը տարավ»: Մյուսն ասաց. «Քեզ չասի՞, որ մեր բանին էլ պետք չէր», բռունցքով խփեց ատամներիս. «Փչում ես, ո՞ր է փողը»: Առաջինը նրան ետ քաշեց. «Գնացինք, չեմ տեսնում,

որ մոտը բան չկա»: Մյուսը. «Էդ դեպքում մաքրիր կոշիկներս»: Առաջինը բռնեց նրա ուսերից ու ինձ է ասում. «Գնա էստեղից»: Ես էլ գնացի: Հետո գլխի ընկա, որ մոտս փող կար, տասներկու հազար, պարզապես մոռացել էի, ու նրանք էլ չգտան: Գնում եմ ու ծիծաղում եմ: Նույնիսկ ինչ-որ բան եմ կիսաձայն երգում: Վերադարձա ավտոկայան, տոմս գնեցի ու հասա քաղաք: Ճանապարհին մտածում էի, որ եթե նույնիսկ իրականում չեմ սպանել, դա արել եմ մտքում, նշանակում է, որ էլ երբեք ինձ ներում չի լինի: Որովհետև երբ որոշեցի սպանել, գիտեի, որ դա մեղք է ու հետո պիտի զղջամ: Աստված ամեն ինչ տեսնում է: Բայց եթե էդպես մտածեմ, ապա ընդհանրապես որ ոք երբեք չի փրկվի: Դրախտը դատարկ կլինի: Որովհետև մտքում բոլորն են մեղանչում: Նույնիսկ ինչ-որ վանական հիմա նստել է իր խցում ու մտածում է՝ ամբողջ կյանքս աղոթում եմ, հրաժարվել եմ ամեն ինչից, իսկ մահից հետո Հիսուս Քրիստոսը կնստեցնի իր կողքին ու բոլորը կասեն. «Տես, ինչ կռուտոյ վանական է, Քրիստոսի կողքին է նստել»: Գոռոզամտություն: Կասեք՝ մեղք չէ՞: Եվ, կարևորը, հանուն ինչի՞: Իսկ ընդհանրապես էս

ամենը ավելորդ էր: Միայն Օքսանայի հետ ծանոթացա: Այ, եթե ամեն ինչ արվեր հանուն սիրո: Իսկ գուցե սիրո՞ւմ եմ նրան: Իհարկե, սիրում եմ: Էս ամենը նրա պատճառով էր: Թե՛ իմ... Սեկայի՞ց էի վախենում: Հիմա էլ եմ վախենում: Ոնց որ Տուգարինովից: Իզուր: Տուգարինովը գերեզմանում է, իսկ ես ապրում եմ ու նույնիսկ ոչ ոքի չեմ սպանել: Այ, եթե Սեկային մի բան պատահեր: Ես էլ կախվեի: Կամ էլ թունավորվեի անորակ արաղով:

Հենց հիմա կգնամ Սեկայի մոտ, Օքսանային կվերցնեմ ու... կապրի իմ սենյակում: Ես պարզապես ուզում եմ նայել, թե ոնց է ժպտում: Ամեն օր: Գրողը տանի, երբ պիտի հասնենք: Էս երկու օրվա մեջ երևի երկու հարյուր կիլոմետր անցա: Գնում ու գնում եմ հեռավոր վայրեր:

**ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆ  
ԱՎՏՈՎԱՅԱՆ**

**ԱՆԴՐԵՅ** - Մտա հանրակացարան ու տեսա Սիկիպելովին, նստել էր դռան դիմացի նստարանին: Ես ասաց, որ գիշերը Սեկային շարտել են ութերորդ հարկի պատուհանից: Խաղալու են եկել տեղացիներն ու Սեկան բոլորին կրել է: Պետք չէր դրանց կրել, բայց նա միանգամից ասել է՝ ուզում եմ մո-

տոցիկ գնել ու դրա համար էլ բոլորիդ կրելու եմ: Ու կրել է: Բնականաբար, նրանք որոշել են, որ Սեկան խաբել է: Վերջին բառերը, որ ասել է՝ ինչ-որ երաժշտություն, որ ինքը լսում է: Մենթերը եկել են, ոչ մեկին չեն գտել, ոչ մեկը ոչինչ չի ասել, ո՞վ կուզենա տեղացիների հետ գլուխ դնել: Հարցրի՝ որտե՞ղ է Օքսանան: Սիկիպելովը մի տեսակ տարօրինակ նայեց ու ասաց, որ տուն է գնացել: Որ էլ ապրելու տեղ չունի: Հարցրի՝ վաղո՞ւց է գնացել: Ես ուսերը թոթվեց: Քսան բռնե առաջ: Ուտքով բացեցի երկաթե դռնն ու վազեցի դաշտով, երկաթգծի կողքով, հետո ցախանոցներ, գարաժներ, հետո դպրոցի բակը, հետո հրապարակը հեղափոխական Բաբուշկինի արձանով, հետո ճամփան: Հենց էդ պահին կանգառին մոտեցավ տրոլեյբուսը: Ետևի դռնով ներս ցատկեցի: Միայն թե հասնեմ, միայն թե հասնեմ: Մինչև հասնի կայարան, մինչև տոմս գնի... Գուցե նրանց մոտ ավտոբուսները հաճախ չեն գնում: Լույնիսկ չգիտեմ՝ որտեղից է: Որտե՞ղ փնտրեմ նրան, ո՞ր մի ավտոբուսում: Եթե գնացել է, ուրեմն՝ վերջ:

Տրոլեյբուսը դանդաղ անցնում էր կամրջով, ես նայում էր Սոֆիայի տաճարի գմբեթներին, որոնց

վրա նստում էր արևն, ու աղոթում էի, որ նա չհասցնի գնալ: Տեր Աստված, քանի անգամ ես ինձ օգնել, դու սպանել ես Տուգարի-նովին, դու սպանեցիր Սեկային, դու ինձ փրկեցիր սպանությունից, մի անգամ էլ օգնիր, էնպես արա, որ հասցնեմ: Դա քեզ համար էն-քան հեշտ բան է... Թե՛ սա կլինի ամեն ինչի հատուցումը: Սկզբում ինձ օգնում էիր, իսկ հետո վերցրիր ու խլեցիր նրան: Իսկ գուցե ինքը չի ուզում... Տրոլեյբուսը դանդաղ մոտեցավ կայարանա-մերձ հրապարակին: Բայց դռնե-րը չբացվեցին, միայն վարորդի մոտինը: Ներս մտավ չաղլիկ մոր-քուրն ու ասաց. «Ցույց տվեք տոմսերը»: Կողքիս նստած աղ-ջիկը արագ դակեց տոմսը: «Էլի ունե՞ք», - հարցրի: «Կանգառից հետո տոմսերը չենք դակում», - գոռաց ուղեկցողը: Մոտեցա ու ինչ-որ բան սկսեցի բացատրել նրան, որ շտապում եմ, որ մոռա-ցել եմ տոմս գնել: Նա ծաղրեց ու ասաց, որ պիտի հետևեմ իրեն ու տուգանք վճարեմ: Լրիվ մոռացել էի, որ գրպանումս լիքը փող կար: Նայում էի նրա կլորիկ դեմքին: Երևի երկու երեխա ունի, քնելուց առաջ նրանց հեքիաթ է կարդում: Ու ամբողջ թափով շրմփացրի էդ դեմքին: Նա ընկավ նստարանին ու ոռնաց: Դուրս թռա տրոլեյբու-սից ու վազեցի հրապարակով: Հարկավոր էր խառնվել ամբո-խին: Իսկ ես մենակ էի, ոնց որ

թշնամական ոմբակոծիչը մաքուր երկնքում զենիթայինի թիրախի դիմաց: Ամբոխ էի փնտրում, որ կորսվեի: Թեքվեցի անկյունն ու խառնվեցի ամբոխին: Մարդիկ դուրս էին գալիս շենքից, սպա-սում էին ավտոբուսի, ծխում էին, պարապ դուրս տալիս, թերթ էին կարդում, գարեջուր խմում, ան-կապ թափառում: Նրանց մեջ խցկված՝ փնտրում էի Օքսանա-յին: Նա չկար: Ես փնտրում էի, բայց նա չկար: Էդ ժամանակ ես կանգ առա, փակեցի աչքերս ու ասացի՝ թող ես տեսնեմ իրեն: Ու բացեցի աչքերս ու տեսա, որ կարմիր պայուսակը ձեռքին բարձրանում է ավտոբուս: Նետ-վեցի նրա կողմը: Ծրջվեց, տեսավ ինձ ու կարծես մի քիչ վախեցավ: Ես վազում էի՝ հրելով բոլորին: Թռա աստիճանի վրա, գրկեցի ու սկսեցի համբուրել: Կողքից ինչ-որ մեկն ասաց. «Ձահեկներ, լրիվ եք հաբոգել»: Ես համբուրում էի նրա ծխահամ շուրթերը, ու դա էնպես քաղցր ու դառն էր, կար-ծես արծաթե մոխրաման ես լպստում: Նա պատասխանում էր համբույրներիս: Էդ ժամանակ ինչ-որ մեկն ասաց. «Դուք ուշա-ցում եք, կամ նստեք, կամ իջեք ավտոբուսից»: Ու մենք դուրս ե-կանք Ավտոբուսից:

*Ռուերենից թարգմանեց  
Կ. Բագրատյանը*

# ԴՐԱՄԱՏՈՐԳԻԱ

գրական-գեղարվեստական հանդես

32 <sup>2013</sup> 33

ISSN 1829-0701

© «Դրամատորգիա», 2013  
Տպագրվել է պետական աջակցությամբ

Խմբագիր՝  
ԿԱՐԻՆԵ ԽՈՒՐՄԱՆՅԱՆ

Կազմը և էջադրումը՝  
ՆԱՌԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:  
Բնագրերը չեն վերադարձվում:

Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ  
թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար  
դիմեն անմիջական իրավատերերին՝ հեղինակներին:

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Օրբելի 18/6, հեռ. 22-76-08

Ստորագրված է տպագրության 13.06.2013  
Գինը՝ պայմանագրային:

Գրանցման վկայական՝ 01Մ 000089

Չափը՝ 70x100, 1/16: Ծավալը՝ 10.5 տպ. մամուլ:  
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է  
«Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ-ը՝  
ՀԳՄ «Լ. Զ. ՍՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը: